

ԱՐՄԵՆ ԾԱՎԱՐԻ ՍԱՐԳՍՅԱՆ



ԶԱՎԵՇՏԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԵՐԳԻԾԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ  
ԵՎ ԶՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ



NATIONAL ACADEMY OF SCIENCES OF THE REPUBLIC OF ARMENIA  
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

ARMEN SH. SARGSYAN

WAYS OF EXPRESSION OF THE HUMOR  
IN THE ARMENIAN JOKES

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ  
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

АРМЕН ШАВАРШОВИЧ САРКИСЯН

СРЕДСТВА ПРОЯВЛЕНИЯ КУРЬЕЗА В АРМЯНСКИХ  
НАРОДНЫХ САТИРИЧЕСКИХ МИНИАТЮРАХ И  
СМЕШНЫХ ВЫСКАЗЫВАНИЯХ

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН» НАН РА  
ЕРЕВАН – 2017

PUBLISHING HOUSE "GITUTYUN" OF NAS RA  
YEREVAN – 2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՀԱԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՐՄԵՆ ՇԱՎԱՐՃԻ ՍԱՐԳՍՅԱՆ

ՁԱՎԵՃՏԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ  
ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԻՃԱԿԱՆ  
ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ  
ԵՎ ՁՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ – 2017

ՅՏԴ 821.19.0  
ԳՄԴ 83.3 (5Յ)  
Ս 259

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության  
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտական խմբագիր՝ բանասիրական գիտությունների  
թեկնածու, լեզվաբան **Դավիթ Սևանի Գյուրջինյան**

Խմբագիր՝ **Անահիտ Կարապետի Խանումյան-Սարգսյան**

Սարգսյան Ա. Շ.

Ս 259 **Զավեշտի դրսևորման միջոցները հայ ժողովրդական երգիծական  
մանրապատումներում և զվարճախոսություններում/Ա. Շ. Սարգսյան:  
Գիտ. խմբ.՝ Դ. Ս. Գյուրջինյան, խմբ.՝ Ա. Կ. Խանումյան-Սարգսյան.— Եր.:  
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2017, 300 էջ:**

Ուսումնասիրությունը նվիրված է հայ ժողովրդական երգիծական ման-  
րապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի  
դրսևորման տարատեսակ միջոցներին: Այն օգտակար կարող է լինել  
բանագետների, գրականագետների և լեզվաբանների համար:

ՅՏԴ 821.19.0  
ԳՄԴ 83.3 (5Յ)

ISBN 978-5-8080-1290-5

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017  
© ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2017  
© Սարգսյան Ա. Շ., 2017

## ԱՌԱՋԱԲԱՆ

Բանահյուսության ամենակենսունակ ու մասսայականություն վայելող տեսակներից է անեկդոտը՝ ժողովրդական երգիծական մանրապատումը և զվարճախոսությունը<sup>1</sup>: Ժողովրդական երգիծապատում-զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի առաջացման ձևերն ու միջոցները բազմազան ու բազմաբնույթ են այնքան, որքան թույլ են տալիս տվյալ լեզվի հնարավորությունները: Իսկ հայոց լեզվի հնարավորություններն այս առումով բավականին մեծ են, քանզի հազարամյակների պատմություն ունեցող հայերենը պատմական հանգամանքների բերումով այսօր ոչ միայն գործող գրական լեզվի երկու դրսևորում ունի՝ արևմտահայերենն ու արևելահայերենը, այլև մի քանի տասնյակ բարբառ, և, ինչպես Պ. Սևակն է ասում, «որոնցից շատերն իրարից ավելի են հեռու, քան ռուսերենը՝ ուկրաիներենից, և որ իմ մայրենի բարբառը գրական հայերենին մոտիկ է նույնքան, որքան չեխերենը՝ ռուսերենին»<sup>2</sup>:

Հենց հայերենի ընձեռած այս բազմազանությունն էլ ավելի գունեղ ու բազմաձայն է դարձնում մեր լեզուն, ինչն էլ իր հերթին լայն հնարավորություններ է ընձեռում երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի առաջացման հենք դարձնել թե՛ ժողովրդական խոսքում առկա արտասանական

---

1 **Ժողովրդական երգիծական մանրապատում** կամ **զվարճապատում** և **զվարճախոսություն** եզրույթները տարանջատել ենք՝ առաջինի համար հիմք ընդունելով սյուժետային՝ պատումային հատկանիշը, երկրորդի համար՝ անսյուժե՝ անպատում բնույթը, իսկ օտարալեզու **անեկդոտ** եզրույթը կիրառվում է թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբի համար:

2 **Սևակ Պ.**, Անցյալը ներկայացած, կազմեցին, խմբագրեցին և ծանոթագրեցին Ա. Պ. Ղազարյանը, Ս. Ա. Ղազարյանը, Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2011, էջ 14:



իրողություններն ու բառապաշարային (արևելահայերենի, արևմտահայերենի, բարբառների բառագանձ), իմաստաբանական (ուղիղ և փոխաբերական իմաստներ, համանուններ և հարանուններ, դարձվածքներ, բարդություններ և այլն), բառակազմական, շարահյուսական և պատկերավորման ու արտահայտչության տարատեսակ միջոցներով (համեմատություն, այլաբանություն, չափազանցություն, փոխաբերություն, փոխանունություն, գեղչում, բառախաղ, հանգախաղ, հնչերանգ և այլն) դրսևորումները, թե՛ անսպասելի գավեշտ ստեղծելուն նպաստող այլևայլ ձևեր ու հնարանքներ (ֆիզիկական տարատեսակ արատների, հաշիվ-հաշվարկների, զանազան բանաձևերի, ծածկախոսության, սինկրետիզմ-համադրողականության, գովազդացուցանակային և այլ կարգի կիրառություններ):

Ինչ խոսք, եթե այդ ամենին ավելացնենք նաև անեկդոտների՝ կարճառոտ խոսքով շատ բան ասելու, մարդկանց հուզող ամենաբազմազան հարցերին անմիջապես անդրադառնալու և ծիծաղի լեզվով դրական լիցքեր հաղորդելու կարողությունը, ապա պարզ կդառնա գիտատեխնիկական աննախընթաց զարգացման մեր ժամանակներում ժողովրդական բանարվեստի այդ տեսակի կենսունակության ու մասսայականության գաղտնիքը:

Հայկական անեկդոտներում (այդ թվում նաև մանկական խոսքի ինքնատիպ դրսևորումներից մեկում՝ մանկական զվարճախոսություններում) տարատեսակ միջոցներով անսպասելի ծիծաղ առաջացնելու դրսևորումներին նվիրված մի շարք գեկուցումներով մենք հանդես ենք եկել ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ու լեզվի ինստիտուտների կազմակերպած գիտաժողովներում, որոնք պարբերաբար տպագրվել են համապատասխան ժողովածուներում և գիտական պարբերականներում: Այդ ընթացքում հրապարակումներին հաղորդակցվող մասնագետներից ոմանք դրանք ձեռքի տակ ունենալու ցանկություն էին հայտնում՝ այդ նյութերին ուսանողությանը ևս հաղորդակից դարձնելու համար: Ուստի որոշեցինք առկա թեմաներն ամբողջացնել և առանձին գրքով հասանելի դարձնել բանագետներին, գրականագետներին ու լեզվաբաններին:

Առաջաբանից, օգտագործած գրականության ցանկից և հաստատագրությունից գատ, գրքի 12 բաժիններից մի քանիսն ունեն սակ ենթաբաժիններ: Ներկայացվող թեմաների ծավալը և հավելվածներում ընդգրկված օրինակների քանակը պայմանավորված են ձեռքի տակ եղած նյութերով և որոշ թեմաների վերաբերյալ կարդացած զեկուցումներով:

Այսպես, Լոռու խոսվածքի կրողը լինելու հանգամանքը մեզ հնարավորություն է տվել լոռեցիների աննկղոտների առանձնահատկությունների մասին նախապես հանդես գալ առանձին հոդվածով: Հետևաբար, հայերենի բարբառների արտասանական-հնչյունարտաբերման իրողությունների միջոցով ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտ ստեղծելուն անդրադառնալիս մենք առավել հանգամանորեն ենք ներկայացրել լոռեցիների «երգեցիկ» խոսքի ու որոշ չափով էլ բառապաշարի հենքի վրա ստեղծված աննկղոտները:

Թերևս առաջին հայացքից կարող է այն տպավորությունն ստեղծվել, թե շարադրանքում մանրապատում-զվարճախոսությունների մեջբերումները անհամեմատ շատ են: Այլ կերպ հնարավոր էլ չէր լինի, քանզի տարաբնույթ դրսևորումների մասին ասելիքը պետք է հիմնավորվեր համապատասխան օրինակներով, ինչն էլ հանգեցնում էր մեջբերվող նմուշների առատության:

Եթե տեքստում ամբողջությամբ մեջբերվել են հիմնականում կարճառոտ, անսյուժե կառուցվածք ունեցող զվարճախոսությունները, ապա երգիծապատումները մեծ մասամբ տրվել են հատվածաբար, իսկ ամբողջությամբ ներկայացվել հավելվածներում: Երբեմն էլ առանց մեջբերման նյութն ամբողջությամբ է տեղափոխվել հավելված: Հարկ եղած դեպքում հավելվածներում ներկայացվել են նաև մեջբերվող նմուշների այլ տարբերակներ:

Գրքի առանձին բաժիններում կհանդիպեն նաև կրկնվող եզրույթներ ու մեկնաբանություններ, որոնք բխում են տվյալ թեմայում դրանց անհրաժեշտությունից: Այսպես, համանունների և հարանունների միջոցով զավեշտ ստեղծելուն նվիրված ծավալուն նյութից բացի, նմանատիպ դրսևորումների մասին մատնանշվել է նաև անձնանուններին, տեղանուններին, հայերենի ու բարբառների,



օտարալեզու բառառակապակցությունների և հայերենի փոխհարաբերություններին, պատկերավորության և արտահայտչության տարատեսակ միջոցների կիրառություններին ու իմաստաբանական կամ բառակազմական դրսևորումներին անդրադառնալիս: Ըստ այդմ էլ, որպեսզի մատուցվող համապատասխան նյութը ընթերցողի համար ձանձրալի չլինի, տվյալ երևույթի մասին խոսելիս փորձել ենք մեջբերվող օրինակների կրկնություններից հնարավորինս զերծ մնալ:

Քանի որ գրքի թեմաների գերակշռող մասն առնչվում է ժողովրդական երգիծանքում լեզվական տարատեսակ միջոցների կիրառություններին՝ դրանով իսկ մեկ անգամ ևս հավաստելով մեր մայրենիի ընձեռած անսահման հնարավորությունները, հայոց լեզվի ճոխությունն ու բառագանձի հարստությունը, հարկ համարեցինք թեմաներից մեկը նվիրել լեզվապահպանությանը:

Այսօր հայոց պետականության գոյությանն սպառնացող ամենամեծ վտանգը օրեցօր ահագնացող արտագաղթն է, որով պայմանավորված էլ՝ մեկ-երկու սերունդ հետո օտար երկրներում հազարամյակների պատմություն ունեցող մեր մայրենին, ուրեմն նաև հայի ինքնությունը կորցնելու իրողությունը: Դրա մասին շուրջ կես դար առաջ Պ. Սևակն է ահագանգել. «Ժողովուրդները գոյատևում են ոչ միայն իրենց հողով, այլև իրենց լեզվով. ուրեմն՝ ավելի իրենց լեզվով, քան նույնիսկ հողով»<sup>3</sup>:

Հայրենիքում՝ մեր տանն անգամ այն վտանգված է. պատճառը ստրկախտի վերածված մեր օտարասիրությունն ու օտարամոլությունն է:

Լեզուն հիշողություն է, այն կապ է պահպանում մեր արմատների հետ, և էթե կորցնենք մեր լեզուն, կկորցնենք նաև մեր հիշողությունն ու կնմանվենք Հրանտ Մաթևոսյանի բնութագրած «բաց դաշտում արածող հորթին», որի ապագան սպանդանոց տանող ճանապարհն է ու մորթը՝ սպիտակ ջարդ-ձուլման տեսքով:

Հենց այս մտահոգությամբ էլ գրքի բաժիններից մեկը կրում է «Լեզվական ուժացումը՝ զավեշտի հենք հայկական երգիծապա-

---

3 Սևակ Պ., հ. 5, Թրի դեմ գրիչ, Եր., «Հայաստան» հրատ., 1974, էջ 175:

տում-զվարճախոսություններում» վերնագիրը՝ շարադրանքում ընդգրկելով անեկղոտների այնպիսի նմուշներ, որոնցում առավել սրությամբ է դրված լեզվական ուժացման խնդիրը՝ հույս ունենալով, որ ժողովրդական երգիծանքով ասված խոսքը թերևս ավելի ազդեցիկ, նպատակային ու սթափեցնող կարող է լինել, քան ցանկացած անկենդան կարգախոս կամ սրտաճմլիկ ճառ:

Գրքի շարադրանքում օգտագործվել են թե՛ Հայաստանում և արտերկրում տպագրված տարատեսակ ժողովածուների նյութերը, թե՛ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի և Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվներում ու անձնական հավաքածուում պահպանվող ստեղծագործությունները: Մեր հավաքածուի մեծ մասը մեր գրառածներն են, մի մասն էլ մեր նախաձեռնությամբ և հորդորով այլոց գրանցածները:

Նյութերը մեջբերելիս աշխատել ենք հնարավորինս պահպանել բնագրային առանձնահատկությունները, որոշ նմուշների ավանդական ուղղագրությունը՝ առանձին դեպքերում շտկելով միայն ակնառու կետադրական կամ ուղղագրական անճշտությունները: Ընթերցողի մոտ զավեշտն էլ ավելի ընկալելի դարձնելու նպատակով տողատակում, համապատասխան աղբյուրներից զատ, տրվել են նաև որոշ բարբառային և օտար բառ-բառակապակցությունների բացատրությունները:

**Արմեն Շավարշի Սարգսյան**  
*բանասիրական գիտությունների թեկնածու*

---

ԱՐՏԱՍԱՆԱԿԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝  
ԶԱՎԵՇՏԻ ՅԵՆՔ ՅԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԵՐԳԻՃԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ ԵՎ  
ԶԿԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Գրական արևելահայերենն ու արևմտահայերենը, ինչպես նաև հայերենի բարբառներն ու խոսվածքներն ունեն արտասանական-հնչարտաբերման առանձնահատկություններ, որոնք երբեմն միմյանցից ընդգծված տարբերություններով են աչքի ընկնում: Հայաստանում և մերձավոր ու հեռավոր սփյուռքահայ գաղութներում արևմտահայը և արևելահայը փոխադարձ շփումների ընթացքում հաճախակի են առնչվում միմյանց լեզուներում և բարբառներում առկա հնչարտաբերման տարատեսակ դրսևորումներին (ձայնեղների խլացում ու խուլերի ձայնեղացում, ձայնավորների քմայնացում կամ կոշտ արտաբերում և այլն), երբեմն էլ դիմացինի համար անսովոր արտասանական իրողություններին (երգեցիկ կամ ցածր հնչերանգ, արագախոսություն կամ դանդաղ վերարտադրություն և այլն): Հայության լեզվական տարբեր դրսևորումների կրողների հաղորդակցության ընթացքում նման առանձնահատկությունների հենքի վրա ի հայտ եկած գավեշտալի միջադեպերն էլ, հետագայում վերապատմվելով ու վերափոխվելով, սկսում են յուրահատուկ «հագուստով» շրջանառվել ժողովրդի մեջ՝ իբրև գուտ ազգային անեկդոտներ՝ երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ:

**1.** Պատմական հանգամանքների բերումով առաջացած գրական հայերենի երկու ճյուղերի՝ արևելահայերենի և արևմտահայերենի արտասանական-հնչարտաբերման իրողությունների հիման վրա բազմաթիվ զվարճապատումներ և զվարճախոսություններ են ստեղծվել:

**1.1.** Գրական հայերենի երկու ճյուղերի՝ արևմտահայերենի և արևելահայերենի կրողների ընդգծված բախումը Խորհրդային

Հայաստան ներգաղթելու առաջին իսկ օրից արտահայտվում է *եղբայր բառի՝* արևմտահայերեն **աղբար** հնչեցնելու պահից՝ դառնալով ներգաղթած հայությանը կնքած պիտակ-դիմելաձև.

— Աղբար, .....

Գնորդը վրդովված բղավում է.

— Տո՛, ես քեզ ի՞նչ ախպար, ախպարը դո՛ւ ես<sup>4</sup>:

Տես Հավելված 1, թիվ 1:

«Նոր էկողն ու էշը» անեկդոտում տեղացու՝ «Դու՛ ախպար ես, ինչ է. չե՛ս հասկանում, ճամփան փակել ես, երթևեկությունը կանգ է առել» խոսքին այսպես է հակադարձում հայրենադարձը.

— Ես՛ ախպար եմ, կհասկանան՛, բայց՛ էշս տեղացի է. չի հասկնար<sup>5</sup>:

Տես Հավելված 1, թիվ 2:

**1.2.** Ռուսերենի «**դռել**<sup>6</sup>» բառի արևմտահայերեն արտաբերումը՝ «**տռել**» հնչողությամբ, հարանունությամբ համընկնում է արևելահայերի *բաց թողնել – տռել* բառի արտասանությանը, ինչն էլ պատումներից մեկում իրողությունը վերածում է զավեշտի:

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 1, թիվ 3:

**1.3.** Արևելահայերենում *նուրբ անցք* բառակապակցությունը բառաբարդելիս «ու» հնչյունը սղվում է՝ **նրբանցք**, սակայն արևմտահայերենով արտաբերելիս այն պահպանվում է՝ պատճառ դառնալով բամբասակ արտահայտության և անսպասելի ծիծաղի առաջացման:

Մանաստիպ դրսևորումների մեծ մասը տեղային բնույթի է: Դրանք հետագայում են ընդհանրական ուժ ձեռք բերելով դառնում զվարճախոսություն կամ զվարճապատում.

4 **Ստեփանյան Ա.**, 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 208:

5 **Սվազլյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 111:

6 **Դռել** (ռուս.) — շաղափիչ:

Վանաձորում բոլորն են ճանաչում պարարվեստի մասնագետ Ֆրունզիկ Եղոյանին: Մի անգամ նրա տղան՝ Արտավազը, քաղաքի թաղամասերից մեկում առաջին պատահած անցորդներից մեկին հարցնում է.

— Ֆրունզիկ Եղոյանին որտեղ կարող եմ գտնել:

Անցորդը հայրենադարձ է լինում և ասում է.

— Շուշանիկ Կուրդիսյանին նուրբ անցքին տեղը գիտե՞ք, գացե՞ք հոն և Կուրդիսյանին նուրբ անցքին մեջ անշուշտ կգտնեք...  
(ԱՄՇՀ)

**1.4.** Շատ դեպքերում էլ ակամա կամ միտումնավոր ընտրված բառային կառույցների բառամթերքով և արևմտահայերենի առոգանությամբ արտաբերված սովորական անմեղ երկխոսությունը արևելահայերենում կարող է վերածվել զավեշտալի, նույնիսկ բամբառակ իմաստ արտահայտող խոսքի:

Տես Հավելված 1, թիվ 4:

**1.5.** Արևմտահայի կողմից տառային հապավումներն արտասանվում են տառանուններով: Ազգային անվտանգության ծառայության օտարալեզու հապավման՝ ԿԳԲ-ի արտաբերումը՝ բառի տրոհմամբ կամ դիտավորյալ աղավաղմամբ, կառույցում վերափոխվում է այդ կառույցի հանդեպ արտահայտված բացասական վերաբերմունքով.

Հարցնում են.

— Ինչո՞ւ ես հայրենիքդ լքում:

— ՔաՔեՓեհին պատճառով. ան ինձի անվերջ կհետապնդե:  
(ԱՄՇՀ)

**2.** Հայկական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտն արտահայտվում է նաև հայերենի բարբառների արտասանական տարատեսակ դրսևորումների միջոցով:

**2.1.** Վանի բարբառում **բ, գ, դ, ձ, ջ** ձայնեղ բաղաձայնների փոխարեն կիրառվում են **պ, կ, տ, ծ, ճ** խուլեր, ինչն էլ այդ բարբառով արտաբերած բառերը, այլոց միջավայրում չընկալվելով, զավեշտ է առաջացնում:

Այսպես, օրինակ՝ **ձեթ** արտասանվող բառը, արևելահայոց շրջանում չընկալվելով, հարանունությամբ շփոթություն է առաջացնում **ձեթ**-ի հետ՝ տեղիք տալով «Ծեթ ի, թե պետ ի» գվարճախոսության ստեղծման.

Երևանցի. — Լս՛վ աղ, լս՛վ աղ...

Վանեցի պատավ. — Քյա տղա՛, էտա ի՛նչ ի կըծախես:

Երևանցի. — Մայրի՛գ, աղ էմ ծախըմ:

Վանեցի. — Պէ՛ խէմ<sup>7</sup>, պէ՛ խէմ, ծէ՛թ<sup>8</sup> ի, թէ պէ՛տ<sup>9</sup> ի:

Երևանցի. — Մայրի՛գ, ձեթ չէմ ծախըմ, աղ էմ ծախըմ:

Վանեցի. — Աղէկ, կըխասկընամ, պէ՛ խէմ, ծէ՛թ (մանր) ի, թէ պէտ (խշոր) ի:

Երևանցի. — So մայրի՛գ, ասըմ էմ՝ ձեթ չէմ ծախըմ, աղ էմ ծախըմ:

Վանեցի. — Քյա տղա՛, աղէկ... կըխասկընամ... պէ՛ խէմ, ծէ՛թ ի, թե պէտ ի<sup>10</sup>:

**2.2.** Վանեցիներին առնչվող անեկդոտներից մեկում էլ գավեշտի աղբյուր է դառնում միևնույն բաղաձայնի հաճախակի կիրառությունը: Այսպես, «Մենք խայ ենք»<sup>11</sup> հեքիաթային կառուցվածքով երգիծապատումի միջոցով և գերմաներենի արտասանական առանձնահատկություններից մեկի համադրության համատեքստում ծաղրվում է Վանի բարբառում «խ» բաղաձայնի չափից շատ գործածությունը:

Երբ Գերմանիայի թագավորը լսում է օտարականների խոսքը (Իսնամի՛ Խեպո, խունգար խրամե խայերեն խոսանք<sup>12</sup>), անմիջապես դադարեցնում է՝ ասելով.

7 Պէ՛ խէմ – բեր նայեմ:

8 Ծէ՛թ – մանր:

9 Պէ՛տ – խշոր:

10 **Ջահուկյան Գ., Խղիաթյան Ֆ.**, Հայոց լեզու, դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Եր., «Փյունիկ Մակմիլան» հրատ., 1998, էջ 100:

11 Ծիծաղում են վանեցիները, կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Ջանգակ-97» հրատ., 2006, էջ 156:

12 Իսնամի՛ Խեպո, թագավորը հրամայում է հայերեն խոսենք:

— Ավար, ավար, էլ մեյհ<sup>13</sup> գրուցե, մեր լեզվի մեչ էնկանդար<sup>14</sup> խ, խ, խ լսեր եմ, որ էլ ուրիշի ասած խ-խ-ն չե ուզե լսեմ<sup>15</sup>:

Տեն Հավելված 1, թիվ 5:

**2.3.** Վանեցիների բարբառի արտասանական առանձնահատկություններից մեկն էլ որոշյալ գոյականների «ը» հնչյունը չարտաբերելն է: Զվարճախոսություններից մեկում թերություն թվացող այդ երևույթը «մեկնաբանվում» է վանեցիների հեռատեսությամբ, ուրեմն նան՝ «առավելությամբ»՝ խնայողությամբ.

— ...Մենք վանեցիներս այդ տառը խնայողությամբ կքործածենք<sup>16</sup>:

Տեն Հավելված 1, թիվ 6:

**2.4.** Վանի բարբառում «գ»-ն «ս» է հնչվում, իսկ Երևանի պետհամալսարանի բանասիրական ֆակուլտետի ուսանողներիս համար խորթ ու անընկալելի, նան զավեշտալի էր հայ ժողովրդի պատմության մեր դասախոս, վանեցի Ժամկոչյանի կարդացած դասախոսության ընթացքում արտաբերած որոշ բառերի իմաստը.

— Եսը...

Դասախոսությունը գրող ուսանողները հարցնում են.

— Ինչը, ընկեր Ժամկոչյան, չհասկացանք, «ես»-ն ինչ է...

— Բարբամ, քովին ամուսինը, հորթին պապան, — պատասխանում էր Ժամկոչյանը, և լսարանը ցնծում էր ծիծաղից:

(ԱՄՇՀ)

**2.5.** Համշենի բարբառի բաղաձայն հնչյունների յուրահատուկ արտաբերումները (**բ, գ, դ, ձ, ջ** ձայնեղ բաղաձայնների խլացումը՝ **պ, կ, տ, ծ, ճ**) և հակառակը՝ խուլերի ձայնեղացումը, զավեշտալի իրավիճակների առաջացման տեղիք են տալիս՝ առիթ հանդիսանալով երգիծապատում-զվարճախոսությունների առաջացման.

13 Մեյհ – մր:

14 Էնկանդար — այնքան:

15 Ծիծաղում են վանեցիները, կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Ջանգակ-97» հրատ., 2006, էջ 156:

16 Նույն տեղում, էջ 10:



Համշենցի կնոջ հետ ամուսնացածին հարցնում են.

— Ուստա՛ Մահակ, կարողանո՞ւմ ես կնգանդ բարբառից գլուխ հանել:

— Ինչ ասեմ, էսա 40 տարվա կնիկս ա, հնար չեղավ հասկացնել, որ Գրիշին կրիշ<sup>17</sup> չասի, կրիշին էլ՝ գրիշ...:

(ԱՄՇՀ)

**2.6.** Մուսավեցիների բարբառով ասված սովորական խոսքը՝ ձայնեղ բաղաձայնների խլացմամբ և խուլերի ձայնեղացմամբ, ինչպես նաև «**ա**» ձայնավորը «**ու**»-ի փոխվելով, երբեմն արևելահայի կողմից բամբառակ արտահայտությամբ է ընկալվում<sup>18</sup>:

Տես Հավելված 1, թիվ 7:

**2.7.** Մեր գրանցած գվարճախոսություններից մեկում էլ անսպասել ծիծաղը դրսևորվում է դարաբաղյան բարբառին հատուկ հնչարտաբերմամբ: Հենց դա էլ «նպաստում է» ոռուսերեն *մերտվեց*<sup>19</sup> բառի ուղղագրության «ստուգաբանությանն ու դրա հիմնավորմանը».

*Մի դարաբաղցի մյուսին հարցրնրմ ա, ասմա.*

— *Մերտվեցը ի՞նչ ա գըրվըմ. «յո»-ով, թե՛ «յ»-ով:*

*Ասմա՝ «ը»-ով:*

*Ասմա՝*

— *Ընչի՞ «ը»-ով:*

*Ասմա՝*

— *Ստուգաբանող բառ ա. մը՛նել ա:*

(ԱՄՇՀ)

**2.8.** Քանի որ Ղարաբաղի բարբառը զգալիորեն տարբերվում է Հաղրութի բարբառից, հետևապես գվարճախոսություններում Ղարաբաղի մյուս տարածքների մարդկանց համար ծաղրի առար-

17 Կրիշ (ռուս.) — կտուր, ծածկ:

18 Սվազլյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 111:

19 Մերտվեց (ռուս.) — մեռել:

կա են դառնում հաղորոցիներն ու նրանց բարբառի տարբերակիչ հատկանիշը՝ «ս» ճյուղին պատկանելը.

...Վեր հրցնում ին, թա «շտնդան ես<sup>20</sup>», ասում ըմ լնլ՝ «հաղ-  
րութեցե», ասում ըն լնլ.

— Քյիս ըս, կյաս<sup>21</sup>, // կլխես կյաս<sup>22</sup>:

Այլ միջավայրում Ղարաբաղի բարբառում ձայնեղների խլացումը հարանունության շնորհիվ երբեմն հանգեցնում է որոշ բառերի ու արտահայտությունների բուն իմաստի խեղաթյուրման՝ միտքը շեղելով, դարձնելով բամբառակ.

Հայաստանի նախագահը մի քեֆի վերջում դիմում է սեղանակիցներին, թե՛

— Ժըղովուրդ ջան, էս մի պյաժակով էլ էկեք խմենք պրյոտրիս (իմա՝ բոլորիս) կենացը...

(ԱՄՇՀ)

**2.9.** Շիրակցիների խոսվածքում «կ» պայմանական եղանակիչը՝ հետադաս կիրառությամբ, արտաբերվում է «գ», ինչն էլ զվարճախոսության մեջ այսպես է «հիմնավորվում».

— Հարևանի ախչիկ մը ունիմ, սիրեմ գը:

— Հետո՞:

— Հետո ամուսնանամ գը:

— Սիրելն ու ամուսնանալը հասկացա, բա դրանց վերջի «գ»-ըն ինչն ա:

— Գուրգուրեմ գը:

(ԱՄՇՀ)

**2.10.** Բայազետի բարբառին հատուկ է ձայնավորների կոշտ շեշտադրությամբ արտասանությունը: Զվարճապատում-զվարճախոսություններից շատերի մեջ հերոսների խոսքում եթե այդ

20 Շտնդան ես — որտեղից ես:

21 Քյիս ըս, կյաս — գնում ես, գալիս:

22 Բաքվի հայոց բանահյուսությունը, կազմեցին Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 229:

կոշտ հնչերանգը չպահպանվի, ասելիքն ամբողջ էությամբ չի կարող տեղ հասցվել: Այսպես, պատումներից մեկում ձայնավորների կոշտ շեշտադրությամբ քյավառյան խոսվածքի՝ նեգրի կողմից արտաբերումն է նպաստում անսպասելի ծիծաղի դրսևորմանը.

Քյավառցին էրելիսին տանում ա Լոնդոն, տալիս ա մի ընտանիքի, ասում ա՝

— Դուք երելիսիս ձեր լեզուն սովորեցրեք, մի էրկու տարի հետո կգամ, կտանեն, մադարիչն էլ՝ իմ վրա:

Մի տարի հետո էս քյավառցին ասամ՝ գնամ տենամ՝ տղիս գործերը ճնց են, մի բանի հասել սմ:

Գնում ա, դռան զանգը տալիս ա, դուռը տանտիրոջ նեգր սպասավորն ա բացում, քյավառցին հարցնում ա.

— Օ՛րտոակը տոմնն ա:

— Չէ, — ասամ էս նեգրը, — գոացե խոացի ...

(ԱՄՇՀ)

**2.11.** Բայագետի բարբառի քյավառյան խոսվածքում Ռոզա անձնանվան Հըռոռոզ արտաբերումը զվարճապատումի ստեղծման և զավեշտի առաջացման պատճառ է հանդիսացել: Ծանոթանալ ցանկացող տղային իր անվան սկզբնատառը «Հ» ասելուց հետո տղան չի կարողանում գուշակել անունը, և վերջապես աղջիկը ասում է այն՝ Հըռոռոզ:

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 1, թիվ 8:

**2.12.** Խոյի բարբառով արտաբերումները ևս՝ տարատեսակ դրսևորումներով, դառնում են ժողովրդական երգիծանքի թեմա՝ պատճառ դառնալով երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների ստեղծման:

Դրանցում զավեշտը դրսևորվում է՝

ա. կան Խոյի բարբառով սովորական խոսքում, երբ բարբառը ներկայացվում է գրեթե անխաթար վիճակում.

Վթարի վայրում արտաշատցին բացատրություն է տալիս ավտոտեսուչին.

— Ավտոյով գյալեսի, Էրևանի թեխեն<sup>23</sup> ի գյասէրի, էրկու ջոջ լոյսի տեսասի, գյասեր ի, մութ ի, տասնամ տեսլ իմ ավտոս ա կյալի: Թե կեռեն անջ, թեքես է աջ, թե կեռեն ձանխ, հետս թեքես է ձախ, ես էլ տվի ձախ, աչքը հանի, ճիշտ չարի՛...

(ԱՄՇՀ)

բ. կան էլ մայրաքաղաք տեղափոխվածի պարծենկոտության դրսևորմամբ, օտար բառերը *Խոյի բարբառի հնչողությամբ* ներկայացվելով.

...Չոր գյոդեն դուս գալս վախտ կար՝ սորոկ<sup>24</sup> էր քյաշելի, կյախ-կյախ էլ՝ «Կագրեկ»<sup>25</sup> էր քյաշելի, հիմի էլ փիլտըր<sup>26</sup> ի քյաշելի, հըլսա ռեգըտկայի նման էլ շըֆըռտելի<sup>27</sup>:

(ԱՄՇՀ)

գ. Դրանցից մեկն էլ հանելուկային՝ անհավանական թվացող հարցուպատասխանական կառույցով է հանդես գալիս, որի պատասխանը տալիս է հենց ինքը՝ հարց տվողը.

— Կարո՞ղ եք մի բատ ասեք, որ նաև բարդ ստորադասական նախադասություն լինի, — հարցնում է լեզվաբան Մանվել Ասատրյանը:

.....

— Կըսիրեցուցենըրտ (Ես քեզ կստիպեմ, որ դու ինձ սիրես):

(ԱՄՇՀ)

**2.13.** Պարսկահայոց բարբառին առնչվող գվարճախոսություններից մեկում գավեշտն ստեղծվում է վերդի-որտեղ հարաբերական դերանվան և Վեդի տեղանվան արտասանական հարանունությամբ:

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 1, թիվ 9:

23 Թեխեն – կողմից:

24 Սորոկ (ռուս.) – ծխախոտի մացորդ:

25 «Կագրեկ» – ծխախոտի տեսակ:

26 Փիլտըր՝ ֆիլտր (ռուս.) – գտիչ:

27 Ռեգըտկայի նման էլ շըֆըռտելի – պարսապտիկի նման էլ շպրտում էի:

**2.14.** Մերոպայան այբուբենի տառերից մեկի գրանվան՝ «Խ-ւ» (հիւն՝ հյուն-վյուն) և բառային՝ հոն (ծառապտուղը՝ բարբառային արտասանությամբ՝ հոնն՝ հյուն), համանունությունն առիթ է հանդիսացել հետևյալ զվարճախոսության առաջացման.

— Դարչին ջան, ո՞նց էր ուսումնարանը, հաւանեցի՞ր, մատնի, — հարցրեց մայրը նոր ուսումնարան ուղարկած երեխային:

— Հա, այնա ջան, շատ լաւն էր: Համ էլ գիղաս ի՞նչ, աճի՛ ջան, գրիս միջին լիւ (լ) էլ կար, հիւն (ւ) էլ ...այ:

— Բւ՛, մանտաղ, էդպէս ա. թէ որ լաւ կարդաս, տանձ էլ կըլի, խաղող էլ<sup>28</sup>:

**2.15.** 19-րդ դարավերջին հրատարակված մեկ այլ մանկական զվարճախոսությունում ընթերցանության կերպը՝ գրանվանումներով հեզելն է զավեշտ առաջացնում.

Անգին Մոսին, որը սովորում էր գիւղական խալիֆայի<sup>29</sup> մօտ, շատ էր սիրում «գիր կապելով» կարդալ<sup>30</sup>:

Մի օր ընկերը հարցրեց.

— Արա Անկին, կարաս կիր կապէ՛ս:

— Էն խի՛ չեմ կարալ, — պատասխանեց Անգինը սրտալի, — ինչ վէր ուզում ես ասա, մը սհաթումը<sup>31</sup> կիր կապեմ:

— Դէ վէ՛նց կիր կ'կապես «Աստուած իմ, Հոկտեմբեր»:

— Այփ-ծաստուած, ըննի-մենիմ = Աստուած իմ, հօ-վօ-կեն-հոկ, տիւն-եչ-րե-մեն-կեն-տըեմ = հոկտեմբեր<sup>32</sup>:

---

28 Ծիծաղի տոպրակ, Անեկոսներ հայ և օտարների կեանքից, աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսես Վարդանեանի, 1892, էջ 65:

29 Գիւղական խալիֆա – գյուղական ուսուցիչ:

30 «Գիր կապելով» կարդալ – տառը տառին կցելով անվարժ կարդալ:

31 Մը սհաթումը – մի բոպետմ, անմիջապես:

32 Ծիծաղի տոպրակ, Անեկոսներ հայ և օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 135:

**3.** Զվարճապատումներից մեկում էլ ձայնի հնչերանգը՝ ասելիքը կտրված՝ ցածր ձայնով խոսքն է դառնում զավեշտի հենք (սման պարագայում ասացողը պետք է դերասանի պես հնչերանգը փոխած ասելիքը ընկալելի դարձնի ունկնդրին)։

*Ձենը կտրված մի մարդ պարապ ա ըլում, ասում ա. «Գնամ հարևանիս հետ նարդի խաղամ»:*

*Դուռը թխկացնում ա, հարևանի կնիկն ա դուրս գալիս, քանի որ ձենը կտրված ա, խզված, ցածր ձենով հարցնում ա.*

*— Մարդդ տանն ա՞:*

*Հարևանի կնիկն էլ ա ցածր ձենով ասում.*

*— Չէ, արի՛ ներս:*

(ԱՍՀՀ)

**4.** Բաղաձայնների սխալ արտաբերումը ևս կարող է զվարճախոսությունների առաջացման պատճառ հանդիսանալ: Այսպես, Դիանա անձնանվան սխալ՝ քմայնացմամբ արտաբերելը բառամասնատման դեպքում կարող է անսպասելի ծիծաղ առաջացնել: Նման զվարճախոսական կառույցը օգնում է նաև քննադատելու թե՛ քաղքենիական պահվածքը, թե՛ սխալ արտասանությունը.

*Մեկը հարցրնում է.*

*— Քո՞ր ջան, անունըդ ի՞նչ է:*

*Ասմա՝ Ձիաննա: (Իմա՝ Դիանա)*

*— Ճիշտն օր ըսեմ, ընձի էլ էշ Վալող կըսեն:*

(ԱՍՀՀ)

**5.** Երբեմն էլ համապատասխան ձայնավոր ունեցող բառն արտաբերելիս արտասանական ապարատի՝ շուրթերի բացվածքի կերպն է զվաճախոսության մեջ զավեշտի առաջացման պատճառ դառնում:

1970–80-ականներին մարգաշխարհում թևածում էր ծանրամարտիկ Յուրի Վարդանյանի անունը: Իրար հետևից աշխարհի և Եվրոպայի ռեկորդներ սահմանելը, օլիմպիական չեմպիոն դառնալը, Գինեսի ռեկորդների գրքում հայտնվելը բազմաթիվ անեկդոտների առաջացման տեղիք տվեցին, որոնցից մեկն էլ վերաբերում է լենինականցիների բերանի փոքրանալուն.

- Գիտե՞ք, որ լեհինականցիների բերանը փոքրացել ա:
  - Ո՞նց:
  - Էնքան են գոռացել Յունրիկ, Յունրիկ, որ բերանները փոքրացել ա:
- (ԱՄՇՀ)

**6.** Երբեմն տարբեր տարածաշրջանների մարդիկ ծաղրի առարկա են դարձնում բարբառները կամ խոսվածքները: Այդ դեպքում նրանք ընտրում են այնպիսի բառերով ու բառակապակցություններով կառույցներ, որոնցում արտաբերած խոսքը՝ արագախոսության և արտասանական դադարի խախտման շնորհիվ, հարանտունության ինքնատիպ դրսևորում է ձեռք բերում՝ վերածվելով գռեհիկ արտահայտությամբ արտաբերված զավեշտի: Այսպես՝

Լոռեցիները շիրակցիների լեզուն ծաղրելիս արագախոսությամբ և առանց կետադրական նշանների դադարը պահպանելու են համապատասխան նախադասությունն արտաբերում, որ զավեշտալի բամբառակ իմաստ արտահայտի.

— Քակեցի<sup>33</sup> փափաղըդ դիր, նոր գնա...քակեցի փափաղըդ դիր, նոր գնա...

(ԱՄՇՀ)

Մեկ այլ տարբերակում՝ Շիրակցի հարևանուհին, ցանկանալով իր բարեկամուհուն հյուրասիրել տաք կարկանդակով, ասում է.

Քակեցի, տաք-տաք կեր, նոր կերթաս...

(ԱՄՇՀ)

Շիրակցիներն էլ լոռեցիների լեզուն ծաղրելիս հակադարձում են լոռեցիներին հետևյալ կառույցներով.

Ինչքան ասըմ եմ՝ ածիլ մի, ածել<sup>34</sup> եմ, ածըմ ա...

(ԱՄՇՀ)

33 Քակեցի – Քան, կեցի՛ (իմա՝ քա՛ն՝ կոչական բառ և կեցի՛՝ մնա):

34 Ածել – լցնել, նվազել:



Կամ էլ Լոռու խոսվածքով ներկայացվում է մի այնպիսի նախադասություն, որի մեջ բայի ըղձական անցյալի նմանությամբ նստել, գնալ, տալ, վայր իջնել բայերի անկատար անցյալի անսովոր արտաբերումն է դառնում զավեշտի առարկա.

*Սանկեն<sup>35</sup> նստեյի, գնեյի, գեյի, տոամպլընըմը<sup>36</sup> տեյի, գեղամիչըմը վե գեյի<sup>37</sup> ...*

(ԱՄՇՀ)

**7.** Երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտ ստեղծվում է նաև արտասանության կերպի՝ արագ և դանդաղ արտաբերման միջոցով՝ դրանով իսկ ձգտելով խոսակցի մոտ գործողությունը կատարելու ժամանակահատվածի հակառակ տպավորությունն ստեղծել:

Սանկավարժ, գրող Հ. Գուրունյանը հիշողությամբ ներկայացնում է տատից մորն անցած համշենական զվարճախոսության նմուշներից մեկը, որտեղ սկեսուրը հարսի կատարած աշխատանքը շատ դանդաղ է ներկայացնում, իսկ աղջկանը՝ արագ-արագ.

*— Հայսս<sup>38</sup> օրը լմթ<sup>39</sup> մը, օրը լմթ մը... Ամա ախճիզըս շապտուն<sup>40</sup> շրպըրտքը<sup>41</sup> լաթ մը, շապտուն շրպըրտքը լաթ մը<sup>42</sup>...*

Տե՛ս Հավելված 1, թիվ 10:

Այդ զվարճախոսության կիլիկիահայոց տարբերակում<sup>43</sup> ևս սկեսուրը հարսի կատարած աշխատանքը դանդաղ, ծոր տալով է

35 **Սանկեն** (ռուս.) – սահնակը:

36 **Տոամպլին** (ռուս.) – ցատկահարթակ:

37 **Վե գեյի** – իջնում էի:

38 **Հայս** – հարս:

39 **Լաթ** – լվացք:

40 **Շապտուն** – շաբաթը:

41 **Շրպըրտքը** – այս ու այն կողմ նետել, շարտոտել:

42 **Գուրունյան Հ.**, Համշենահայ բանահյուսություն, Եր., 1991, «Լույս» հրատ., էջ 51 :

43 **Սվազյան Վ.**, Կիլիկիա. Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 66:

ներկայացնում, իսկ աղջկանը՝ արագ-արագ: Զավեշտի հենքը այստեղ և՛ հնչերանգն է, և՛ հատկապես աշխատանքը կատարելու ժամանակահատվածը՝ մի ժամում և մի օրում: Որպեսզի խոսակիցը հակառակ տպավորությունը չունենա, ասացողը դանդաղ է ասում *մի ժամում-ը*, արագ-արագ՝ *մի օրում-ը*:

Տես Հավելված 1, թիվ 11:

Իսկ ազուլիսցիների տարբերակում<sup>44</sup> արագ ու դանդաղ արտաբերումը նպատակ ունի զավեշտն ստեղծել ծուլության հիմքի վրա՝ երկու թամբալ կանանց՝ *բաղնիս անելու՝* լողանալու գործության հաճախականությունն ընդգծելու միջոցով:

Տես Հավելված 1, թիվ 12:

Մոկսի տարբերակում երկու մայրերն իրենց աղջիկների շուտիկ<sup>45</sup> գործելու շտրիքն են ներկայացնում, և մեկի աղջկա՝ օրը մի շուտիկ գործելուն մյուսը հակադրում է իր աղջկա՝ շաբաթը մի շուտիկ գործելը. «*Ա՛հ, ի՛նչ է օրե շուտիկը... Իմ ախչիկ՝ շաբաթ շուտիկըմ, շաբաթ շուտիկըմ*»:

Տես Հավելված 1, թիվ 13:

Հրաշապատումային տարրեր պարունակող ոսկեձկնիկյան պատումաշարի նմուշներից մեկում էլ շտապողականության հետևանքով շուտասելուկի պես արագախոսությամբ ասված խոսքն է հանգեցնում զավեշտի: Երեքհարկանի առանձնատուն, մեծ կրծքերով կին և «Մերսեդես» ավտոմեքենա ունենալու ապարանցու՝ արագախոսության շաղախով արտաբերած երեք ցանկությունները կատարվում են, և Ոսկե ձկնիկը նրան պարգևում է երեքհարկանի մեծ կրծքերով մի «Մերսեդես»: Ցանկությունների կատարման այսպիսի «պատճառաբանված» լուծում-վերջաբանն էլ ավելի է նպաստում անսպասելի և ինքնաբերական ծիծաղ հարուցելուն:

Տես Հավելված 1, թիվ 14:

---

44 Ազուլիսի բարբառի մատնքներ, աշխատասիրությամբ Աբգար Այվազյանի, 2-րդ հրատ., Եր., «Գասպրինտ» հրատ., 2012, էջ 164:

45 **Շուտիկ** – միագույն կամ բազմագույն թելերով երկար ու նեղ ծակուկեն գործվածք:

**8.** Մանկական զվարճախաղի տեսակներից մեկը՝ շուտասելուկը, որոշակի բաղաձայնների (կոնկրետ՝ «Ճ»-ի) կուտակումով, սակայն այլ միջավայրում և այլ տարիքային խմբի հետ կիրառվելիս (երբ «խաղընկերներից» մեկի տարիքային և դիրքային տարբերությունն ակնառու է) կարող է զավեշտի հենք հանդիսանալ և անսպասելի ծիծաղ առաջացնել:

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 1, թիվ 15:

**9.** Բարձր տարիքային խմբի երեխաների զվարճախաղերից մեկն էլ առաջադրվող խոսքային կառույցը (ասենք՝ «Աղ չկամ, ձոն կուտեն» բարդ նախադասությունը) մի քանի անգամ արագախոսությամբ արտաբերելիս է հանգեցնում զավեշտալի՝ բամբառակ պարզ նախադասության:

**10.** Վարդանիկյան անեկդոտաշարում ևս հանդիպում ենք անսպասելի ծիծաղ առաջացնող նմանատիպ կառույցի, միայն թե ն՛ հանձնարարություն առաջադրողն է կոնկրետացված (Ընկեր Մարգոն), և՛ կատարողը (Վարդանիկը): Այստեղ ևս բարդ նախադասությունը վերածվում է բամբառակ պարզ նախադասության, և զավեշտն ստեղծվում է ոչ թե արագախոսության միջոցով, այլ շաղկապը գոյականի փոխելով՝ «որ» շաղկապի փափուկ *n-ն n-ով* փոխարինելով.

*Ընկեր Մարգոն Վարդանիկին կանչում է գրատախտակի մոտ ու ասում.*

— *Վարդանիկ, գրի՛. «Կաշխատենք, որ ուտենք»:*

*Վարդանիկը գրում է. «Կաշխատենք ոռ ուտենք»:*

— *Վարդանիկ, սխալ ես գրել. «որ»-ը փափուկ գրի:*

*Վարդանիկը սխալն «ուղղում» է. «Կաշխատենք փափուկ ոռ ուտենք»:*

(ԱՄՇՀ)

**11.** Երբեմն էլ օտար ազգությունների ներկայացուցիչները հայերեն խոսելիս չեն կարողանում ճիշտ արտաբերել այս կամ այն հնչյունը կամ հնչյունախումբը: Հենց այդ սխալ արտաբերման ժամանակ էլ ի հայտ են գալիս բազում զավեշտալի իրողություններ, որոնք, հետագայում այլոց պատմելով ու բերնեբերան փոխանցե-

լով, ձևավորում են բանահյուսության երգիծապատում-զվարճախոսությունների տեսակը: Ստորև բերվող օրինակներից մեկում զավեշտի հենք է դառնում խոսակցի հոգու հետ խաղալու նպատակով կիրառվող բառախաղը.

*1960-ականների վերջին Երևանի պետհամալսարանում հայոց լեզվի քննության ժամանակ ազգությամբ եզդի մի ուսանող նստում է քննասեղանի մոտ ու սկսում.*

— Հարսին (իմա՝ հարցին) պետք է մոտենալ 3 կողմից...

— Տղմ ջան, — միջամտում է լեզվաբան Մանվել Ասատրյանը, — էն էրկուսը գիտենք, դու խոսիր երրորդի մասին...

(ԱՄՇՀ)

**12.** Հայ ժողովրդական երգիծական ստեղծագործությունների համատեքստում իրենց արտասանական յուրահատկություններով առանձնանում են **Լոռու երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները**, որոնց մեջ ուրույն խումբ են կազմում գուտ լոռեցիների խոսվածքի հնչարտաբերմանը բնորոշ երկարացման հնչերանգով երկխոսական կառույցները: Այդպիսի երկխոսական զվարճախոսություններում լոռեցու ականա հարցումն էլ դառնում է անսպասելի ծիծաղի հենքը:

Եթե գրական հայերենում հարցական կամ բացականչական նշանը դրվում է վերջին վանկի ձայնավորի վրա (բացառությամբ հատ ու կենտ դեպքերի), ապա Լոռու խոսվածքում հարցում արտահայտող բառի ձայնավորը (երբեմն էլ ձայնավորները) երկարացվում է (մէէէր, մէրըըը, դոմնըըը):

**12.1.** Հայերենի բացահայտության նշանները՝ հարցականը և բացականչականը, ի զորու չեն արտահայտելու այն սրբերանգները, որոնք առկա են լոռեցու խոսվածքում: Երկաստիճան, երբեմն էլ եռաստիճան երկխոսական կառույցներով զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում լոռեցու երգեցիկ հնչերանգով արտաբերած հարցումները: Նմանատիպ կառույցներում երկխոսությունը կան երկկողմանի հարցով է արտահայտված, կան միակողմանի: Առաջինի դեպքում հարցումը երկու ձևով է հանդես գալիս.

**ա.** երկկողմանի հարցմամբ (եթե հարց տվողը լոռեցի չէ).

**ա-1** — *Չվածեղ սարքէմ:*      **ա-2** — *Ներեցե՛ք, ծննդատունը որտե՛ղ է:*  
— *Չվճռո՞մ:*                                — *Կը՛նանտո՞ց:*

(ԱՄՇՀ)<sup>46</sup>

**բ.** երկկողմանի երանգավորված հարցումով (եթե երկխոսություն վարողները լոռեցիներ են).

**բ-1** — *Չվածեղ սարքէ՛էմ:*      **բ-2** — *Ջգա՛ցիի՛ր:*  
— *Ձըվճո՞մ:*                                (*իմա՛ երկրաշարժի ցնցումը*)  
— *Էլ յեղ է՛լասսավ:*

**գ.** Երկրորդի դեպքում լոռեցու երանգավորված հարցմանը կարող է նախորդել սովորական՝ առանց բացահայտության հնչերանգի նախադասությունը.

— *Ա՛յ, էս մեքենան ա 3 լիտր բենզին վառում,*— *ցույց տալով անցնող «Օկա» մակնիշի ավտոմեքենան՝ ասում է հավաքված հարևաններից մեկը:*  
— *Օրակա՛սասան,*— *հարցնում է լոռեցի հարևանուհին:*

**12.2.** Ճիշտ է, երանգավորված խոսքով հարցում պարունակող երկխոսական կառույցներում կան նաև այնպիսի նմուշներ, որոնցում հարցումը ոչ թե միամտության կամ ինքնաբերաբար արտաբերման արդյունք է, այլ չիմացության՝ առարկաներից ու երևույթներից անտեղյակ լինելու հետևանք: Լոռեցին գիտի «դիպլոմատ»-ի՝ միայն ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող «պայուսակ»-ը, նրան անծանոթ է դրա օտարալեզու *դիպլոմատ-«դիվանագետ»* համանունը, ինչն էլ զվարճախոսության մեջ հանգեցնում է զավեշտի.

— *Տղեղ ի՛նչ ա ըշխատըմ,*— *հարցնում է լոռեցին հարևանուհուն:*  
— *Դիպլոմատ:*  
— *Ձեռի՛ի...*

---

46 Կրկնությունից խուսափելու համար Լոռու մեր գրառած երանգավորված հնչերեքանգով զվարճախոսությունների մոտ չի նշվի (ԱՄՇՀ) համառոտագրությունը:



Տարիներ առաջ մշակույթի բնագավառի աշխատակիցներով ավտորուսով գործուղման էինք գնում Ջանգեզուր: Ճանապարհին կանգ առանք Արվիա գետի ափին՝ մի փոքր հանգստանալու: Թատերական բաժնի գիտաշխատող, դերասան Սարգիս Խանրեկյանն իր հետ ձկնորսական սարք էլ էր վերցրել:

— Ընկեր Խանրեկյան, չես ուզում՝ ձուկ բռնես, ղոկանդ վերցրու — ավտորուսից իջնելիս դիմեցի մանկան պարզամտությամբ ու ազնվությամբ օժտված դերասանին, որը Ստեփանավանի թատրոնում խաղացել էր նաև Սոս Սարգսյանի հետ:

— Ջրիցըրը՛, — ինքնաբերաբար փորձեց պարզաբանել Խանրեկյանը՝ հարուցելով ներկաների անզուսպ ծիծաղը:

— Չէ՛, հողիցը, այ՛, էսպես եք անում, որ Հայաստանով մեկ խայտառակ եք անում լոռեցիներիս, — հոգու հետ խաղալու համար վրա բերեցի ես:

— Պանհ, քու..., արս՛, էս ղնց ասի, — փորձեց արդարանալ տարեց դերասանը:

**12.4.** Այլ տարածաշրջանների ունկդիրների համար հարցման գավելշտալի այս եղանակներն էլ պատճառ են դարձել Լոռու երանգավորված երգեցիկ զվարճախոսությունների տարածման, նաև՝ նորերի ստեղծման՝ ծիծաղի մեխ դարձնելով հենց այդ անսովոր երանգը: Լոռեցիների հոգու հետ խաղալու համար նրանց երգեցիկ խոսքը՝ հենց իրենց՝ լոռեցիների բերանով, այսպես են հիմնավորում ոչ լոռեցիները:

— Էլ մենք երգելով չենք խոսըրը՛մ, — ասում են լոռեցիները:

Եվ որպես պատասխան նման կառույցները չարաշահողներին՝ լոռեցիներն անցնում են, այսպես ասած, «ինքնապաշտպանության»՝ մի քանի նմանատիպ երկխոսությունների համադրմամբ ստեղծելով բազմաշերտ մի զվարճախոսություն:

Տես Հավելված 1, թիվ 16:

**12.5.** Վատ իրավիճակ ներկայացնող **էլ մի հարցնի** բառակապակցությունը Լոռու զվարճախոսություններից մեկում այսպես է ներկայանում:



Արշոն հանդիպում է ընկերոջը:

— Խաչատուր, հլա մի հարցրո՞ւ ինձ, թե ո՞նց ես ապրում, ո՞նց չես ապրում:

— Ո՞նց ես ապրում, Ա՛րշո՛:

— Է՛, էլ մի հարցնի (այսինքն՝ վատ)<sup>48</sup>:

**12.6.** Մեկ այլ դեպքում էլ հարցին հարցով պատասխանողը, հարցման նպատակին ու գործողությանը յուրովի հակադրվողը կյանքի լավին ու վատին հաղորդակցվող գյուղաշխարհի մարդն է.

— Կարանս սովխոզի դիրեկտորը ըշխատես, — հարցնում է գյուղում հանգստացող երևանցի դաչնիկներից<sup>49</sup> մեկը :

— Խի՞, վախըմ ես «Վիլիսիցը» վեր ընգնենեմ:

(ԱՄՇՀ)

**12.7.** Ի դեպ, հարցմանը հարցով պատասխանելով՝ ասելիքը հաստատելու կառույցի հանդիպում ենք նաև XIX դարավերջին Սմբատ Շահագիզյանի հրատարակած «Ծիծաղի տոպրակում» տեղ գտած նմանատիպ մի մանրապատումի.

— Քահանան նորամանուկին մկրտելուց հետո տվեց կնքահորն՝ ասելով.

— Ա, թիւն կարաս խտըտե՞ս:

— Էտ ինչ վետներս ա, վեր կարամ վեչ,— պատասխանեց նա՝ քոլորովին միամտությամբ,— ուզու՞մ ես դրա մորն էլ խտըտեմ<sup>50</sup>:

**12.8.** Այլ տեղավայրի ներկայացուցչի՝ լոռեցուն ծաղրելու խոսքին երբեմն այդ նույն միամիտը պատասխան խոսքով այնպիսի հակահարված է տալիս, որ հանկարծակիի է բերում խոսակցին.

48 Ծիծաղի պարտեզ, գիրք-3, 2006, էջ 37:

49 Դաչնիկ (ռուս.) – հովեկ:

50 Ծիծաղի տոպրակ, Անեկոտներ հայ և օտարների կենսից, Աշխատասիրեց դպիր Ս. Ս. Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, 1892, տպարան Սովսէս Վարդանեանի, էջ 7:

Լոռեցին ապրանքի<sup>51</sup> հրմար էրկու վեդրո<sup>52</sup> փթած տանձ ու խնձոր ա տանելիս ըլըմ: Մի ըրեվանցի դաչնիկ<sup>53</sup> սրան ձեռ առնելու հրմար հարցընըմ ա.

— Ամոթ չըլի հարցընիլը, էդ փթած տանձ ու խնձորիցն ինչ ես սարքելու, որ տըհենց ծանդրը-ծանդրը տանըմ ես:

Ասմա.

— Տանըմ եմ ֆոնի արաղ քաշեմ, որ ըրեվանցոնց վրա ծախեմ:

(ԱՄՇՀ)

**12.9.** Լոռու բանահյուսությանը նվիրված գրքերից մեկում<sup>54</sup> տեղայնացված հետաքրքիր երկխոսական մի գվարճախոսություն կա. 10 տարի մորը չտեսած, օտարազգու հետ ամուսնացած, 3 երեխաներ ունեցող որդու և ազգային ավադույթներով ապրող մոր հեռախոսագրույց է այն, ժողովրդական խոսքին հատուկ կարճ ու կցկտուր խոսակցություններով: Ավանդականի և նոր ժամանակների մտածողության արդյունքում ճիշտ է, վերջաբանը զավեշտալի է, և մոր պատասխանը՝ արտաքուստ ծիծաղ հարուցող, բայց այն թախծոտ է ու նաև՝ մտածել տվող.

*Ռուսաստանում գտնվող տղան զանգահարում է մորը.*

— Ա՛յ մեր, գալիս եմ:

— Քե՛ մատաղ, 10 տարի է աչքս ջուր կտրեց:

— Ա՛յ մեր, մի ոռու կնիկ էլ եմ բերում:

— Ես քեզ էլ մեռնեմ, քու ոռու կնգանն էլ, անրի:

— Ա՛յ մեր, իրեք ըրելիսա էլ եմ բերում:

— Ես քեզ էլ մատաղ, քու իրեք ըրելիսին էլ:

— Ա՛յ մեր, Էդ ըրելիսանցից երկուսը շեզ ա, մինը՝ սև:

— Արի՛, բալս՛, անրի:

— Բա էրկու սենյակում ո՛նց տենք քնի:

---

51 **Ապրանք** – անասուն

52 **Վեդրո** (ռուս.) – դույլ

53 **Դաչնիկ** (ռուս.) – հովեկ

54 **Բարայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, «Հայաստան» հրատ., Եր., 2007, էջ 61:

— *Տղամ ջան, դու քու կնգա հետ մի սենյակում կքնես, ըրելխեքը՝ մի, հերդ էլ՝ կուխնումը*<sup>55</sup> յոլա կգնա, մենակ թե արի:

— *Ա՛յ մեր, բա դու՞:*

— *Տղամ ջան, ես էլ էսա տրուպկեն*<sup>56</sup> *վեր եմ դնում ու ինֆարկտ ստանամ*<sup>57</sup>:

**12.10.** Երկխոսական անեկդոտների մի խումբ Լոռու խոսվածքին բնորոշ բառային տարբեր շերտերի հոմանիշների կիրառությունից բխող բառախաղային կառուցվածքներով է հանդես գալիս, որն էլ դառնում է գավելշտի աղբյուրը: Ահա մի քանի նմուշ.

**ա.** *Լոռեցուն ասմեն՝*

— *Հոքիներից վախըմ են:*

*Ասմա՝*

— *Դե նայած՝ քանի հոքի ա:*

(ԱՄՇՀ)

**բ.** *Էրկու լոռեցի բիճա որոշըմ են լելի*<sup>58</sup> *գնան: Ճամփին մինն ասմա՝*

— *Այտա՛, հըմի որ գնացինք ու տվին ոչ, ինչ տենք անի:*

*Էն մինն էլ թե՛*

— *Մթամ որ տվին, ինչ տենք անի:*

(ԱՄՇՀ)

**12.11.** Լոռու խոսվածքում *տուն անել* դարձվածքը մի քանի նշանակություն ունի՝ բանտարկել, կալանել, նաև՝ ներս տանել : Զվարճախոսություններից մեկում այդ դարձվածքով տրված հարցին հետևող պատասխանը խոսակցի հոգու հետ խաղալու, իբր ուղիղ իմաստով ասված «անհերթել» խոսքի ժխտումն ու ճիշտ գործողության հիմնավորումն է.

*Զանգահարում են.*

— *Մերգո՛, ոչխարը հանդիցը էկամ՛լ:*

55 **Կուխնումը** (ոռու.) – խոհանոցում:

56 **Տրուպկա** (ոռու.) – լսավող:

57 **Բաբայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, «Հայաստան» հրատ., Եր., 2007, էջ 61:

58 **Լելի** (ոռու.) գնալ – ձախ գնալ՝ սեռական հարաբերության համար գնալ:

- Հւ՛:
- Տուն արհիր:
- Չէ, գոմն արհ<sup>59</sup>:

**12.12.** Նույն երկինաստ ու բառախաղային կառույցով է դրսևորվել հետևյալ մանկական զվարճախոսությունը.

*Ուսուցիչը հարց է տալիս.*

— *Երեխաներ, կովը ինչ է տալիս:*

— *Հարու<sup>60</sup>, — պատասխանում է լոռեցի աշակերտը:*

(ԱՄՇՀ)

**12.13.** Մեկ այլ դեպքում զվարճախոսության ստեղծման հիմք է հանդիսացել ազգության և տրակտորի մակնիշի («Բելոռուս») համանունության կիրառությունը.

— *Բալա ջան, էդ հետինըդ ռուս ս՛,*— *հարցնում է գյուղամիջում արևկող անող համագյուղացիներից մեկը բանակից զոքացրված երիտասարդին:*

— *Չէ, պապի՛ ջան, բելառուս ա:*

— *Իյս՛, բա քըմակի լմֆետն<sup>61</sup> ուր ա:*

(ԱՄՇՀ)

**12.14.** Լոռու բարբառում բայի արգելական հրամայականի «մի» մասնիկը եզակի թվում նախադասից տեղափոխվում է հետադաս, իսկ հոգնակիում «մի»-ն փոխարինվում է «ոչ»-ով (Մի՛ կրակիր-կրակիլ մի // Մի՛ կրակեք-Կրակեք ոչ): Եթե այս երևույթին էլ ավելացնենք հրաման արձակող լոռեցու արտասանական երկարացման հնչերանգը՝ անեկդոտում անսպասելի զավեշտ ստեղծելու նախադրյալներն արդեն իսկ պատրաստ են.

*Լոռեցի հրամանատարին գալիս հաղորդում են, որ չկրակեն. գնդակահարությունը չէրյալ է հայտարարվել. մահապար-*

59 Աբազյան Ս., Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999, էջ 38:

60 Հարու տալ – եղջյուրներով հարվածել:

61 Լաֆետ (ռուս.) – հրետասայ, Լոռու խոսվածքում՝ տրակտորի կցասայ:

տին ներում է շնորհվել: Եվ հրամանատարը արձակում է նոր ստացված հրամանը.

— Կրակե՛նք... — ու մինչև «ոչ»-ը կասվեր, հնչում է համագարկը, և կրակում, սպանում են արդարացվածին:

(ԱՄՇՀ)

Անեկդոտում լոռեցու երկարացնող հնչերանգը և արգելական հրամայականի հետադաս կիրառությունը դառնում են անմեղ մարդու մահվան պատճառը: Այլ տարածքների ներկայացուցիչները լոռեցիների հոգու հետ խաղալու համար հաճախ են օգտագործում այս զվարճապատումից պոկված «Կրակե՛նք ոչ»-ը<sup>62</sup>:

**12.15.** Ինչպես այլ բարբառների ու խոսվածքների, այնպես էլ լոռեցիների բառագանձին հատուկ այնպիսի բառ-բառակապակցություններ կան, որոնք հասկանալի են միայն տվյալ բարբառը կրողին: Այսպես, ունկնդրի համար զվարճալի ու անհասկանալի է, բնականաբար, երկխոսության մեջ զուտ լոռեցու խոսվածքին հատուկ շաշ եմ արել — ժխտական գործողություն արտահայտող դարձվածքով (չեմ արել, կերել, գնացել...) տրված պատասխանը.

Հանդը գնացող Գորգի պապին ամուսնացած աղջիկը հարցնում է.

— Հերսի (հայրիկ), սօրի ինչ ես կերել:

— Շաշ եմ արել... (Վարոսանց Գուրգենը ոչինչ չէր կերել)<sup>63</sup>:

**12.16.** Զայրույթով արտաբերված ժխտական պատասխանն արտահայտվում է նաև *զահրումարն իրա պինչն ա կերել* (իմա՝ ոչինչ չի կերել) *զահրումար ա արել* կամ *զահրումարն իրա պինչն ա արել* (իմա՝ ոչինչ չի արել) և նմանատիպ այլ ժողովրդական ասույթաբանական կառույցներով: Սակայն զավեշտ ստեղծելու համար զվարճախոսություններում դրանք հեգնանքով են ասվում՝ ընդգծելու համար այդ արտահայտություններում առկա հակառակ գործողությունը՝ շատակերությունը, ոչինչ չանելը և այլն: Այսպես.

62 Գրեթե ամենուր սխալմամբ մեջբերվում է «Կրակե՛նք ոչ»-ը:

63 **Բաբայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007, էջ 66:

— Ափո՛, Ավետիքն էսօր ի՛նչ ա կերել:

— Զահրումարն իրա պինչն ա կերել: Ավետիքը կերից կտրվել ա, նի ա բան ուտը՛մ, որ: Էսօրվա կերածը մի պղինձ կարտոլ ա էլել, մի բաղյա<sup>64</sup> մոթալի պանիր: Վրիցն էլ էրկու բաժակ չայ ա խամել, — տրտնջում է կինը<sup>65</sup>:

**12.17.** Երկխոսական անեկդոտներում զավեշտն ստեղծվում է նաև զուտ լոռեցու խոսվածքին բնորոշ ու նրան ընկալելի *հենցայն-պետություն-իմիջիայլոցություն* արտահայտող *շաշումաշ* (տարբերակ՝ շաշմաշ) պատասխանով.

*Լոռեցուն հարցնում են.*

— Ո՞նց ես:

Ասում ա՛

— Շաշումաշ (*հենց այնպես-իմիջիայլոց*):

(ԱՍՇՀ)

**12.18.** Ժողովրդախոսակցական *իրան տու* բառակապակցությունը լոռեցու հեռախոսային խոսակցության մեջ հարանունությանը բամբատակ իմաստ է ձեռք բերում՝ դառնալով անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ.

— Այն... քուրո՛ ջան, ըղիկ Համոյի տունն է՛:

— Հա:

— Մի հատըմ իրան տու:

— Ի՛, ֆողեմ գլուխըդ, դու տես ասի՛լ, որ ես իմ մարդին տամ...<sup>66</sup>

**12.19.** Հայկական անեկդոտներում անսպասելի ծիծաղ է առաջացնում որոշ բարբառներում առկա անհարկի *հնչյունահավելման* դրսևորումը: Այսպես, ոռուերեն *կալբասա*<sup>67</sup>–երշիկ բառը

64 **Բաղյա** – մետաղյա լայն բերանով, մոտ 4 լիտր տարողությամբ աման:

65 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ատղիկ», 2008, էջ 42:

66 «Եղինջ» երգիծաթերթ, Վանաձոր, 1996, թիվ 4 (22):

67 **Կալբասա** (ռուս.) – երշիկ:

լոռեցիները կայրաստ են ասում: Լոռեցի զվարճախոսի կողմից «տ»-ի կիրառության «ինքնատիպ» մեկնաբանությունն է դարձել պատումներից մեկի զավեշտի մեխը.

*Լոռեցի Ռուբենը մըտնըմ ա խանութ, թե՛*

*— Քիրսի ջան, ինձ մի կիլո կայրաստ տու:*

*Խանութպանն ասմա.*

*— Կայրասը հըլա հըսկացանք, Ռուբենն քեռի, բա «տ»—ըն ինչն ա:*

*— Բալսի ջան, «տ»— ն էլ վրի կլեպն ա (տարբերակ՝ կաշին ա), — ասըմ ա Ռուբենը:*

(ԱՄՇՀ)

Փաստենք նաև, որ Լոռու խոսվածք ներմուծված ոուսերեն բառերից «տ» աճականով է հանդես գալիս նաև բեզմեն<sup>68</sup> բառը, որը բիզնեսմենի<sup>69</sup> հետ հարանոնության դրսևորմամբ դառնում է անեկդոտի զավեշտի աղբյուրը.

*— Ախչի՛, Օֆիկ, տղետ Մասկվա ինչ ա անըմ, — հարցնում է հարևանուհին:*

*— Եսին, ասմեն բեզմենտ ա:*

(ԱՄՇՀ)

---

68 **Բեզմեն** (ռուս.) – ձեռքի զսպանակավոր կշեռք:

69 **Բիզնեսմեն** – գործարար

# ՀԱՎԵԼՎԱԾ 1

## 1

— Աղբար, .....

Գնորդը վրդովված բղավում է.

— Տո՛, ես քեզ ի՞նչ ախպար, ախպարը դո՛ւ ես:

Նորեկը փորձում է իր միտքը պարզաբանել՝ ասելով.

— Ինչո՞ւ կնեղվիս, դուն ինձի համար եղբայր ես, ես ալ՝ քեզի: Մենք երկուքս ալ իրարու եղբայր ենք, ինչո՞ւ, որ հայ ենք, մեկ հողին վրա կապրինք:

Տեղաբնակը, ձեռքը թափ տալով, բարկացած հեռանում է: Ներգաղթած վաճառողը ետևից բղավում է.

— Քեզմե՛ փիլիսոփա չըլլար:

Ստեփանյան Ա., 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 208:

## 2

### Նոր էկոդն ու էշը

Աշխարհի տեսած նոր էկոդներուն բերին թափեցին Հայաստանի Ջաֆարաբադ խուլ գյուղը՝ հիմիկվա Արզավանդը: Բերին ժողովրդին թափեցին, ըսին. — Ցանեք, քաղեք, ապրեք... Նոր էկոդ մարդուն մեկն ալ դժվարությամբ կսկսի ցանել, քաղել: Տեղացի դրացիեն ալ էշը կտանե, որ տանի Երևան՝ ծախսե: Կբարձե էշի վրան, ճամփա կիյնա: Ան ժամանակ ալ Երևանի շուկան կինտ «Ռոսիայի» տեղն էր: Ցերեկի մոտ էշը կգա, կհասնի քաղաք: Կուգա, կկանգնի, չի քալեր... Օթոները, տրամվայները կուգան կկայսին, խճողում կսկսվի: Միլիցիան կուգա, կտեսնա վիճակը, կըսե. — Դու ախպար ես, ինչ է. չես հասկանում, ճամփան փակել ես, երթնեկությունը կանգ է առել: Աս նոր էկոդը կպատասխանե. — Ես՝ ախպար եմ, կհասկանանմ, բայց՝ էշս տեղացի է. չի հասկնար:

Սվազլյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 111:



### 3

Մեկը տանը գործ անելիս տղային ասում է՝

— Գնա էս մեր դրկից Թորոսին ըսէ՝ «Պապաս դռել կուզե»:

Էրեխենն գնում, ասում է.

— Թորոն քեռի, պապաս դռել կուզե:

— Է՛, տռել կուզե, թող տռե, ո՛վ կխանգարե անոր:

— Թորոն քեռի, պապաս էլեկտրական դռել կուզե:

— Էլեկտրական տռել կուզե, թող զույգ մատը խոթե շտեպցե-  
լին<sup>70</sup> մեջ, էլեկտրական տռե...

(ԱՄՇՀ)

### 4

Մեկը իր հայրենադարձ հարևանին հարցնում է.

— Է՛, Հակոբ աղբար, ինչո՞ւ կ'նստիս կըլռիս:

— Քեզ ալ որ առտուն կանուխ հանեն քունեն, թուն ալ կ'նստիս  
կ'ըլռիս:

(ԱՄՇՀ)

### 5

Երկու վանըցիյի կնացիր ին կուրբաթութեն (օտարություն),  
խասիր ի չում Ալմանի<sup>71</sup> աշխար: Օրմ Ալմանի թակավոր տաշտի  
մեչ էսա վանըցիներաց կը տիսնա, իտոնց խագած խալըվներաց<sup>72</sup>  
կը խասկնա, որ իտոնք օտար մարթ են: Կը խաոցուցի, թե ինչ ազգ,  
ինչ միլաթ<sup>73</sup> եք:

— Իսայ ենք, — կասեն վանըցիք:

— Դե մեյ խա՛մ ծեր լեզվով զրուցեյի, տիսնամ:

Իսայերաց մեյն կը տատնա ուր ինգըրոչ կասի.

— Իսնամի՛ Իսեպո, խունգար խրամե խայերեն խոսանք: (Իսնա-  
մի՛ Իսեպո, թագավորը հրամայում է հայերեն խոսենք):

Ալմանի թակավոր որ կը լսի ինոնց զրոց, կասի.

---

70 **Շտեպցել** – վարդակ:

71 **Ալմանի** – Գերմանախա:

72 **Իսալավ** (հալավ) – հագուստ

73 **Միլաթ** (թրք.) – ժողովուրդ:

— Ավար, ավար, էլ մեյի<sup>74</sup> գրուցե, մեր լեզվի մեչ էնկանդար<sup>75</sup>  
խ,խ,խ լսեր եմ, որ էլ ուրիշի ասած իս-իս-ն չե ուզե լսեմ :

Ծիծաղում են վանեցիները,  
Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն.,  
Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 156:

## 6

Վանեցուն դիտողություն արին, որ խոսելիս ու գրելիս վերջում  
«ը»-ն չի արտասանում:

— Միանգամայն ճիշտ ի... Մենք վանեցիներս այդ տառը  
խնայողությամբ կքործածենք:

Ծիծաղում են վանեցիները,  
կազմեցին՝ Վ. Հարությունյան, Ն. Մելիքյան,  
Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 10:

## 7

### Մուսալեռցի մայրիկն ու հայաստանցի տղան

Երևանում տեղացի բանվոր տղային մեկը գործեն տուն կուգա,  
կըսե.

— Գնամ ընկերոջս՝ Բարսեղի տունը:

Կերթա, դուռը կգարնե, Բարսեղին մայրը դուռը կբանա: Տեղա-  
ցի տղան կհարցնե.

— Մայի՛կ, Բարսեղը տա՛նն է:

Բարսեղին մայրը մուսալեռցի կըլլա, կպատասխանե.

— Պուց քնու՛ձ է, բուղ առու՛ձ է, բառգու՛ձ քնու՛ձ է:

— Մայրի՛կ, — կըսե տեղացի տղան, — քո տղան միշտ երբ պ..  
ք..., կպառկի՛:

— Չէ՛, — կըսե մայրը, — չհասկցա՛մր. բաց քնել է, պաղ առել է<sup>76</sup>,  
պատկել է:

Սվազյան Վերծինե, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը,  
Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994 թ., էջ 111:

74 Մեյի – մի:

75 Էնկանդար – այնքան:

76 Պաղ առել է – մրսել է:

## 8

Մի էրեվանցի տղա ուզում ա մի գեղացի ախշըկա խոսացնի:  
Մոտենում ա , թե՛

- Քո՛ր ջան, անունըդ ի՛նչ ա:
- Էս աղջիկը ձե՛ն չի հանում:
- Լավ, գո՛նե առաջի տառն ասա:
- Բա թե՛ Հ:
- Հասմիկ ան՛:
- Աղջիկը ծըտտացնում ա, թե՛ չէ:
- Հերիքնան՛գ:
- Էլի ա ծըտտացնում:
- Բա ի՛նչ ա:
- Հըռուոգ...

(ԱՄՇՀ)

## 9

Մի պարսկահայ տաքսու վարորդին հարցնում է, թե՛  
— Ախպե՛ր ջան, վերդի՛ (իմա՛՝ ո՛ր) ես գնում:  
— Հան՛, ասում է վարորդը:  
Սա նստում է, ու որ հասնում են Արտաշատ, պարսկահայը մի  
անգամ էլ է հարցնում.

- Ախպե՛ր ջան, վերդի՛ ես գնում:
- Վարորդն ասում է.
- Ասի՛ հա, Վեդի եմ գնում, էս էլ Արտաշատը:
- Իաաս՛, բա ես Արովյանն եմ գնում...

(ԱՄՇՀ)

## 10

Մայրս չէր սիրում վատ սկեսուրներին: Շատ հետաքրքիր ար-  
տասանում էր իր մորից լսած հետևյալ խոսքերը.

Կընիկ մը կոյն՛<sup>77</sup> ախճըգոնը կովեր, հայսին վն՛ր գուտսնը<sup>78</sup>.

---

77 Կոյնի – իբր:

78 Վնի ր գուտսնը – իջեցնել, նսեմացնել:

— Հայսս օրը լաթ մը, օրը լաթ մը... Ամա ախճիգըս շապտուն շըպըրտքը լաթ մը, շապտուն շըպըրտքը լաթ մը — աղջկանը վերաբերողն արագ-արագ ասում էր մայրս:

Գորունյան Հ., Համշենահայ բանահյուսություն,  
Եր., 1991, «Լոյս» հրատ., էջ 51:

## 11

### Ախչինսն կուվօղ մարը

Գընագ մը ախչին ըմ իլան հօրս մը ունէր:

Օր մը ինքիր դրացանը իրինց դունը գօօ, գօղիսնօ քի հօրսը իլան (և) ախչինը նսդօձ թիլ գօմանին:

Դրացանը գօսէ. — Հօրսը շօղ թէգ գօմանէ:

— Հսւ, — գօսէ գիսօրը, — հօրսիս սս—հօ—թը (մի ժամում) մէգ ջօղ (ջաղ), սս—հօ—թը մէգ ջօղ գօմանէ, ամա ախչինսիս՝ օրը մէգ ջօղ, օրը մէգ ջօղ գօմանէ:

Վերծինէ Սվազլյան, Կիլիկիա,  
Արևմտահայոց բանավոր ավանդությունը,  
Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 66:

## 12

Մոյն թանքնւ կնայկ մոյն ուրիշ կնգու հըրցանամա.

— Դու շուտ շտըս նելիս բաղնիս:

Անմուն կնայկը ծուր տալավ նահամա.

— Շարաթը մոյն հիտ:

Աս թանքնւըն ալ շնշնուտ յորնոր վնքն նահամա.

— Չէ, իս գնտկից գնտիկ, գնտկից գնտիկ...

Ագուլիսի բարբառի մասունքներ,  
Աշխատասիրությամբ Արգար Այվազյանի,  
2-րդ հրատ., Եր., «Գասպրինտ» հրատ., 2012, էջ 164:

## 13

Երկու մայրեր փողոցում իրարու հանդիպում են և սկսում են իրարու քեֆ-հալ հարցնելուց, հետո, երբ խոսքը գալիս է աղջիկների մասին, էս մի մայրը հարց է տալիս մյուսին. — Քսւ, ախչի, մըհա սս՝ քնո ախչիկ շուտիկ կործել սովրիր ը:

— Խսւ, օրե քյանիմ կը կյոռծի, օրե շուտիկըմ, օրե շուտիկըմ:

- Ա՛հ, ի՛նչ է օրե շուտիկըմ:
- Բա քյու ախչիկ քա՛նը խատ կը կյոռծը:
- Իմ ախչիկ՝ շաբաթ շուտիկըմ, շաբաթ շուտիկըմ:

Մեկս. Հայոց բանասիրության մշակույթը,  
կազմողներ՝ Մ. Հարությունյան (գիտական ղեկավար),  
Է. Հ. Խեմյան, Մ. Հ. Խեմյան, Ա. Կ. Պողոսյան, Եր.,  
«Գիտություն» հրատ., 2015, էջ 388:

## 14

Ապարանցին Ոսկե ձկնիկ ա բոնում, ձկնիկն ասամ՝

— Իրեք ինչ ցանկություն ուզում ես, ասա, կատարեմ, մենակ ինձ բաց թող:

Ապարանցին ուրախությունից կմկմոցն ա ընկնում, մտածում ա՝ ի՛նչ ուզի...

— Շո՛ւտ արա, խոփկներս չորացան. խեղդվում եմ, ասա՛ ու շուտ ջո՛ւրը գցի:

Ապարանցին շուտ-շուտ ցանկություններն ասում ա ու անմիջապես գնում տուն, տենըմ ա դռանը՝ իրեք հարկանի, մեծ կրծքեղով «Մերսեդես» ա կանգնած...

(ԱՄՇՀ)

## 15

Առաջին դասարանցիների հետ իր վերջին դասն անցկացնող թոշակառու դասվարը, ամփոփելով հայերենի այբուբենի տառերը, երեխաներից պահանջում է յուրաքանչյուր տառ կիրառել համապատասխան բառերով արտահայտված նախադասություններում:

Երբ հերթը գալիս է «Ճ» տառին, ակտիվություն է դրսևորում նաև դասարանի ամենաթույլ առաջադիմությամբ աշակերտներից մեկը: Ուսուցչուհին, ոգևորված տղայի ակտիվությունից, նրան է հարցնում, և... հետևում է երեխայի «անմեղ» ու ճիշտ պատասխանը.

Ճլորած ճուճուլըս ճըտտըցընեմ ճակատիտ...

Քար կտրած երեխաներին և անհարմար վիճակում հայտնված ուսուցչուհուն օգնության է հասնում դասամիջոցի զանգը...

(ԱՄՇՀ)

## 16

Լոռեցի աղջիկը Երևանում քննություն է հանձնում:

— Ախջիկ ջան, որտեղից ես, — պատասխանողի հնչերանգից գուշակելով ուսանողուհու որտեղացի լինելը՝ հարցնում է դասախոսը:

— Լոռեցի,— ամաչկոտ պատասխանում է ուսանողուհին:

— Աղջիկ ջան, էդ ձեզ մոտ է՞, որ հարցնում են՝ ծննդատունը ո՞րտեղ ա, ասում եք՝ կնանտոռնց:

Ուսանողուհին ձայն չի հանում:

— Էդ ձեզ մոտ է՞, որ ասում են՝ կամուրջ են գցում, ասում եք՝ լենքովըըը՞:

Ուսանողուհին նորից ձայն չի հանում:

— Չէ, շատ համեստն ես երևում, բեր մի հատ թուշդ պաչեմ:

— Ըրենսիին<sup>79</sup>, — հարցնում է ուսանողուհին:

(ԱՄՇՀ)

---

79 Լոռեցիները թուշ են ասում նաև հետույքի աջ և ձախ փափուկ մասերին:

## ԱՐԵՎԵԼԱՅԱՅԵՐԵՆԻ, ԱՐԵՎՍՏԱՅԱՅԵՐԵՆԻ ԵՎ ԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՃԱՐԸ՝ ՉԱՎԵՇՏԻ ՅԵՆՔ

Առօրյա շփումների ժամանակ հաճախ ենք ականատես-ունկնդիրը դառնում այնպիսի իրավիճակների, երբ խոսակիցներից մեկի արտաբերած խոսքը կամ նրանում առկա որևէ բառ-բառակապակցությունը շրջապատում անգուսպ ծիծաղ է առաջացնում, ինչի մասին մենք աշխատում ենք հաղորդակից դարձնել նաև ուրիշների: Վերապատմելիս էլ, անշուշտ, որպեսզի գավեշտը էլ ավելի ընդգծվի ու տպավորիչ դառնա, այն ներկայացնում ենք ինչ-ինչ բաներ վերափոխելով ու ճոխացնելով: Նման երևույթների հենքի վրա էլ ստեղծվում և արագ տարածում են գտնում ժողովրդական երգիծանքի ինքնատիպ տեսակներից մեկը՝ անեկդոտը՝ ժողովրդական երգիծապատումն ու զվարճախոսությունը:

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների համատեքստում մեծ քանակ են կազմում հատկապես գրական արևելահայերենի, արևմտահայերենի և բարբառների բառագանձի հիմքի վրա ստեղծված տարարնույթ նմուշները: Գրանցում գավեշտի հենք են դարձել գրական և բարբառային բաների, դարձվածքների ու արտահայտությունների ոչ տեղին կիրառությունը: Այն հիմնականում դրսևորվում է դրանց իմաստը չիմասալ-չընկալելու հետևանքով:

**1.** Գրական հայերենի որոշ բառերին մարդկանց անձանոթ լինելը կամ դրանց իմաստը սխալ իմասնալը բազմաթիվ գավեշտալի իրավիճակների առաջացման պատճառ է դառնում: Ավագ սերնդի մի մասը, կրողը լինելով որևէ բարբառի կամ խոսվածքի, գրեթե անհաղորդ է գրական հայերենին: Երիտասարդների հետ հաղորդակցվելիս նրանք երբեմն խոսքի մեջ գրական մի շարք բառեր և արտահայտություններ կան սխալ են հասկանում, կան տեղին չեն կիրառում՝ առաջացնելով ներկա գտնվողների անգուսպ ծիծաղը:

Հենց դրանք էլ, հետագայում բերնեբերան պատմվելով-փոխանցվելով, հիմք են հանդիսանում կատարված իրողության հենքի վրա մի շարք երգիծապատում-զվարճախոսությունների ստեղծման: Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

**1.1.** Հայկական ծագում ունեցող *Ճակնդեղ* բառը գործածվում է բացառապես գրական հայերենում: Մի շարք բարբառներում (Արարատյան, Դարաբաղի, Ջեյթունի, Արաբկիրի և այլն) կիրառվում է «**տակ**» բառը: Լոռու խոսվածքին պատկանող Նոյեմբերյանի տարածաշրջանից գրառած «Ճըկանեղը» զվարճապատումում զավեշտի հենքը հենց այդ բառի գրական համարժեքին անտեղյակ լինելն է: Գարնանն այդ անձանոթ բուսատեսակի սերմը գյուղացիները ցանում են և աշնանը երբ հողից հանում են, զարմացած ու հիասթափված իրար են նայում և ասում.

— Ա՛յ գյէրա<sup>80</sup>, քու օլուն<sup>81</sup> տըրաքի, ինչ ճըկանեղ, ինչ բան, էս խու մեր օխնած<sup>82</sup> տակըն ա<sup>83</sup>:

Տես Հավելված 2, թիվ 1:

Ջավախքի զվարճախոսություններից մեկում էլ զավեշտ է ստեղծվում **ամուսին** և **էրիկ** բառերի իմաստային հակադրության և **էրիկի** արժեքի գերազնահատման ժողովրդական «փիլիսոփայության» միջոցով.

— Ախսի՛, Թամանր, էս օր ո՛ւմ հետ ման գուքայիր:

— Սանան մամ, ամուսինս էր:

— Քա օղո՛ւ<sup>84</sup>, արի ինձի ականջ էրա՛ էրիկն առ, տունը նստի... Ինչ գործ ունիս էդ ամուսիններու հետ: Ինձի որ հարցնես՝ մէ էրիկը տասը ամուսնուց լավ է<sup>85</sup>:

80 Ա՛յ գյէրա – դիմելաձև:

81 Օլու (թրք.) – դիակ, մեռել:

82 Օխնած – օրհնած:

83 Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը, Եր., «Միտք» հրատ., 1968, էջ 174:

84 Օղո՛ւ (արաբ.) – կոչական դիմելաձև:

85 Ժողովրդական հումորի քարտեզի առջև. Ջավախք, «Գարուն» ամսագիր, 1972, թիվ 5, էջ 92:



Իսկ ստորև բերվող տավուշյան զվարճախոսությունում **օրհորդ** բառն է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ դարձել.

Արուս տատը թռչակի ընկնելու համար թղթերը հանձնում է սոցապ բաժին: Բաժնի վարիչ Անիկն ասում է.

— Տատի՛, օրհորդական ազգանունդ ինչպե՛ս է: (ճիշտ ձևը՝ ի՞նչ է – ԱՍ)

Արուս տատը կարծում է, թե «օրհորդ» անվանի, հարուստ կանանց են ասում, քթի տակ խնդմնդալով պատասխանում է.

— Էրվեմ ես, միթո՞ւմ օրհորդ ե՞րբ եմ եղել որ...<sup>86</sup>

**1.2.** Զավեշտներ են ստեղծվում որոշ մարդկանց համար անձանոթ զուտ մասնագիտական հայերեն եզրույթներին (ասենք՝ դատաիրավական) առնչվելիս.

Դատարանում վկա կանչված պատավին դատավորը հարցնում է.

— Մայրի՛կ, ճանաչո՞ւմ եք **ամբաստանյալին**:

— Վու՛յ, քոռանամ ես, խենճ ժոռա, անունն էլ են փոխել<sup>87</sup>:

**1.3.** Կամ էլ անսպասելի ծիծաղ է առաջանում պաշտոնական-վարչական ոճին հատուկ որոշ կաղապարային բառերի և արտահայտությունների կիրառության ժամանակ: Զվարճախոսություններից մեկում գյուղաշխարհի մարդուն «քաղաքացի» բառով դիմելաձևն է զավեշտ առաջանալու պատճառ դարձել.

Դատի ժամանակ դատավորը հարցնում է.

— Քաղաքացի՛ Գևորգյան, որտե՞ղ էիք գտնվում դեպքի օրը:

— Ա՛յտա, ես քաղաքացի չեմ, ես գեղացի անշատ մարդ եմ...

(ԱՄՇՀ)

Մեկ այլ դեպքում դատական համակարգում կիրառվող «հանգամանք» բառն է անսպասելի ծիծաղի հենք հանդիսացել.

86 **Հովսեփյան Ն.**, Միամիտ և հնարամիտ սևբարցիները, Եր., «Հայաստան» հրատ., 2003, էջ 90:

87 **Հարությունյան Հ.**, Հայոց լեզուն հազարագանձ, Եր., «Արևիկ» հրատ., 1989, էջ 132:

Դատավորը հարցնում է տուժածին..

— Քաղաքացի՛ Պետրոսյան, պատմե՛ք, թե ի՞նչ հանգամանքներում է ամբաստանյալը բռնաբարել ձեզ:

— Հանգամանք, էն էլ ի՞նչ հանգամանք, ընկեր դատավոր, էտ անարուող<sup>88</sup> հանգամանքն առել, ընգել էր յեղեկիցըս... էլ ես ի՞նչ կարայի անեն:

(ԱՍՇՀ)

Այս զվարճախոսության տարբերակներից մեկում էլ նույն հանգամանք բառը՝ ներգոյական հոլովով, ընկալվում է որպես տեղավայր, և հետևում է տուժածի զավեշտ առաջացնող պատասխանը.

— Հանգամանքներում չի բռնաբարել, է, ընկեր դատավոր, գարածումն ա բռնաբարել, գարածումը...

(ԱՍՇՀ)

Տես Հավելված 2, թիվ 2:

**1.4.** Առք ու վաճառքի գործարքներն անելիս կամ դատական համակարգի հետ գործ ունենալիս մարդիկ հաճախ են առնչվում *շարժական* և *անշարժ* գույք հասկացություններին: Լոռու Շամուտ գյուղում շարժական ու անշարժ գույքից հենց որ խոսք է գնում, անմիջապես հիշում են զվարճապատումի վերածված մի իրողություն:

Գյուղի հայրական տանը տեր է դառնում 3 աղջիկ ունեցող մեծ եղբայրը, իսկ տղաներ ունեցող մյուս երկու եղբայրներին ոչինչ չէր տրվել: Դատավորը երբ հարցնում է մեծ եղբորը, թե մյուս եղբայրները տեղյա՞կ են եղել այդ գործարքի մասին, նա ասում է.

— Հա, բա *նճ*, *քաղաքացի՛* դատավոր ջան,... մեր ախպեր Սենիկն ինքն ա հրաժարվել իրա փայիցը, դե ես ու Գագոն էլ պայմանավորվել ինք՝ անշարժ գույքը ես վեր ունեմ, շարժականը՝ Գագոն...

Էդ ժամանակ էլ *չհամբերելով՝ Գագոյի կնիկ Ֆլորան տեղից գոռում է.*

— Քաղաքացի՛ դատավոր, գեղի իրանց միակ շարժականը իրանց հերն ա էլել, էն էլ, ճիշտ ա ասում, տվել ա մեզ...

(ԱՍՇՀ)

Տես Հավելված 2, թիվ 3:

---

88 Անարուող – պատվի՝ ամոթի զգացում չունեցող:

**1.5.** Շարժական և անշարժ գույք եզրույթներին առնչվող գվարճապատումներից մեկում էլ անսպասելի ծիծաղը դրսևորվում է այդ եզրույթների՝ մարմնի մասերից մեկի հետ կապ ստեղծելով:

(ԱՄՇՀ)

Տեն Հավելված 2, թիվ 4:

**1.6.** «Անձեռոցիկ» բառին անձանոթ լինելը գյուղաշխարհի մարդկանց շրջանում զանազան անեկդոտների առաջացման պատճառ է դարձել: Դրանցից մեկն առնչվում է լոռեցիներին:

*Քաղաքից եկած հյուրերը լավ ուտելուց հետո տանտիրոջից անձեռոցիկ են ուզում.*

— էտ մինն էլ թող մնա էքուց կուտէք, ըստր էլ տեղ չըկա,  
— ասում է կոլխոզի նախագահը՝ կարծելով, թե ուտելու բան են ուզում<sup>89</sup>:

Տեն Հավելված 2, թիվ 5:

Գունավոր անձեռոցիկին առնչվող անեկդոտի մեկ այլ տարբերակ էլ կապված է զանգեզուրցիների հետ.

*Արտուշ դային եկավ Երևան՝ աղջկա տուն: Լավ կերավ, խմեց: Աղջիկը վերջում անձեռոցիկ բերեց դրեց սեղանին:*

— Բալան ջան, լավ կերել էլ եմ, խմել էլ... էլ գունավոր լավաշի ախորժակը չունեմ. հետ տար, — աղջկան հորդորեց հայրը<sup>90</sup>:

**1.7.** Լոռու գվարճախոսություններից մեկում էլ գրական հայերենի «զիջել» բառի սխալ ընկալումն է դարձել անեկդոտի առաջացման պատճառ:

Ավտոբուսում իր տեղը կանգնած տիկնոջը տրամադրող բարեկիրթ ուղևորի՝ «Ես սիրով զիջում եմ ձեզ» խոսքը հայիոյական արտահայտություն ընկալած լոռեցի Ռուբենին հունից հանում է, և հետևում է նրա՝ «Տո քեզ էլ զիճեմ, քու կընգանն էլ զիճեմ, ազգուտակոխտ էլ զիճեմ» կատաղած պատասխանը:

(ԱՄՇՀ)

Տեն Հավելված 2, թիվ 6:

89 **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառը, Եր., «Լույս» հրատ., 1989, էջ 223:

90 **Գրիգոր Ս.**, Զվարճալի պատառաբաղ-1, Քաջարան, Կապան, «Զանգակ-97» հրատ., Եր., 2006, էջ 79:

Այս նմուշի մեկ այլ տարբերակի հանդիպում ենք նաև ջավախ-  
քյան անեկդոտաշարում<sup>91</sup>:

Տես Հավելված 2, թիվ 7:

**1.8.** 1988-ի երկրաշարժի ու դրան հաջորդած տարիներին աղետի գոտում «*օգնություն*» հասկացությունը կապված էր առավելապես հումանիտար օգնության հետ, ինչն էլ մի շարք գվարճախոսությունների ստեղծման հիմք է հանդիսացել..

**ա.** Մեկը մի խոռը փոսի միջից գոռըմ ա.

— Օգնություն՛ն, օգնություն՛ն...

Կողքով մի լոռեցի պառավ կնիկ ա անց կենալիս ըլըմ, մոդենըմ ա, ասըմ.

— Բալս՛ ջան, էդ օգնութիւնիցը ինձ հասնըմ չիիի՛...

(ԱՄՇՀ)

**բ.** Երկրաշարժին առնչվող մեկ այլ «*օգնություն*» էլ այսպես է ներկայանում անեկդոտներից մեկում.

Ռուսաստանից շինարարների հետ աղետի գոտի օգնության եկած մի ռուս աղջկա բռնացնելով մարդի ծոցին՝ կնիկը կատաղած գոռում ա.

— Տո աննամու, էս ինչ ա:

— Հեչ, կնիկ ջան, երկրաշարժից տուժածներին օգնություն ա:

— Իյս՛, խի էդ օգնութիւնիցը կնանոնցը հասնըմ չիիի՛:

(ԱՄՇՀ)

**1.9.** Զվարճախոսություններից մեկում էլ գրական արևելահայերենի՝ ժամանակ ցույց տվող մակբայական բառի (**երբեմն**) և անձնանվան (**Եփրեմ**) հարանտությունը է գավեշտն ստեղծվել.

Երևանի շուկայում մի կնիկ ուզում ա կարտոլ առնի, հարցնում ա.

— Կարտոֆելն ինչ արժի:

---

91 Կիրակոսյան Ն., Կիրակոսյան Ա., Ջավախքի ժպիտներ, Եր., «Հայաստան» հրատ., 1994, էջ 105:

— Մեկ ուրիշ:

— Բայց էս վերջերս երբեմն 60 կոպեկով էլ են կարտոշկա ծախել:

— Եփրեմ գլուխ քարով ա տվե, որ 60 կոպեկով կարտոշկա յա ծախե, — գայրացած պատասխանում է վաճառողը:

(ԱՄՇՀ):

Մեր գրառումներում առկա է նաև սրա բամբատակ՝ հայիոյախառն պատասխանով տարբերակը:

**1.10.** Չինանալն ամոթ չէ. անկախ մասնագիտությունից՝ մարդն իր ամբողջ կյանքում սովորում է, ամոթը չիմացածի մասին անկեղծ չխոստովանելն է, այլապես զավեշտալի իրավիճակն անխուսափելի է, ինչպես ստորև բերվող իրողություններում.

Հինգերորդ դասարանի հայոց լեզվի դասագրքում գրված էր. «Մեր փողոցով կոյուղի է անցնում»:

— **Կոյուղին** ինչ բան է, — հարցնում է աշակերտներից մեկը դասատուին:

— Հե՛չ, հասարակական տրանսպորտի պես բան ա, — պատասխանում է դասատուն<sup>92</sup>:

Կամ էլ՝

Հովհ. Թումանյանի «Թագավորն ու չարչին» անցնելիս աշակերտուհին, չընկալելով «Օ՛, ինչ ասեղ, իսկն<sup>93</sup> օձի քիստ» տողի իմաստը, դիմում է ուսուցչին.

— **Իսկն** ինչ է:

— Իսկը, աղջիկ ջան, ասեղի սուր ծերն ա, — վստահ պատասխանում է ուսուցիչը<sup>94</sup>:

**1.11.** Երբեմն էլ քրեական աշխարհին ու նրա մարդկանց կողմից ստեղծած «մասնագիտական» բառերին անհաղորդ սովորա-

92 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ» հրատ., 2008, էջ 59:

93 **Իսկը** – ճիշտ, իսկական:

94 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ» հրատ., 2008, էջ 59:

կան անձնավորությունն է դառնում անեկդոտի հերոս, իսկ նրա խոսքը՝ զավեշտի աղբյուր: Երգիծապատումներից մեկում կալանավայր ընկած գյուղաշխարհի մարդը «զոնի նայող» բառակապակցությունը այլ կերպ է ընկալում և դիմում է «գողական աշխարհի» ներկայացուցչին.

— ...Տղմ ջան, ես գիշերը մեկ-մեկ բացվել գիտեմ, որ նայես, տեսնես բացվել եմ, կծածկես...<sup>95</sup>:

Տես Հավելված 2, թիվ 8:

**1.12.** Ոչ միայն մեծերի, երեխաների լսած անծանոթ բառի մեկնաբանությունը ևս կարող է անսպասելի ծիծաղի պատճառ հանդիսանալ: Մանկական զվարճախոսություններում դրանք մեծ քանակ են կազմում, քանզի յուրաքանչյուր երեխա, կապված նրա տարիքային և մտածողության առանձնահատկությունների հետ, յուրովի է ընկալում և արձագանքում նոր լսած բառերին: Ստորև բերված նմուշում զավեշտն ստեղծվում է անծանոթ բարդ բառի տարանջատմամբ.

*Մի անգամ 3-ամյա Դավիթը տարիքով իրենից մեծ հորեղբոր աղջկա հետ խոսելիս ասում է.*

— *Խոմ խելսո՞ չես:*

— *Խելառը տատմերդ<sup>96</sup> ա, — հակադարձում է Արփինեն:*

— *Քիչ անց Դավիթը մորը հաղորդում է.*

— *Ման, էս Արփինեն համ տատիկին վատ բան ասավ, համ քեզ<sup>97</sup>:*

**1.13.** Անմեղ երեխան սկզբնական շրջանում ամեն ինչ ուղիղ իմաստով է ընկալում: Նրա մտածողությանը դեռևս հասու չէ դարձվածային կառույցների բուն իմաստը: Մանկական զվարճապատումներից մեկում զավեշտն ստեղծվում է երեխայի կողմից

95 **Աբազյան Ս.**, Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999, էջ 40:

96 **Տատմեր** – ծննդկանին առաջին օգնություն ցույց տվող փորձառու կին:

97 **Սարգսյան Ա. Շ.**, Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, էջ 66-67:

ժողովրդական դարձվածքը ուղիղ իմաստով ընկալելու, միամիտ խոսքի ու գործողության՝ դեմքի, ձեռքի շարժումների միջոցով: Երեխայի համար անհասկանալի է *կեսքերան ասել* դարձվածքի իմաստն ու մարդկանց փոխհարաբերություններում դրա երկիմաստ կիրառությունը: Նա ձեռքի ավով բերանի կեսը փակած է քավորին հրավիրում հարիսա ուտելու՝ ինչին հետևում է վիրավորված քավորի պատասխանը.

— *Է՛, է, լսվ, — պատասխանեց կնքահայրը, — գնա՛ հորդ ասա. «Կէքերան էլ ասի՛ չէկաւ, բաց բերան էլ կրկնեցի, էլի չէկաւ», շնորհակալ եմ ձեր մարդավարութենից<sup>98</sup> :*

Տե՛ս Հավելված 2, թիվ 9:

**1.14.** Միշտ չէ, որ երեխայի ներկայությամբ պետք է ամեն ինչի մասին խոսել. բացախոսությունը շատ դեպքերում երեխայի միջոցով փոխանցվում է տիրոջը՝ անհարմար վիճակի մեջ գցելով նրա ընտանիքի անդամներին: Մանկական գվարճախոսություններից մեկում էլ *երկերեսանի մարդ* դարձվածքն այսպես է ներկայացել անմեղ երեխայի խոսքում.

*Հրանտիկն իրենց տուն եկած հյուրին երկար գննելուց հետո  
զարմացած ասում է.*

— *Պարզև՛ պապիկ, բա ո՞ր է քո երկրորդ երեսը:*

— *Ո՞նց թե, բա մարդ երկու երես կունենա՛:*

— *Բա ինչո՞ւ է իմ պապիկն ասում, որ դու երկու երեսանի ես<sup>99</sup>:*

**2.** Ազատ, ուրախ և ապահով կյանքով ապրելու խոստումներով ու երաշխիքներով Խորհրդային Հայաստան ներգաղթած արևմտահայության բեկորները սեփական մաշկի վրա անմիջապես զգում են հայրենադարձվածների և խորհրդային կեղծ գաղափարախոսության մեջ թաթախված իրենց հայրենակիցների

98 Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի և ընկ. տպարան, 1883, էջ 20:

99 **Գյուրջիյան Հ.**, Մի բոռ ժպիտ, Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012, էջ 209:

ապրելակերպի, մտածողության, նույնիսկ լեզվի ընդգծված տարբերությունները: Նրանց հիասթափությունն արտացոլվում է ժողովրդական երգիծանքի տարատեսակ դրսևորումներով, մասնավորապես անեկդոտներով.

*Հայրենադարձվելուց առաջ մեկին ասած են լինում, թե մի ռուբլով ինչ ուզի, կարող է առնի: Մա Հայաստան գալուց հետո մտնում է մթերային խանութ, մի ռուբլին մեկնում ու ասում է.*

*— Քիլո մը շաքար, քիլո մը շաքալաթ, քիլո մը մալմալաթ, քիլո մը բրինձ, քիլո մը...*

*Վաճառողը այքերը չոած սպասում, սպասում է, ու որ սա մի պահ կանգ է առնում, ասում է.*

*— Այ զը՞նթ<sup>100</sup> :*

*Մա թե՛*

*— Հա՛, քիլո մը ալ զընթ կշռե...*

(ԱՄՇՀ)

**2.1.** Արտերկրի ու խորհրդային պետության մարդկանց ապրելակերպի ընդգծված տարբերությունը զվարճախոսություններից մեկում **հոնի** կատարելության և **հոսի** անկատարության «հիմնավորումները» բառախաղով արտահայտված երեք փաստարկներով են ներկայացել: **Հոնորար**, երգե**հոն**, **հոնի** օղի բառ-բառակապակցությունների «ստուգաբանությամբ» բացահայտումները դառնում են ստորև բերվող նմուշի գավեշտի հենքը.

*Մի ախսպարի հարցընում են.*

*— Հոն է լավ, թե՛ հոն:*

*Ասում է՝*

*— Իհարկե՛ հոն:*

*— Էդ ո՞նց կապացուցես:*

*— Հարգավ, ապացուցեմ.*

*Թե որ հոս լավ ըլլար, կկոչվեր երգեհոս, և ոչ թե՛ երգեհոն,  
Թե որ հոս լավ ըլլար, կկոչվեր հոսարար, և ոչ թե՛ հոնարար,  
Թե որ հոս լավ ըլլար, կկոչվեր հոսի օղի, և ոչ թե՛ հոնի օղի...*

(ԱՄՇՀ)

---

100 **Զընթ** – արհամարհական բացականչություն:



**2.2.** Հայաստանում հայրենադարձը տարբեր կերպ է ընկալում որոշ բառեր: Ահա դրանց մեկնաբանությունները՝ կրկին **հոսի** և **հոնի** համատեքստում.

*Մի հայրենադարձ տրտնջում էր.*

— Հոն՝ արտասահմանում, և հոս՝ հայրենիքում, նույն բառերը տարբեր կերպ կմեկնաբանվին. հոս ազդիթաթոր կըսեն, հոն մենք զեվզեկ կսեհնք, հոն հասարակած տոներ կըսեն, հոս հանգստյան տոներ կըսեն, հոս միայնակ մայրեր կսեն, հոն մենք պոռնիկներ կսեհնք, հոս ներվայիններ կըսեն, հոն մենք լաչառներ կըսեհնք, հոս եղբայրական օգնություն կըսեն, հոն մենք ազրեսիա կըսեհնք...

(ԱՄՇՀ)

**2.3.** Անեկդոտներից մեկում էլ զավեշտն ստեղծվում է արևմտահայերենի **հոս** (այստեղ) ցուցական դերանվան և **օս** ազգության հարանունություն միջոցով.

*Հիտուն տարեկան ձկնապան Մելքոն տասն ու հինգ տարեկան օրիորդի հետ ամուսնանալու համար գնաց Կարապետ Եպիսկոպոսի մոտ, վերջինը հարցրեց.*

— Նշանածո հոն է, Մելքոն աղա:

— Չէ, սրբազան, օս չէ, հայ է, — պատասխանեց նա:<sup>101</sup>

**2.4.** Զավեշտ է առաջանում **հոդ** քերականական կարգի և **հոդ** ցուցական դերանվան համադրության ժամանակ.

Անգլերենի իմացությամբ պարծեցող մի տարեց հայրենադարձին ուղղված՝ «Դե որ անգլերեն լավ գիտես, անգլերենի հոդերն ասա» խոսքին հետևում է նրա՝ «Է՛, ըսեմ. հոս, հոդ, հոն» ինքնազոհ պատասխանը:

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 2, թիվ 10:

---

101 Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դէպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած, Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 83:

**2.5.** Մի շարք երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում նույն բառի՝ արևմտահայերենում և արևելահայերենում տարբեր իմաստներ արտահայտելու երևույթը: Անշուշտ, դրանք դրսևորվում են հիմնականում *համանունության* և *հարանունության* միջոցով:

Այսպես, արևմտահայերենում **ձգելը** բաց թողնել է նշանակում, իսկ արևելահայերենում՝ **քաշել**.

*Շինարարությունում աշխատում են հայրենադարձն ու տեղացին: Տեղացի բանվորը ներքևից ձայն է տալիս՝ ձգի:*

*Հայրենադարձը վերևից պատասխանում է.*

*— Ինտո՞ր ձգեմ, գույուխիդ կիյնա:*

*Տեղացի բանվորը բարկացած բղավում է.*

*— Քեզ ասում եմ՝ ձգի:*

*Հայրենադարձը վերևից բաց է թողնում ծանրությունը<sup>102</sup>:*

Տարբերակը տես Հավելված 2, թիվ 11:

**2.6. Շփվելը** արևելահայերենում միմյանց հետ հարաբերվել է նշանակում, իսկ արևմտահայերենում այն բամբառակ նշանակությամբ է ընկալվում: Նույն կերպ էլ արևելահայերենի **կարգադրել**-*հրամայելը* արևմտահայերենում նաև հայիոյախառն իմաստով է կիրառվում:

Ի դեպ, արևելահայերենում և համշենահայոց բարբառում ևս որոշ բառեր հակառակ իմաստներ ունեն: Այսպես, **փոսը** արևելահայերենում **վիրապ** հասկացությամբ է գործածվում, իսկ համշենի բարբառում **փոս** նշանակում է **հարթ տարածք**, **հարթավայր**, **հրապարակ**<sup>103</sup>: Նույն կերպ էլ արևմտահայերենում **կոխելը** տրորել է նշանակում, իսկ արևելահայերենում՝ և՛ **մոցնել**, և՛ **բոնարարել**:

Տես Հավելված 1, թիվ 12:

102 Հայ ժողովրդական մշակույթ-12, ՀԱԻ (հանրապետական գիտաժողովի նյութեր), «Մուլնի» հրատ., 2004, էջ 148:

103 **Վարդանյան Ս.**, Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 325:

Արևմտահայոց մեջ **շինել-կառուցելը** արևելահայոց շրջանում երկու իմաստներով էլ կիրառվում են. և կառուցել է նշանակում, և բռնաբարել (իբրև բամբատակ արտահայտություն՝ *կոխելն ու շինելը* ժողովրդախոսակցական լեզվում են կիրառվում):

Գրական հայերենի այդ երկու շերտերում համանուն բառերի տարբեր իմաստների առկայությունն էլ պատճառ է դարձել բազմաթիվ իրողությունների հենքի վրա մի շարք անեկղոտների ստեղծման:

Պատումներից մեկում հայրենադարձի՝ «Եկանք, որ հայրենիքը շինենք...» խոսքին հետևում է տեղացու երկիմաստ հեզնախառն պատասխանը. «Հայրենիքին արդեն 70 տարի շինում է Սովետը...<sup>104</sup>»:

Տես Հավելված 1, թիվ 13:

**2.7.** Բազմազգ Խորհրդային Միության բնակչության շրջանում կիրառվող և մամուլում անվերջ շրջանառվող «**Հայր Ստալին**», «**ժողովուրդների հայր**» արտահայտությունները սփյուռքահայերի համար խորթ ու անհասկանալի էին: «Հայր Ստալին»-ի «**հայր**» հասկացությունը սփյուռքահայն «ընկալում» է հայրենադարձվելուց հետո միայն:

Հայրենադարձությանն առնչվող քաղաքական անեկղոտաշարում այդ նորաստեղծ ու պարտադրված բառակապակցությունները յուրովի են մեկնաբանվում. դրանց ամբողջությամբ ընկալումը հիմնավորվում է ավելի վաղ շրջանառվող *մայրիկը լացացնել* կամ *մայրիկը նետել* (իմա՝ մեկին խստորեն պատժել) դարձվածքները ուղիղ իմաստով գործողության մեջ ներկայացնելով: Բանազետ Վ. Սվազյանի գրառած «Նոր էկողն ու Հայր Ստալինը» այդ ժամանակների «պայծառ տխրությանը»<sup>105</sup> հազեցած զվարճախոսային արտացոլանքն է.

*Մեր հոնտեղը կըսեին՝ Հայր Ստալին, Հայր Ստալին, մենք չէինք հասկնար՝ ինչու աղանկ կըսեն: Բայց երբ հայրենիք*

104 **Սվազյան Վ.**, Կրիլկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 114:

105 Լեզվաբան Ռաֆայել Իշխանյանի՝ Տերյանի պոեզիային տված բնորոշումն է:

էկանք և ան մերին մայրիկները մեկիկ-մեկիկ նետեց, ան ատեն միայն հասկցանք անոր Հայր ըլլալը...<sup>106</sup>

Տարբերակը տեն Հավելված 1, թիվ 14:

**2.8.** Քանի որ **փափախ անել** արտահայտությունը զուտ խորհրդային համակարգի ծնունդ է, նոր հայրենադարձվածը, բնականաբար, չէր կարող ըմբռնել դրա իմաստը: Ստորև բերվող զվարճախոսության մեջ զավեշտի հենքը դարձվածքի ուղիղ իմաստով ընկալումն է դարձել.

*Հայրենադարձը տեղացի հարևանին դժգոհում է ցածր աշխատավարձից: Վերջինս խորհուրդ է տալիս փափախ անել:*

— Է՛, փափախը գույուխս դնեն նէ, փարաս կ'ավելնամ<sup>107</sup>:

Արևելահայերենի հանգչելը **մեռնել**, մարել է նշանակում, իսկ արևմտահայերենում՝ *հանդարտվել*: Վերջերս մեր գրառած նմուշներից մեկն առնչվում է այդ երևույթին.

*Հարևանուհին Հայաստան ներգաղթած սիրիահայի հետ բորբոքված վիճում է.*

— Քիչ մը *հանգչիր*<sup>108</sup>, — փորձում է *հանգստացնել սիրիահայը*:

— Հան, հիմա էլ *մեռնելըս ես ուզը մ...*

(ԱՄՇՀ)

**2.9.** Արևելահայերենի **պահարան** – կահույքը գրական արևմտահայերենում **փոստային ծրար** է նշանակում, իսկ փայտյա կամ երկաթյա պահոց – **սնդուկը՝ ավտոմեքենայի բեռնախցիկ**: Արևելահայի և արևմտահայի շփումների ժամանակ դրանց առնչվող խոսակցություններն էլ, բնականաբար, զավեշտայի իրավիճակների առաջացման պատճառ են դառնում: Ահա իրողություններ, որոնք տասնամյակներ անց էլ հիշվում ու պատմվում են.

106 **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 114:

107 Հայ ժողովրդական մշակույթ – 12, ՀԱԻ (Հանրապետական գիտաժողովի նյութեր), «Մուլնի» հրատ., 2004, էջ 148-149:

108 **Հանգչիր** – հանդարտվիր:

Հայաստան այցելած սփյուռքահայր զանգահարում է մեկին, թե՛

— Պահարաններ են ուղարկել Ամերիկայից, եկեք տարե՛ք:

Տեղացին զարմանում է, ապա մի բեռնատար է վերցնում ու ասած հասցեով գնում, հանդիպում է զանգահարողին, որը հանում 4-5 փոստային ծրար է տալիս սրան...

(ԱՄՇՀ)

Մադուկի հետ կապված մի զավեշտալի պատմություն էլ կապված է թատերագետ Լևոն Հախվերդյանի հետ.

Քաղաքացիական կռիվների օրերին Հախվերդյանը Բեյրութում է լինում: Խմբագրության աշխատակիցն ասում է.

— Ձեր գրքերի կապոցը կրնաք տանել մեքենային սնդուկին մեջ դնել:

Հախվերդյանը կապոցով դուրս է գալիս փողոց, մոլորված աջ ու ձախ է նայում, բայց սնդուկ չի գտնում: Քիչ անց երբ աշխատակիցը մոտենում է, դիմում է նրան.

— Մնդուկ չգտա, որտե՛ղ է ձեր սնդուկը:

Խմբագրության աշխատակիցը ժպտալով բացում է ավտոմեքենայի բեռնախցիկը և գրքերը տեղավորում:

(ԱՄՇՀ)

**2.10.** Արևմտահայերենը կրող հայրենադարձը հայրենիքում անմիջապես բախվում է արևելահայերենում ոռուերեն բառերի չափից դուրս կիրառություններին, որոնք սկզբնական շրջանում ոչ միայն խորթ ու անընկալելի են լինում, այլև շատ դեպքերում տեղիք են տալիս բազում զավեշտալի միջադեպերի առաջացման:

Այսպես, ժողովրդախոսակցական լեզվի մեջ ներթափանցած հարկային տեսակի՝ եկամտահարկի ոռուերեն **պաղախողնի**<sup>109</sup> բառի չիմացությունը հայրենադարձի կողմից գուգորդվում է մեկ այլ օտար անվանը՝ **պարախողին**<sup>110</sup>, ինչն էլ հարանունության միջոցով պատճառ է դարձել հետևյալ զվարճախոսության առաջացման.

109 **Պաղախողնի** (ռուս.) – եկամտահարկ:

110 **Պարախող** (ռուս.) – շոգենավով:

— Աս ի՛նչ պահում ըրած եք, — աշխատավարձն ստանալիս  
զարմացած հարցնում է հայրենադարձը:

— Պաղախողնի, հայրիկ, պաղախողնի:

— Մայրը թաղեմ, եռսուն տարի առաջ փարախողով Սո-  
վետմիություն եկած եմ, եռսուն տարի շարունակ փարախողին  
փո՞ղը կպահեք...

(ԱՍՇՀ)

**2.11.** Արևելահայերենի և արևմտահայերենի որոշ բառե-  
րի տարբեր իմաստներ արտահայտելու փաստը շատ դեպքերում  
անընկալելի է դարձնում այդ լեզուներով ստեղծված գվարճապա-  
տումները: Օրինակ՝ արևմտահայերենում **գետնախնձորը** կարտո-  
ֆիլն է, իսկ արևելահայերենում՝ գետնախնձորը (կամ գետնատան-  
ձը) արևածաղկի նման ցողուն և արևահայաց ծաղիկներ ունեցող  
պալարավոր բույսն է: Երկուսն էլ շուրջ 300 տարի առաջ են Հա-  
րավային Ամերիկայից Եվրոպա, այնուհետև Ռուսաստան ու Հա-  
յաստան ներմուծվել: Գետնախնձորի արմատապտուղը, ի տար-  
բերություն կարտոֆիլի, ուտվում է հում-հում: Շնորհիվ այդ երկու  
ուտելի բույսերի հողապալարային լինելու հանգամանքի՝ ստորև  
բերվող գվարճապատումը, ստեղծված հարսանեկան ծիսակար-  
գային տարրերից մեկի հենքի վրա, ընկալելի է թե՛ արևելահային,  
թե՛ արևմտահային.

*Ապարանցին տղին ամուսնացնում է: Հարսանիքին էն-  
քան շատ մարդ է գալիս, որ հարսանիքից հետո հեռու տեղե-  
րից էկածներին մի կերպ տեղավորում են, քնելու տեղ չլինելու  
պատճառով հարս ու փեսի տեղն էլ գետնին են գցում:*

*Հաջորդ օրը «կարմիր խնձորի» փոխարեն խնամոնց գետ-  
նախնձոր են ուղարկում...*

(ԱՍՇՀ)

**3.** Անեկդոտներում անսպասելի զավեշտն ստեղծվում է նաև  
գրական հայերենի և բարբառների կամ ժողովրդախոսակցական  
լեզվի և բարբառների բառ-բառակապակցությունների ու արտա-  
հայտությունների համանուն-հարանունային կառույցներով:

**3.1.** Այսպես, գվարճախոսություններից մեկում ծիծաղը դրսևոր-  
վում է գրական արևելահայերենի **հրեղ** (բրթել) բայի ըղձական

եղանակի եզակի թվի 2-րդ դեմքի (հրես) և Լոռու խոսվածքի նույնահունչ **հրես** (հիմա, շուտով) բառի համանունության հենքի վրա.

Գյումրեցին գնում է Վանաձոր և մտնելով ճաշարան՝ մատուցողին ասում է.

— Քո՛ր ջան, քիչըմ ուտելու բան բեր:

— Հրես կբերեմ:

— Իյան, օր չհրեմ, չես բերե՞...<sup>111</sup>

Այս նմուշի տարբերակներից մեկում լոռեցու խոսվածքը ծաղրողին հակադարձողն ինքը՝ լոռեցին է<sup>112</sup>:

Տես Հավելված 1, թիվ 15:

**3.2.** Թե՛ գրական հայերենում, թե՛ բարբառների մեծ մասում **խոր** նշանակում է **խորը**, **խորություն**, իսկ Մեղրու, Կաքավաբերդի բարբառներում **խոր** նշանակում է քիչ: **Խոր տալ** հարադիր բայը մեղրեցիների խոսքում **երես-երես** է ընկալվում, ինչն էլ հանգեցրել է հետևյալ գվարճախոսության առաջացման.

Մէկը գերծում էր (խուզում էր) մի մեղրեցու մորուքը: Մեղրեցին անդադար կրկնում էր. «Խոր տուր» (Երես-երես խուզիր): Օտար սափրվերն էլ անխնա գերծում էր մորուքը: Մեղրեցու համբերութիւնը հասնելով՝ ձայն տվեց.

— Տո՛, տավա՛ր, քեզ չե՛մ ասում՝ խոր տուր:

— Ա՛խմախ, — պատասխանեց սափրվերը, — այնքան խոր տուի մորուքդ, որ դառնալ հնձած արտ, է՛լ խոր տամ<sup>113</sup>:

**3.3.** Մի շարք բարբառների (Վան, Մուշ, Նոր Նախիջևան, Գորիս և այլն) **հեր**-ը՝ **իչու** նշանակությամբ, զավեշտի տեղիք է տալիս ժողովրդախոսակցական լեզվում գործածվող հեր (հայր)-ի հետ համանունության հետևանքով.

111 Մելիք-Սարգսյան Գ., Զվարճալիք, Եր., «Պարոյր Սևակ» հրատ., 2001, էջ 34:

112 Ծիծաղի տոնավաճառ, 3-րդ թողարկում, Խուժան անեկդոտներ, Եր., «Զանգեզուր» տպագրական կենտրոն: 2007, էջ 25:

113 Անեկդոտներ, 2-րդ հատոր, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիփիս, տպարան Մ. Վարդանեանի, 1877, էջ 42:

Մեկը գալիս է մսավաճառի մոտ ու հարցնում.

— Միս ունե՞ս:

Մսավաճառը պատասխանում է.

— Հէր չունեմ: (իմա՝ ինչո՞ւ չունեմ-ԱՍ)

— Օդորսի հորըտ, մի կիլո կշռի:

(ԱՍՇՀ)

**3.4.** Ղարաբաղի բարբառին անհաղորդ մարդուն **հղե քցեմ** բառակապակցությունը կարող է շփոթություն առաջացնել, ինչպես այս դեպքում.

Ղարաբաղում խնջույքից հետո տանտերը դիմում է երևա-  
նաբնակ իր հյուրերին.

— Չգնաք, ես մյեր ըխչըկերանցը տանեմ հղե քցեմ ու շոտ  
կյամ:

(ԱՍՇՀ)

«Հղի» բառի անցած ճանապարհին անտեղյակ հյուրերն ապ-  
շում են տանտիրոջ այդ «բամբառակ» խոսքից:

Ղարաբաղի բարբառում, նաև գրական հայերենում, ուղեկցել  
բարդ բառի «ուղի»-ն անցել է հնչյունափոխության հետևյալ ճանա-  
պարհը՝ **ի+ուղի**–յուղի–հուղի–հղի (որից էլ՝ մայրանալու՝ **ծոցվոր-  
վելու** հոմանիշը՝ **հղի** բառը): Նույն կարգով էլ **ուղեկցել** բառը ար-  
տաբերվել է **հղե գցել**, նաև՝ միտք **հղանալ**, **հուղարկավորություն**:

**3.5.** Տավուշի և Լոռու մարզերում լինել բայի ժխտական **չկա**-ն  
**կա ոչ** է ասվում, ինչը Ալաշկերտի խոսվածքը կրողներն ընկալում  
են որպես տեղական ճաշատեսակ: Երկրորդ աշխարհամարտի  
տարիներին ծովասարցիների հետ պատահած զավեշտալի իրո-  
դության հենքի վրա է ստեղծվել հետևյալ երգիծապատումը.

...Սոված տարիներին մեր գյուղից (Գեղարքունիքի մարզ,  
գ. Ծովասար–ԱՍ) մի քանի մարդ գնում է Շամշադին (իմա՝  
Տավուշի մարզ–ԱՍ)՝ աշխատանք ճարելու: Սովածանում են,  
ատաջին պատահած դուռը թակում ու տանտիրուհուց ուտելու  
բան են ուզում:

— Կա ոչ, կա ոչ, — պատասխանում է տանտիրուհին:



— Բան չկա, քուրճ ջան, մենք կավոչ լե կոդինք, — ասում են տղերքը՝ մտածելով, որ «կա ոչ»-ը տեղական ճաշատեսակ է<sup>114</sup>:

**3.6.** Պարսկահայոց զվարճախոսություններից մեկում էլ ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող *չայ-թեյ* գոյականի և Փերիո բարբառով **թեյ լինել** — *թուլանալ*, *նվաղել* հարադրավոր բայի բառախաղային համանունությամբ է գավեշտը դրսևորվել.

Մեկը *թեյ շատ էր սիրում, երբ ճամփից հասնում է ծանոթի տունը, ասում է.*

— Թե՛գ արա մի *չայ շինի*, *թե չայ չխմեմ, թեյ կըլնեմ*<sup>115</sup>:

**3.7.** Օտարալեզու **ումնող** բառը մի շարք բարբառներում **հույս** է նշանակում, իսկ Բայազետի բարբառում այն օգտագործվում է նաև որպես մտերմիկ դիմելաձև, ինչպես լոռեցիների *այտա*-ն կամ մշեցիների *լառ*-ն: Այդ բառի հաճախակի կիրառությունը այլ տարածքների մարդկանց համար երբեմն անսովոր է հնչում՝ անգամ հեզնանքի տեղիք տալով, ինչն էլ պատճառ է դարձել այդ բարբառը կրողների կողմից կամա թե ակամա հետևյալ զվարճախոսության ստեղծման.

Մեկը մի տարիքով քյավառցու ուզում է *ձեռ առնի*, ասում է.

— *Ճիշտ է՞, որ դուք էշին ասում եք ումնոյ:*

— *Իսն, ումնոյ, — պատասխանում է ծերունին:*

(ԱՄՇՀ)

**3.8.** Հայկական կրթություն չստացած ռուսախոս հայի հայերեն խոսքը կարող է անսպասելի ծիծաղ առաջացնել՝ պատճառ դառնալով այն փոխանցելու նաև այլոց:

**ա.** Լյուսյա տատը ռուսական կրթություն էր ստացել, հայերեն խոսելիս հողերը խառնելով, բառերն ու բառակապակցությունները աղավաղելով էր ասում՝ առաջացնելով շրջապատի մարդկանց ծիծաղը: Ահա դրանցից մի քանի նմուշ.

114 **Գևորգյան Դ.**, Ծովասար, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2007, էջ 289:

115 **Մինասեան Լ.**, Գիտական բառ ու բան (Փերիա գաւառ), Նոր Ջուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 195:

Երբ խոսում էին ինչ-որ բանի մասին, Լյուսյա տատին արձագանքում էր.

— Բանիս հետևից ե՞ս ընկել (իմա՝ բանի հետևից ե՞ս ընկել, այսինքն՝ արժի՞ էդ մասին խոսել, մտածել):

(ԱՍՇՀ)

**բ.** Կամ էլ ասում էր՝ բանիս մնա (իմա՝ բանիդ մնա):

(ԱՍՇՀ)

**գ.** Մեկ այլ դեպքում երբ հարցնում էին՝

— Լյուսյա՛ տատի, մեղր ունե՞ս:

Պատասխանում էր.

— Առջևումըս չունեմ (իմա՝ առայժմ չունեմ):

(ԱՍՇՀ)

Մեկ այլ ռուսախոս հայ այսպես է ներկայացնում գալիք ծրագրերը.

— Էս ամառ արի էրեխանց տանենք ծով, լավ կոպտենք (իմա՝ կոփենք) բերենք:

(ԱՍՇՀ)

Կամ էլ

— Տանեն գլխիցս ցոնեմ, գամ (իմա՝ ցրեմ, գամ):

(ԱՍՇՀ)

# ՀԱՎԵԼՎԱԾ 2

## 1

Վոնց ա պատահիւմ, մի խամ մառթ դօնախ ա ընգնւմ գլէղացոնց մընի տանը: Էս մառթը տէնւմ ա, վոր չէ՝ սրհանց ըշխատանքը սիրօղ, ֆողի լիզուն հըսկացօղ ժըղովուրթ են: Սըրա քըշտին էլ ճըկանդէղի սերմ ա ըլըմ: Դա կէսը ծախսած ա ըլըմ, մը քիչ էլ մնացած ա ըլըմ: Էնա, վոր էդ ժըղօվուրթը դիր ա գալի, վըրօշըմ ա քըշտի էլած սերմն էլ դըհանց տա: Էդ գլէղացիք էլ, ինչ դուզնադուզը<sup>116</sup>, ըսկանըմ չեն, թե ճըկանդէղը ինչ բան ա, համա մանչըմ են, թե հաոցնեն: Էն էն հ'իմանըմ, որ ցանէլու բան ա:

Գարունքը ցանըմ են, աշունքը վոր գալիս ա, ճըկանդէղը հանըմ են, հիրար էրէսի ըրմացած հիշըմ են ու ասըմ.

— Ա՛յ գլէրա, քու օլուն տըրաքի, ինչ ճըկանէղ, ինչ բան, էսխու մեր օխնած տակըն ա:

Ասատրյան Մ., Լոռու խոսվածքը,  
Եր., «Միտք» հրատ., 1968, էջ 174:

## 2

Դատավորը դիմում է տուժածին՝ պարզաբանելու որոշ մանրամասներ.

— Քաղաքացի՛ Պետրոսյան, այժմ պատմեք, թե ինչ հանգամանքներում է ամբաստանյալը ձեզ բռնաբարել:

— Դատավոր ջան, նախ ես քաղաքացի չեմ, գեղացի եմ: Հետո էլ էտ այլանդակը հանգամանքներում չի բռնաբարել, է, գարնժումն ա բռնաբարել, գարնժումը...

(ԱՄՇՀ)

## 3

### Շարժական և անշարժ գույքը

Շամուտեցիների շրջանում շարժական ու անշարժ գույքից հենց որ խոսք է գնում, անմիջապես հիշում են մի դեպք:

116 Ինչ դուզնադուզը – ինչը որ ճիշտ է:

Ճուղուրանց Արմենակի կնիկ Ելենի մահից հետո Արմենակը գյուղից տեղափոխվում է քաղաք՝ փոքր տղայի՝ Գագոյի մոտ: Քաղաքում էին ապրում նաև մյուս երկու տղաները: Միայն մեծ տղա Վալոդը աղջիկներ ուներ, մյուս երկուսինը միայն տղաներ էին, բայց Վալոդը որոշում է գյուղի տունն իր անունով գրանցել, ինչի համար խոսակցություն է գնում եղբայրների մեջ, գործը տրվում է դատարան, դատը կայանում է, դատավորը հարցնում է Վալոդին.

— Եղբայրներդ տեղյակ են եղել տունը քո անունով դարձնելու մասին:

— Հա, բա ղնց, քաղաքացի դատավոր ջան, — պատասխանում է Վալոդը, — մեր ախպեր Սենիկն ինքն ա հրաժարվել իրա փայիցը, դե ես ու Գագոն էլ պայմանավորվել ինք՝ անշարժ գույքը ես վեր ունեմ, շարժականը՝ ինքը...

Էդ ժամանակ էլ չհամբերելով՝ Գագոյի կնիկ Ֆլորան տեղից գոռում է.

— Քաղաքացի՛ դատավոր, գեղի իրանց միակ շարժականը իրանց հերն ա էլել, էն էլ, ճիշտ ա ասըմ, տվել ա մեզ...

(ԱՄՇՀ)

#### 4

Երկու ընկերուհիներից մեկն ամուսնանում է: Մի ամիս անց հանդիպում են: Չամուսնացածը հարցնում է.

— Հը, ղնց էր, գոհ եմ ամուսնությունից:

— Ինչ գոհ. գիշերները չարչարվում, տանջվում ա , բան չի ստացվում...

— Ո՞նց, բա մինչև ամուսնանալը քեզ բան չէր ասել:

— Չէ՛, բայց ամուսնանալուց առաջ ինքը անընդհատ ինչ-որ անշարժ գույքից էր խոսում, ես էլ ուրախանում էի...:

(ԱՄՇՀ)

#### 5

### Էտ մինն էլ էքուց կուտենք

Ըրեվանից իր մառթկերանցովը մին մենձ դեկավար ա գ'ալիս Շսոդ՝ կոլխոզի գ'ոնձով: Էտ «գ'ոնձը» անում էն Շսոդնա այգումը:

Ըռավօղից-րիգուն ուտում էն, խմում, խըմում էն, ուտում: Բիզվա կըռանը<sup>117</sup> «ղօնաղնին»<sup>118</sup> անձ՛եռօցիկ էն ուզում:

— Էտ մինն էլ թօղ մնա էքուց կուտենք, ըսօր էլ տեղ չըկա, — ասում ա կոլխօզի նախագէն:

Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառը,  
Եր., «Լույս» հրատ., 1989, էտ մինն էլ էքուց կուտենք, էջ 223:

## 6

Լոռեցի Ռուբենը կընգա հետ ավտոբոս ա բըցրանըմ: Մի մարդ տեղիցը վեր ա կենըմ, կընգանը թե՛

— Ես սիրով զիջում եմ ձեզ...

Ռուբենը էլ չի թողըմ շարունակի, կըտաղած ասըմ ա.

— Տո քեզ էլ զիճեմ, քու կընգանն էլ զիճեմ, ազգուտակոխտ էլ զիճեմ...:

(ԱՄՇՀ)

## 7

— Քո աղջկան պիտի զիջեմ, որ դրական գնահատական ստանա, — ասաց ուսուցիչը:

— Ինչ անեն, զիջեն, տո՛ աղջկադ էլ զիջեմ, քեզ էլ զիջեմ, մորդ էլ զիջեմ, կնոջդ էլ զիջեմ, — գայրացավ աղջկա հայրը:

Կիրակոսյան Ն., Կիրակոսյան Ա.,  
Ջավախքի ժպիտներ, Եր., «Հայաստան» հրատ., 1994, էջ 105:

## 8

Աշոտին դատեցին: Երբ նա արդեն կալանավայրում էր, մեկը նրան խորհուրդ տվեց.

— Զոնի նայողը այ, էն ջահելն ա, ինչ գործ ունես, նրա հետ բռնի..

Աշոտը մոտեցավ «նայողին» ու ասաց.

— Տղա՛ ջան, լսել եմ, որ էստեղի նայողը դու ես, ճի՛շտ է:

— Հա, բան ս՛ էլե...

117 Բիզվա կըռանը – երեկոյան կողմ:

118 Ղօնաղնին – հյուրերը:

— ...Տղա՛ ջան, ես գիշերը մեկ-մեկ բացվել գիտեմ, որ նայես, տեսնես բացվել եմ, կծածկես...

Աբազյան Ս., Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999, էջ 40:

## 9

Երեխան մի ձեռքով բերնի կեպը ծածկած ասաց.

— Քանո՛ր աղայ, հայրս խնդրում է համեցեք մեր տուն, հարիսա ուտե՛նք:

— Բերանդ ինչի՞ ես ծածկել, սանիկ, — հարցրեց կնքահայրը:

— Հայրս ասաց, որ կէսբերան ասեմ, — պատասխանեց երեխան:

— Բաց թող, բաց թող բերանդ ու կրկին ասա՛, ինչ որ ասելու ես, — ասաց կնքահայրը:

Երեխան ձեռքը յետ քաշեց բերանից ու ասաց.

— Քանո՛ր աղայ, հայրս խնդրում է՝ համեցեք մեր տուն, հարիսա ուտե՛նք:

— Է՛, է, լավ, պատասխանեց կնքահայրը, գնա՛մ հորդ ասա. «Կէսբերան է՛լ ասի՝ չէկաւ, բաց բերան է՛լ կրկնեցի, է՛լի չէկաւ», շնորհակալ եմ ձեր մարդավարութենից:

Անեկդոտներ, հատոր 3,  
Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց,  
Թիֆլիս, Մ. Վարդանեանցի և ընկ. տպարան, 1883, էջ 19-20:

## 10

Կիրովականի Բոշի թաղում հաստատված մի հայրենադարձ՝ անունն Արմենակ, որին պոլիտեխնիկական ինստիտուտի համալուրսեցիները Արմենչիկ էին ասում (70-նն անց հայրենադարձը որոշել էր սովորել, իսկ վերևներից միջամտել էին, որ անպայման ընդունեն՝ իբրև քարոզ, որ միայն հայրենիքն է հնարավորություն տալիս կրթություն ստանալու, տարիների երազանքն իրականացնելու), ուզում էր իրենց թաղի դպրոցականների մոտ իր իմացությունը պարծենալ՝ ասելով, թե հրաշալի է տիրապետում անգլերենին: Երեխաներն էլ թե՛

— Դե որ լավ գիտես, անգլերենի հողերն ասա:

—Է՛, ըստն. հոս, հող, հոն, — ինքնագոհ պատասխանում է Արմենակը:

(ԱՄՇՀ)

## 11

Տեղացին ախպարի հետ ջրհոր ա փորը: Որ գալիս ա հաց ուտելու ժամանակը, ախպարը թոգը գցում ա հորը, տեղացուն թե՛

— Պինդ բռնե, կքաշիմ:

Որ մի քիչ բարձրացնում ա, հոգնում ա ու մի պահ կանգնում, հանգստանում ա:

— Էդ ինչի՞ կանգնեցիր, ձգի՛:

— Ինչպե՛ս ձգիմ:

— Ո՛նց են ձգում, շատ սովորական:

— Է՛հ, լավ, թող քո ուզածն ըլլա, կձգիմ, — ասում ու թոգը բաց ա թողնում ախպարը:

— Էս ի՛նչ արիր, տո անիրավ...

— Է՛, դուն չըսիր՝ ձգե, ես ալ ձգեցի, ինչո՞ կնեղնաս...

(ԱՄՇՀ)

## 12

Մի ախպար մի կերպ ավտոբուս ա բարցրանում ու մի ոտի վրա կանգնում ա, ուզում ա է՛ն մի ոտն էլ իջացնի, դնելու տեղ չի ըլում, կոխկի կանգնած կնգանն ասում ա.

— Թիքին, ոտքըդ բարցացուր, պիտի կոխես:

Էս կնիկը կարմրում ա, բայց ձեն չի հանում. չլսելու յա տալի: Էս ախպարը մի անգամ էլ ա ասում.

— Թիքին, քեզի կըստն, ոտքըդ բարցացուր, պիտի կոխես:

Էս կնիկն էլ չի համբերում ու գոռում ա.

— Դե հերիք էլավ, է՛լի, հլա քու հագուկապին ու սիպտակ մագերիդ մտիկ արա, չես էլ ըմանչում, կեխտոտի մինը, էսա միցա կկանչեն...

— Թիքին, ինչո՞ կնեղնաս, դեռ չկոխած միլիցա կկանչեք, բա որ կոխե՞րի ինչ կընե՞իր:

(ԱՄՇՀ)

## 13

### Նոր էկոլոգ հերթին մեջ

Նոր էկոլոները հերթ-մերթ չզիտեին: Օր մը հացի հերթին մեջ տեղացի մը անոր երեսին կշարտե.

— Ախպար շներ, ձեզի կարմիր խնձոր դրկեցիք, որ եկաք մեր հացն եք ուտում...

— Ո՛հ, կարմիր խնձոր չդրկեցիք, բայց պատգամավորներ դրկեցիք, որոնք մեզի պրոպագանդ ըրին, մենք ալ մեր ֆաբրիկաներով, օթոներով, քամիոններով, մեր ամբողջ ունեցվածքով եկանք, որ հայրենիքը շինենք...

Տեղացին կպատասխանե.

— Հայրենիքին արդեն 70 տարի շինում է Սովետը...

Սվազլյան Վ., Կրիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 114:

## 14

Արտասահման եղած ժամանակ կըսեին՝ հայր Սթալին, չէինք հասկնար՝ ինչու ադանկ կըսեն: Բայց երբ Հայաստան եկանք, և ան մերին մայրիկները մեկիկ-մեկիկ լացացուց, ան աստեն հասկցանք անոր հայր ըլլալը:

Ստեփանյան Ա., 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., «Գիտություն» հրատ., 2010, էջ 254:

## 15

Մի լոռեցի գնում է Երևան, մտնում սրճարան և մատուցողուհուն ասում.

— Քուրիկ ջան, մի հատ արաղ բեր...:

Էս աղջիկը լոռեցուն ծաղրելու համար ասում է.

— Հրես կբերեմ:

Լոռեցին վրա է գալիս.

— Խի որ չիրեմ, չես բերի՞...:

Ծիծաղի տոնավաճառ, 3-րդ թողարկում, «Խուժան» անեկդոտներ, Եր., «Ջանգեզուր տպագրական կենտրոն», 2007, էջ 25:



## ԱՆՁՆԱՆՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆԸ՝ ՉԱՎԵՃՏԻ ՅԵՆՔ

**1.** Տարատեսակ օտարալեզու և հայերեն անուններով հեղեղված մեր անվանացանկին հաղորդակցվելն ինքնին զավեշտալի է: Ամեն մի ժամանակաշրջան իր կնիքն է դրել ոչ միայն հայոց անձնանունների, այլև տեղանունների վրա, երբեմն էլ այնպիսի «խոր հետք» թողնելով, որ դրանց ստեղծման պատմության բացակայությունն անգամ չի խանգարել լսողների մեջ լիաթոք ծիծաղի առաջացնելուն: Դրա վառ ապացույցը Հովհ. Շիրազի հայոց անձնանուններին և տեղանուններին նվիրված ստեղծագործություններն են<sup>119</sup>:

Ընտանիքներում ծնված երեխաներին արտառոց ու անհեթեթ անուններ, երբեմն էլ ոչ հայկական անձնանուններ, ազգանուններ և տեղանուններ դնելը, տարատեսակ տառային, վանկային ու վանկատառային հապավումներով մարքսիզմի կլասիկների ու պետական գործիչների անուններով և քաղաքական լոզունգներով հայ նորածինների բարուրները «վաթաթելը» կապված էին հատկապես Խորհրդային Հայաստանի ու Խորհրդային Միության վարած քաղաքականության, համատարած անգրագիտության վերացման ու կիսագրագիտության պայմաններում խորհրդային գաղափարախոսությունը բռնի մարդկանց ուղեղներն ու ընտանիքները մտցնելու գործընթացների հետ:

Քաղաքական այդ «ոգևորության» արտացոլանքը հայկական ընտանիքներում դրսևորվեց խորհրդային կարգեր հաստատվելու հենց առաջին տարիներին, և հայ նորածինները սկսեցին անվանակոչվել՝

**1.1.** Մարքսիզմի առաջատար գործիչների անուն-ազգանուն-հայրանունների տարատեսակ հապավումներով ու բառամասերով

<sup>119</sup> **Շիրազ Հովհ.**, Քսար Հայաստանի, հատոր 1, Եր., 1958, Մեր գյուղերի անունները, էջ 430, Մարդկանց անունները, էջ 440:

(Մեղս-Մեղսիդա-Մարքս, Էնգելս, Լենին, Ստալին, նույնը՝ առաջին երկու տառերով՝ **Մաննլեստ**, Վուլխս-Վլադիմիր Ուլյանով, Վիլի-Վիլուն-Վիլեն-Վլադիլեն – Վլադիմիր Իլյիչ Լենին, Լենտրոշ-Լենդրուշ – Լենինյան դրոշ) և այլն:

**1.2.** Քաղաքական գործիչների անուն-ազգանուններով՝ Ստալին (Քաջարան, Երևան, Լոռի), Կիրով, Բերիա, Լավրենտի (Շիրակ, Արցախ, Տավուշ, Լոռի), կամ դրանց բառամասերով՝ **Խրոմսիկ՝** Խրուշչով, Միկոյան (Վայք), երբեմն էլ ազգանվան կրճատ ձևով՝ Պլեխան (Դսեղ):

**1.3.** Քաղաքական լոզունգների **տառային՝** ԱՀՀևՍ-Արժանացիր հեղափոխության հաղթանակին և սոցիալիզմին (Վարդենիս), Տեն Հավելված 3, թիվ 1, **բառամասային՝** Անշեղընթղեպոց – անշեղ ընթացքով դեպի սոցիալիզմ (Երևան) **հապավումներով** կամ աշխատավորների միջազգային օրվան նվիրված ռուսերեն **լոզունգի բառամասերով՝** Դազդրապերմա (ռուս.) – դա գդրաստվուետ պերվօե մայա<sup>120</sup> (Արցախ):

**1.4.** Տարատեսակ համաժողովների ու կազմակերպությունների օտարալեզու կամ հայերեն հապավումներով՝ Կիմ-Կիմա (ռուս.) – Կոմունիստիչեսկիյ ինտերնացիոնալ մալադոժի<sup>121</sup>, Երինտ – Երրորդ ինտերնացիոնալ:

**1.5.** Պետության առջև դրված 1933-37թթ. հնգամյա պլանային ցուցանիշի արտացոլմամբ՝ Վերելք (Գուգարք), Տեն Հավելված 3, թիվ 2 և այլն:

**1.6.** Քիչ չեն նաև քաղաքականության հետ կապ չունեցող անհեթեթ ու զավեշտալի անձնանունները: Ահա դրանցից մի քանիսը՝ կրողների «վերծանություններով»՝

**ա.** Օտար դիմելաձևը՝ աղավաղված անձնական տեսքով՝ Մազմազել-մադմաուզել (Երևան) – 2-րդ աշխարհամարտի տարիների Ֆրանսիայում հայտնվելու արդյունք:

120 Կեցցե 1-ը մայիսի:

121 Երիտասարդության կոմունիստական ինտերնացիոնալ:

**բ.** Մրցումների կանոնակարգը արտացոլող անձնանունով՝ Ֆինալ (Արթիկ) – Մոսկվայում ըմբշամարտից եզրափակիչ դուրս գալու արդյունք:

Տես Հավելված 3, թիվ 3:

**գ.** Կենցաղային պայմանների բարելավման ապացույց – Կանալիզացիա<sup>122</sup> (Երևան):

Տես Հավելված 3, թիվ 4:

**դ.** Հայերն իրենց երեխաներին անվանել են նաև Սոցիկ (Վանաձոր), Պրեմետիվա, Ֆրանսիկ, Աֆրենսիա, Ֆորմիլա (Դսեղ), Սովետ (Ղափան), Կասիր, Սեկրետար (Գավառ, Սարուխան), Կամֆլես, Հոկտեմբերիկ, Մոսկով (Երևան, Լոռի): Էլ ավելի անհեթեթ է Ելվրես անձնանվան առկայությունը (Արագածոտն, գ. Հնաբերդ):

Տես Հավելված 3, թիվ 5:

Հայկական մեկ բնակավայրում՝ Գեղարքունիքի մարզի Սարուխան գյուղում, զավեշտալի օտար անուն-ազգանուններով հեղեղված լինելու մասին է հավաստում լրագրող Տ. Նիկողոսյանի «Չերջիլը» հուշապատումը<sup>123</sup>:

Տես Հավելված 3, թիվ 6:

Ոմանց համար էլ իրենց երեխաներին քաղաքական գործիչների անուններ դնելը պատուհաս է դարձել: Դրանց մի մասին գնդակահարելուց կամ հակախորհրդային պիտակավորելուց հետո շատերն իրենց երեխաների անունները կամ փոխեցին, կամ վերաշինեցին՝ Ստալինը Ստալ դարձնելով, Բերիան՝ Բենիկ կամ Բենիամին, Ամատունին՝ Փաշիկ և այլն: Ամենազավեշտալին Ստալինի կենդանության օրոք «ժողովուրդների հոր» անունով անվանակոչողներին աքսորելն է եղել, քանի որ նրանք անեծքով են տուն կանչել իրենց երեխային<sup>124</sup>:

Տես Հավելված 3, թիվ 7:

---

122 Կոյուղի:

123 **Նիկողոսյան Տ.**, Իրական դեպքեր բայազետցիների կյանքից, Եր., «Լուսաբաց» հրատ., 2016, էջ 24-25:

124 **Գրիգոր Ս.**, Զվարճալի պատասաբաղ-1, Քաջարան-Կապան, Եր., «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 142-143:

**2.** Այժմ տեսնենք, թե տարատեսակ, երբեմն էլ անհեթեթ անձնանունները հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում ինչ հնարանքներով են անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ դառնում:

**2.1.** Երգիծական մանրապատումի առաջացման հենք է դարձել ազգային ու կրոնական տոների (Նոր տարի, Բարեկենդան, Զատիկ) համար ինչ-որ բան պահելիս ժողովրդական խոսքում օգտագործվող բանաձևը՝ կապված մարդկանց ապրելակերպը ճիշտ կառավարելու կամ էլ եղանակային դժվարությունները (կոնկրետ՝ մարտ ամսվա «գժությունները») հեշտությամբ հաղթահարելու հետ:

Հիշենք բարեկենդանյան զվարճապատումի բոլորիս ծանոթ բունանյանական մշակումը: Նմանատիպ սյուժետով, այս անգամ եղանակային դժվարությունները հաղթահարելուն առնչվող, երգիծական մանրապատումի հետաքրքիր օրինակ է պոլսահայերից գրառել հայագիտության նվիրյալ Հր. Աճառյանը: Եթե առաջին երգիծապատումում ժողովրդական տոնախմբության Բարեկենդան անվանումը խորամանկությամբ «անձնանուն» դարձրածն է հայտնվում ու տիրանում այդ օրվա համար պահված ուտեստին, ապա աճառյանական գրառումում մարտ ամսվան տրված ժողովրդական անվանումն է պատճառ դարձել անձնանվան քողի տակ ներկայանալ և խաբեությամբ պահուստային վառելիքը կնոջից վերցնել:

Ամուսնու՝ «Կնիկ,... քեօմիրին»<sup>125</sup> խոշորները Մարտիկ ախպօրը համար պահէ» անընդհատ զգուշացումներից հետո ներկայանում է մի նոր «բարեկենդան»՝ «Մարտիկ ախպօր» տեսքով, թե՛ «Մարտիկ ախպարը էս էմ: Քեօմիրներուն խոշորը զատեցիր նէ, տուր քի տանիս»<sup>126</sup>:

Տե՛ս Հավելված 3, թիվ 8:

---

125 Քեօմիր – քարածուխ:

126 Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 169-170:

Ըստ բանահավաքի՝ «խոշորները պահենք Մարտիկ ախպորը համար» բանաձևը տարածված էր Պոլսում, և դրա «իմաստն այն է, թե Մարտ ամսում ցրտերն ավելի զորեղ են, և ավելի պետք կա ածուխի կամ փայտի»<sup>127</sup>:

**2.2.** Անձնանվան և այն կրողի բնավորության, տեսքի, պահվածքի, դիրքի անհամապատասխանությունը ևս շրջապատում գավեշտ կարող է առաջացնել. Համեստ կամ հոնարի են դնում, մեծանալուց հետո պարզվում է՝ պահվածքով հակառակն է, Մաքրուհի են դնում, փնթի է դուրս գալիս, Աշխույժ են դնում, դանդաղկոտ-դանդալոշ է դառնում, Գեղեցիկը՝ տգեղ (չնայած յուրաքանչյուր ծնողի համար իր ձագն ամենագեղեցիկն է, ինչը հավաստում է նաև հայկական առածը՝ *Ագռավի համար իր ձագից գեղեցիկը չկա*):

Ըստ բանավոր աղբյուրների՝

*Հրայա Աճառյանը մի օգնական է ունենում՝ Գեղեցիկ անունով, որը շատ տգեղ է լինում: Մի անգամ նա ասում է իր օգնականին.*

— *Գեղեցիկ ջան, քո անունը այնքան շատ է քեզ սազում, ոնց որ իմը՝ ինձ:*

(ԱՄՇՀ)

**2.3.** Անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ կարող է դառնալ հայկական անձնանվան հանգավոր բառախաղային կիրառությունը՝ գավեշտի հենք դարձնելով ստացած վայելքի և դրա դիմաց «ապրանքափոխանակության» պատրաստակամությունն արտացոլող խտացված ասելիքը.

*Մի որբիվերի կնիկ ա ըլնում, տան դռանը ընտիր տանձի ծառ ա ունենում: Հարևան ջահել տղերքից մեկը գալիս ա թաքուն բարձրանում ծառն ու սկսում տանձ քաղիլը:*

*Էս կնիկը որ ձեն ա լսում, դուրս ա գալիս տեսնում՝ մեկը ծառի վրեն ա, ասում ա՝*

— *Հլա իջի՛ ցած, տես՝ ինչ եմ բերելու գլուխըդ:*

— *Ի՞նչ ես անելու:*

— *Իջի՛, կտենաս, թե ինչ եմ անում:*

---

127 Նույն տեղում:

Տղեն ծառից իջնում ա, էս կնիկը տանում ա տուն, մի քիչ հաց-մաց են անում, մըտցնում ա տեղաշորը, իրա ուզելիքն առնում ա: Տղեն հագնվում ա, որ գնա, էս կնիկն ասում ա՝

— Անըմըդ ինչ ա, տղա՛ ջան:

Բա թե՛ Մխիթար:

Ասում ա՝

— Այ մխիթարվես դու, Մխիթար՛,

Տանձի ծառը հանի տար:

(ԱՄՇՀ)

**2.4.** Հայոց մեջ երբեմն նորածինների անուններ են դնում թե՛ երկու արական սեռերի անձնանունների միացմամբ (Արամ+Մայիս, Արամ+Աշոտ, Հայկ+Արամ), թե՛ արական ու իգական սեռերի անձնանունների (մասնավորապես ամուսնական զույգերի) վանկային կամ բառամասային հապավումներով, ինչպես՝ Գահերինե՝ Գարիկ+Հերքինե, Ալզիս՝ Ալվարդ+Սարգիս և այլն: Հենց նմանատիպ կառույցներն էլ պատճառ են դարձել տարատեսակ անեկդոտների ստեղծման, որոնցում ժողովուրդը որոշ օտար բառերի հետ համանուն-հարանունային դրսևորմամբ և մասնատման կամ բառաբարդման միջոցով է զավեշտ ստեղծում: Այսպես, օրինակ, զվարճախոսություններից մեկում զավեշտը դրսևորվում է հայկական անձնանվան բառամասային հապավումով և ճապոնական հանրահայտ ձեռնարկության հարանունությամբ.

Աբարանցի Փանոսն ու Մոնիկն ամուսնանում, տղա են ունենում, անունը դնում են **Պանասոնիկ**:

(ԱՄՇՀ)

**2.5.** Զվարճախոսություններից մեկում էլ անսպասելի ծիծաղը դրսևորվում է արական և իգական անձնանունների բառաբարդման միջոցով (Գարան+Անուշ, առաջինը՝ հնչյունափոխված)՝ Գարնանուշ: Դրան հակադարձող նմուշում (Գևորգ+Մարո) հիմք է ընդունվել ոչ թե բառամիացումը, այլ հապավմամբ նոր «անձնանուն» ստեղծելու փաստը: Այս դեպքում ստացված հապավումը համադրվում է **թուրթ** հիվանդության օտարալեզու եզրույթին (Գե+մարո) և դառնում անսպասելի ծիծաղի աղբյուր.

- Քնոր ջան, անունդ ինչ է, — հարցնում է մեկը:
  - Գարնանուշ, — պատասխանում է աղջիկը:
  - Ինչխ էլ երկար անուն է:
  - Հորս ու մորս անունների միացությունից է ստեղծվել հորս անունը Գարան է, մորս անունը՝ Անուշ:
  - Իյս, քնոր ջան, ինչ լավ է, օր հորդ անունը Գևորգ չի էղել, մորդ անունն էլ՝ Մարո, թե չէ անունդ կդնեին Գեմատո:
- (ԱՄՇՀ)

**2.6.** Մեկ այլ զվարճախոսության մեջ անձնանունների ստուգաբանությունն է դառնում զավեշտի դրսևորման հիմնական «մեղավորը»: Այսպես, օրինակ, անձնանուններից մեկի ստեղծումը կապվում է տեղավայրի հետ. հայկական Սարիկ անձնանունը զվարճախոսության մեջ բացատրվում է հերոսի՝ սարում ծնվելու հանգամանքով, ինչը համարվում է հաջողություն, քանզի զոմում ծնվելու դեպքում այլ լուծում կստացվեր.

- Մի աղջկա հարցնում են.
  - Անունդ ինչ է:
  - Ասում է՝ Սարիկ:
  - Բայց Սարիկ անուն կա՞: Ինչ է նշանակում:
  - Քանի որ սարում եմ ծնվել, մերոնք անունս դրել են Սարիկ:
  - Քնոր ջան, ինչ լավ է՝ զոմում չես ծնվել, թե չէ անունդ դնելու էին Գոմիկ:
- (ԱՄՇՀ)

**2.7.** Զվարճախոսություններից մեկում էլ զավեշտն ստեղծվել է օտարալեզու անձնանվան մասնատման միջոցով, ինչի հետևանքով անվան առաջին վանկի և հայերեն Սոնա անձնանվան հենքի վրա, ծանոթության ֆոնին, հակադարձվում է հակառակ սեռի մեկ այլ ներկայացուցչի զավեշտալի խոսքը.

- Հարցնում են.
  - Քնոր ջան, անունդ ինչ ա:
  - Բա թե՛
  - Էքսոնա:
  - Դե որ քու անունը Էզ Սոնա ա, ինձ էլ որձ Համո են ասում:
- (ԱՄՇՀ)

**2.8.** Անձնանունների հենքի վրա ստեղծված մեկ այլ զվարճախոսության մեջ զավեշտն ստեղծվում է ոչ միայն ազգային ավանդներից հավատարիմ մնալը շեշտելով՝ հոր անունով նորածնին անվանակոչելով, այլև նրա վաղաժամ ծնունդը այդ նույն անձնանվամբ ներկայացնելով.

*Աբարանցին իմանըմ ա որ տղա յա ունենալու, որոշըմ ա՝ հոր անունը դնի՝ Արշակ: Էն էլ տղեն յոթնուկ ա ծնվըմ, անունը դնըմ ա Վաղարշակ:*

(ԱՄՇՀ)

**2.9.** Երբեմն էլ ի հավաստումն հայոց մեջ գոյություն ունեցող զավեշտ առաջացնող բազում անձնանունների՝ զվարճախոսություններում ծիծաղի առարկա են դառնում կիսափրական-կիսամտացածին անվանումները.

*Մի գյումրեցու հարցում են՝*

*— Անունդ ինչ է:*

*Ասում է՝ Առավել:*

*— Ա՛յ քեզ անում, ճիշտն ասած, առաջին անգամ եմ լսում:*

*— Բա որ ախպորըս անունն իմանաս, ինչքան կգարմանաս:*

*— Ախպորըդ անու՞նն ինչ է:*

*— Առավելես:*

(ԱՄՇՀ)

(Տրբրկ.՝ **Մանավանդ-Նամանավանդ**)

**2.10.** Սյուժետային կառուցվածքով երգիծապատումներից մեկում, որտեղ նաև ցեղասպանության արձագանքն է առկա, զավեշտը դրսևորվում է մի կողմից օտարալեզու դիմելաձևի՝ *միս* (տիկլին) և դանիացի միսիոներուի *Քարեն Եփփեի* ազգանվան (Եփփե) ու հայերեն *միս եփել* բառակապակցության հարանունությամբ.

*— Ամման, քսի, — գըսե, — մինչ հոս եգա, — անունը չեմ գիդեր՝ ինչպե՞ս խոսիմ հետը:*

*— Ինչպե՞ս չես գիդեր, միս Եփփե է, — գըսին գիները:*

*— Ամման, — գըսե, — ես ալ կգարծեի՝ ամեն օր միս կեփե, անգէ է:*

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 3, թիվ 9:



**2.10.** Հայկական անեկդոտների համատեքստում հանդիպում ենք այնպիսի նմուշների, երբ տառային հապավում-ծածկախոսությունն է դառնում զավեշտի հենք.

*Ծանոթանալու առաջարկով տղան դիմում է մի աղջկա:*

— Աահ, — կարճ արտաբերում է աղջիկը՝ նկատի ունենալով «ազգանուն»-«անուն»-«հայրանուն» բառերի սկզբնառուները:

— Ջանն, — բացականչում է տղան, բայց դեմքին սպտակ ստանալով՝ հարկադրված է լինում բացատրել.

— Ջանյան Արամ Ներսեսի...<sup>128</sup>

**3.** Բավականին մեծ քանակ են կազմում հայկական կամ հայության շրջանում տարածում գտած անձնանունների և դրանց հենքի վրա ստեղծված տարատեսակ բառերի, մասնավորապես հատուկ և հասարակ գոյականների համանուն-հարանունային դրսևորմամբ անեկդոտները: Այսպես, օրինակ՝

**3.1.** Հատուկ և հասարակ գոյականների համադրությամբ զավեշտ է ստեղծվում՝ ի հակադրություն հասարակ գոյականի բնույթի՝ անձնանվան էությունը բնութագրող բառակապակցության կիրառությամբ.

Շաքար անձնանվամբ ներկայացող ոստիկանը վարորդի կողմից բնութագրվում է այսպես.

— Իս՛, այտս՛, էնա սաս մոու բիբար ես, էլի...<sup>129</sup>:

Տե՛ս Հավելված 3, թիվ 10:

**3.2.** Հատուկ և հասարակ գոյականների համադրմամբ անսպասելի ծիծաղ է առաջանում նաև հայկական անձնանվան (Իշխան) և ձկնատեսակի (իշխան) համանունության միջոցով.

---

128 **Ահյան Մ.**, Ծիծաղի հարյուր ակնթարթ (Զվարճապատումներ), «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995, էջ 30:

129 **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ, Եր., «Վան Արյան» հրատ., 2002, էջ 47:

Իսայեկտրը<sup>130</sup> մեկին կանգնացնում աս, ուզում աս ակտ<sup>131</sup> գրի: Էս շոֆեռն<sup>132</sup> ինչ անում աս, չի անում, ինչքան խնդրում աս, հնար չի ըլլում, ակտ աս գրում ու ասում աս՝ հմի կարաս արատ գնաս: Էս շոֆեռն ասում:

— Էտա դու քու ասածն արիք, մենակ մի բան եմ խնդրում. անունըդ ինձ բաշխի, ու ես հանգիստ խղճով կգնամ:

Իսայեկտրն ասում՝

— Իշխան, բավարարված եմ, դե գնա՛:

— Իշխա՛ն...Վայ քեզ ջրիցը հանողի տիրու մերը....

(ԱՍՇԸ)

**3.3.** Համանունային դրսևորումամբ ստեղծված վերոնշյալ նմուշից գատ, ստորև բերվող գվարճախոսությունը՝ կրկին համանունային դրսևորումամբ, սակայն բառախաղով կառուցված, ոչ միայն ընկալելի է դարձնում ստեղծված իրավիճակը, այլև ավելի է նպաստում զավեշտի ինքնատիպ ու տպավորիչ դարձնելուն.

Մեկը դժգոհում էր ընկերոջը.

— Սա երգիր ս՛. գնացի Սևան՝ իշխան բռնելու, մըլիցա Իշխանը բռնեց:

(ԱՍՇԸ)

**3.4.** Անեկդոտներում անսպասելի զավեշտ է ստեղծվում բուսատեսակից ստեղծված անձնանվան (Ծաղիկ) և այդ նույն բուսատեսակի փնջի (ծաղկեփունջ) բառախաղային համանունությամբ.

Ավտոբուսից իջնելիս մեկը շրջվելով դիմում է իր ծանոթին.

— Ծաղիկ, տոմս չվերցրնես. վերցրել եմ:

Քիչ հետո մի 5-6 հոգի առանց տոմս վերցնելու իջնում են:

— Չհասկըցա, էսի՞ց Ծաղիկ է՞ր, թե՛ ծաղկեփունջ, — գայրաւում է վարորդը:

(ԱՍՇԸ)

---

130 **Իսայեկտր** (ռուս.) – ավտոտեսուչ:

131 **Ակտ** (ռուս.) – արձանագրություն:

132 **Շոֆեռ** (ռուս.) – վարորդ:

**3.5.** Ինչպես գիտենք, հայության շրջանում շատ-շատ են գանազան ծաղկանուններով (Անթառամ, Վարդ-Վարդուհի, Վարդիշաղ, Վարդիթեր, Յովվարդ-Յովվարդ, Հագարավարդ, Հրավարդ, Ալվարդ, Մանուշակ, Մեխակ, Նարգիզ, Լալա-Լալագար, Նունուֆար, Սուսամբար և այլն) արական և իգական անձնանունները: Լոռու գվարճախոսություններից մեկում իգական անուններն են դարձել զավեշտի հենք.

— Անունդ ինձ կրաշխեն, աղջիկ ջան, — հարցրեց Սաքո բիձեն:

— Վարդուհի:

— Մորդ անունը:

— Մանուշակ:

— Հորդ, քրոջդ...

— Մեխակ, Նարգիզ...

— Պանհ, էս ինչ էլ լավ ծաղկի դաստա<sup>133</sup> եք, աղջիկ ջան<sup>134</sup>:

**4.** Քիչ չեն նաև գանազան թռչունների անուններով հայկական անձնանունները՝ Սոխակ, Աղավնի, Վարուժան-Վարուժակ (աղավնու արու ձագը), Արծվի(կ), Կաքավ, Լորիկ, Բագե, որից էլ՝ Բագեյան ազգանունը, Բլբուլ, որից էլ՝ Բլբուլյան ազգանունը և այլն:

**4.1.** Հայկական անելդոտներում զավեշտի հենք են դառնում նաև թռչունների անուններից առաջացած անձնանունները: Դրանցից մեկը կապված է սոխակին տրվող ժողովրդական բլբուլ անվան հետ: Ղարաբաղյան գվարճապատումում հիմք ընդունելով սոխակ-բլբուլի երգելու հատկանիշը, անսպասելի ծիծաղը դրսևորվել է մեկ այլ թռչունին՝ ագռավին հակադարձող բառախաղով.

— Անունդ հինչ ա:

— Բուլբուլ:

---

133 **Դաստա** – փունջ, ասվում է կանաչիների փնջի՝կապի համար:

134 **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր, Լոռվա կատակներ, (կազմի վրա՝ Լոռվա ժպիտներ), «Վան Արյան» հրատ., Եր., 2002, էջ 47:

— *Բլբուն՛, բան՛ աղան, թէ՛ զօկի*<sup>135</sup> *բլբուլը տիւ ըս, նրանց ազ-  
նարը հինչ կլինի*<sup>136</sup>:

Տես Հավելված 3, թիվ 11:

**4.2.** Տարիներ առաջ Աղավնի-Աղունիկ անձնանվանն առնչվող անեկդոտ ենք գրառել՝ կապված այդ տարիներիին հանրապետու-  
թյան բնակչությանը լարված վիճակի մեջ պահած «թռչնի գրիպ»  
հիվանդության հետ.

*Ապարանցուն ասում են՝*

— *Մարդ չգիտի՝ էս թռչնի գրիպի առաջը ո՞նց ա առնելու:*

*Ապարանցին ասում ա՝*

— *Ես արդեն առաջն առել եմ:*

— *Ո՞նց:*

— *Կնգանըս սըպանել եմ:*

— *Ինչի՞:*

— *Անունն Աղունիկ էր:*

(ԱՍՇՀ)

**5.** Հայոց շրջանում ընդունված է ընտանի կենդանիներին, մա-  
նավանդ կովերին ու ձիերին մարդկանց անուններ (Մարո, Նար-  
գիզ, Շուշան, Ծաղիկ, Սոնա և այլն) տալը: Եվ, բնականաբար,  
այս դեպքում ևս զավեշտալի միջադեպերը չէին կարող շրջանցել  
մարդկանց: Կովի և հարևանի կնոջ անունների նույնը լինելը, և գո-  
մը մաքրելիս «*Մարո՛, թանս*<sup>137</sup>, *թանս*» խոսքերը անհանգստացնում են  
հարևանին, և նա խնդրում է փոխել կովի անունը:

Տես Հավելված 3, թիվ 12:

**6.** Անեկդոտներում զավեշտ է ստեղծվում անձնանվան և ամիս-  
ամսաթվերի և ծիսակարգային արարողակարգի կամ պետական  
տոնի համանունության հենքի վրա:

135 **Զօկ** – Գողթան գավառի հայերի մականունը:

136 Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դէպքեր և առակներ, մեծ մա-  
սամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆ-  
լիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 148:

137 **Թ-սս** – 1. բարձրացրո՛ւ ոտքդ 2. կողմ, մի կողմ քաշվիր: Մշո և Բաղեշի բար-  
բառներում *թասալե* կողմ է նշանակում: Արագածոտնի մարզի Հնաբերդի  
բնակիչները շուրջ 190 տարի առաջ են Մուշից գաղթել:

**6.1.** Այսպես, ստորև բերվող զվարճախոսություններում անսպասելի ծիծաղն առաջանում է անձնանվան և ամսանվան, ինչպես նաև թաղման յոթերորդ օրը կատարվող ծիսական արարողակարգի և *յոթ* թվային միավորի բառախաղային համանունությամբ.

**ա.** Մեկը թե՛

— Գիտե՞ք որ մայիսի յոթին Մայիսի յոթն ա:

(ԱՄՇՀ)

**բ.** Ընկերը ընկերոջը հարցնում է.

— Արա՛, էսօր Մայիսի յոթն է, գիտե՞ս:

— Ա՛յ դուռակ<sup>138</sup>, էս ձմեռվա կեսին ի՞նչ մայիսի յոթ:

— Արա՛, ի՞նչ ես խոսում, մի շաբաթ առաջ Մայիսին չթաղեցինք<sup>139</sup>:

Անձնանունների և ամսանունների համանունությամբ անեկդոտներն ու դրանց տարբերակները բավականին շատ են և հիմնականում երկխոսական բնույթի են և բառախաղային դրսևորմամբ են հանդես գալիս: Մեջբերենք դրանցից մի քանի նմուշ.

**ա.** — Մայիսին հունիսին եմ տեսել:

— Հիմի մայիսի՞ն, թե՛ հունիսին, կոնկրետ բան ասա՛ հասկանանք:

— Մեր ընկեր Մայիսին վերջին անգամ հունիսին եմ տեսել:

(ԱՄՇՀ)

**բ.** — Անունդ ի՞նչ ա:

— Մարտին:

— Ե՞րբ ես ծնվել:

— Մարտին:

— Լսեցի, որ անունդ Մարտին ա, հարցնում եմ՝ ո՞ր ամսին ես ծնվել:

— Մարտին:

(ԱՄՇՀ)

---

138 **Գուռակ** (ռուս.) – հիմար:

139 Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, հավաքել և կազմել է Լեւնա Անթառայանը, «Վերնատուն» հրատ., Եր., 1994, էջ 44:

- գ.** Մի աղջկա հարցնում են.
- Նշանածիդ անունն ինչ է:
  - Մարտին:
  - Երբ ես հետը ծանոթացել:
  - Ապրիլին:
  - Բա երբ եք որոշել ամուսնանալ:
  - Մայիսին:

(ԱՄՇՀ)

**7.** Երբեմն էլ անձնանունների հենքի վրա բառախաղով զվարճախոսություն ստեղծելիս ժողովուրդը երկխոսությունն անցկացնում է տարբեր ժամանակներում ապրած մարդկանց միջև, ինչպես 1960-ականների վերջին մեր գրառած հետևյալ նմուշում.

*Պոլոզ Մուկուչը գնում է Ֆրանսիա: Փարիզում նա հանդիպում է Բալզակին:*

- *Օտրե դը Բալզակ, — ներկայանում է Ֆրանսիացի գրողը: Պոլոզ Մուկուչն էլ իրան չի կորցնում ու ասում է.*
- *Պոլոզե դը Մուկուչ:*

(ԱՄՇՀ)

**8.** Բառախաղի միջոցով անսպասելի ծիծաղ առաջացնող նմուշներից մեկն էլ ազգության (թաթար) և հայության շրջանում դրա համանունությամբ առկա անձնանվան կիրառությունն է.

- *Ներեցեք, դուք ո՞ւմ կինն եք:*
- *Թաթարի:*
- Սարգիսը գիտեր Թաթարին, ուստի կատակում է.*
- *Թաթարները յոթ միլիոն են, դուք ո՞ր մեկի կինն եք<sup>140</sup>:*

Տես Հավելված 3, թիվ 13:

**9.** 1960-ականներին ստեղծված զվարճախոսություններից մեկում էլ զավեշտն ստեղծվել է դիրքային-սոցիալական անհավասարությունը ընդգծող տեր և անտեր բառերի հենքի վրա դրսևորված բառախաղով.

140 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ» հրատ., 2008, էջ 62:

Հայաստանի Կենտկոմի քարտուղար Տեր-Ղազարյանը գալիս ա Կիրովական, ծանոթանում քաղաքացիների նիստուկացին և երբ ձեռքը մեկնում ա լոռեցի Ռուբենին, ասում ա.

— Տեր-Ղազարյան:

Ռուբենն էլ վրա ա բերքը.

— Անտեր Ռուբեն:

(ԱՄՇՀ)

Որևէ մեկի անկարողությունը, անուշիմությունն ընդգծող «Քեզանից Պողոս-Պետրոս չի դուրս գա» ժողովրդական արտահայտության հենքի վրա տարբեր տարածաշրջաններում զվարճապատումներ են ստեղծվել, և բոլորի լուծումն էլ, իբրև անվստահության հակակշիռ, երկու տղա ունենալն ու Պողոս և Պետրոս անվանակոչելն է:

Ղարաղայյան «Պուղոս-Պըտրոս» պատումում կյանքում առաջին ինքնություն քայլերն անող հերոսը ժողովրդական այդ պիտակավորումն ստանում է հորից, և տղան ստիպված հեռանում, գնում է քաղաք, հաջողությունների հասնում, ինքնահաստատվում, ամուսնանում ու զույգ տղաներով վերադառնալով գյուղ՝ հիշեցնում է հոր խոսքերը.

— Ա հար, ըսիս լալ<sup>141</sup>, որ քի անե Պուղոս, Պըտրոս չի դոս գյո: Պա խե՞ յա դոս եկալ: Էս՝ Պուղոս, էս ալ՝ Պըտրոս<sup>142</sup>:

Տեն Հավելված 3, թիվ 14:

Լոռու և Գյումրու տարբերակներում պատումների հերոսները ծուլության և վատ առաջադիմության պատճառով են արժանացել իրենց ուսուցիչների՝ վարժապետ Տեր Սուքիասի և Ընկեր Մարգոյի՝ «Քեզանից Պողոս-Պետրոս չի դուրս գա» բնութագրմանը:

Տեն Հավելված 3, թիվ 15 և թիվ 16:

**10.** Ցուցապատառների հենքի վրա ստեղծված անեկդոտներից մեկում գավեշտ է ստեղծվում հայկական անձնանվան (Գալուստ) և հասարակ գոյականի (բարի գալուստ) համանունությամբ.

141 Ըսիս լալ – ասում էիր:

142 Հովսեփյան Հ., Ղարաղաղի հայերը. հ. 2, բանահյուսություն, Եր., «Գիտություն» հրատ., 2009, էջ 457:

Թոռան հետ հարևան շրջան գնացող պապը, տեսնելով «Բարի գալուստ» ցուցանակը, զարմացած հարցնում ա ավտոբուսի վարորդին.

— Այտա՛, սրանք բա ի՞րողիան են իմացել, որ մեր Գալուստը բարի ա...

(ԱՍՇՀ)

**11.** Խոսքի, բառի, ներգործուն ուժի հանդեպ ունեցած ժողովրդական հավատքն ու դրա ազդեցությունը մարդու կյանքի վրա արտահայտվել է ժողովրդական ասոյթաբանության այնպիսի տեսակներում, ինչպիսիք են օրինանքը, անեծքը, աղոթքը, հայհոյանքը: Կյանքին, ճակատագրին դիմագրավելու միջոցներից մեկն էլ անձնանուններն էին. այսպես, մի քանի մահեր ունենալուց հետո հայ մարդը տղա երեխայի՝ կենդանի մնալու ակնկալիքով հազար ու մի միջոցների է դիմել (ծնված տղա երեխայի մազերը 7 տարի չկտրել, թուրքի անուն դնել, երեխան անցկացնել թուրք «բաջու» ծոցի միջով և հանել փեշի տակից և այլն): Ի դեպ, վերջինիս դրսևորումներն առկա են թե՛ հայկական հեքիաթներում, թե՛ հին հունական դիցաբանության մեջ՝ կապված վաղնջական ժամանակների որդեգրման ծեսի հետ: Անձնանուններով մահին պատվար ստեղծելը ևս նույն նպատակին է ծառայել: Մնացականը դրա վկայությունն է: *Վրեժ-ը*, *Բավական-ը*, *Հերիքնագ-ը* նույնպես անձնանունով ներազդելու նպատակ է հետապնդել:

Ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող մնացական և գնացական բառերը վերաբերում են մնալու և գնալու ենթակա մարդկանց, ասվել է նաև հիվանդ ու անհույս երեխաների կապակցությամբ: Ստորև մեջբերվող գվարճախոսությունը կառուցված է բուն հայկական անձնանվան (Մնացական) և դրա հականիշ մտացածին անձնանվան՝ Գնացական (վերջինս բխում է ստեղծված իրավիճակից) միջոցով.

*Միլիցիան բռնված գողին հարցնում է.*

— Անունդ ի՞նչ է:

— Մնացական, — պատասխանում է գողը:



— Իսկ էն, որ փախա՛մ:

— Գնացական<sup>143</sup>:

**12.** Թե՛ մեր գրառումներում, թե՛ տարատեսակ անեկդոտների ժողովածուներում քիչ չեն նաև այնպիսի զվարճապատում-զվարճախոսությունները, որտեղ զավեշտի հենքը պատմական, սոցիալ-տնտեսական իրադարձություններով պայմանավորված իրական կամ մտացածին հայկական և օտար անձնատուններն են:

**12.1.** Գորբաչովից սերված **Գյոռբաչովը** Ղարաբաղյան շարժման տարիներին ԽՍՀՄ ղեկավարի հանդեպ ունեցած ժողովրդի հակակրանքի արտահայտությունն է.

*Սումգայիթի դեպքերից հետո հայերը Գորբաչովի անունը փոխում, դարձնում են Գյոռբաչով<sup>144</sup>:*

(ԱՄՇՀ)

Մեկ այլ տարբերակում երկրաշարժ տեսած լենինականցիները, վստահ լինելով, որ երկրաշարժը Գորբաչովի ձեռքի գործն է, իրենց վերաբերմունքն արտահայտում են անեծքով և գլխի խալի պատկերավոր համեմատությամբ.

*Երկրաշարժից հետո լենինականցի կինն անիծում էր երկրի ղեկավարին.*

— Հողեմ **Գյոռբաչովի** վարյոնկա<sup>145</sup> գլուխը:

(ԱՄՇՀ)

**12.2.** Ղարաբաղյան շարժման, դրան հաջորդած Ղարաբաղյան պատերազմի ցուրտ ու մութ տարիներին ժողովուրդը ամեն ինչ ծախում էր, որ հացի տար, տոկոսով փող էին վերցնում ու մնում տոկոսի տակ: Եվ իբրև ժողովրդի ծայրահեղ ծանր սոցիալական վիճակի արտացոլում՝ անեկդոտներից մեկում հայերեն բա-

---

143 Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լեւոն Անթառանյանը, «Վերնատուն», Եր., 1994թ.:

144 **Գյոռ** (թրք.) – գերեզման:

145 Քինսե տարատների պես Գորբաչովն էլ գլխին լաքա (կեղտի հետք, բիծ) ուներ:

ների միացմամբ ու ճապոնական հնչողությամբ նոր անձնանուն է ստեղծվում՝ **Տոկոսիտակի**։

Հայը էրեխա յա ունենում, անունը դնում ա **Տոկոսիտակի**։

(ԱՄՇՀ)

**12.3.** Մեկ այլ դեպքում պարենային ապրանքը՝ *պանիր*ն է դառնում անձնանուն։ Տափակ զվարճախոսությունների շարքին պատկանող հորինվածքով արձագանքելով 1990-ական թվականների սոցիալական վիճակին (երբ պանիրն անգամ խանութներից վերացել էր)՝ ժողովուրդը դրանով փորձում էր կյանքը թեթևացնելու, այդ վիճակից դուրս գալու «ելք» գտնել. այն է՝ զվարճախոսությամբ ինքն իրեն լիցքավորվել ու տոկալ։

— *Էրեխիտ անունն ինչ ես որոշել դնես, — ծննդյան վկայական հանելիս հարցնում է գրանցման գրասենյակի աշխատակիցը։*

*Բա թե՛*

— *Պանիր։*

— *Ա՛յ ընկեր, բա Պանիր էրեխի անուն կլինի՞։*

— *Իմ էրեխեն չի, դու գրի, թող տանք պանիրը միշտ ըլի։*

(ԱՄՇՀ)

**13.** Ինչպես գիտենք, հայոց մեջ ընդունված է հայկական տեղանուններով երեխաներին անձնանուններ դնելը (Անի, Հրագդան, Սևան և այլն), նույնիսկ՝ ազգանուններով տոհմի բնակատեղին հավերժացնելը (Մշեցյան, Կարինյան, Խոյեցյան և այլն)։

**13.1.** Զվարճախոսություններից մեկում օտարերկրյա տեղանունը (Հոռոմ) անձնանուն դարձնելով և ազգակցական ու կրոնական առաջնորդի պաշտոնի (պապ) համանունությամբ՝ նպաստել է անսպասելի ծիծաղ առաջացնելուն։ Այս դեպքում հերոսի նպատակամղվածության և անհեթեթ հիմնավորման շնորհիվ զավեշտն էլ ավելի է սրվում.

— *Ա՛յ հեր, բա «Հոռոմ» անուն կըլինի՞։*

— *Որ դնեք, կըլինի։ Դրեք, որ երբ փողոցով գնալիս ըլեմ ու հարցնեն՝ էն ո՞վ ա գալի, ասեն՝ Հոռոմի պապը։*

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 3, թիվ 17։

**13.2.** Հայոց բանարվեստում ծաղր ու ծիծաղի պատճառ կարող են դառնալ նաև զավեշտալի տոհմանունները: Կոմիտասի հինգ սաներից մեկը՝ երաժիշտ-ազգագրագետ և բանաստեղծ Միհրան Թումանյանը գրի է առել սվասցիների (սերաստացիների) և կյուրինցիների (կուռինցիների) մի երկխոսություն, որն առնչվում է հարևան այդ երկու տեղավայրերի տոհմանուններին<sup>146</sup>:

Տես Հավելված 3, թիվ 18:

**14.** Զավեշտի պատճառ կարող է դառնալ ժողովրդի կողմից «կնքված» մականունները՝ կապված ինչ-որ իրադարձության, միջադեպի, երևույթի հետ:

**14.1.** Այսպես, *անձնանուն-մականուններին* առնչվող Միհրան Թումանյանի գրառած մեկ այլ նմուշ<sup>147</sup> վերաբերում է հողաբաժանման առիթով կնքած մականվանը: Տարատեսակ հաշվարկներով զավեշտի դրսևորման երգիծապատումներ շատ կան, սակայն այստեղ եղբոր և իր հողաբաժինների՝ **Մեկ՝ Կարապետ, էրկուք է ես՝ իրեք բաժին** հաշվարկը պատճառ է դառնում հաշվարկ անողին՝ **Երկու մարդ, իսկ տարիներ անց նրա զավակին՝ Երկուն մարդուն կես տրդա** ծաղրանուններով անվանակոչելու:

Տես Հավելված 3, թիվ 19:

**14.2.** Լոռու զվարճապատումներից մեկը հավաստումն է այն բանի, որ միշտ էլ տեղաբնակներն աշխատել են ինչ-որ պիտակով՝ ավել անունով առանձնացնել նորեկներին.

*Գյառգառ են գործուղում անասնաբույժ Արքիպագին: Գյուղացիք ասում են. «Մեր գյուղում ադաթ»<sup>148</sup> ա, որ նոր էկողններին էվել անուն դնեն: Հըմի թե որ մակարիչ»<sup>149</sup> անես, էնա քեզ մի լավ անուն կդնենք»:*

146 **Թումանյան Մ.**, Հայրենի երգ ու բան, հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 297:

147 Նույն տեղում:

148 **Ադաթ** – ավանդական սովորույթ:

149 **Մադարիչ** – ընծա կամ հյուրասիրություն, որ տալիս է հաջողություն ունեցողը:

Գործուղվածը մի լավ սեղան է գցում: Գյուղացիներից մեկն ասում է.

— Ա՛յ մարդիկ, է՛նա Աքրիպազը էվել անուն ա, էլ ընչի՛ մնել չարչարվենք նոր անուն դնենք<sup>150</sup>:

**15.** Տեղացիների այս «անվանակոչությունը»՝ կապված նաև բառերի և արտահայտությունների արտաբերման կերպի հետ, արտահայտվեց Երկրորդ աշխարհամարտից հետո հայրենադարձվածներին **ախսպար** անունը տալով:

Այդ պիտակավորումը շարունակվում է առ այսօր: Սիրիական պատերազմի հետևանքով մի շարք հայ ընտանիքների՝ Հայաստանում հանգրվանելու առաջին իսկ օրից այդ խնդիրը կրկին առաջ է քաշվում.

— 1946-ին հայրենադարձները որ Հայաստան էկան, անունները ախսպար դրինք, բաքվեցիք, կիրովաբադցիք, շահումյանցիք որ էկան<sup>151</sup>, լոխ-լոխ դրինք, բա ձե՞զ հիմա ինչ անուն ենք դնելու, — ասում է տեղացի հայրենիք ներգաղթած սիրիահային:

— Ի՞նչ է, ամենուն անպատճառ պիտի անուն դնեք, — արտնդեղած հարցնում է ումբակոծություններից մազապուրծ հալեպահայր<sup>152</sup>:

(ԱՄՇՀ)

**16.** Զվարճապատումի կամ զվարճախոսության առաջացման հենք կարող են դառնալ նաև **տեղանունները**: Այս դեպքում անսպասելի ծիծաղը դրսևորվում է՝

**16.1.** Տեղանվան բառամասնատմամբ ստեղծված հարանուսության միջոցով:

---

150 **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ, «Վան Արյան» հրատ., Եր., 2002, էջ 29:

151 Նկատի ունեն Ղարաբաղյան շարժման ու պատերազմի հետևանքով Բաքվից, Մումգայիթից ու Պատմական Արցախի մի շարք տարածքներից բռնի արտաքսված հայերին:

152 Սիրիահայերը ևս գերծ չմնացին պիտակավորումից. նրանք «կնքվեցին» **հաճիս** մականվամբ:

Այսպես, Ղարաբաղյան շարժմանն առնչվող նմուշներից մեկում Արցախ տեղանվան մասնատումն է հարանունությամբ դառնում գավեշտի առաջացման աղբյուրը: Յուրտ ու մութ տարիների համար ժողովուրդը հեգնելով՝ «արդարացնում» էր իշխանավորներիին.

— Բայց *Լևոն Տեր-Պետրոսյանն ի՞նչ մեղավոր ա, որ ժողովուրդը վառելիք չունի. ցուրտ ա, մրսում ա: Դեռ 1988 թվից էր էդ խեղճ մարդը միտինգների ժամանակ ամբիոնից կոկորդը պատռելով գոռում, զգուշացնում ժողովրդին, որ չմոռանան՝ ցախ առնեն, ու չմոռանալու համար վանկարկելով կրկնել էր տալիս. «Առ-ցախ, առ-ցախ, առ-ցախ»<sup>153</sup>... Որ ժողովրդը նրա ասածներին բանի տեղ չդրեց, չլսեց. ցախ չառավ, ո՞վ ա մեղավորը...*  
(ԱՄՇՀ)

**16.2.** Զավեշտը դրսևորվում է տեղանունների անվանափոխությամբ. Հայաստանի քաղաքների անունները (Հրազդան, Ապարան, Լենինական,) անվանափոխվում են այնպես, որ տվյալ տարածաշրջանին տրված ժողովրդական մականունների՝ օտար լեզվով (այս դեպքում՝ ռուսերեն) թարգմանությունը համընկնի օտար երկրների քաղաքների անունների հետ.

— *Լսել ե՞ք, որ Հայաստանի մի քանի քաղաքների անուններ փոխել են:*

— *Ո՞նց:*

— *Հա, Լենինականի անունը դրել են **Ռոստերդամ-ռոս** (ռուս.)-բերան (մեծաբերանությունը հաշվի առնելով).*

*Ապարանի անունը՝ Օսլո – օսլոլ (ռուս.) – էշ (ապարանցիների էշ-ային անեղդոտները նկատի ունենալով)*

*Հրազդանի անունը՝ Գլազգո–գլազա (ռուս.)–աչք (նկատի ունենալով հրազդանցիներին (ախտեցիներին) տրված **քոռ** մականունը):*

(ԱՄՇՀ)

**16.3.** Զվարճախոսությունում անսպասելի ծիծաղի աղբյուրը դառնում է հանելուկային՝ *հարցադրում-առաջադրանքով* բա-

153 **Ցախ** – մանր վառելափայտ, ծառերի ճյուղերի խուրճ:

ների (տվյալ դեպքում՝ Խորհրդային Միության չորս քաղաքների անունների) ուղիղ ձևերի այնպիսի դասավորության թվարկումը, որոնց հաջորդականությունը արտաբերելիս կհանգեցնեք իմաստ արտահայտող բարդ նախադասության: Ընդ որում, այդ բարդ համադասական նախադասությունը կառուցելու համար վերցվել է օտարերկրյա երկու այնպիսի քաղաքների անուններ, որոնց մասնատումը հայերենում հնարավոր կդարձնեք դիմավոր բայով և հարանունությամբ միտք արտահայտել: Այդ նպատակին հասնելու համար նախադասությունը կազմվում է Շիրակի խոսվածքով, քանզի առաջադրված տեղանուններից մեկը մասնատելիս հենց այդ խոսվածքով արդեն իսկ դիմավոր բայով արտահայտված բանբանակ պարզ նախադասություն է դառնում (Վորկուտա):

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 3, թիվ 20:

**16.4.** Երկխոսական զվարճախոսություններից մեկում էլ զավեշտն ստեղծվում է օտար տեղանվան բառամասնատմամբ, և այդ մասերից մեկը, իբրև անհաջողությունը, վատը խորհրդանշող հայերեն իմաստակիր բառ, դեն է ձգվում՝ ապահովելու համար ծառայության հաջող գործընթացը.

*Շնողի գյուղամիջում հավաքվածներից մեկը հարցնում աս  
բանակ նոր գորակոչվածի հորը.*

— Տղեղ ղրղի աս ծառայըմ:

Ասմա՝ Ստապոլ:

— Որղի՞:

— Ստապոլ:

— Ստապոլ թե Սևաստապոլ...

— Չէ, Ստապոլ, Վազգեն ջան, սևը ասիլ մի...

(ԱՄՇՀ)

**16.5.** 1960–70-ականներին Հայաստանից արտագնա աշխատանքի մեկնողների քանակը մի քանի տասնյակ հազարի էր հասնում: Խորհրդային Միության Հեռավոր Արևելքի Կամչատկա տեղավայրը հայի համար աշխարհի ծայր էր համարվում, իսկ «խոպանչիների» համար այնտեղ հասնելը ցանկության հարց էր:

Արտագնա աշխատանքի թեմայով երկխոսությամբ կառուցված գվարճախոսության զավեշտը հեզնախստն արտահայտությամբ է դրսևորվել.

*Դըլլաքանց Վաչոն քրոջ տղային, որի հայրը մեկնել էր արտագնա աշխատանքի, հարցնում է.*

— Արա՛, հերըտ ո՛ր ա հասել:

— Կրասնոյարսկում էր, բայց գնալու ա Կամչատկա:

— Պանհ, պանհ, պանհ, հորըդ կգրես, որ ընդհան դենը գնաս ոչ, թե չէ գլորուսիցը<sup>154</sup> վեր կընգնես<sup>155</sup>:

**16.6.** Զվարճախոսություններից մեկն էլ հայկական Շիկահող և ամերիկյան Չիկագո տեղանունների հարանունությամբ անիրական՝ հեքիաթային միջադեպի հենքի վրա է զավեշտն ստեղծվել<sup>156</sup>:

Տես Հավելված-3, թիվ 21:

**16.7.** Տեղանվան և գունատեսակի համանունության հենքի վրա կառուցված զվարճախոսությունում գունատեսակի (կարմիր) և տեղանվան (Սպիտակ) անհամապատասխանությունն էլ դառնում է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

*Ապարանցիները Սպիտակի ավտորուսը կանգնեցնում են, մարդկանց իջեցնում ու սկսում ծեծել: Զարմացած ուղևորները երբ հարցնում են պատճառը, ասում են.*

— Իսկականից մեզ էշի տեղ է՞ք դրել. կարմիր ավտորուսի վրա գրել էք «Սպիտակ»:

(ԱՄՇՀ)

**16.8.** Երգիծապատումներից մեկում էլ անսպասելի ծիծաղը դրսևորվում է գունատեսակն ընդգծող բնակավայրին տրված նախկին անվան՝ Բոզիգեղ (ժողովրդախոսակցական լեզվով՝ բոզ-

154 **Գլորուս** – երկրագունդ:

155 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ատոլիկ» հրատ., 2008, էջ 67:

156 **Գրիգոր Ս.**, Զվարճալի պատառաբաղ-1, Քաջարան-Կապան, Երևան, «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 142-143:

մոխրագույն, գորշ, որից էլ՝ տարածված Բոզոյան ազգանունը), և մարդու բարոյականությունն արտացոլող բացասական հատկանիշներից մեկի ժողովրդախոսակցական բնորոշման համասնություն միջոցով.

*Վիլյամ Սարոյանը ավտոմեքենայով Լոռու Մարգահովիտ գյուղի միջով անցնելիս հարցնում է.*

*— Ի՞նչ է աս գյուղին անունը:*

*— Բոզիգեղ, — ներկայացնում են ուղեկցողները:*

*— Ամերիկա ալ ադանկ հաստատություն կա, բայց ասանկ քոնպակտ<sup>157</sup> չէ, — ասում է Սարոյանը:*

(ԱՄՇՀ)

**16.9.** Զվարճախոսություններից մեկում զավեշտի հենք է դառնում տեղանվան ժողովրդական ստուգաբանությունը՝ բացատրելով կապը Լենինի անվան հետ.

*— Լենինականը Լենինի անունի հետ կապ չունե, — բացատրում է լենինականցին, — մեր քաղքի անունը Լեն նագանից է առաջացե:*

(ԱՄՇՀ)

Մեկ այլ նմուշում Լենինի անունով կոչվելը գյումրեցին չարյաց փոքրագույնն է համարում.

*— Ի՞նչ լավ էր, օր Լենինը շուտ մեռավ, բա օր Տրոցկին շուտ մեռներ, ի՞նչ էինք էներու. մեր գյոզալ քաղքի անունը դներին զը Տոցկի, աշխրքով մեկ խայտատակ կեղներինք:*

(ԱՄՇՀ)

---

157 **Քոնպակտ** – հավաք, միատեղված:



# ՀԱՎԵԼՎԱԾ 3

## 1

Մի անգամ հարցնում եմ մշակույթի աշխատողների վերապատրաստման հանրապետական դասընթացների տնօրենին:

— Մխիթարյան, ինչ է նշանակում ԱՀՀևՍ անունդ:

— Հապավում է՝ Արժանանանք համաշխարհային հեղափոխությանը և սոցիալիզմին:

— Հայրդ հաստատ կոլխոզի նախագահ է եղել, ու անունդ կոլխոզի գրասենյակի ճակատին փակցրած լոզունգի սկզբնատառերից է ստեղծել:

— Ճիշտն ասած՝ չէի անդրադարձել, — ժպտալով պատասխանեց Ահիևսը:

(ԱՄՇՀ)

## 2

— Ծանոթանանք, Վերելք, — նստելով ավտոմեքենաս, ներկայանում է Գուգարք գյուղի ատամնաբույժը:

Ասում եմ՝

— Դու հաստատ 1933–37թթ. ծնունդ ես:

— Հա, 1935թ. եմ ծնվել, ինչ իմացար,:

— Այդ տարիները ԽՍՀՄ-ում հայտարարվել էին արդյունաբերության վերելքի տարիներ...

(ԱՄՇՀ)

## 3

1980-ականների սկզբին Մշակույթի նախարարության ժողովուն եկած մի արթիկցի մշակույթի աշխատակցի հարցնում եմ.

— Այստեղ ճիշտ է գրված, ձեր իսկական անունն ինչ է:

— Ասում է՝ Ֆինալ:

— Ինչ, Ֆինալ, էդ ո՞րտեղից ես գտել անունդ:

— Հերս Մոսկվայում բոքսի մրցումների է մասնակցելիս եղել և դուրս է գալի եզրափակիչ: Զանգում է տուն, որ ասի՝ *Ֆինալ* է դուրս էլել, հայտնում են, որ տղա ես ունեցել: Հերս էլ ասում է՝ դե որ տղա է ծնվել, անունը կոնքե Ֆինալ:

— Բայց բախտդ բերել է, որ մի քիչ ուշ ես ծնվել, բա որ կիսա-եզրափակիչում ծնվեիր, անունդ *պոլուֆինալ* էին դնելու, — կատա-կում եմ ես:

(ԱՄՇՀ)

#### 4

*Կանալիզացիա* անձնանունը կրող տղամարդուն 1950-ական-ներին վերապատրաստման նպատակով Երևանից Մոսկվա գոր-ծուղվող շինարարների ցուցակից վերադասը հանում է, որպեսզի հանրապետությունը չխայտառակվի, ինչը դուր չի գալիս Կանալի-զացիային և բողոք է գրում վերադաս մարմիններին:

(ԱՄՇՀ)

#### 5

Հնաբերդ գյուղ հարս գնացած Անուշը հարևանի տնից կնոջ գոռոցի ձայն է լսում.

— Շնորհաբար, Ելվրեն, ազիզըդ թաղեմ...

Նորահարսը սարսափած իրեն տուն է գցում և լսածը պատ-մում սկեսրոջը:

— Ելվրեսը մեր կողքի հարևանի երեխայի անունն է,— ծիծա-ղելով հարսին հանգստացնում է Մարուսը:

(ԱՄՇՀ)

#### 6

### Չերչիլը

... Պատերազմի տարիներին անգլո-ամերիկյան ինչ-ինչ օգնու-թյուն էր հասել Սարուխան և մի շոր էլ նրան (Նորիկին-ԱՍ) էին բաժին հանել: «Էսի Չերչիլի տվածն ա», — հարցուփորձել էին հա-սակակիցները: Եվ այնքան էին ասել, մինչև մատախապատ Անգ-լիայից Սարուխան հասած պրեմիեր մինիստրի անունը պինդ կպել ու մնացել էր իմ խեղճ համագյուղացու վրա...

Ի դեպ, Անգլիայի պրեմիեր մինիստրներից Սարուխանում շատ լավ գիտեին նաև Գլադստոնին, ում ազգանունը որպես անձնանուն մեր համագյուղացիներից մեկը շնորհել էր իր որդուն: 20-րդ դարի 30-ական թվականներին էլ մեր մի համագյուղացի իր որդիներին

անվանում է Կասիր և սեկրետար: Գյուղի համար գանձապահը և քարտուղարը նրա կարծիքով ամենակարևոր մարդիկ էին, հազար հոգսի տակ կքած խեղճ մարդը, գյուղական անմեղությամբ, որդիներին նման անուններ շնորհելով՝ երազել է տղաներին տեսնել այդ պաշտոններում:

Վերոնշյակին ավելացնենք, որ Սարուխանում պատվի են արժանացրել հույն Հումերոսին, Արեսին և Սոկրատին, գերմանացի Շիլլերին, անգլիացի Շեքսպիրին, Համլետին ու Մակբեթին, Պլատոնին և միջնադարի բանաստեղծ Ֆրիկին, նավթարդյունաբերող Նորելին (Ալֆրեդ), գիտնական Գալիլեյին և Դարվինին, ծովագնաց Բերինգին, զորահրամանատարներ Նսևկուն, Սիլիկովին, Ֆրունզեին, Գերմանացի կայսր Վիլհելմին և քաղաքական գործիչ Վալտերին, Նիկոլայ ցարին և Վասիլ կայսերը, հեղափոխական Կիրովին և գերմանացի Մարքսին (Կարլ), Վորոնցովին և Արդութովին, Հերցենին և «Իսկրա» թերթը, ամերիկացի գյուտարար Էդիսոնին և ֆրանսիացի ինժեներ Էյֆելին...Եվ բոլոր այս անունները սարուխանցիներն իրենց գավակներին շնորհել են 20-րդ դարի առաջին տասնամյակներին: Նաև այս կտրվածքով ճանաչեք աշխարհի հետ չափվող սարուխանցիներին...

Նիկողոսյան Տ., Իրական դեպքեր բայագեղոցիների կյանքից, Եր., «Լուսարաց» հրատ., 2016, էջ 24-25:

## 7

Քաջարանում Անուշանանց Թամեին, որպես հակասովետական քաղաքական հանցագործի, արքայերգին Սիբիր: Դատավճռի մեջ գրված էր. «Իր չարաճճի որդուն ժողովուրդների հայր Ստալինի անունով և մեր պետությանը վարկաբեկիչ ու արատավոր տոնով ժողովրդի մեջ բարձրաձայն կանչել է.

— Ստալին, Ստալին, քու գլոխթ թաղիմ, շուտ եք տոն»:

Գրիգոր Ս., Զվարճալի պատառաքաղ-1, Քաջարան-Կասպան, Եր., «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 142-143:

## 8

Մարթուն մեկը ամմէն իրիկուն կնկանը կըսէ էղեր քի՛

— Կնիկ, կըսէ էղեր, — *քէօմիրին խոշորները Մարտիկ ախ-*

պօրը համար պահէ<sup>158</sup>, — կըսէ էղեր, ետն ա կերթա խախվէն՝ ամ-մէնուն խապար կուտա էղեր:

Մարդուն մէկն ա ասիկա կիմանա, էրթէսի օրը կելլա աս մարթուն տունը կերթա, կնիկը վար կը կանչէ՝

— Մարտիկ ախպարը էս էմ: Քէօմիրներուն խոշորը զատեցիր նէ, տուր քի<sup>159</sup> տանիմ, — կըսէ:

Կնիկն ա կը հասկնա քի մարթուն ըսած Մարտիկ ախպարը ան է, կը հանէ քէօմիրները ասոր կուտա:

Իրիկունը էրիկը կուքա նէ՝ կնիկը կըսէ քի՝

— Քա մարթ, ասօր Մարտիկ ախպարը էկավ տէ, քէօմիրներուն խոշորները տուվի գնաց:

Մարթը կը հասկնա քի վարպետ գող մըն է էկեր, ամա ինչ ընէ:

Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանասիրություն,  
Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 169-170:

## 9

Հալեպի մեջ դանիացի միսիոներուի Քարեն Եփփեն բոլորին ծանոթ էր Միս Եփփեն, որ պարբերաբար միտով ճաշ կրածաներ տարագիրներուն:

Օր մը տարեց կին մը որբուկի մը հարցը ներկայացնելու համար գուկա այրիանոց՝ Միս Եփփեն տեսնելու համար:

— Ամման, քաւ, — գըսէ, — մինչ հոս եգա, — անունը չեմ գիղեր՝ ինչպէն խոսիմ հետը:

— Ինչպէն չես գիղեր, միս Եփփեն է, — գըսին գիները:

— Ամման, — գըսէ, — ես ալ կգարծեի՝ ամեն օր միս կէփե, անգէ է:

(ԱՍՇՀ)

## 10

Ոստիկան Շաքարը մի կարգազանցի է բռնում: Որ շատ նեղում է, վերջինս նեղարտած ասում է.

---

158 Ծանոթք բանաձև է Պոլսում. իմաստն այն է, թէ Մարտ ամսում ցրտերն ավելի գորեղ են, և ավելի պետք կա ածուխի կամ փայտի: Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանասիրություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 169:

159 Քի – որ:

— Անունդ ասա, հլա մի տենամ, ո՞վ ես, ումոնցի՞ ես, որ ինձ տհենց<sup>160</sup> նեղում ես:

— Իմ անունը Շաքար է:

— Իս, այտս, էնա ասա մոռո բիբար ես, էլի...

Բալայյան Գ., Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ,  
Եր., «Վան Արյան» հրատ., 2002, էջ 47:

## 11

Մի աչքը կոյր, երեսը չեչոտ ու կարճ հասակով Ագուլեցի եկաւ Շուշի, տեսաւ մի աստիճանաւոր զանազան շքանշաններով կուրծքը զարդարած, նստած էր մի խանութում, մօտ գնաց նրան ու հարցրեց.

— Պարո՞ն, մեր պարոն Պետրոսի խանութը ո՞րն է:

— Ո՞ր պարոն Պետրոսի:

— Մեր պարոն Պետրոսի:

— Նրա հօր անունը ի՞նչ ա:

— Չեմ իմանում:

— Ադա՛, հի՞նչ տըղացի ըս:

— Ագուլեցի ըմ:

— Անունդ հի՞նչ ա:

— Բուլբուլ:

— Բլբու՛լ, բս, ադս, թէ զօկի բլբուլը տիւ ըս, նրանց ագուարը հի՞նչ կլնի:

Անեկոսներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դէպքեր  
և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած,  
Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս,  
տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 148:

## 12

Մի անգամ հարևաններից մեկն իր կնոջ հետ, որի անունն էլ էր Մարո, ինչ-որ հարցով եկել էր Վարդանի գոմը: Երբ ներս էին մտել, այդ պահին Վարդանը գոմը մաքրելիս այսպէս էր դիմել կովին.

---

160 **Shkug** – այդպես:

— Մարո՛, թա՛ն<sup>161</sup>, թա՛ն:

Էս ամուսինը վատ ա զգում, ասմա.

— Վարդա՛ն ջան, կովի՞դ անունը փոխի, է՛լի:

— Ո՞նց փոխեմ, մորս հիշատակն ա. մերս ա անունը դրել: Կարա՛ն դու էլ կով պահի, անունն էլ Անուշ դիր (Վարդանի կնոջ անունը Անուշ է):

(ԱՍՇՀ)

### 13

Գյուղապետի տեղակալ Սարգիսը համագյուղացիներին ընդունում էր քաղաքավարությամբ: Մի անգամ ինչ-որ հարցով աշխատասենյակ է մտնում մի կին: Նա ուշադիր լսում է անծանոթ կնոջը, բայց որպեսզի կարողանար պատասխանել, անհրաժեշտ էին որոշ տեղեկություններ նրանց ընտանեկան դրության մասին:

— Ներեցե՛ք, դուք ու՛մ կինն եք:

— Թաթարի:

Սարգիսը գիտեր Թաթարին, ուստի կատակում է.

— Թաթարները յոթ միլիոն են, դուք ո՞ր մեկի կինն եք:

Քոչարյան Ս., Զվարճապատումներ և իրապատումներ,  
Եր., «Ատողիկ» հրատ., 2008, էջ 62:

### 14

#### Պողոս-Պըտրոս

Մի տղա ինչ կամենում է ձեռնարկել, ինքնուրույն մի գործ անել, հայրը արգելում է ու ասում. — Ա՛յ բալամ, քի անե Պողոս-Պըտրոս չի դուս գյո, ձե՛ռք քաշի, թող վեր ինգի կորչի:

Վերջապես տղան զայրանում է, թողնում տուն ու տեղ, գնում քաղաք: Նրան քաղաքում լավ գործ է հաջողվում, ամուսնանում է: Երկու տղա է ունենում: Մեկի անունը դնում է Պողոս, մյուսինը՝ Պետրոս:

---

161 Թա՛սս – 1. քաշի՛, բարձրացրո՛ն ոտքդ 2. կողմ, մի կողմ քաշվիր: Մշո և Բաղեշի բարբառներում թասսալե կողմ է նշանակում: Արագածոտնի մարզի Հնաբերդի բնակիչները շուրջ 190 տարի առաջ են Մուշից գաղթել:

Մի քանի տարի անց վերադառնում է գյուղ, երեխաներին ներկայացնում հորն ու ասում. — Ա՛հար, ըսիս լալ, որ քի անե Պուղոս, Պըտրոս չի դոս գյո: Պա խն՞ յա դոս եկալ: Էս՝ Պուղոս, էս ալ՝ Պըտրոս:

Հովսեփյան Հ., Ղարաղաղի հայերը.  
հ. 2, քանահյուսություն, Եր., «Գիտություն» հրատ., 2009, էջ 457:

## 15

### Պողոսն ու Պետրոսը

Վարժապետ Տեր Սուքիասը Համբոյի ծուլության համար նախատելիս միշտ ասում էր.

— Քեզանից Պողոս-Պետրոս դուրս չի գա, բութ ես:

Համբոն ամուսնանում է, տունուտեղ ստեղծում, երեխաներ ստեղծում, երեխաներ ունենում: Տարիներ անց իր երկվորյակ երեխաների հետ հանդիպում է Տեր Սուքիասին ու դիմում նրան.

— Պարո՛ն վարժապետ, մի՞տըդ ա, որ ասում էիր՝ քեզանից Պողոս-Պետրոս դուրս չի լինի, ծանոթացի՛ր, սրանք իմ ջխտակ տղերքն են, մնի անունը Պողոս ա, մնինը՝ Պետրոս...

Սաքանյան Ա., Լոովա համաքներ (հումորիստական մանրապատումներ), վերահրատարակված և լրամշակված, Եր., Հեղ. հրատ., 2004, էջ 73:

## 16

Վարդանիկը տղաների հետ փողոցով գնալիս հանդիպում ա Ընկեր Մարգոյին: Բարև ա տալիս, հարցնում՝ ո՞նց եք, ո՞նց չեք, Ընկեր Մարգոն հարցնում ա.

— Վարդանի՛կ, էդ ո՞ւմ էրեխեքն են:

— Իմն են, Ընկեր Մարգո, էլ ո՞ւմը կէղնին: Կհիշե՞ք, օր կըսեիք՝ քեզնեն Պողոս-Պետրոս չի էղնի: Ըհը՛, ըսիգ՝ Պողոսը, ըսիգ էլ՝ Պետրոսը:

(ԱՄՇՀ)

## 17

— Էս մի թոռան անունն էլ իմ ուզածով դրեք — ասում է հայրը տղային:

— Ասա՛, հերա ջան, ի՞նչ ես ուզում դնենք, ասա՛ թող քու սրտովը լինի, — ասում է տղան:

- Ուզում եմ թոռանս անունը Հոռոմ դնեք:
- Ա՛յ հեր, բա «Հոռոմ» անուն կըլինի՞:
- Որ դնեք, կըլինի: Դուք դրեք, որ երբ փողոցով գնալիս ըլեմ ու հարցնեն՝ «էն ո՞վ ա գալի», ասեն. «Հոռոմի պապը»:

(ԱՍՇՀ)

## 18

### Սըվասցին ու Կոռունցին<sup>162</sup>

Սըվասցին մեկը կուզե ծաղրել կոռունցիներու մականունները, կըսե.

— Պարիկ, Պապո, Էմմի, բարի ես եկեր, Կոռին ինչ կա-չիկա, հընտնր են Ոսպենք, Սիսեռենք, Բանջարենք, Պայլայենք...

Կոռունցին կը պատասխանե.

— Ադեկ են, ալյան է տըրած են, մախսուս պարև կէնեն՝ Չուխասուզենց, Չոփապուռունենց, Շանքաքենց, Գումշու ..., Դափութենց:

Թումանյան Մ., Հայրենի երգ ու բան, հ. 2,  
Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 297:

## 19

### Երկու մարդուն՝ Հալաշթորոսեան Վարդավառ անունը

Քիթրե գացողները իրենց ընտրած դաշտը կը բաժնեն մեջերին, ամեն մարդու մեյմեկ բաժին տալով: Աս Վարդավառը կըլլա բաժանողը: Երբ կարգը կուգա իրենց, իրեն և եղբորը, այսպես կըսեն.

— Մեկ՝ Կարապետ, էրկուք է ես՝ իրեք բաժին:

Անունը կը մնա Երկու մարդ:

Հետո, տարիներ վերջ, իր գավակը կոչված է՝ Երկուն մարդուն կես տըղան:

Միհրան Թումանյան, Հայրենի երգ ու բան, Հատոր 2,  
Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983, էջ 299:

162 Սեբաստիա-Սվազ – Քաղաք Փոքր Հայքում:

Կոռին-Կոռուն – քաղաք Փոքր Հայքի Սվազի՝ Սեբաստիայի վիլայեթում:



## 20

Կարող են Սովետական Միության չորս էնալիսի քաղաքների անուններ ասես, որ իմաստ արտահայտի:

— .....

— Չգիտեմ, դե՛ լսիր. Բաքու, Վորկուտա, Երևան, Չիտա:

(ԱՄՇՀ)

## 21

### Չիկագո

Շիկահող գյուղի սարում խփվեց ամերիկյան լրտես ինքնաթիռ, և օդաչուները իջան հովիվների մոտ:

— Ուեր ուի ար<sup>163</sup>..., հարցրին հովիվներին:

— Շի-կա-հող:

— Օ՛, Չի-կա-գո, Չի-կա-գո, իթ իզ ուերի ուելլ<sup>164</sup>...

Գրիգոր Ս., Զվարճալի պատառաքաղ-1, Քաջարան-Կապան,  
Երևան, «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 142-143:

---

163 Ուեր ուի ար (անգլ.) – Որտեղ ենք մենք:

164 Իթ իզ ուերի ուելլ (անգլ.) – դա շատ լավ է:

**ՎԵՐԱՄԲԱՐՁ ՈՃԸ, ԳՐԱԲԱՐ,  
ԳՐԱԿԱՆ ՈՒ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՌԵՐԻ  
ԵՎ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՉ ՏԵՂԻՆ  
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉԱՎԵՇՏԻ ՅԵՆՔ**

**1.** Վերամբարձ ոճը շատ անգամ վերածվում է գավեշտի, եթե այն կան տպավորություն թողնելու նպատակ ունի, կան էլ օգտագործողը չի տիրապետում հայերենի լեզվական-բառապաշարային նրբություններին և անհրաժեշտ միջավայրում այն տեղին կիրառելու վարպետությանը:

19-րդ դարի երկրորդ կեսից հրատարակված անեկդոտների ժողովածուներում վերամբարձ ոճով արտահայտված գվարճապատում-գվարճախոսությունների մի մասը առնչվում է եկեղեցականների և ժողովրդական զանգվածների լեզվական փոխհարաբերություններին, հոգևորականի «գրաբար» խոսքի և աշխարհիկ մարդկանց «ոսանկերենի» ընդգծված տարբերություններին:

**1.1.** Շուրջ 140 տարի առաջ հրատարակված անեկդոտների ժողովածուներից մեկում ընդգրկված գվարճապատումում<sup>165</sup> վարդապետը պատվիրում է իր ծառային, որ բարբառով խոսելու փոխարեն «գրաբար» խոսի: Պատումում մեջբերված ծառայի «գրաբար» խոսքը վերածվում է գավեշտի:

Տե՛ս Հավելված 4 թիվ 1:

Ի դեպ, մի շարք տարածաշրջաններից գրառած այս պատումի բազմաթիվ տարբերակներ կան թե՛ տպագիր, թե՛ անտիպ աղբյուրներում<sup>166</sup>:

Տե՛ս Հավելված 4, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5:

<sup>165</sup> Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 129:

<sup>166</sup> **Ազնավուրեան Ս.**, Հեքիաթներ, զուարճալիքներ, Միջիկըն, Տիպոյրն Հայթս, ԱՄՆ, 1971, էջ 89-90:

Հոգևորականների՝ իրենց ծառաներին ուղղված «ռամկերէնի փոխարէն նուրբ բառեր» գործածելու հորդորով զվարճապատումները նաև սուր քննադատություն են՝ ուղղված ցուցանովութեամբ տատապող վերամբարձ ոճի սիրահարներին:

**1.2.** Ի դեպ, Ախալցխայի տարածաշրջանի *Ծուրդուտ* գյուղում գրանցած «գրաբառ» խոսքի այս նույն նմուշը հանդես է գալիս որպէս հանելուկ.

*Սարերուն ծաղկակոխները*

*Մեր գեղի մոխրաթափալները*

*Փառփառելով ճաշակեցին: (Գայլերը Էշերին կերան)<sup>167</sup>:*

Սակայն զավեշտ առաջացնող այս պատատիկը հավաստում է նաև, որ սա ընդամենը ժողովրդական վերը ներկայացրած երգի-ծապատումից մնացած հանելուկի տեսքով մի հատված է:

**1.3.** 1960-ական թվականներին հայ գրականության դասագրքերում գրողների կենսագրականները նույնակաղապար նախադասություններով էին սկսվում՝ *Այսինչ գրողը երևան եկավ Թիֆլիսում... Հայ բանաստեղծ այսինչը... երևան եկավ... Պոլիսում...*

Նմանատիպ ճոռոմ ու վերամբարձ ոճը ժամանակին պատճառ էր դարձել հետևյալ զվարճախոսության ստեղծման.

— *Էս ի՛նչ բան ա, չեմ հասկանում, ինչքան հայ գրող կա, առաջ Երևան են էկել, նոր՝ Թիֆլիս:*

(ԱՄՇՀ)

**2.** Հայկական անելոդոսներում զավեշտի առաջացման միջոց են դառնում նաև գրաբարյան բառերի և արտահայտությունների ոչ տեղին գործածությունը:

---

**Գեորգեան Գ.**, Չըքուշապատում, հատոր 1, Երուսաղեմ, տպարան Ս. Յակոբեանց, 1970, էջ 310:

**Մկրտչյան Հ. Մ.**, Կարնո բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952, էջ 108:

**ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ**, Կիրապատ, գրի առավ Գ.Թարվերդյանը, Սալմաստ, ՖՖ,1; 1631, թիվ 96 և այլն:

167 Ժողովրդական անգիր բանաստեղծություններ, Ժողովեց Տիգրան Վարդանեանց, Թիֆլիս, Տպարան Տ.Մ. Ռօտինեանցի, 1900, էջ 68:

**2.1.** Ժողովրդի հետ շփվելիս եթե մեկը ուզում է ցույց տալ իր կիրթ լինելն ու խոսում է գրաբարյան կառուցվածքներով «համեմված» աշխարհաբարով, այդ խոսքը արհեստական է հնչում՝ հանգեցնելով զավեշտի.

*Վարժապետը, որ միշտ աշխատում էր գրաբար խոսել, մի մսավաճառի հարցնում է.*

— Արդյո՞ք ձեզ մոտ **երիկամունք** կա<sup>168</sup>:

**2.2.** 19-րդ դարավերջին հրատարակված զվարճախոսություններից մեկում էլ անսպասելի ծիծաղ է առաջանում, երբ գրաբարով ասված խոսքը՝ շաղախված Աստվածաշնչից մեջբերումներով, ոչ տեղին է կիրառվում.

*Տիրացուն, երկու կոռուղ տեսնելով, մօտեցաւ, հարցրեց.*

— *Ջի՛ վիճէ՞ք ընդ միմեանս, եղբարք:*

*Բայց տեսնելով, որ իւր վերա ուշադրութիւն չեն դարձնում, ասաց.*

— *Եղբայր, սիրեցես զընկեր քո՛ իբրև զանձն քո:*

*Կռին ատլի սաստկանում էր: Տիրացուն մէջ ընկաւ և մէկին մի կողմը ձգելով, միսի՛ն՝ միս կողմը, ասաց.*

— *Երանի՛ խաղաղարարաց՝ զի նոցա է արքայութիւն երկնից:*

*Կոռուղները արդէն միմեանց երեսները արնտտեցին:*

*Իսկ տիրացուն, է՛լ չկարողանալով համբերել, մէկ մէկի գլխին խփեց, մէկ՝ միսի գլխին և ասաց.*

— *Որ ո՛չ լսէ ունկամբ, տան նմա լսել թիկամբ: Դէ հմի իրար միս կերէ՞ք*<sup>169</sup>:

**3.** Հայկական անեկդոտներում առանձին խումբ են կազմում այնպիսի ստեղծագործությունները, որոնցում ժողովրդական ասույթաբանական կառույցը խոսքի մեջ անընդհատ սխալ կամ անհարկի մեջբերելով է անսպասելի ծիծաղ առաջանում:

168 Նույն տեղում, էջ 11:

169 Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի և ընկ. տպարան, 1883, էջ 116-117:

**3.1.** Նման դեպքերում զավեշտի հենք է դառնում գրական կամ ժողովրդական արտահայտության ոչ տեղին կիրառությունը, ինչպես ստորև մեջբերվող նմուշում.

Մէկը չգիտեր **հեռի լսողաց** բառերի նշանակությունը: Հարցրին նրան.

- Հորդ անունն ի՞նչ է:
- Հեռի լսողաց, Ավագ, — պատասխանեց նա:
- Ու՞րտեղից ես գալիս:
- Հեռի լսողաց, ժամեն<sup>170</sup>:

**3.2.** Կամ էլ նոր միջավայրում իր իմացությամբ տպավորություն թողնելու համար անիմաստ ու ոչ տեղին բառագործածությունն է նպաստում զավեշտի առաջացմանը.

Նոր նշանված փեսան աներանց ա գնում ու որոշում շատ կիրթ ու գրագետ երևալ: Աներն ասում ա.

- Փեսա, ներս արի:
- Փեսան էլ թե՛
- Տանեմ **նամանավանդ** ձիս կապեմ գամ:

(ԱՄՇՀ)

**4.** Տպավորություն թողնելու համար ոմանք անհարկի բառեր են օգտագործում, որոնց իմաստը իրենք էլ չգիտեն և ականա ընկնում են զավեշտալի իրավիճակների մեջ:

**4.1.** Ճաշկերույթի ժամանակ կիրթ երևալու համար հյուրերից մեկը, ժողովրդախոսակցական լեզվում գործածվող *չխկացնենք՝* բաժակ-բաժակի խփենք, բառի փոխարեն օգտագործում է դրա գրական «համարժեքը»՝ անսպասելի ծիծաղ հարուցելով շրջապատում.

— Էկեք էս մի բաժակով էլ **կենակցենք** իրար հետ... (ուզում էր ասել՝ **կենացակցենք՝** կենացի բաժակները իրար խփենք):

(ԱՄՇՀ)

---

170 Անեկդոտներ, հատոր 2, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տփլիս, 1877, տպարան Մ. Վարդանեանի, էջ 13-14:

**4.2.** Գրական հայերենի **հոռետես** բառին անձանոթ լինելը, կամ էլ իմաստը սխալ իմանալը՝ հարանունությամբ շփոթելով **հե-նաստեսի** հետ, անեկդոտներում խոսքը վերածում է զավեշտի.

*Մեկի աղջկան գալիս են ուզելու: Հայրը բաժակաճառ է ասում.*

— Իմ աղջիկը **հոռետես** աղջիկ **ա**, **անող-դնող**, **եփող-թափող**, **իսկ չբերության մասին հեչ չմտածեք. հենց հիմի էլ հղի ա**<sup>171</sup>:

**4.3.** Զավեշտն էլ ավելի է սրվում, երբ բառ-բառակապակցությունների իմաստը լիարժեք չիմանալով, դրանք կիրառվում են թաղման արարողության ժամանակ: Պահի անհրաժեշտությունից բխող սրտաշարժ **«անողոր»** մակդիրի փոխարեն **«անաչառ»**-ի օգտագործումը, բնականաբար, կատարվածի ճիշտ լինելն է ընդգծում՝ դրանով իսկ նախապայման ստեղծելով մի նոր անեկդոտի առաջացման.

Գիտությունների ակադեմիայի ինստիտուտներից մեկի տնօրենը, անկեղծորեն ձգտելով ներկայացնել կոլեկտիվի մեծ կորուստը, իր դամբանական խոսքը այսպես է սկսում.

— *Անաչառ մահը մեր շարքերից խլեց մեր աշխատակցուհուն...և որոշ մարդկանց դեմքի տխրությունը ակամա փոխվում է ժպիտի...*

(ԱՄՇՀ)

**4.4.** Տարիներ շարունակ ուրախության և տխրության հավաքությունների ժամանակ Երևանում ականատես են եղել մի զավեշտալի իրողության: Միջնակարգը չավարտած սեղանապետը, որպեսզի մայրաքաղաք եկած համագյուղացիներին զարմացներ իր իմացությամբ, ամեն կենաց խմելիս գրական հայերենի *քյավառյան* հնչերանգով սեփական մտքի «փիլիսոփայական փայլատակումները» հրամցնում էր իբրև համաշխարհային պրոլետարիատի առաջնորդների իմաստախոսական գոհարներ՝ ամենքին անդրադառնալիս իբրև անդառնալի կորուստ՝ շեշտելով **հանգուցյալ** բառը.

171 Ժողովրդական սրախոսություններ, հավաքեց և մշակեց Վարդուհի Նաղաշանը, Եր., «Նաիրի» հրատ., 1992, էջ 72:

— *Հանգուցյալ Կարլ Մարքսն ասել է... Հաջորդ կենացին՝ Հանգուցյալ Ֆրիդրիխ Էնգելսն ասել է... Մյուս կենացին՝ Հանգուցյալ Վլադիմիր Իլյիչ Լենինն ասել է... ու ասում էր՝ ինչ այդ պահին սիրտն ուզեր...: Հենց դրա պատճառով էլ մի քանիսը նրան կնքել էին «հանգուցյալ» մականունով:*

Սումգայիթյան ջարդերից հետո, երբ հեղինակագրկվել էր կոմկուսը, և շատերն էին վառում իրենց կուսակցական տոմսերը, հարևան-բարեկամներին հետաքրքրում էր՝ հիմա՞ ինչ բաժակաճանաչին խոսքերով էր «հանգուցյալը» զարմացնելու սեղանակիցներին: Բայց... հերթական հավաքույթի սեղանապետը գտել էր ելքը. մարքսիզմի ներկայացուցիչներն իրենց տեղը զիջել էին 18-րդ դարի ֆրանսիացի լուսավորիչներին ու վաղ միջնադարի հայ փիլիսոփաներին.

— *Հանգուցյալ Դենի Դիդրոն ասել է... Հանգուցյալ Ժան Ժակ Ռուսոն ասել է... Հանգուցյալ Դավիթ Անհաղթն ասել է... ու կրկին մի անհեթեթ և անկապ բան էր ասում՝ իր «իմացությամբ» շարունակելով զարմացնել համագյուղացիներին...*

(ԱՄՇՀ)

**5.** Երբեմն վերամբարձ ոճով, անկապ ու անհեթեթ բառ-բանակապակցություններով շաղախված են լինում ուրախության կամ տխրության սեղանները վարողների բաժակաճառերը: Նման փքուն խոսքերով բաժակաճառերի հեղինակները, մանավանդ գյուղաբնակները, փոխանակ ժողովրդախոսակցական լեզվով կամ բարբառով անկեղծ ու անկաշկանդ ներկայացնեն իրենց ասելիքը, ձգտում են մարդկանց վրա տպավորություն թողնելու համար ընդգծել իրենց «գրագիտությունն ու խորիմացությունը», գրական հայերենին անկաշկանդ տիրապետելը և, բնականաբար, ընկնում են զավեշտալի իրավիճակների մեջ:

**5.1.** Իբրև վերը ասվածի ապացույց՝ ահա հարսանիքի թամաղայի արտաբերած մի բաժակաճառ՝ ասված Լոռու Արևաշող գյուղում.

*Աչակողմյան և ձախակողմյան բարեգամներ ջան, այսուհետև և ընդհանրապես ես խմում եմ ձեր նկատմամբ: Մեր*

նորապսակներին էլ ցանկանում եմ, որ մի ձերի<sup>172</sup> բըցրանան (իմա՝ մի բարձի ձերանան) :

(ԱՄՇՀ)

**5.2.** Ահա ես մի հարսանեկան բաժակաճառ՝ գրառված Լոռու Շամուտ գյուղում.

Սուրբկի տղի հրսանիքն ա ըլըմ, Խալաթը բաժակաճառ ա ասըմ՝ խոսքը փեսին ուղղելով.

— Մհեր ջան, թե որ դուն Սուրբկի տղեն ըլես, ամեն ինչ լավ կըլի: Բայց թե որ թողլովի<sup>173</sup> ըլես, ոնց որ կաղնըքու տակին բաղի խնձոր գըղնես...

(ԱՄՇՀ)

**5.3.** Անկապ բառ-արտահայտություններով բաժակաճառերի մի մասն էլ կապվում է կենաց աստղի խմածության հետ: Ահա խմած լոռեցու բաժակաճառը.

— Աշխարքին թող խաղաղություն ըլի, ջըհանդամը թե պատերազմ չի ըլի...

(ԱՄՇՀ)

**6.** Երգիծապատում-գվարճախոսություններում գավեշտի հենք են դառնում գրական կամ ժողովրդական արտահայտությունների ոչ տեղին կիրառությունը:

**6.1.** «Վիշտը կիսել» դարձվածքը նշանակում է վշտատիրոջը սրտակից, աջակից լինել, հանդիպելով ու ներկա գտնվելով նրա տխրությանը՝ թեթևացնել այն: Հիշենք ժողովրդական իմաստախոսությունը՝ Ով հարցնե, էն սաղսնե:

(ԱՄՇՀ):

Ուրախ առիթի դեպքում «վիշտը կիսել»-ի նմանությամբ արտաբերելով «ուրախությունը կիսել» արտահայտությունը՝ մարդն ինքնակամ իրեն զցում է ծիծաղելի իրավիճակի մեջ:

---

172 Լոռիում «մի ձերի» նշանակում է նաև *անընդհատ*: (Ինձ հերթ չէր տալի, մի ձերի խոսըմ էր:)

173 **Թողլովի** – ուրիշից:



Մի անգամ Գառնիում Պ. Սևակը ընկերներով քեֆ անելիս է լինում, նրանց է մոտենում մի մարդ և բաժակ բարձրացնելով՝ ասում.

*Ձեզ տեսա, եկա, որ կիսեմ ձեր ուրախությունը...*

— Գլուխդ քարո՞վս ես տվել... ուրախությունը չեն կիսում, այլ բազմապատկում են, կիսում են վիշտը<sup>174</sup>, — վրա է բերում Պարոյր Սևակն, ու բարձրանում է հոմերական քրքիջ:

**6.2.** Իսկ «Իմանայի, մեծ ուրախությամբ կմասնակցեի (կգալի, կօգնեի)» արտահայտության բայական լրացումը խոսակցի խանդավառ պատրաստակամությունն է ցույց տալիս՝ առանց նրա իրազեկության արդեն անցած-կատարված որևէ գործի, գործողության կապակցությամբ: Սակայն դրա ոչ տեղին կիրառությունը ոչ միայն անհեթեթ, այլև չափազանց վիրավորական կարող է հնչել ու դառնալ զավեշտի աղբյուր.

*Հարևանս հանդիպել էր վաղեմի ընկերոջը:*

— Ինչպե՞ն է հայրդ, — հարցրել էր:

— Երկու շաբաթ առաջ մահացավ, — պատասխանել էր ընկերը:

— Ափսոս, չեմ իմացել, իմանայի՝ մեծ ուրախությամբ կմասնակցեի թաղմանը, — ափսոսացել էր հարևանս<sup>175</sup>:

**6.3.** Անսպասելի ծիծաղ է առաջանում, եթե ժողովրդախոսակցական լեզվում առկա «թող սաղ (իմա՝ ողջ) մնա, սաղ լինեն» ցանկության խոսքին հաջորդող՝ *ծնողներդ, երեխաներս, ընկերներս* և նմանատիպ այլ բառերի փոխարեն ինչ-որ մեկի հենարանը հանգուցյալներն են դառնում: Ղարաբաղյան զբառումներից մեկում այն այսպես է դրսևորվել.

— Գևորգ ամի, գերեզման փորելը ի՞նչ փեշակ է, որ ձեռ չես քաշում:

---

174 **Սահակյան Ռ.**, Անկրկնելի Պարոյրը, Հուշեր, պոեմներ և այլ նյութեր, «Էդիթ Պրինտ» հրատ., Եր., 2014, էջ 29:

175 **Սոսյան Ս.**, Իսկ թիկունքում հող հայրենին է. Հիշատակի եղևնին, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2011, էջ 97:

— Դե ի՛նչ գիտամ, փեշակ է, էլի՛, մի կտոր հաց միշտ էլ կտա, **սանդ լինեն մեռնողները:**

(ԱՄՇՀ)

**6.4.** Զվարճապատումներից մեկում էլ զավեշտի պատճառ է դառնում խոսակցին ներկայացվող երևույթը կամ իրադրությունը հաստատող ժողովրդական արտահայտությունը (ասենք՝ *թե դու էկար ընդի մի բերան հաչացիր՝ ես էլ նըհե*), որով ակամայից կենդանու գործողությունը վերագրվում է մարդուն: Դա կատարվում է ժողովրդական ասույթաբանության անդամներից մեկի (ասել, խսել, իսկ զայրացած ժամանակ՝ հաչալ, ինչպես՝ *շուն մի հաչացնի, կամ՝ թող ինչքան ուզըմ ա՝ հաչա*) փոխարինումը մեկ այլ անդամով՝ խոսակցի և իրավիճակների փոփոխությամբ.

*Պրանանց Միմոնը հիվանդանոց է ընկնում: Բժիշկը փորձում է կատակել հովիվ գյուղացու հետ և առաջարկում է մի դեպք պատմել սարերից: Որ շատ խնդրում են, Միմոնը թե.*

— *Մի ձմեռ գելն ընգավ ոչխարի մեջը: Էրկու զալում շուն ունեի, համա բժիշկ ջան, թե դու էկար ընդի մի բերան հաչացիր, նրանք էլ՝ նհե...*<sup>176</sup>

**6.5.** Ժողովրդական «իր ումբը»<sup>177</sup> քեզ բաշխեց» արտահայտությունը վերաբերում է միայն մարդկանց և ասվում է ինչ-որ մեկի մեռնելու լուրը հաղորդելիս: Անեկդոտներից մեկում այդ բառակապակցությամբ է զավեշտն ստեղծվում, քանզի այն ասվում է կենդանու սատկելու առիթով.

— *Հայր Սուրբ, մեր շունը իր ումբը քեզ բաշխեց, — ասաց քահանան*<sup>178</sup>:

Տես Հավելված 4, թիվ 6:

176 **Բաբայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007, էջ 59:

177 **Ումբը** – կյանք:

178 Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած, Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 64-65:

# ՀԱՎԵԼՎԱԾ 4

## 1

Վարդապետը հրամայեց յուր սպասավորին, որ «գրաբառ» խոսե, վարժվի: Սպասավորը մի օր ներս մտավ խուցն ասաց.

— Հայր Սուրբ, սարի ծաղկակոխը էս գիշեր եկել է մեր մոխրաթավալին բարբառելով մաքրագարդել: Վարդապետը չհասկանալով ասաց.

— Մեկնե՛, տեսնեմ՝ ինչ ես ուզում ասել:

Սպասավորը մեկնեց, թե գելը էս գիշեր մեր իշին պատռտել, կերել է:

Անեկոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դէպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Սարտիքոսեանց, 1878, էջ 129:

## 2

### Մոխրաթաւալը

Վանահայր մը կար որ կը սիրէր մտաւորականներու հետ նստիլ, երևելիներու հետ գրուցել և կը փափաքէր որ ծառաները իր օրինակին հետևելով, հիւրերուն առաջ քաղաքավարի ըլլային, ինքզինքնին բարձր ծախելով, ռամկերէնի փոխարէն նուրբ բառեր գործածէին.....

...Յաջորդ օրը, երբ վանահայրը նորէն նստած հիւրերուն հետ քէֆ կ'ընէր, ծառան մտաւ ներս՝ ու ըստ պատուէրի գրաբարախառն.

— Վանահայր, լերան ծաղկակոխը վանքին մոխրաթաւալը բարբառելով ճաշակեր է երէկ գիշեր, — ըսաւ:

— Չեմ հասկնար ինչ կ'ընես, նեղուեցաւ վանահայրը գլուխը տաքցուցած:

— Չհասկնալիք ինչ կայ վանահայր: Երէկ գիշեր վանքին էլը դուրս մնացեր, գայլը կերեր է:

Հայ, սանկ շոկէ շիտակ խօսէ որ հասկնամ, վագ անցիր (մոռցիր, ձեռք քաշէ)

— սա բարբառելէն:

Ազնավորեան Ա., Հեքիաթներ, զուարճալիքներ, Միջիկըն, Տիպոյրն Հայթս, ԱՄՆ, 1971, 190 էջ:

### 3

#### Չնքուշցիական գրաբար

Չնքուշի վանքին բազմերախտ վանահայր-առաջնորդ տիգրանակերտցի Պաղտասար Վարդապետ (1836–1873) անախորժութիւն գգալով իր փոքրատրին կոշտ ու կոպիտ խօսակցութենէն, մանաւանդ հիւրերու ներկայութեան, կը սաստէ զայն ու կը յորդորէ կարելի եղածին չափ մաքուր հայերէնով խօսիլ իրեն հետ, մասնատրապէս երբ ուրիշներ ալ ներկայ են:

Օր մը փոքրատրը կը նշմարէ, որ գայլը փորոտած է վանքին շունը, և երբ կը մտնէ վանահայրին սենեակը այդ սև լուրը անոր հաղորդելու, կը նկատէ, թէ ան հիւրեր ալ ունի, կը մտածէ, որ «գէլը վանքին շունը բզկտեր է» ըսելը կոշտ պիտի հնչէ իր մեծատրին ականջին, կ'ըսէ.

— Հայր Սուրբ, լերան ծաղկակոխը վանքին մոխրաթաւալը բարբառելով ճաշակեր է:

Գէորգեան Գ., Չնքուշապատում, հատոր 1,  
Երուսաղէմ, տպարան Ս. Յակոբեանց, 1970, էջ 310:

### 4

#### Վարթաբէդն ու ծառան

Վարթաբէդին մէզը Յօվէս անունով ծառան կունէն: Աս Յօվէսը գ'էղացի մարթ գըլլի, գ'էղագան լիզվէն սավայ յորիշ լիզու չի յիմնա, ադոր համար վարթաբէդը սադա նէղէնա ու հէրսօղի կը, թըր գ'էղագան լիզվօլ մի խօսի: Կանցնի խէյլիմ վախտ:

Մէ օրմ ա Յօվէսը իշով կէրթա մէշան փաղ փէրէլու, շաղ օր բանի կը, դ'աթի կը, իշուն բաց կը թօղնի օր արձէ, ինքն ա նըստի կը, օր քիչըմ հանգշի: Ադ վախտը սարէն էրզու գալ գուքան ու լուսափօքի իշուն կուտէն: Յօվէսը լալէն վազէ կը վարթաբէդին ու՝

— Հայր սուրփ, — կըսէ, — սարէրու ծաղգակօխները մեր մօխրաթավալին բարբառելով ճաշակէցին:

Վարթաբէդը աս թունդ գըրաբարէն բան չի հասկընա ու կըսէ.

— Վօրթի, մեր լիզվօլ ըսէ, բան հասկընամ:

Արթըղ Յօվէսը կըսէ.

— Գալէրն էգան իշուն պաղըռդէլէն կէրան:

Մկրտչյան Հ.Մ., Կարնո բարբառը,  
Եր., ՀՄՄՌ ԳԱ հրատ., 1952, էջ 108:

## 5

### Կիրապառ

Վանքի վանախեր ուր նոքմբին թմմբեհելի թե, — հմբերդա ախշատի կիրապառ գուոցալ. բմ լի հավայի մբնասա...

Մեկ որ առատունը շոտ նոքարը մբնելի վանախեր խուցը ասելի.

— Հմբսուրփ, սարի ծախկըկոխը եկիրի ես քըշեր մեր մոխրաթավալին պարպատելով մաքրագմբթիրի...

Վանախերը պան չի խասկբնալի.

— Ա՛յ տղա պարգ գուոցա պմն խասկբնանք ն, ինչ ես ասելի ախրը...

— Հայրսուրփ, — ասելի նոքմբը, — ախր տոն ես թմմբեհե, վոր կիրապառ գուոցամ, յես ինչ մնեմ...

— Դը աղել մեր լեզվմվ ասա:

— Ես քշեր կելը եկե մեր եշին կերե... Ասելի գյմնմն:

ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Կիրապառ,  
գրի առավ Գ. Թարվերդյանը, Սալմաստ, ՖՖ, I; 1631, թիվ 96:

## 6

Հաթերքցի քահանն լսեց, որ յաջորդը գալիս է իրանց գեղը նուիրակութին ժողովելու, գնաց նրան ընդ առաջ: Ճանապարհին պատահեցա մի խոնարհուած եկեղեցույ, յաջորդը հարցրեց.

— Տէրտէր, ինչ է էս եկեղեցույ անունը:

— Քէ ծառայ, Սուրբ Գէորգ, — պատասխանեց քահանն:

Երբ հասան գեղը, քահանայի տունը չ,մտած, վարդապետն ասաց,

— Տէրտէր, դու յառաջ գնա, մտիր բակդ, որ ձեր կատաղի շունը էլի չ՛յարճակուի վրէս անցեալ տարուայ պէս:

— Հայր Սուրբ, մեր շունը իր ումբրը քեզ բաշխեց, — ասաց քահանան:

Անեկոսներ, գուարճալի գրոյցներ, համառոտ դէպքեր  
և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած:  
Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց,  
Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 64-65:

## ԲԱՌ-ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԱՐՍՈՒԾԻՏԱԿ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆԸ՝ ՉԱՎԵԾՏԻ ՅԵՆՔ

**1.** Երգիծապատում-գվարճախոսություններում զավեշտ է ստեղծվում նաև բառերի և բառակապակցությունների դասավորության ակամա, երբեմն էլ դիտավորյալ խախտելու միջոցով: Նման արտաբերումներով ծիծաղ հարուցող անեկդոտները հիմնականում լոկալ՝ ն»դ միջավայրում են առաջանում ու շրջանառվում:

**1.1.** 19-րդ դարավերջին հրատարակված անեկդոտների ժողովածուի նմուշներից մեկի<sup>179</sup> զավեշտի հենքը դառնում է կորած մոգու կորստյան դարդից շփոթված լոռեցու հետևյալ անկապ խոսքը.

— *Բարի մոզի, բալքա դաշխա<sup>180</sup> ըրիգու տեսած ըլիք, չալ չաթուն<sup>181</sup> պոզին մոզին:*

Տե՛ս Հավելված 5, թիվ 1:

**1.2.** Լոռու Շամուտ գյուղում մեր գրանցած գվարճախոսությունների մեջ առանձնանում են թարս արտաբերումներով մի քանի նմուշ: Եթե համագյուղացիներից որևէ մեկը մի թարս բան էր ասում, անմիջապես հետևում էր հարցը. «Դու խու Աթուկանց Անթրոն չես»: Իսկ Անթրոյի խոսքը հաճախ էր թարս ստացվում: Տարեցները մինչև հիմա էլ շրջանառում են հետևյալ գվարճախոսությունը.

*Աթուկանց Անթրոյին հարցնում են.*

— *Ա՛նթրո քեռի, Շամիրը տանն աս:*

<sup>179</sup> Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ և օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս.Շահազիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեսանի, 1892, էջ 28:

<sup>180</sup> **Ղաշխա** – ճակատին սպիտակ նշան ունեցող:

<sup>181</sup> **Չաթուն** – մազախառն բրդե կարճ թոկ:

— Չէ, — ասմա, — էշը Շամիրին վեր էլած<sup>182</sup> դրբա Լորու ձորը գնաց: (փոխանակ ասելու՝ Շամիրը էշին վեր էլած — ԱՍ):  
(ԱՄՇՀ)

**1.3.** Համեմատության հենքի վրա առաջացած մեկ այլ իրապատում-զվարճախոսություն այսպես է ներկայանում.

Աթուկանց Սարիբեգը մի օր գեղացոնց պատմում ա, ասմա՝  
— Գնացել ի Կիրովական, ուզեի Արմոյիս տուն գնամ, մտա մի շենք, զանգը տվի, — ապա կողքին կանգնած Ճուղորանց Գագոյին նայելով՝ շարունակում է, — մին էլ քու պես մի քոք<sup>183</sup> կնիկ դուռը բաց արավ:

Ասի՝

— Սարիբեգ բիճա, ես կնիկ էէէմ:

Բա թե՛

— Ասում չեմ է՛ դու կնիկ ես, ասմեմ քու պես մի քոք կնիկ դուռը բաց արավ...

(ԱՄՇՀ)

**1.4.** Շամուտյան մեկ այլ զվարճախոսությունում թարս խոսքին հետևում է ունկնդրի՝ նմանատիպ միտումնավոր պատասխանը.

Երանուհին գարունքակուռը մի օր Գագոյին ասում ա.

— Դե ես տանեմ շիթիլը կըթեմ, որ յեդո կովերը տընգեմ...

Գառնուկն էլ թե՛

— Գնանք տենանք կովերը պոզերի վրա ցից էլած...

(ԱՄՇՀ)

**1.5.** Արցախի գյուլիստանյան երգիծապատումում էլ դաշտում այծի ծնելու լուրը տեղ հասցնողը անհանգստացած արագ-արագ ասելիս ակամա կենդանու գործողությունը վերագրում է մարդուն՝ հաղորդելով. «Ռուրիկը Կսային ծկերումը ծնել ա»:

Տե՛ս Հավելված 5, թիվ 2:

**1.6.** Իսկ պարսկահայոց սալմաստյան «Վարթանենց Սիակը» զվարճախոսությունում ակամա օգտագործվում է անհամբեր,

182 Վեր էլած – հեծնած:

183 Քոք – գեր, չաղ:

շտապող մարդու համար ասվող «**Դու քու մոր փորումը ճնց ես ինն ամիս համբերել**» ժողովրդական արտահայտության թարսու- շիտակ վերարտադրությունը.

Մի գյնդն շատ շուլուղ նրնց, բզավանցի Վնրթննենց Սհակը ասաց.

— Ա՛յ գյնդն, քո դնյան<sup>184</sup> քո փորի մեջը ինչթնրի<sup>185</sup> սթրվի... Տեսավ վոր ուր ասածի վրան խայլը ծղզացին, տառցավ թե.

— Յես ել յանիշ ինգամ. կը տը ասեմեր քո մերըտ քո փորի մեջն ի՛շթնրի սըթըրվե, ասիմ՝ քո դնյան...<sup>186</sup>

**1.7.** Թարս արտաբերմանը միտումնավոր հակադարձող բա- նախադային պատասխանով զվարճախոսություն է հրատարակել նաև բանաստեղծ Ա. Սահակյանը.

Մի պատանի մտաւ «Կիլիկիա» գրատուն և Մաթիկին հարց- րեց.

— Խենթ Բաֆիին գիրքը կու տամք:

— Խենթ Բաֆիին գիրքը չեմ կըրնար, բայց ընկեր Փանջու- նիի Օտեանը կու տամ..., — դիտմամբ հեզնեց Մաթիկը<sup>187</sup>:

**1.8.** Բառերի տեղերի ակամա տեղափոխմամբ ծիծաղ առա- ջացնող կառույցներից մեկն էլ արձանագրվել է Վանաձորի Մա- րիամ Աստվածածին եկեղեցում, երբ մեկը այսպես է դիմում հոգևո- րականին՝ *ծայրագույն վարդապետի* փոխարեն ասելով.

— **Վարդագույն ծայրապետ**, էս տարի Զատիկը կըր ա ըլե- լու:

(ԱՍՇՀ)

---

184 **Դնյա** – մայր:

185 **Ինչթնր** – ճնց:

186 ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Գ.Թարվերդյանի ֆոնդ, Սալմաստ, ԲԲ,1, 1693, թիվ 164:

187 **Սահակյան Ա.**, 500 կատակ, Հալեպ, «Կիլիկիա» գրատուն- տպարան, 2000, էջ 8:



**1.9.** Զվարճախոսություններից մեկում էլ Բայազետի բարբառով արտաբերված խոսքում անկապ բառերի կիրառությունն է գավեշտի հանգեցնում.

*Մեկը Երևանից գնում է Գավառ՝ մայկայի վրա արծվի դաշվածքով, ու սկսում է մեծ-մեծ խոսել: Ջահելներից մեկը ասում է.*

*— Իդա կարկառ զաներ է դոշին, **իրեն իբրև կկարծա**, մեզ էլ **կմանավանդա** (իմա՝ բանի տեղ չի դնում):*

(ԱՄՇՀ)

**2.** Հայկական անեկդոտներում թարսուշիտակ արտաբերումներով գավեշտ ստեղծելու դրսևորումները հաճախակի են հանդիպում ժողովրդական ասույթաբանական բանահյուսության տեսակների (բաժակաճառ, անեծք, օրհնանք և այլն) կիրառություններում:

**2.1.** Այսպես, նմուշներից մեկն առնչվում է հարսանեկան ծիսակարգի բաժակաճառային դրսևորմանը, երբ ասելիքի ակամա սխալ արտաբերումն է գավեշտի պատճառ դառնում.

*Հարսանքատանը մի պարզամիտ մարդու մի բաժակ գինի տվեցին: Բաժակը ձեռքը առնելով և մինչև գետին խոնարհվելով՝ նա ասաց.*

*— Աղաներ, սաղ մնաք, ես ձեր գլուխն եմ, դուք՝ իմ ոտներս<sup>188</sup>:*

**3.** Թարս արտաբերումներով գավեշտը դրսևորվում է նաև *օրհնանք-անեծքային* անեկդոտներում, որոնցում արտաբերված օրհնանքը ակամա վեր է ածվում անեծքի: Նման կառույցները մեծ քանակ են կազմում: Դրանք տարբեր տարածաշրջաններից սկսվել են գրառվել դեռևս անցյալ դարի երկրորդ կեսից:

**3.1.** Հովհ. Թումանյանն իր գրառած «Լոռըցու օրհնանքը» զվարճախոսությունը՝ մի քանի երգիծապատումների հետ, շուրջ 130 տարի առաջ տպագրել է «Նոր-դար» հանդեսում: Այդ նմու-

---

188 Անեկդոտներ, հատոր 2, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տփլիս, տպարան Մ. Վարդանեանի, 1877, էջ 41:

շում խոսակցի կողմից արտաբերված «ձեր տաք հացը Աստոծ կտրի» շնորհակալական խոսք–օրհնանքն ընկալվում է նաև իբրև անենծք<sup>189</sup>:

Տե՛ս Հավելված 5, թիվ 3:

**3.2.** Օրհնանքա-անենծքային կառուցվածքով երգիծական մանրապատումների հանդիպում ենք այլ տարածաշրջանների հայոց շրջանում կատարված գրառումներում, ինչպես, օրինակ, վանեցիներից 20-րդ դարասկզբին գրառած «Ինչըիս տյու իմ շորեր չորցուցիր» պատումը<sup>190</sup>, երբ արած լավության դիմաց լավությունն անողը «օրհնվում» է «*Ինչըիս տյու իմ շորեր չորցուցիր, աստվածն էլ քե չորցուցի*» «օրհնանքով», երբ արտաբերած օրհնանքն ընկալվում է իբրև անենծք:

Տե՛ս Հավելված 5, թիվ 4:

**3.3.** Նմանատիպ նյութեր գրառել ենք նաև վերջին 20-25 տարիներին, որոնցից մեկում «օրհնվում է» ավտորուսը կանգնեցնող վարորդը՝ մեծահասակ կնոջ կողմից ստանալով «*Ապրենս, բալա՛ ջան, դուն ինձ վե կալար, թող Աստված էլ քեզ վեր ունի*» պարզ-օրհնանքը

(ԱՄՇՀ), Տե՛ս Հավելված 5, թիվ 5,

կամ էլ մեկ այլ նմուշում՝ «*Վսյ՛, Վարդգենս ջան, դուն որ մեր ըրեխին կրակիցը փրգեցիր, թող կրակ՛ վե գա քու վրա: Վո՛յ, քոռանամ ես, էս ինչ ասի: Թող լիս վե գա վրիդ*»...

(ԱՄՇՀ) Տե՛ս Հավելված 5, թիվ 6:

Մեկ այլ դրվագում տան վառված լամպը փոխողն է արժանանում «*Ապրես, բալա ջան, դուն իմ տունը լուսավորեցիր, Աստված էլ թող քու ֆոքին լուսավորի*» «օրհնանքին»...

(ԱՄՇՀ), Տե՛ս Հավելված 5, թիվ 7:

---

189 «Նոր-դար», Թիֆլիս, 24.07.1887թ.: Նույնը՝ Թումանյան Հովհ., ԵԼԺ, հատոր 5, Եր., «Գիտություն» հրատ., 1999, էջ 580:

190 Ծիծաղում են վանեցիները, Հավաքել, կազմել են Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը, Եր., «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 174:

**3.4.** Զավեշտ ստեղծելու օրինանք-անեծքային կառուցվածքով գվարճախոսության մի տեսակ էլ կա, որտեղ երկխոսության պատասխանը պատճառաբանվում է կենսափորձով՝ նկատի ունենալով տառապանքը, մի դեպքում՝ ծննդաբերերելիս<sup>191</sup>,

Տե՛ս Հավելված 5, թիվ 8,

մեկ այլ դեպքում՝ խոր ծերությունն անցկացնելիս:

(ԱՄՇՀ) Տե՛ս Հավելված 5, թիվ 9:

**3.5.** Անսպասելի ծիծաղ է առաջանում նաև գայրույթից բառերի այնպիսի թարսուշիտակ վերարտադրության ժամանակ, երբ դիմացինին հայհոյելու փոխարեն հայհոյողն ինքն է մեքենայաբար իրեն գցում անհարմար վիճակի մեջ:

(ԱՄՇՀ), Տե՛ս Հավելված 5, թիվ 10:

**3.6.** Վախի ու սարսափից առաջացած բառերի թարսուշիտակ արտաբերումներով անեկդոտներից է հետևյալ նմուշը.

*Զկոենու տակը նստած՝ գիղացին հիանում էր պտուղների մեծութեան վերա: Հանկարծ ամպի սաստիկ որոտումը խլեց գիղացու ուշը, որ և ձայն տուեց... Փնոք քեզ զկեռ, էս ինչ մենձ Աստոծներ ա...<sup>192</sup>:*

**3.7.** Մեր գրառումներում առկա են նաև թարսուշիտակ արտաբերումներով զավեշտ առաջացնող բազմաթիվ *հայհոյախառն* գվարճախոսություններ և գվարճապատումներ, որոնց մասին այստեղ հարկ չենք համարում խոսել:

**4.** Երբեմն էլ գվարճախոսության մեջ ժողովրդական դարձվածքի որոշ բառեր խոսքի մեջ ակամա կամ դիտավորյալ շուտ տալով կարող է անսպասելի ծիծաղ առաջացնել:

Անհաշտություն արտահայտող *Իմ ու քու էձը իրար հետ չեն արածում* դարձվածքը այսպես է ներկայացել դստեղյան գվարճախոսությունում.

---

191 Անեկդոտներ, 3-րդ հատոր, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի և ընկ. տպարան, 1883, էջ 69:

192 Անեկդոտներ, հատոր 1, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 202:

— Հւ՛, հւ՛, ասա՛, ասա՛, ես լավ գիտեմ, որ դուն ու իմ էձը էն գլխիցը իրար հետ չեք արածըմ։<sup>193</sup>

Տես Հավելված 5, թիվ 11:

**5.** Զավեշտ է առաջանում նաև երեխայի կողմից բառերի և բանկապակցությունների սխալ արտաբերման՝ բառային կառույցների դասավորությունը խախտելու միջոցով.

*Մայրը, գիրքը տալով 4 տարեկան Նանարին, ասում է.*

— *Էս տար դիր տեղը, արի:*

*Քիչ անց Նանարը վերադառնալուց հետո տեղեկացնում է մորը.*

— *Ման, գիրքը տարա դիր տեղեցի, էկա:*

(ԱՍՇ)

**6.** Երգիծապատումներում անսպասելի ծիծաղ է առաջացնում նաև արտասանական կերպը՝ կետադրական նշանների խառնիխուռն կիրառությամբ, արտաբերելիս:

Այսպես, օրինակ. գեղջկուհի մայրը խորհրդային քաղաքական գործչին՝ Միկոյանին նվիրված զուսանական երգն է երգում. «Մեր գա-րուն կյան-քի//Ծաղ-կուն-քով ալ-վան//Ձեր գովքն ենք ա-նում...»՝ երաժշտությունը պահպանելով ու խաղացնելով երեխային՝ միաժամանակ խոսում է մանկան հետ . «Պու-պու-լըտ ուտենեն», — ապա կրկին անցում է կատարում բուն երգին՝ «Ըն-կեր Մի-կո-յան»: Գեղջկուհին ամոթից կարկամում է. «Վայ, ֆո՛ղն իմ գլխին, էս ի՛նչ դուս էկավ...»:

(ԱՍՇՀ)

**6.1.** Մի նմանատիպ միջադեպի ինքս եմ ականատես եղել. 1960-ականների սկզբներին Կիրովական (այժմ՝ Վանաձոր) այցելած գեղջկուհին, կանգառից բարձրանալով ավտոբոս ու հետևի մասում նստելով, սկսում է խոսել տարին դեռ չբուրած երեխայի հետ ու երեխայի բերանով վարորդին հորդորել, որ երեխայի լացը կտրվելու համար նա մեքենան շուտ քշի:

193 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, «Ասողիկ» հրատ., Եր., 2008, էջ 54:

Բանավոր խոսքում դիմելու օբյեկտների անընդհատ փոփոխությունը, կետադրական նշանների խառնիխուռն կիրառությունը, նաև խոսակցական լեզվի ընձեռած լայն հնարավորությունները երեխայի մոր ասելիքի շաղախից «պատրաստում են» մի զավեշտալի բան՝ առաջացնելով ուղևորների անգուսպ հռհռոցը.

Կինը դիմում է երեխային. «Դե տ'իս», ապա դիմելով վարորդին. «Ձա-ձաասն<sup>194</sup>, քշի՛», կրկին՝ երեխային. «Հա, էսա կքշի», ապա նորից վարորդին. «Ձա-ձաասն», հետո՝ երեխային. «Պուպուլըտ ուտեն», ապա՝ վարորդին. «Ձա-ձաասն, շնտ արա, քքշի՛», և... զվարճախոսությունը պատրաստ է:

---

194 **Ձաձա** (ռու.) – հորեղբայր, քեռի:

# ՀԱՎԵԼՎԱԾ 5

## 1

Գիւղացին մի դաշխա մոզի էր կորցրել՝ չալ չաթուն պոզերին կապած:

Երկար որոնելուց յետոյ պատահեց մի քանի գիւղացու և յօգնելուց ու մոզի դարդից շփոթուած՝ հարցրեց.

— Բարի՛ մոզի, բալքա դաշխա ըրիզու տեսած ըլեք, չալ չաթուն պոզին մոզին:

Ծիծաղի տոպրակ. Անեկորտներ հայ և օտարների կեանքից, աշխատասիրեց դպիր Ս. Տ. Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, 1892, էջ 28:

## 2

### «ՌՈՒՐԻԿՆ ԾՆԵԼ Ա»

Դպրոցի հավաքարար Հոռոմսիմին հայտնում են, որ դաշտում իրենց այծը ծնել է: Մեկին պետք է ուղարկել, որ այծը և ուլը տուն բերի: Հոռին անհանգստացած շտապ բացում է մի դասարանի դուռ և ուսուցչին ասում.

— Ա՛ Մեժ, Ռուրիկը Կապին ծկերումը ծնել ա, էժը պանց թողի քինա Ռուրիկին ու հոլը պիրի:

Բալայան Մեժումը իսկույն գլխի է ընկնում, որ Հոռին շատ Բալայանների նման հուզված պահերին նախադասության մեջ բաների տեղերը շփոթում է և առաջացնում ծիծաղ: Դասից ազատում է Հովասափյան Ռուրիկին, որպեսզի գնա Կապին ծակեր տեղամասից այծը և ուլը բերի:

Ղուլյան Բ., Գյուլիստան, Պատառիկներ մոտիկ անցյալից, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 144:

## 3

Լոռցու օրինանքը. — Մի լոռցի անցնելիս հարևանը հրավիրում է թաժա հաց ուտելու. «Ադամ, Սաքո դեսըն արի՛, տաք հաց կտրի». — Շնորհակալ եմ, քի մատաղ, խաղաղ եմ, ձեր տաք հացը Աստոծ կտրի, — պատասխանում է անցվորը:

«Նոր-դար», Թիֆլիս, 24.07.1887թ.:

Նույնը՝ Թումանյան Հովհ., ԵԼԺ, հատոր 5, Եր.,

«Գիտություն» հրատ., 1999, էջ 580:

## 4

Աղքըտի մեյն օրըմ ճամբախ անձրըվու կը պոնվի, կէլնի տուզ-  
մուզ:

Կէրթա մե կնգյա տուն, կնիյ կէլնի թոնէր վառի, իսոր շորէր կը  
չորցուցի:

Աղքատ շորէր կը խայնի, տառնա կնգան կօխնի, կասի. — Ին-  
չըլս տյու իմ շորէր չորցուցիր, աստվածն էլ քե ըսկուն չորցուցի:

Ուր խելքով օխնիք տվեց:

Ծիծաղում են վանեցիները (հավաքել, կազմել են  
Վարազդատ Հարությունյանը և Նորա Մելիքյանը),  
Եր., «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 174:

## 5

Երևանի Սարի թաղի դիքը<sup>195</sup> բարձրանալիս 80-ն անց մի տա-  
րեց կին ձեռքով նշան է անում, որ ավտորուսը կանգնի: Վարորդը  
անհարմար դիքքում կանգնեցնում, վերցնում է նրան:

— Ապրեն, բալւ ջան, — ասում է տարեց կինը, — դուն ինձ վե  
կալար, թող աստված էլ քեզ վեր ունի:

Ավտորուսի ժողովրդի հռչոռցը սթափեցնում է տատին.

— Վայ, Հիստու ու Քրիստոս, քոռանամ ես, բալւ ջան, էս ինչ  
դուս տվի...

(ԱՄՇՀ)

## 6

Սանահինում մեկի տունը վառվում ա: Հարևանը, որ ձեռքից  
ոչինչ չէր գալիս ու ծույլ ու անբանի մեկն էր, սխրանք ա գործըմ.  
Ներս մտնելով՝ վառվող սենյակի միջից փրկվում ա օրորոցի էրեխին:

Փրկված էրեխի տատը «օրհնանքների» հեղեղ ա թափում  
փրկարար հարևանի գլխին.

— Վայ, Վարդգես ջան, դուն որ մեր ըրեխին կրակիցը փրզե-  
ցիր, թող կրակ վեր գա քու վրա: Վոյ, քոռանամ ես, էս ինչ ասի:  
Թող լիս վե գա վրիդ...

Շրջապատի ծիծաղը սթափեցնում ա տատին.

195 Դիք – գառիվեր, բարձունք:

— Լիզուս լավկվեր, էս ի՞նչ ասի... էս անդեր լիզուս էս խի ա շաղվել...

(ԱՄՇՀ)

## 7

Մենակ ապրող մի տարեց կին խնդրում է հարևանին՝ սենյակի վառված լամպը փոխի: Հարևանը անտրտունջ գալիս է լամպը փոխում:

— Ապրեն, բալա՛ ջան, դուն իմ սենյակը լուսավորեցիր, Աստված էլ թող քու ֆոքքին լուսավորի, — սրտանց օրհնում է ծեր կինը՝ չընկալելով հարեհաս հարևանի անզուսպ ծիծաղի պատճառը:

(ԱՄՇՀ)

## 8

Երկու քույր, այցելելով իրենց հորեղբոր կնոջը, որ նոր էր դուրս եկել առաջին ծննդականությունից, հարցասիրաբար հարցրին.

— Հարսի՛, երեխա բերելը ղնց ա, հո դժվար չի:

— Աման, Եղսան ջան, — պատասխանեց հարսը. — Ես տեսա, դուք ո՛չ տեսնեք:

Անեկոսներ, 3-րդ հատոր, Աշխատասիրեց Յովհաննես Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի և ընկ. տպարան, 1883, էջ 69:

## 9

Շամուտի ջահելները մի օր հարցնում են գյուղի ամենատարեց մարդուն՝ Ճուղուրանց Հակոբին.

— Հը՛, Ակո՛ր բիձա, լավ բան ա՛ մենձութիւնը:

— Էէէ՛, ըրելիւնք ջան, ես մենձացել եմ, դուք ոնչ մենձանաք, — հոգոց հանելով պատասխանում է Ակո՛ր բիձեն:

(ԱՄՇՀ)

## 10

Մեյրանը բեզարած, ջարդված տուն ա գալի, տենըմ՝ կնիկը ճաշ չի սարքել: Սկզբն ա կնգա վրա գոռգոռալը:

— Մենակ գոռգոռըմ ես, փետ ե՛ս արել, կըտորել, որ ես էլ ճաշ անեի, — նեղսրտում է Միրուշը:



Սեյրանը փնթփնթալով դուրս է գալիս ու սկսում լիզուն հանած փետ ջարդիլը:

— Լիճուտ ընչի ես հանել, Սեյրան ջան, — դրությունը մեղմելու համար ուզում է կատակել կնիկը:

— Հանել եմ, որ տանեմ կոխեմ մորըտ ո...ը, քո՛ւ նանը..., — կատաղած պատասխանում է Սեյրանը:

(ԱՄՇՀ)

## 11

Շուրիկը, իր սովորության համաձայն, Հովհաննեսի հոգու հետ էր խաղում՝ հիշեցնելով մանկության շրջանից եղած-չեղած դեպքեր. իբր վոլեյբոլ խաղալիս նրան պաս չէին տալիս, կամ դասարանի դուռը փակում էին ու բանալին պահում, որ նա չկարողանար դուրս գալ և նման բաներ:

— Հա՛, հա՛, ասա՛, ասա՛, ես լավ գիտեմ, որ դուն ու իմ էձը է՛ն գլխիցը իրար հետ չեք արածըմ, — ժողովրդական առածի յուրովի մոտեցմամբ պատասխանում է Հովիկը:

**Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ,  
«Ասողիկ» հրատ., Եր., 2008, էջ 54:

## ԺԱՐԳՈՆԱՅԻՆ ԱՐՏԱՐԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՅՅՈՅՆՈՒԹՅԱՆ ԶԱՎԵՏՏԻ ՀԵՆՔ

**1.** Երգիծական մանրապատումներն ու զվարճախոսություններն անկաշկանդ մուտք են գործում մարդկային հաղորդակցության բոլոր ոլորտները, արտացոլում տարբեր խավերի կենսակերպն ու փոխհարաբերությունները, այդ հարաբերությունների ժամանակ կիրառվող լեզուն: Հայերենի փողոցային լեզվի բառապաշարը ձևավորող ժարգոնային բառերի ու արտահայտությունների հենքի վրա ստեղծված անեկդոտները կոչված են ոչ միայն ծիծաղ առաջացնելու, զվարճացնելու մարդկանց, այլև քննադատելու փողոցային լեզուն ու ժարգոնը: Հայկական անեկդոտների համատեքստում ժարգոնային բառ-բառակապակցություններով զավեշտը դրսևորվում է տարբեր հնարանքներով:

**1.1. Յար բոնել** ժարգոնային արտահայտության մեջ *յար*-ը հարադիր բայական կառույցում երեխայի կողմից ընկալվում է որպես ձկնատեսակ: Նման եզրակացության հանգեցնողը, անշուշտ, թե՛ գործողության վայրն է՝ ծովը, թե՛ փոխաբերաբար արտահայտված խոսքի ուղղակի ընկալումը.

*Ընկեր Մարգոն հարցնում ա.*

— *Երեխաներ, ինչ ձկնատեսակներ գիտեք:*

*Դասարանցիներից մեկն ասում ա՝ իշխան, մյուսը՝ սիգ, մեկն էլ՝ սագան, Վաղանիկն ասում ա՝ յար:*

— *Վարդանիկ, բա յարը ձկան տեսակ է:*

— *Հըբը ինչ է, Ընկեր Մարգո. մի օր պաքայիս ընգերը մեր տանն ըսավ՝ էս ամառ չես գա՞՞՞ էրթանք ծով՝ **յար բոնենք:***

(ԱՄՇՀ)

**1.2. Տանձին չի** (անտարբեր, անարձագանք է) ժարգոնային արտահայտությունը մեր գրառած զվարճապատումային կառույցներից մեկում ինքնատիպ լուծում է ստացել: Այստեղ արդեն ոչ թե

դարձվածքի ուղիղ իմաստով ընկալումն է դարձել անսպասելի ծիծաղի դրսևորման միջոցը, ինչպես նախորդ օրինակում, այլ իրադրության մանրամասն նկարագրությունն ու դրանից բխած դարձվածային եզրակացություն-ամփոփումը.

— «Տանձ» բառով ղվ կարող է նախադասություն ասել, — հարցնում և Ընկեր Մարգոն:

Վարդանիկը ձեռք ա բարձրացնում:

— Վարդանիկ, ասա:

— Մինուս 47 աստիճան ցուրտ է, պլիտա չենք կրրնա վառենք. Էդքան լույսի փողն ուրդից կրնանք տա...

— Վարդանիկ, չասացի՞ «տանձ» բառով, — ընդհատում է Ընկեր Մարգոն:

— Հիմի կըսեմ, Ընգեր Մարգո: Շոր չունեմ հագնելու, քեռուս շորերն եմ հագնում...

— Վարդանիկ, էդ քո պատմածներն ինչ կապ ունեն «տանձ» բառի հետ, — նորից է ընդհատում Մարգոն:

— Ունին, Ընգեր Մարգո, հրբը չունի՞ն, էն ինչ օր ըսի, հեչ հորբս տանձին չէ...

(ԱՄՇՀ)

**1.3. Իրան դողերի բախչեն գցել** (էլ քեզ մի գցի դողերի բախչեն, իրան էլի գցեց դողերի բախչեն) դարձվածքը նշանակում է իրեն չիմացողի տեղը դնել, չքմեղ ձևանալ: Ծիծաղ առաջացնելու համար այն գվարճախոսության մեջ ուղիղ ընկալմամբ է տեղայնացվում՝ ըստ համապատասխան մականվան.

Աբարանցին իրան գցում և դողի բախչեն<sup>196</sup>, ավարանը բռնում տփրմ աս:

(ԱՄՇՀ)

**1.4.** Որոշ երիտասարդ երևանցիների բառապաշարի մաս է կազմում ժարգոնային այնպիսի հայեոյանքը, երբ հայեոյողը զայրոյթից խոսքն ինքն իրեն է ուղղում: Հենց նմանատիպ դրսևորումներն էլ պատճառ են դարձել մի շարք իրապատումային և հրաշապատումային տարրերով երգիծական ստեղծագործությունների

196 Ավարան (ռու.) – պահակախումբ:

առաջացման: Դրանցից մեկն առնչվում է լոռեցիներին: Երբ լոռեցին պատասխան հարվածն է հասցնում երևանցուն, վերջինիս գայրոյթից արտաբերած «Վայ ես իմ տիրու մերը...» հայհոյանքը զարմացնում է լոռեցու ընկերոջը՝ ասելով.

— Ապո, էդ ճնց տվիր, որ սա թարս ա ուշունց տալի...:

(ԱՍՇՀ)

Տե՛ս Հավելված 6, թիվ 1:

**1.5.** Առաջին դեմքով ինքն իրեն վարկաբեկելու ժարգոնային բամբառակ արտահայտություններից մեկի (վայ՛ ես գ...թ ըլեմ) հենքի վրա է ձևավորվել հեքիաթի հրաշապատումային՝ ոսկեձկնիկյան պատումաաշարի նմուշներից մեկը:

(ԱՍՇՀ)

Տե՛ս Հավելված 6, թիվ 2:

Ի դեպ, հեքիաթի թե՛ իրապատումային, թե՛ հրաշապատումային տարրեր պարունակող նմանատիպ ստեղծագործություններում ժողովուրդը ծիծաղի լեզվով էլ ավելի տեսանելի է ու նպատակային է դարձրել փողոցային բառապաշարի քննադատությունը:

**1.6.** Եթե մեծերի ժարգոնային խոսքի հենքի վրա ստեղծված աննեղոտները ինչ-որ տեղ նաև հակակրանք են առաջացնում այդ ժարգոնի հանդեպ, ապա փողոցային խոսակցություններից կամ ընտանիքի անդամներից լսած ու կապկած փոքրերի ժարգոնային «բառապաշարը»՝ դրսևորված մանկական խոսքում, սակավ վտանգավոր է, բայցնայնպես՝ նախազգուշացնող.

*Գրիգորը պետք է գնար Մոսկվա: Տատիկը ասավ.*

— *Գրիգոր՝ ջան, բա որ քեզ ռուսերեն հարցնեն. «Как тебе завыт?»<sup>197</sup>, ի՛նչ ես պատասխանելու:*

*Ասավ.*

— *Կասեմ՝ «Մայ նեյմ իզ Գրիգոր<sup>198</sup>», թող լումկվեն<sup>199</sup>,<sup>200</sup> :*

---

197 **Как тебе завыт?** (ռուս.) – Ի՛նչ է անունդ:

198 **Մայ նեյմ իզ Գրիգոր** (անգլ.) – Իմ անունը Գրիգոր է:

199 **Լումկվել** (ժարգոնային) – շվարել, կարկամել:

200 **Սարգսյան Ա. Շ.**, Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, էջ 105:

**1.7.** Ասելիքը էլ ավելի տպավորիչ դարձնելու համար բամբակ **ոռ խաղացնել** (նագուտուզ անել) ժարգոնային արտահայտությունը զվարճապատումներից մեկում հնչում է երեխայի բերանով՝ անհանգստացած մորը թոշ լեզվով բացատրելով ուժեղ գմփոցի պատճառը.

— *Բնց տի ըլի, այ մամ, էնքան ոլ խաղացըլիլ, պապան իլան խփեց...* :

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 6, թիվ 3:

**2.** Խորհրդային Միության 70 տարիների ընթացքում շփումը օտար (տվյալ դեպքում՝ ռուսական կամ ռուսախոս) միջավայրի հետ (բանակ, արտագնա աշխատանք, գործուղումներ և այլն) կամա թե ակամա նպաստել են, որ օտար եզրույթները, նույնիսկ օտարալեզու ժարգոնային և ժողովրդախոսակցականում կիրառվող հայհոյախառն արտահայտությունները արագությամբ մուտք գործեն նաև գյուղաշխարհի մարդկանց բառապաշար՝ երբեմն էլ երգիծական ստեղծագործություններում դառնալով նաև անսպասելի ծիծաղ առաջացնելուն նպաստող միջոցներ:

**2.1.** Այսպես, օրինակ, ռուսերենից ներմուծված **պալոժ ա**<sup>201</sup>-ի՝ *բա դա մեզի պալոժ ա՛* ժարգոնային արտահայտությունը դառնում է Խոյի բարբառով արտաբերված բամբակակալություններից մեկի զավեշտի հենքը:

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 6, թիվ 4:

**2.1.** Մեր գրանցած տարբերակներից մեկում էլ երկխոսությամբ կառուցված նմուշներից զավեշտն ստեղծվում է ռուսերեն *վերջ* բառի ժարգոնային՝ վուլգար բառ-հայհոյանքի հակադարձմամբ.

— *Քյա տղա՛, արդեն ուշ ի. պիզ...ցն էկյավ նանըղ քյ...ց, կյազար խավքեց տարավ...* : (իմա՝ դաշտում բերքը արդեն ցրտահարվել է)

(ԱՄՇՀ) Տես Հավելված 6, թիվ 5:

---

201 **Պալոժ ա** – վայել է:

# ՀԱՎԵԼՎԱԾ 6

## 1

Երկու լոռեցի Ըրեվանի հրապարակի շատրվանների կըշտին կանգնած են ըլլում: Մի քանի ըրեվանցի ջահելներ տենըմ են՝ սրանք գեղացի մարթիք են, հոքիների հետ խաղալու հըմար դրանցի մինը էս լոռեցոնցի մնի վզին մի թեթն տալիս ա:

— Այտա՛<sup>202</sup>, գահլեներըտ չունեմ, ոանդ էլեք, — ասըմ ա լոռեցին: Էս ըրեվանցին մին էլ ա տալի: Լոռեցին նորից ա ասըմ՝

— Այտա՛, ոանդ էլեք, թե չէ ես էլ տեմ տա, հա՛ն:

Ըրեվանցին մին էլ ա թեթն վզակոթին հասընըմ: Լոռեցին ասմա՛

— Այտա՛, որ տվի է՛, գահմով<sup>203</sup> տեմ տա...

Որ մին էլ տալիս են, լոռեցին տանըմ ա, բերըմ, որ չի՛ հասընըմ, էս ըրևանցուն գեղին ա փրորըմ:

— Վայ՛ ես իմ տիրու մերը ք... , — ընգած տեղիցը գոռըմ ա ըրևանցին:

Էն մի լոռեցին զարմացած հընգորն ասմա.

— Ապո՛, էդ ո՛նց տվիր, որ սա թարս ա ուշունց տալի:

(ԱՍՇՀ)

## 2

Իրեք ընգերներով ձուկ որսալիս ոսկե ձկնիկ են բռնում, ոսկե ձկնիկն ասում ա.

— Ինձ բաց թողեք, ամեն մեկըդ մի-մի ցանկություն թող ասի, կկատարեմ:

Ամեն մեկին մի-մի ձու ա տալիս, ասմա՛

— Մոկներումըտ ցանկություն պահեք ու ջարդեք, անմիջապես կկատարվի:

Սրանք վերցընըմ են ձվերն ու գնըմ: Մեկը մտքումը մի լավ մե-

---

202 Այտա՛ – կոչական դիմելաձև:

203 Զահմով – թափով:

քենա և պահում ու ջարդում: Տեսնում և մեքենան կողքին կանգնած և:

Երկրորդ ընկերը պալատներ և ուզում, գնում տեսնում և՛ տան տեղը՝ պալատներ: Իրար որ սրանք հանդիպում են, ասում են՝ հետաքրքիր և՛ մեր ընկերն ինչ և ցանկացել, որ չի էրեվում:

Գնում տեսնում են՝ դառել և «գեյ<sup>204</sup>»-երի թագավոր, իրանց իրավունքների համար միտինգ և արել ու երթ և կազմակերպում: Ասում են՝

— Էս ղնց էդավ, այ՛ ընկեր, ախր դո՛ւ ո՛ր, գյոթությունն ո՛ր...

Ասում և.

— Մուսեք, տղեք ջան. ձուս պինդ բռնած ուզում եմ մեր տուն մտնեմ, որ տանը ջարդեմ, մեկ էլ ոտըս կպավ տան շեմի աստիճանին ու բերանիս վրա փովեցի: Ընկնելիս մեխանիկորեն ասի. «Վայ, գյոթ ըլեմ» ու... Էս օրն ընգա...

(ԱՄՇՀ)

### 3

Որ լույսերն անջատում, մտնում են անկողին, մարդն ուզում և կնգանը մոդենա, կնիկն ասամ՝

— Ա՛յ մարդ, ամոթ և, ըրելսեն դեռ քնած չի ըլի:

— Քնած կըլի, համ էլ մի մատը ըրելսա յա, ի՛նչ տի հրսկանա:

Մարդը իրանն և գոռըմ, կնիկը՝ իրանը: Վերջը որ շատ կնիկը չեմուչում և անըմ, մարդը ջղայնացած տեղիցը վեր և կենըմ, գնըմ և սառնարանի դուռը բաց և անըմ, որ արաղի շիշը վեր ունի, արաղ չի գըդնըմ: Շամպայնի շիշն և վեր ունըմ, ուզըմ և բաց անի, մին էլ էտ անդեր պրոպկեն<sup>205</sup> գըմփալով դուս և թըռչըմ: Էդ ձենի վրա կնիկը գոռալով տեղիցը վեր և թոչըմ. ասըմ.

— Էն ի՛նչ էլավ...

Ըրելսեն թե՛

— Ի՛նչ տի ըլի, այ՛ մամ, էնքան ոլ խաղացըլի, պապան իլան խփեց... :

(ԱՄՇՀ)

204 Գեյ – միասեռական:

205 Պրոպկա (ռուս.) – խցան:

## 4

Խեր ու տղա դաշտեն կիկյան տուն, խեր կասա.

— Գյա տղան, բախեր<sup>206</sup> տար մարաք դիր:

— Այ խեր, բա դա մեզի պալոժ ան, ո՛վ կանա ոիսկ անա<sup>207</sup>, գյա տանա:

Խեր մեկ էլ կասա.

— Գյա տղան, քյեզի մեկ էլ ըսիսեն<sup>208</sup> բախեր վերու, տար դիր մարաք:

Տղեն չի լսա, նորից կասա՝

— Բա դա մեզի պալոժ ան...

Առտուն կյանուխ խեր ու տղա կելլին օր դաշտ էթան, տղեն կկյա, կասա.

— Ա՛յ խեր, բախեր դո՛ր ի<sup>209</sup>:

— Գյա տղան, պալոժն էկես ի, նանըտ քյ...սի, բախեր վերու-սի<sup>210</sup>, տանեսի<sup>211</sup>:

(ԱՍՇՀ)

## 5

Արամուսցին տղին ասում ա.

— Քյա տղան, հե՛լ, կյազար մնաց:

— Ինչ ես վռազում, այ մեր, գազարը խոմ չփախամ՛վ, կհանենք, էլի:

Մի օր, էրկու օր, իրեք օր... ընկերների հետ էդ տղեն քեֆ ա անըմ, ֆրոֆրոռըմ, ու որ ցրտերն ընգնըմ ա, գնըմ ա մորն ասմա.

— Պիզ...ց, այ մեր, այ հիմի պարապ եմ. կարամ գնամ մեր գյազարը հանեն, բերեն:

— Քյա տղան, արդեն ուշ ի. պիզ...ցն էկյավ նանըդ քյ...ց, կյազար խավքեց տարավ...: (իմա՛ դաշտում բերքը արդեն ցրտահարվել է)

(ԱՍՇՀ)

---

206 **Բախեր** – բահեր:

207 **Ռիսկ անա** – համարձակվի:

208 **Ըսիսեն** – ասում են:

209 **Դո՛ր ի** – որտե՞ղ է:

210 **Վերուսի** – վերցրել է:

211 **Տանեսի** – տարել է:



## ՀԱՅԵՐԵՆԻ ԵՎ ՕՏԱՐ ԼԵՁՈՒՆԵՐԻ ՓՈԽՅԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՉԱՎԵՇՏԻ ՅԵՆՔ

**1.** Թե՛ն հարևան ժողովուրդների, թե՛ն աշխարհի այլ ազգությունների հետ փոխհարաբերությունների ժամանակ հայը հանդիպում է լեզվական խոչընդոտների, ինչի հետևանքով բազում զավեշտալի իրավիճակներ են ստեղծվում՝ դառնալով մի շարք անեկդոտների առաջացման պատճառ:

19-20-րդ դարերում հրատարակված բանահյուսության ժողովածուներում, ինչպես նաև տարբեր արխիվներում պահպանվող անտիպ աղբյուրներում քիչ չեն այնպիսի երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները, որոնցում զավեշտի հենքը հայի և այլ ազգությունների մարդկանց բանավոր և գրավոր խոսքով շփումների ժամանակ առաջացած ծիծաղելի երևույթներն են:

**1.1.** Այսպես, 19-րդ դարի վերջին պոլսահայերից կատարած բանահյուսական նյութերի աճառյանական գրառումներում հանդիպում ենք հայի և թուրքի փոխհարաբերություններին վերաբերող անեկդոտների: Դեռ երիտասարդական տարիներից Հր. Աճառյանի ուշադրության կենտրոնում են եղել հայերենն անաղարտ պահելու, հայոց լեզվով հաղորդակցվելու հարցերը, և, բնականաբար, գրառած նյութերի մեջ պետք է տեղ գտնեին նաև ծիծաղի, երբեմն էլ սպանիչ ծաղրի միջոցով օտարամոլության դեմ պայքարելու ժողովրդական մոտեցումները:

Աճառյանի զվարճապատում-զվարճախոսություններում լեզվական թեմաներից մեկն առնչվում է ուժացման խնդիրներին: Օտարության մեջ հայտնված և իր լեզվի հարգը չիմացող, օտար լեզվին գերի դարձած հայ պանդուխտ-գաղթականը այլազգիների հետ շփվելիս բազում զավեշտալի իրավիճակների մեջ է ընկնում: Պատումներից մեկում, օրինակ, թուրքերենախառն հայերենով (հատ ու կենտ հայերեն բառերով ու մասնիկներով) մի ենիչերիի

հասցեին ասված «Մա ենիչէրիին խալփախին թէքմէ մը եռլեշտիր-միշ ընեմ քի խօսխօճաման խալփախը յօխուշ աշաղի թէքէր մէքէր գա» (Մա ենիչէրիին աղակին այնպիսի մի քացի տամ, որ սահագին կդակը գառիվարից ցած գլտոր գա) խոսքը ճակատագրական է լինում՝ դառնալով հայի մահվան պատճառ<sup>212</sup>:

Տես Հավելված 7, թիվ 1:

Այս պատումի տողատակում Աճառյանն ավելացնում է. «Այս առակը պատմում են ցույց տալու համար, թե պոլսահայ ուսմիկ լեզուն այնքան խառն է թուրքերեն բառերով, որ թուրքն էլ կարող է հասկանալ»<sup>213</sup>:

Աճառյանի գրառած 4 զվարճապատում-զվարճախոսություններն առնչվում են այլադավանությանը<sup>214</sup>, որոնցից երեքում ծաղրվում են ոչ միայն իրենց լեզուն մոռացած թուրքախոս կաթոլիկ վարդապետները, այլև նրանց՝ էությանը բարոյագրկված զավակները, ինչպես, օրինակ, ստորև բերվող նմուշում.

*Կաթոլիկ մարթ մը չանթան ձառքը՝ ախճրկանը հետ մէկտեղ՝ տեղ կերթան կոր էղէր: Ախճիկը հօրը կը դառնա կըսէ քի՛  
— Պանպա, պանպա, կըսէ, աչքամտան կէլ քի սէնի ուշաըմ գանն էթսիւկէր (Հայր, հայր, ետևիցս արի, որ քեզ ծառաս կարծեն), — կըսէ<sup>215</sup>:*

**1.2.** Կարապետ քահանայ Գայֆայանն իր հրատարակած զվարճապատումներից մեկը վերնագրել է «Մաքուր հայերէնը»: Սարկազմով ներկայացնելով մակույկի ցնցվելու հետևանքով կրակարանի կրակը երեխայի ոտքի վրա թափվելուց խառնված պոլսեցի հայ կնոջ և ճամփորդ փոխադրող թուրք նավավարի երկխոսությունը՝ նա ցույց է տալիս միմյանց լեզվին կիսատ-պռատ տիրապետելու հետևանքով ստեղծված զավեշտալի իրավիճակը.

---

212 **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 174:

213 **Նույն տեղում:**

214 **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009թ., էջ 165-166 (թիվ 14, 15, 16, 17/:

215 **Նույն տեղում**, էջ 166:

— Քսի, Հասան աղա, — կպոռա կինը, — մանդալը տէվրի-  
միշ եղաւ, չոճուխի այախները եանմիշ եղան:  
— Գատըն, նէ՛ օլտու, — կը հարցնէ նաւալարը:  
— Քսի, գայըքճի, սէնտէ՛ մի Հայճա պիլիրսին:  
— Գատըն, պունըն նէրէսի՛ Հայճա:  
— Հսի, իրսի, — խելքի կուգայ կինը, — զմանդալն պիտի  
ըսէի<sup>216</sup>:

Տն Հավելված14, թիվ 2:

**1.3.** Միրիայում ապաստանած Եղեռնից մագապործ արևմտա-  
հայության բեկորների մի մասը շարունակում է ոճրագործի լեզվով  
հաղորդակցվել և իբրև ապացույց հայ լինելու՝ մոտն ունենալով  
Ս. Գիրքը: Հ. Չոլաքյանի գրառած պատումում<sup>217</sup> զավեշտի հենքը  
թուրքախոսության և աղոթաժողով հաճախելու ծիծաղ առաջաց-  
նող հակասությունն է, որի լուծումը սարկազմի հասնող իրողու-  
թյունն է.

Աղոթաժողովից հետո կազմակերպված խնջոյքի ժամանակ  
պարող այնթապցի, քիլիսցի և մարաշցի կանայք սկզբում Ս. Գիր-  
քը թների տակ ելնում են պարելու՝ թուրքերեն ասելով՝ «Աման Ալ-  
լահըմ, կինսահ եազմա<sup>218</sup>», ապա պարը թեժանալուց հետո «Կինե-  
րը Ս. Գիրքերը մէկիկ-մէկիկ կը նետեն մէկդի ու կ'ըսեն.— Իստէր  
եազ, իստէր եազմա<sup>219</sup>»:

Տն Հավելված14, թիվ 3:

**1.4.** Պարսկահայոց ժողովրդական երգիծապատումներից մե-  
կը<sup>220</sup>՝ կառուցված հայի և թուրքի երկխոսությամբ, երբ ամեն մեկն

---

216 Հայկական զրոյցներ. առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի  
ասացուածքներ և իմաստուն խօսքեր, պատրաստեց Կարապետ քահանայ  
Գայֆաեան, Լոս Անջելես, Պօզանեան տպագրութիւն, 1944, էջ 9:

217 Միջգաւառական անեքթոտներ, Յակոբ Չոլաքեան, Բ տպագրութիւն, 2005,  
Հալէպ, էջ 92:

218 Աման Ալլահըմ, կինսահ եազմա – Ով իմ Աստուածս, մեղք մի՛ գրեր:

219 Իստէր եազ, իստէր եազմա – Կուզես՝ գրե, կուզես՝ մի՛ գրեր:

220 Մինասեան Լ., Գիւղական բառ ու բան, (Փերիա գաւառ), Նոր Ջուղա, Սբ.  
Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 364:

իր լեզվով է խոսում, և ոչ մեկը չի հասկանում, թե գրուցակիցը ինչ է ասում, հիշեցնում է երկու խոսքերի խոսակցության հենքի վրա ստեղծված անեկդոտաշարը: Սակայն քանի որ այստեղ երկուսի լսողությունն էլ տեղն է, գավեշտ առաջացնող վերջաբանը թուրքերեն *փոխ եիրան* (ք... ուտել) և հայերեն *փոխինդ ուտել* բառերի հարանունությամբ է կառուցված:

Տե՛ս Հավելված 7, թիվ 4:

**1.5.** Զվարճապատումներից մեկում էլ Ամերիկա գաղթած այն-թապցու՝ *I want a knife* (դանակ մը կ'ուզեմ)-ի փոխարեն արտաբերած *I want a wife* (կնիկ մը կ'ուզեմ) արտահայտությունն է դարձել անսպասելի ծիծաղ հարուցող միջոցը<sup>221</sup>:

Տե՛ս Հավելված 7, թիվ 5:

**2.** Անեկդոտների մի խումբ էլ առնչվում է արևելահայերենի և օտար լեզուների փոխհարաբերություններին: Երբեմն օտար բառերն այնպես էին ամրացել մեր ժողովրդի մեջ, որ շատ դեպքում դրանք ընկալվում են որպես հայերեն բառեր:

**2.1.** Ժամանակին լրագրողական դաշտում հաճախակի էին օգտագործվում բազում օտար բառեր, որոնք հասանելի էին միայն նեղ մասնագիտական շրջանակներին: Գյուղաշխարհի մարդկանց գերակշռող մասը անհաղորդ էին դրանց, առնչվելիս էլ գավեշտալի իրավիճակների մեջ էին հայտնվում՝ տեղիք տալով անեկդոտների ստեղծման: Ահա դրանցից մեկը.

*Քաղաքից գյուղ են գալիս ինտերվյու վերցնելու: Նախագահի մոտ է գալիս ծխախոտագործուհին և հարցնում.*

— Ընկեր Դարաբեկյան, ինտերվյույն էդ ինչ բան է:

— Հե՛ջ, աղջիկ ջան, պատրաստ կգաս, համենայն դեպս՝ ներքնաշորերըդ կփոխես<sup>222</sup>:

---

221 Պատմություն Անթեպի հայոց, Գ հատոր, Խմբագիր Երուանդ Պապայեան, Լոս Անջելես, 1994, էջ 380:

222 Պատմում և կատակում է Գուրգեն Գալստյանը, հավաքեց և ներկայացրեց Լենա Անթառանյանը, Եր., «Վերնատուն» հրատ., 1994, էջ 5:

**2.2.** Մանրապատումներից մեկում էլ «**խոլեստիրին**» բժշկական եզրույթի չիմացությունն է գավեշտի առաջացման պատճառ դարձել: Երբ թարգմանչի միջոցով գյուղապետը խոլեստերինի վտանգավորության մասին զգուշացվում է, հետևում է անսպասելի ծիծաղ հարուցող նրա պատասխանը.

— *Ամերիկայի դեսպանին դու ասա՛, որ Օձուհի գյուղապետը խոլեստիրին շատ ա սիրըմ:*

(ԱՄՇՀ) Տեն Հավելված 7, թիվ 6:

**2.3.** Զանգեզուրյան անեկդոտաշարի պատումներից մեկում գեղջկուհու կողմից օտար բառիմաստի սխալ ընկալումն է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ դառնում.

Գերմանացի կնոջ հետ ամուսնացած Գինոսի տղան մորն ուղարկած նամակում գրում է, թե «**նեմկա**»<sup>223</sup> է բերում: Մայրը «**կեպկա**»<sup>224</sup> է հասկանում և որդուն պատասխան նամակում խնդրում է, որ մեկն էլ հոր համար բերի<sup>225</sup>:

Տեն Հավելված 7, թիվ 7:

**2.4.** Զավեշտն ավելի է ընդգծվում, երբ պատերազմից զորացրված բրիգադիրի խոսքում ռուսերեն **բեզոմ**<sup>226</sup> բառը այդ լեզվին անհաղորդակից ավանդապահ հայ կնոջ համար ընկալվում է որպես վիրավորանք, և հետևում է նրա զայրալից պատասխանը.

— *Բեզոմը կենա լավօսալիդ<sup>227</sup> ըռխըմը<sup>228</sup>, ըսքան տարեն մարթունկնիկ ենք, իմ մարթն ինձ մի հետի<sup>229</sup> բեզոմ չի ասել, հըմի դու էկել ինձ բեզոմ ես ասըմ, — սրտնեղած պատասխանում է Սիրանուշ մոքիրը:*

(ԱՄՇՀ)

Տեն Հավելված 7, թիվ 8:

---

223 **Նեմկա** (ռուս.) – գերմանուհի:

224 **Կեպկա** (ռուս. ժողովրդախոսակցական) – գլխարկի տեսակ:

225 **Մարգարյան Ա.**, Եկեք մի քիչ զվարճանանք: Զրույցներ և անեկդոտներ, Եր., «Չար» ֆիրմա, 1992, էջ 5:

226 **Բեզոմ** (ռուս.) – վազքով:

227 **Լավօսալ** – լավ ու վատ:

228 **Ռեխ** – երախ:

229 **Մի հետի** – մի անգամ:

**2.5.** Խորհրդային տարիներին ռուսերեն մի շարք բառեր այնպես էին հաստատվել հայերենում, որ որոշ մարդկանց համար դրանք չէին էլ գիտակցվում որպես օտար:

Գրեթե ամենուր վարորդական իրավունքի փաստաթղթին հայերը օգտագործում են ռուսերեն **պոավա** եզրույթը: Ահա իրողության հենքի վրա առաջացած **պոավա**-ին առնչվող արցախյան զվարճախոսության մի նմուշ.

*Երբ ոստիկանը Իջևանում դարաբաղցի տարեց վարորդից փաստաթուղթ է պահանջում, վարորդն ասում է.*

— Բայւմ, փաստաթուղթը հինչ ա՛մ, ես փաստաթուղթ չօնիմ:

— Հայրի՛կ, բա ավտոն քշել ես, մինչև այստեղ հասել, փաստաթուղթ չուննա:

*Կողքից հորս ասալ ըն՝*

— Վազգէն դայի, պրավա չծնիս:

*Հերս ասալ ա.*

— Վա՛մ, յանի հոնց չի օնիմ, պա ինքը **պրավա** չի օգում, է՛

**փաստաթուղթ** ա օգում<sup>230</sup>:

Լոռու գյուղերից մեկում նոր արտադրված **կալբաստին** (իմա՝ ապխտած երշիկին) **երշիկ** են ասում:

(ԱՄՇՀ) Տեն Հավելված 7, թիվ 9:

Իրողությունների հենքի վրա է ստեղծված տավուշյան մանրապատումներից մեկն էլ վերաբերում է հայերեն լուցկի բառի փոխարեն հայության շրջանում տարածում գտած ռուսերեն անվանմանը: «**Սպիչկեն**» երգիծապատումում զավեշտ առաջացնողը Ռուսաստանում «սպիչկա» բառը գործածողին հայ անվանելն է.

*Օհանը Ռուսաստան է գնում: Ուզում է ծխախոտը վառի՝ լուցկի չկա: Կանգնեցնում է մի անցորդի, բայց ռուսերեն չգիտի: Մի կերպ ձեռով-նտով գլխի է գցում:*

— Սպիչկի, — կոսահում է ռուսը:

---

230 Հայրապետյան Թ., Արցախ, 2012, ԴԲԱՆ, տետր №2, էջ 6:

— Պանի, բալեն չմեռնի, սա հո հայ ա, ես էլ ռուսերեն չարալամիշ<sup>231</sup> եմ գալի, — ուրախանում է Օհանը<sup>232</sup>:

**2.6.** Ղարաբաղյան շարժման առաջին տարիներին հաճախակի էին Երևանում պարետային ժամ հայտարարում, որով արգելվում էր որոշակի ժամերին փողոցներում հայտնվելը: Կատարված իրողությունների հենքի վրա այդ օրերին բազմաթիվ անեկդոտներ էին ստեղծվում, հիմնականում նեղ միջավայրում, որոնցից մեկն էլ՝ պարետ-Մարետ հարանունությամբ, առնչվում էր *պարետային ժամ*-ին:

Երևանում **պարետային ժամ** էր հայտարարված: Աշտուղ ուշանում էր, ընտանիքի անդամները անհանգստացած էին, իսկ մայրը անընդհատ պատշգամբ էր դուրս գալիս ու կրկին ներս գալով՝ ասում է.

— Մարետի ժամն ա արդեն, Աշտուղս հանկարծ մարետի ճանգը չընգնի՛:

Աշտուղի կինը ավելի է անհանգստանում, քանի որ առաջին հարկի բնակչուհի Մարետը վատ վարքի տեր էր.....

(ԱՄՇՀ)

**3.** Երբեմն գավեշտ առաջացնելու համար միննույն առարկայի կամ երևույթի երկու՝ օտար և հայերեն եզրույթներն է օգտագործվում.

Լոռեցին ուզում է մաքուր հայերեն խոսա: Հեռախոսով զանգում, հարցնում են.

— Ի՞նչ բանի ես:

Ասում ա՝

— Հե՛չ, **տելեվիզորի** առաջը նստած **հեռուստացույց** եմ նայում:

(ԱՄՇՀ)

231 **Չարալամիշ գալ** – չարչարվել, տանջվել:

232 **Աբազյան Ս.**, Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999, էջ 46:

4. Եթե մեծերի խոսքում երկու լեզուների բառային շաղախով նախադասությունը զավեշտի հետ նաև քննադատության տարր է պարունակում, ապա մանկան խոսքում նման դրսևորումը միայն զավեշտ է առաջացնում:

— Մամս, **տելեվիզորը միացրու՝ հեռուստացույց** նայեմ, —  
ասում է 2.6 տարեկան Վահագնը<sup>233</sup> :

4.1. Ահա հայերեն և ռուսերեն լեզուներով հաղորդակցվող ընտանիքում դրսևորված մանկական զվարճախոսության ևս մի նմուշ՝ երեխայի անմեղ խորամանկության՝ նույն առարկայի տարրեր եզրույթների կիրառությամբ.

*Մի օր 3 տարեկան Լևոնը հարցնում է մորը.*

— Ման, եթե կալբաս չի կարելի ուտել, երշիկ կարելի է, չէ...  
(ԱՍՇՀ)

4.2. Մանկական զվարճախոսություններից մեկում երեխան լեզվի մաքրության հարցեր է «շոշափում» և սխալ արտաբերմամբ անձամբ «կանխում» օտարահունչ բառերի կիրառությունը խոսակցական լեզվում՝ միաժամանակ ներկայացնելով դրա հայերեն «համարժեքը», ինչն էլ դառնում է զավեշտի աղբյուրը.

— Արփինե՛, գնա կուխնյայից աղը բեր, — 4.7 տարեկան երեխային է դիմում հորեղբոր կինը:

— Լյուդա՛, կուխնյա չեն ասում, **խոզանոց** են ասում (իմա՝ խոհանոց–ԱՍ), հորեղբոր կնոջը «ուղղում» է Արփինեն:  
(ԱՍՇՀ)

4.3. Դպրոց նոր ոտք դրած երեխան իր պարզ ու շիտակ խոսքում «անդրադառնում է» իրեն հուզող լեզվական խնդիրներին, փորձում դպրոցում ուսուցանվող անձանոթ հայերեն բառերի և ընտանիքի անդամների առօրյա խոսակցական լեզվում առկա միևնույն առարկաների անվանումների տարբերության գաղտնիքը պարզել: Մանկան զվարճախոսությունում զավեշտալին երեխայի

---

233 **Սարգսյան Ա.Շ.**, Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, էջ 156:



անկեղծ մեկնաբանությունն է, ըստ որի՝ իրենք գործ ունեն մի նոր լեզվի հետ, և դպրոցում անցնող լեզուն նրանց համար օտար լեզվի բառերի պես խորթ ու անհասկանալի է.

*Մեպտեմբերին մի քանի օր դասի գնալուց հետո առաջին դասարանցի Գայանեն տանը նեղսրտած ասում է.*

— Դպրոցում ուրիշ լեզվով ենք խոսում, տանը՝ ուրիշ:

— Ո՛ւց, — զարմանում են տնեցիները:

— *Տանը ասում ենք սումկա, դըպրոցըմ՝ պայուսակ, տանը ասում ենք տելեվիզոր, դըպրոցըմ՝ հեռուստացույց, տանը ասում ենք խալադիլնիկ, դըպրոցըմ՝ սառնարան, — բացատրում է երեխան:*

(ԱՄՇՀ)

**5.** 21-րդ դարակերպի գիտատեխնիկական աննախադեպ առաջընթացն ու մարդու կյանքում և կենցաղում կատարվող արագ փոփոխությունները, նրան շրջապատող նորանոր առարկաների աննկարագրելի առատությունն ու նորահայտ օտար բառերի ու բառակապակցությունների հայերեն եզրույթների բացակայությունը լեզվական շիլափլավի են վերածում քաղաքի ու գյուղաշխարհի որոշ մարդկանց, մասնավորապես մեծահասակների բառապաշարը:

Օտար եզրույթների ժամանակին թարգմանելու գործընթացի հետևից չեն կարողանում հասցնել նույնիսկ թարգմանիչ-լեզվաբանները, ինչի հետևանքով էլ օտարալեզու բառերը արագ տարածում են գտնում հայկական միջավայրում:

**5.1.** Եթե երիտասարդների մեծ մասը մինչև դրանց հայերեն համապատասխան համարժեք բառերի ստեղծումը արագությամբ յուրացնում է օտարալեզու, ասենք, *կոմպյուտեր, սկայպ, ֆեյսբուք, յութուք, բիզնեսմեն, դեպորտ* և այլ բառերը, ապա մեծահասակներին դրանք շփոթության մեջ են գցում: Նրանք չեն կարողանում ճիշտ արտաբերել նորահայտ բառերն ու ծիծաղելի իրավիճակների մեջ են հայտնվում՝ պատճառ դառնալով իրողությունների հենքի վրա ստեղծված բազում երգիծական մանրապատում-զվարճախոսությունների առաջացման: Ահա նմանատիպ մի քանի նմուշ.

**ա.** Վարդենիսում մի մեծ կնիկ արագ-արագ գնալիս է լի-  
նում, ծանոթներից մեկը հանդիպում, հարցնում է.

— Էս ու՞ր ես վռագ-վռագ գնում, Վարդու՛շ մորքուր:

Ասում է՝

— Հարսըս **կայֆի**<sup>234</sup> մեչ ա (իմա՝ սկայալի<sup>235</sup> մեջ է), գնամ տե-  
նամ՝ ինչ ա ասըմ:

(ԱՄՇՀ)

Մեկ այլ դեպքում՝

**բ.** Նորադուզում հեռուստատեսության աշխատակիցը դի-  
մում է գյուղի մեծահասակակիցներից մեկին, թե՛

— Տատի՛, արի քեզ ձեր խաչքարերի մոտ նկարենք:

— Տղա՛ ջան, ես ինչ կնիկ եմ, որ տնիս քցիս թուլուրը (իմա՝  
յուրուրը<sup>236</sup>):

(ԱՄՇՀ)

Եվ կամ էլ՝

**գ.** — Ախչի՛, իմացել եմ, — պատմում է մեկը հարևանուհուն,  
— էս մեր հարևան Էդոյին գիտես, չէ՞, — Լեհաստանի սահմա-  
նին բռնել են, **սպոռոս**<sup>237</sup> արել (իմա՝ դեպորտ անել<sup>238</sup>), ու հիմի  
սամայոտով բերըմ են Հայաստան:

(ԱՄՇՀ)

**դ.** — Ախչի՛, Օֆիկ, տղեդ Մասկվա ինչ ա անըմ, — հարցնում  
է հարևանուհին::

— Եսիմ, ասմեն **բեզմենտ**<sup>239</sup> ա (իմա՝ **բիզնեսմեն**<sup>240</sup>) ա:

(ԱՄՇՀ)

**ե.** Գրիշայի տղան բանակից տուն է գալիս: Հարևաններն  
ուրախացած հարցնում են.

---

234 **Կայֆ** (արաբ.) – խնջույք, քեֆ, այժմ՝ ժարգոնային բառ՝ հաճույք:

235 **Սկայալ** – տեսակապ:

236 **Յուրուր** (անգլ.) – էլեկտրոնային կայք:

237 **Աբորոս** (ռուս.) բժշկական եզրույթ) – պտղի արհեստական հեռացում:

238 **Դեպորտ** (անգլ.) – վտարում, արտաքսում:

239 **Բեզմեն** (ռուս.) – ձեռքի զսպանակավոր կշեռք:

240 **Բիզնեսմեն** (ռուս.) – գործարար:

— Գրիշա՛, աչքդ լույս, տղադ եկել ա, բանակը պրծել ա՛:  
Գրիշան ասում է.

— Չէ, **դեկրետնի օտպուսկ**<sup>241</sup> ա էկել... (ուզեցել է ասել՝ «աչերեդնոյ»՝ հերթական):<sup>242</sup>

**5.2.** Երիտասարդներ էլ կան, որոնց այսօրվա խոսքը ոչ մի առնչություն չունի վերը նկարագրած մարդկանց՝ օտար բառերի կիրառությունների հետ: Մրանք տառապում են օտարամոլությամբ ու ցուցամոլությամբ, և նմանների բառապաշարից օգտվող մեծահասակներն էլ նմանակելիս ընկնում են զավեշտալի իրավիճակների մեջ.

Վանաձորի ծաղկի սրահի 65-ամյա հավաքարարը նեղսրտած դիմում է սրահում աշխատող ջահել աղջիկներին.

— Ես ձեր նման **դիազ** (իմա՝ դիզայներ) չեմ, դրանից գաղափար չունեմ, էս **սեքսուալի**<sup>243</sup> բաներն էլ (իմա՝ արքեստուարները<sup>244</sup>) տարեք **շվեդըռոի վենկի** (իմա՝ շեդելը<sup>245</sup> վենոկի<sup>246</sup>) մեջը դրեք<sup>247</sup>:

(ԱՄՇՀ)

---

241 **Գեկրետնի օտպուսկ** (ռուս.) – կանանց տրվող երեխաների խնամքի արձակուրդ:

242 **Ղահրամանյան Կ.**, Արցունքոտ ժպիտներ, հատոր 2, Եր., «Դավ» հրատ., 2006, էջ 131:

243 **Սեքսուալ** (անգլ.) – մարմնական բարեմասնություններով գայթակղիչ:

244 **Արքեստուար** (անգլ.) – պիտույքներ, պարագաներ, զարդեղեն:

245 **Շեդելըռո** – գլովագործոց:

246 **Վենոկ** (ռուս.) – ծաղկեպսակ:

247 Ի դեպ, այս երևույթը միայն հայկական միջավայրին չէ հատուկ: «Սեքսուալ-արքեստուար»-ի հարանունային խառնաշփոթին առնչվող նմանատիպ մի իրապատում էլ վերջերս՝ 29.09.2016 թ., ռուսական հեռուստատեսությամբ «Точь в точь» հեռուստաշոուի ժամանակ դերասան Գենադի Խազանովը պատմեց, թե ինչպես է տնային սպասուհին կնոջն ասել. «Ձեր սեքսուալներին (իմա՝ արքեստուարներին) եմ ման գալիս, բայց չեմ գտնում»: Ներկայացվող նմուշներից մեկում էլ՝ «Ռրտեղ եմ ես» հարցմանը հետևող ռուսերեն «В морге» (իմա՝ դիակերճարանում) պատասխանն ու գերմաներեն «Գութ ըն մորգեն» (իմա՝ Բարի լույս) հարանունությամբ երկխոսությունն է դառնում ռուսական մեկ այլ անեկդոտի զավեշտի հենքը:

**6.** Սակայն լինում են դեպքեր, երբ օտար բառի և հայերենի վերջավորությամբ կամ խոնարհումով պատասխանը կարող է հանգեցնել զավեշտ առաջացնող համանունության:

Տարիներ առաջ Երևանի դպրոցներից մեկում ուսուցչի և աշակերտի երկխոսությունը ասելիք էր դարձել շրջապատում.

*Ռուսերենի դասին ուսուցչուհին դիմում է աշակերտին.*

— *Тигран, почему не поешь, пиши.*<sup>248</sup>

*Ա դե պիշըւ եմ, էլի:*

— *А я вижу<sup>249</sup>, а я вижу.*

*Ա դե վիժըւ ես, վիժի<sup>250</sup>, — պատասխանում է Տիգրանը:*

(ԱՄՇԸ)

**7.** Բազմաթիվ երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ են ստեղծվել, որոնցում տարբեր ազգերի ներկայացուցիչների փոխհարաբերությունների ժամանակ զավեշտն ստեղծվում է կանխասակցի լեզվին ընդհանրապես չտիրապետելու, կան էլ կիսատ-պոատ տիրապետելու հետևանքով:

**7.1.** 19-րդ դարավերջին հրատարակված անեկդոտների ժողովածուներից մեկում<sup>251</sup> տեղ է գտել մի զվարճապատում, որտեղ ներկայացված է միմյանց լեզուն չտիրապետող ռուսի և հայի երկխոսությունը, որը, ինչպես վերը հիշատակված պարսկահայոց ժողովրդական երգիծապատումը, հիշեցնում է երկու խուլերի խոսակցության հենքի վրա ստեղծված սյուժեները: Այդ զվարճապատումում զավեշտն ստեղծվում է ռուսերեն և հայերեն բառերի (что<sup>252</sup>

---

248 *Тигран, почему не поешь, пиши* (ռու.) – Տիգրան, ինչո՞ւ չես գրում, գրի՛ր:

249 *А я вижу* (ռու.) – Իսկ ես տեսնում եմ:

250 *Види* – ծննդաբերության արհեստական ընդհատում:

251 Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ և օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս. Տ. Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեսեանի, 1892, էջ 36:

252 *Это что?* – Սա ի՞նչ է:

– փշտով<sup>253</sup>, Зацьмь<sup>254</sup> —գատ չըմ<sup>255</sup>) հարանունության միջոցով:

Հավելված 7, թիվ 10:

**7.2.** Զավեշտ է ստեղծվում ռուսերեն **Պա չոմ** (ի՞նչ արժե) և հայերենի բարբառով **պաչա** (համբուրիք) բառերի հարանունության միջոցով.

*Շուկայում բաքվից փախած ռուսախոս հայ փախստականներից մեկը կարտոֆիլ վաճառողին հարցնում է.*

— Պա չոմ կարտոշկա:

— Պաչա, խամա էլի տեղը դիր, — ասում է քյավաոցի վաճառողը:

(ԱՄՇՀ)

**7.3.** Որևէ դժվարության հանդիպելիս թե՛ հայերը, թե՛ այլ ազգերի մարդիկ իրավիճակի անորոշության մտահոգությունն արտահայտող բացականչական բառեր են արտաբերում: Զվարճախոսություններից մեկում ռուսերենի բացականչական «տակ» (այսպե՛ս)-ը հայերենի «տաք» բառի հետ հարանունություն է ստեղծում, և բժշկի՝ հիվանդին ստուգելուց հետո նման արտաբերմանը հետևում է հարազատների զավեշտալի բացատրությունը:

Տե՛ս Հավելված 7, թիվ 11:

**7.4.** Զվարճապատումներից մեկում էլ զավեշտն ստեղծվում է վրացերեն «կո՛ւտ է» (անդամալո՛ւյծ է) և հայերեն «կուտե-ուտում է» նույնահունչ բայական կաոույցների համանունությամբ<sup>256</sup>:

Տե՛ս Հավելված 7, թիվ 12:

**7.5.** Ֆրանսերենին առնչվող երգիծապատումներից մեկում անսպասելի ծիծաղի պատճառ է դառնում ֆրանսերենի իմացությանը պարծեցող հայի՝ ֆրանսերեն «լա» մասնիկը հայերեն բա-

---

253 Փշտով – հին ձևի մեկհարվածանի ատրճանակ:

254 Зацьмь? – ինչո՞ւ:

255 Զատ չըմ – ոչինչ եմ:

256 Ծիծաղի տոպրակ, աշխատասիրեց դպիր U.S.U. Շահազիզեան, 1892, Թիֆլիզ, տպարան Մովսես Վարդանեանի, էջ 100:

ներին կցելով հաղորդակցվելը և վերջում մատուցողուհու՝ հանկարծակիի բերող պատասխանից հետո պարծենկոտի ծաղրի առարկա դառնալը:

(ԱՄՇՀ)  
Տես Հավելված 7, թիվ 13:

**7.6.** 19-20-րդ դարերում Վրաստանում և հարակից շրջաններում ապրող հայերի մեջ տարածում գտած վրացական *Դալիկո* անձնանունը: Զվարճապատումներից մեկում զավեշտն ստեղծվում է *Դալիկո* անձնանվան և ոուսերեն *դալեկո*<sup>257</sup> բառի հարանունության միջոցով.

*Գյառգյառեցի Դալիկոյին տանում են քանակ: Զինակոչիկներից մեկը ուղեկցող սպային հարցնում է, թե իրենց ո՞ր են տանում: Վերջինս ոուսերեն պատասխանում է.*

— *Դալեկո՛, դալեկո՛...*

*Դալիկոն զարմացած ասում է.*

— *Արս՛, էս շան տղեն որդիա՛ն գիտեր իմ անունը*<sup>258</sup>:

**7.7.** Նամակային կառույցով աշտարակյան զվարճախոսություններից մեկում էլ լեզվի չիմացությունը պատճառ է դառնում զավեշտի առաջացման, քանի որ ոուսերեն *Վրաչ-բժիշկ* բառը ընկալվում է որպես անձնանուն.

— *Մայրիկ ջան, հայրիկ ջան, ոտից վիրավորվել եմ, ընկել եմ գոսպիտալ*<sup>259</sup>, *մի հատ էլ բժշկուհի ունենք, անունն էլ Վրաչ ա*<sup>260</sup>:

**7.8.** Լոռեցի Ռուբենի անեկդոտներից մեկում անսպասելի ծիծաղ առաջացնելու պատճառը ոուսերեն *умница* բառի և հայերեն ժողովրդախոսակցական լեզվում, նաև Լոռու խոսվածքում հարա-

---

257 *Դալեկո* (ոուս.) – հեռու:

258 *Բալայան Գ.*, Լոռվա ժպիտներ, «Վան Արյան» հրատ., Եր., 2002, էջ 28:

259 *Գոսպիտալ* (ոուս.) – գինվորական հիվանդանոց:

260 *Գյուլնազարյան Խ.*, Մեր գյուղի համաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 69:

բերական «ով» դերանվան բացառական հոլովի՝ «ն» հոդով և «է» (ա) օժանդակ բայից կազմված բառակապակցության (ումնից ա - ումից ա) համանունությունն է:

Ռուս անցորդուհու՝ երեխայի հասցեին հնչեցրած հիացական՝ «*Какая умница*»<sup>261</sup> խոսքին հետևում է վրդովված մոր՝ «*Ռուբենիցն ա, ումնից ա*», (տարբերակ՝ «*Իմ մանրիցն ա, ումնիցա*») պատասխանը:

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 7, թիվ 14:

**8.** Մեկ այլ գվարճապատումում անսպասելի ծիծաղի տեղիք են տալիս սիրելականի ծոցին բռնված կնոջ՝ ամուսնուն ուղղած խոսքում ըմբշամարտի ժամանակ օգտագործվող զանցեպ արա<sup>262</sup> և պրիոմ<sup>263</sup> ռուսերեն եզրույթների օգտագործումը:

Տես Հավելված 7, թիվ 15:

**9.** Անեկդոտներում զավեշտի հենք է դառնում օտարալեզու (ռուսերեն) «*Բարուշկա ումերլա*»<sup>264</sup> հեռագիր-ծածկախոսությունը, որը դառնում է արտագնա աշխատանքի մեկնած ամուսնուն ճշմարիտ տեղեկությունը հաղորդելու, կնոջ դավաճանությունը մյուսներից թաքցնելու և «չվարկաբեկվելու» միջոց: Սակայն էլ ավելի զավեշտային ու անզուսպ ծիծաղ առաջացնողը կնոջ անհավատարմությունը հավաստող հաջորդ օրվա հեռագրի օտարալեզու գաղտնագիր-տեքստն է՝ «*Սմերտ պրադալժանոյա*»<sup>265</sup>...

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 7, թիվ 16

**10.** Անեկդոտներից մեկում էլ նախադասության մեջ օտարալեզու բայի արական-իգական սեռերի սխալ կիրառությունն է դառնում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

261 *Какая умница* (ռուս.) – Ինչ խելացի է:

262 *Զացեպ անել* (ռուս.)– սպորտային վարժան՝ կիպ բռնել:

263 *Պրիոմ* (ռուս.) – սպորտային վարժան:

264 *Բարուշկա ումերլա* (ռուս.) – Տատիկը մահացել է:

265 *Սմերտ պրադալժանոյա* (ռուս.) – Մահը շարունակվում է:

— Ավտորուս պրիշլա<sup>266</sup>, — ասում է Երևանի կանգառներից մեկում սպասող լոռեցին՝ փորձելով ընդգծել ոռուսերենի իր իմացությունը:

— Ախպեր ջան, ոչ թե պրիշլա, այլ պրիշյոլ, ավտորուսը ժենսկի ոռո<sup>267</sup> չի, մուժսկոյ ոռո<sup>268</sup> ա, — միջամտում է կողքի երևանցին՝ շեշտելով ոռուսերենի քերականության իմացության իր «առավելությունը»:

— Իհի՛, հա հրմի էտ ո՛վ ա կըռանըմ, տակիցը մըտիկ անըմ,—  
սրտնեղում է լոռեցին:

(ԱՄՇՀ)

Ի դեպ, այս անեկդոտի հրեական տարբերակը առկա է նաև «Анекдоты от одесситов»<sup>269</sup> գրքում՝ կապված գնացքի հետ:

Տես Հավելված 7, թիվ 17:

Թե որն է եղել սկզբնաղբյուրը, դժվար է կանխորոշել: Հայկական տարբերակը մենք գրառել ենք 1980-ականներին, այս գիրքը տպագրվել է շուրջ 20 տարի անց: Ինչ խոսք, նման թեմաները թարգմանվում և հեշտությամբ մի ժողովրդից փոխանցվում են մյուսին: Բայց եթե անգամ հայերն այս անեկդոտը վերցրած լինեին այլ ժողովրդից, այն իր առանձին մասերով ու Լոռու խոսվածքի առանձնահատկություններով այնպես է տեղայնացվել ու մերվել հայկական միջավայրին, որ նրա օտարածին լինելը մի փոքր անգամ կասկածի տեղիք չի տալիս:

**11.** Խորհրդային իրավակարգում շատ ու շատ ապրանքներ «վերջանալուց» հետո վաճառվում էր «տակից»՝ նվաստացնելով ու խեղճացնելով գնորդին: Դրանից էլ վաճառողի արտաբերած **չկա** բառին հետևում էր հաճախորդի՝ **վափշն՝ չկա** հարցումը, և հուստ աստղը ճառագում էր. վաճառողը **տակից** հանում էր և ավել գնով

---

266 **Պրիշլա** (ռուս.) – եկավ:

267 **ժենսկի ոռո** (ռուս.) – իգական սեռ:

268 **Մուժսկոյ ոռո** (ռուս.) – արական սեռ:

269 «Анекдоты от одесситов» (сост. и предисловие Василий Котюшенко), Одесса: Изд-во «Optimum», 2007г, стр. 326.



տալիս հաճախորդին: Եվ այդպես ռուսերեն **вообщее-ընդհանրապես** մակբայը դառնում է արևելահայի խոսակցական լեզվի անբաժանելի մասը: Ահա այդ երևույթին առնչվող **вообщее-ընդհանրապես**-ին առնչվող զավեշտալի մի իրապատում.

1990-ականների սկիզբն էր, ավտոմեքենաների վառելանյութի աննկարագրելի հերթեր էին լինում: Մի օր առավոտյան՝ ժամը 4-5-ի կողմերին, բարձրանում եմ Նորքի մասիվի ճանապարհի բենզոկայան, հույսով, որ հերթ չի լինի, և հանգիստ բենզին կլցնեմ: Բայց 30-ից ավելի մեքենա հերթի էր կանգնած, ես էլ մեքենաս կանգնեցրի ու մոտեցա հետաքրքրվելու՝ արժե՞ն սպասել: Ապակույն հենած էր մի ցուցանակ-գրություն՝ **Բենզին վափշե չկա**: Տրամադրություն չունեի, բայց վափշե բառից առաջացած ծիծաղս մի կերպ զսպելով՝ թսկում եմ ապակին: Քնած աշխատակիցն արթնանում է նեղսրտած ու զարմացած հարցնում.

— Կարդալ չգիտե՞ս, գրած ա, էլի:

— Գիտեմ, բայց ուզում եմ իմանալ՝ վափշե՞ն ինչու ես գրել, գրեիր՝ Բենզին չկա:

Լցակայանի աշխատակիցը սեղանի տակից հանում է մի ուրիշ գրություն ու ցույց տալիս.

— Ըհր, ախպեր ջան, էս էլ քու ուզած Բենզին չկա-ն, բայց ամեն էկող անսպասման էլի հարցնում էր՝ վափշե՞ չկա: Ճարահատ բռնեցի ու գրեցի՝ «Բենզին վափշե չկա», որ էլ չանհանգստացնեն. հանգիստ քնեմ:

(ԱՄՇՀ)

**12.** Զուտ հայկական անեկդոտներ կան, որոնցում օգտագործվող ռուսերեն նախադասությունը թարգմանելը կթուլացնի անսպասելի ծիծաղի թափը: Իսկ լիովին ընկալելու համար քիչ թե շատ ռուսերենի իմացությունը պարտադիր է:

Այսպես, արտագնա աշխատանքի թեմային առնչվող զվարճապատումներից մեկում 5-6 ամիս կնոջը չզանգահարած ու ընտանիքին փող չուղարկած հերոսը երբ վերջապես որոշում է զանգահարել, կինը ամուսնու և ռուս դուրսընկածների հասցեին անեծքների հեղեղ է թափում.

— Արևի թաղեն, հանկարծ հիշեցիր, հա՛, բոզերի ու դախսպե-  
քի հետ ըտեղ սաղ օրը նստած քե՛ք կքաշես, հա՛:

Սա կշրջվի ու կողքի ռուս սիրուհուն կասի.

— Ա տերե գավարիտ<sup>270</sup> ...

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 7, թիվ 18:

**13.** Լեզվական օտարամոլությունը՝ ռուսախոսությունը, ծաղ-  
րող անեկոդոսներից մեկում էլ սպանիչ ծաղրով ու քննադատու-  
թյամբ և ուղղորդող խոսքով է ասելիքը ներկայացվում, եթե այն  
վերաբերում է հային.

Լենինականում մեկը խեղդվելիս գոռում ա.

— Պամագիտե<sup>271</sup>, պամագիտե:

— Իշնի ճագ, ռուսերեն սորվելու փոխարեն լողալ սորվելիր,

— ասում է անցորդներից մեկը:

(ԱՄՇՀ)

**14.** Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-գվարճա-  
խոսությունների համատեքստում քիչ չեն **թարգմանությունների  
հենքի վրա** առաջացած ստեղծագործությունները:

Ամենքս ենք առօրյա կյանքում ունկնդիր-ակնդիրը դառնում  
հայերենից՝ այլ լեզուներ և օտար լեզուներից հայերեն կատար-  
ված թարգմանությունների ժամանակ ի հայտ եկած տարատեսակ  
գավեշտալի իրողությունների, որոնց մասին այլոց վերապատմե-  
լով՝ ձևավորվում է երգիծապատում-գվարճախոսությունների մի  
ինքնատիպ տեսակ: Թարգմանական գավեշտների հենքի վրա  
ստեղծված անեկոդոսների մի մասը, ծիծաղ պարզևելուն զուգա-  
հեռ, մարդկանց հուզող տարբեր խնդիրների է անդրադառնում,  
ծիծաղի պրիզմայով որոշ հարցեր շոշափում ու յուրովի լուսաբա-  
նում և ինչ-որ տեղ էլ ուղղորդող դեր կատարում:

**14.1.** Քանի որ յուրաքանչյուր ժողովրդական դարձվածք  
տվյալ ժողովուրդի լեզվամտածողության ինքնատիպ դրսևորումն

270 Ա տերե գավարիտ (ռուս.) – Քո մասին է խոսում:

271 Պամագիտե (ռուս.) – Օգնեցե՛ք:

է, հետևաբար դրանց համարժեքները երբեմն բացակայում են ուրիշ ազգերի բառապաշարում: Հենց այս հանգամանքն էլ թարգմանության գործընթացում դժվարություններ է ստեղծում, հաճախ էլ գավեշտի վերածում ասելիքը:

19-րդ դարում հրատարակված հայկական անեկդոտների ժողովածուներում հանդիպում ենք նաև հայ ժողովրդական դարձվածքի տողացի թարգմանության հենքի վրա ձևավորված նմուշների.

**ա.** Մի հայ մարդ ռուսի հետ խօսելիս ուզենալով նորան ասել. «քո գլխի արևը գիտենայ», ասաց. «ТВОЙ ГОЛОВА СОЛНИЦЕ ЗНАЕТ»<sup>272</sup>:

**բ.** Մի հայ մի ուսի հետ վիճում էր: Երբ որ ռուսը հպարտացաւ, հայը ուզեց ասել. «դու շատ մեծ օջախի որդի ես», թարգմանեց՝

— Ты очень большой кухни сын?<sup>273</sup>

գ. Շատ հաճախ օտար միջավայրում հայկական ժողովրդական դարձվածքի բառացի թարգմանությունը բազմաթիվ գավեշտալի միջադեպերի տեղիք է տվել: Այսպես, եթե մեկը մի սխալ բան է արած լինում, և ուզում է ասել՝ հասկացա, սխալվել եմ, ժողովուրդը դա արտահայտում է նաև «ք...ք եմ կերել» դարձվածով: Այդ բանբառակ դարձվածի անգլերեն բառացի թարգմանությունը պատուհաս է դառնում Ամերիկա՝ տղային տեսության գնացած մի տարեց կնոջ գլխին:

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 7, թիվ 19:

**14.2.** Անեկդոտներից մեկում ռուսերեն «Բիտ մոժես»<sup>274</sup> ապրանքապիտակը ոչ թե գրական հայերենով է թարգմանված ներ-

---

272 Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանանցի և ընկ. տպարան, 1883, էջ 32:

273 Ծիծաղի տուպրակ, Անեկդոտներ հայ և օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանանցի, 1892, էջ 115:

274 **Բիտ մոժես** (ռուս.) – Կարող է պատահել, լինել, հնարավոր է:

կայանում, այլ շիրակյան խոսվածով: Սակայն զավեշտն ավելի է ընդգծվում, երբ այն նախադասության մեջ է արտաբերվում՝ այդ բառակապակցության կրկնության և բառախառնի շաղախում.

*Լենինականցին մտնում է պարֆումերիայի<sup>275</sup> խանութ, որ «Բիտ մոժետ» դուխի<sup>276</sup> առնի, մտնում է խանութ և վաճառողին հարցնում է.*

— *Կըրնա՞ էղնի օր կրնա էղնի էղնի:*

(ԱՄՇՀ)

**14.3.** Երկրի տնտեսությունը ցնցող երևույթի՝ կրիզիսի<sup>277</sup> բնութագիրը անեկդոտում ներկայացվում է հայկական մեկնաբանությանը՝ օտար բառի ստուգաբանությամբ: Բառամասնատման միջոցով արևելահայերենում **կրել** բայի հրամայական եղանակի ժողովրդախոսակցական կիրառությունը և **ես** դերանվան գրաբարի և արևմտահայերենի հայցական հոլովի համարժեքը հանգեցնում են զավեշտի.

— *Գիտն՞ որ կրիզիսը հայերն են ստեղծել, ու հայերեն բանից ա առաջացել:*

— *Էդ ո՞նց:*

— *Հա. կրի՛ զիս<sup>278</sup>:*

(ԱՄՇՀ)

**14.4.** Ապարանյան շարքի զվարճախոսություններից մեկում զավեշտ է ստեղծվում ռուսերենում **ձուկ** բառի եզակի և հոգնակի թվերի կազմության հարանունային ինքնատիպ ներկայացմամբ.

*Ապարանցուն հարցնում են.*

— *Ձկանը ռուսերեն ի՞նչ են ասում:*

*Բա թե՛ **рыба**.*

— *Բա ձկնե՛ր ոնց կլինի:*

*Ասում ա՛ **Рыбьята**.*

(ԱՄՇՀ)

---

275 **Պարֆումերիա** (ռուս.) – օճանելիք:

276 1950-60-ականներին Խորհրդային Միությունում «Բիտ մոժետ» դուխին ամենահարգի օճանելիքներից էր:

277 **Կրիզիս** (ռուս.) – ճգնաժամ:

278 **Զիս** – ինձ:

**14.5.** Օտարալեզու ցուցանակը ևս անեկդոտներում կարող է դառնալ զավեշտի հենք.

*Մոսկվայում՝ Պուշկինի արձանի մոտ, երկու հայ են կանգնած, մեկն ասում ա.*

— Հետաքրքիր ա՛ սա ինչ ազգ ա:

*Էն մյուսն էլ թե՛*

— *Չես տեսնում՝ տակը գրած ա անուն ազգանունը. «Գագոն գասեյան»:*

— *Ճիշտն ասած՝ մինչև հիմի չգիտեի, որ սա էլ ա հայ, — խոստովանում է գրուցակիցը:*

(ԱՄՇՀ)

**14.6.** Հայկական Փանոս անձնանվան և ոուսերեն *Панос*-փորձում հիվանդության համադրությամբ հերոսի՝ *Нет, я Панос, а он Арутюн* խոսքը դառնում է 19-րդ դարավերջին տպագրված գվարճախոսություններից մեկի զավեշտի առաջացման հենքը<sup>279</sup>:

Տես Հավելված 7, թիվ 20:

**14.7.** Հետաքրքիր կառուցվածքով՝ խաղ-առաջարկության տեսքով, ներկայացված ոուսերեն նախադասությունը հայերեն թարգմանելով և արագախոսությամբ արտաբերելով ևս անսպասելի ծիծաղ է առաջանում:

Այսպես, շփոթեցնելու և անսպասելիություն ստեղծելու համար առաջարկվում է ոուսերեն *Սոլ նետու, չտօբի կուշալ*<sup>280</sup> նախադասությունը թարգմանել հայերեն և արագ-արագ մի քանի անգամ կրկնել: Թարգմանելուց հետո արագ-արագ ասելիս բարդ նախադասությունը վերածվում է **Աղ չկա ոո ուտեմ** զավեշտալի բամբասակ պարզ նախադասության: Ինչ խոսք, նման գվարճախաղերը հատուկ էին միայն բարձր տարիքային խմբի երեխաների մտածողությանը, քանզի ոուսերենի պարտադրված ուսուցման պայմաններում խորհրդահայ բարձր դասարանցի երեխաների մեծ մասը

279 Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի և ընկ. տպարան, 1883, էջ 36:

280 **Սոլ նետու, չտօբի կուշալ** – Աղ չկա, որ ուտեմ:

կարողանում էր հեշտությամբ կարդալ և թարգմանել նման պարզունակ նախադասություններ:

**14.8.** Հեռագրային տեքստերի՝ հայերենից ռուսերեն կատարած թարգմանությունները ևս զավեշտի են վերածվում.

«Աչքդ լույս, կնիկդ պատկել ա, տղա յա բերել: Քո Սանդուխտ» տեքստը ռուսերեն թարգմանվում է՝ «Գլազա սվետ, ժենա լեժիտ, մալչիկ բեժիտ: Տվայա լեսնիցա<sup>281</sup>»:

(ԱՄՇՀ)

**14.9.** Կիլիկիահայոց բանավոր ստեղծագործություններում տեղ են գտել ոչ միայն հայերենի և այլ լեզուների, այլև ֆրանսերենի և թուրքերենի փոխհարաբերությունների ժամանակ ի հայտ եկած զավեշտալի դրսևորումներ: «Յըլդըզե պալատին վեզիրը» մանրապատումում սուլթանի վեզիրի ֆրանսերեն ներս հրավիրելու «բարեկիրթ» խոսքը բամբատակ՝ «մտեք իմ հետույքս»<sup>282</sup> արտահայտություն է ստացվում՝ անսպասելի ծիծաղի առաջացման տեղիք տալով:

Տե՛ս Հավելված 7, թիվ 21:

**14.10.** Արտասահմանյան շրջագայության մեկնելու համար Խորհրդային Հայաստանում համապատասխան փաստաթղթերը պետք է լրացվեին ռուսերեն: Անեկդոտի հերոսներից մեկի՝ Պապին Հարությունիչի հետ կապված բազմաթիվ անեկդոտներ են ստեղծվել, որոնցից մեկն էլ առնչվում է նրա արտասահման մեկնելու փաստաթղթերը լրացնելուն: Չնայած Պապին Հարությունիչը հանրապետությունում բարձր պաշտոններ էր զբաղեցրել, ռուսերեն կիսատ-պոատ գիտեր, և նրա փաստաթղթերը լրացնում էր բժշկուհի կինը: Կինը կարդում է ռուսերեն գրածը՝ անուն, ազգանուն, հայրանուն: Ամուսինն ասում է՝ գրա՝ Հայրապետյան Պապին Հարությունի: Ծննդավայրը՝ գրա՝ Քյավառ: Կինը շարունակում է

281 **Լեսնիցա** (ռուս.) – սանդուղք, աստիճան:

282 **Սվազլյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 103:

ռուսերեն կարդալ՝ պոլ<sup>283</sup>: Պապին Հարությունիչն ասում է՝ գրա՝ պարկետնի<sup>284</sup>:

**14.11.** Զվարճախոսություններից մեկում էլեկտրասայան մոտ հանդիպելու համար կիսատ-պռատ ռուսերեն իմացող հայ տղան այսպես է ժամադրվում ռուս աղջկա հետ. *Յա ստոլբա, տի ստոլբա...*

**14.12.** Իսկ «Աման թելո, թելո ջան, թելո» երգի բառերը հայ տղան ռուս աղջկան թարգմանում է. «*Պաստոդա*<sup>285</sup> *նիտկա*<sup>286</sup>, *նիտկա ջան, նիտկա...*»:

**14.13.** Թերևս ամենագավեշտալին 1990-ականների վերջին հայկական հեռավոր գյուղերից մեկի՝ Սանահինի վանական համալիրի մուտքի մոտի հնամաշ ֆաներաներով<sup>287</sup> կցած-մցած մի հուշանվերների խանութ-ավերականցի դռան վրայի գրությունն էր՝ ըստ երևոյթին օտարերկրյա զբոսաշրջիկների ուշադրությունը գրավելու համար անգլերեն «**բաց է**»-ն հայերեն տառերով էր գրված՝ **ՕՓԵՆ...**

**15.** Ստորև ներկայացնում ենք նաև 1970-90-ականներին հայ տատիկ-պապիկների բառապաշար մուտք գործած ու աղավաղված օտար բառ-բառակապակցությունների մի փունջ՝ իրենց բացատրություններով, որոնք այժմ էլ հիշվում ու զվարճացնում են երիտասարդներին.

**ա.** «Օվչեստի միչին խայտատակ էլա»: **Օվչեստ**-օբշեստվո: Հասարակության մեջ խայտատակ եղա: (Լոռի, Շամուտ)

**բ.** *Կանուռնի* – իհարկե: Ռուսերեն «**կանեչևո**» բառի աղավաղված ձևն է: (Լոռի, Շամուտ)

---

283 **Պոլ** (ռուս.) – սեռ:

284 **Պարկետ** (ռուս.) – մանրահատակ:

285 **Պաստոդա** (ռուս.) – աման:

286 **Նիտկա** (ռուս.) – թել:

287 **Ֆաներա** – նրբատախտակ:

**գ.** «Տղես Մասկվա քեզմենտ ա»: **Բեզմեն** – զսպանակավոր կշեռք: Ուզեցել է ասի՝ բիզնեսմեն՝ գործարար է: (Լոռի, Շամուտ)

**դ.** «Կերենի մատերի»: – 1950-ականների սկզբին բանակից քերած ոռուներեն հայիոյանքի աղավաղված դրսևորումն է գյուղ հասցվել: (Լոռի, Շամուտ)

**ե.** «Ժավելի արկեստրները վե կալ գնա ժավել բի»: **Արկեստր** – կանխատր<sup>288</sup>: (Վանաձոր)

**զ.** «Ամիրկեն վիզ ա տվել – Ամերիկան վիզա<sup>289</sup> է տվել: (Վանաձոր)

**է.** Սյուսկի – ինչ որ է: (Երևան)

**ը.** Փուջիկը – ֆուջիկա՝ պարսկական նավթավառ: (Երևան)

**թ.** «Մարետի ժամն ա, հանկարծ Աշոտս Մարետի ճանգը չընգնի՞»: **Մարետի ժամ** – պարետային ժամ: (Երևան)

---

288 **Կանխատր** (ոռու.) – հեղուկի աման:

289 **Վիզա** (անգլ.) – հրավեր



# ՀԱՎԵԼՎԱԾ 7

## 1

Օր մը երկու հոքի (հայ) կերթան կոր, ենիչերի մը քովերսնէն կասնի: Ան հայը մէկալին կըսէ քի «Սա ենիչերիին խալփախին թէքմէ մը եռլեշտիրմիշ ընեմ քի խօսխօճամանս խալփախը յօխուշ աշաղի թէքէր մէքէր գա»: (Սա ենիչերիին աղակին այնպիսի մի քացի տամ, որ ահագին կղակը գառիվայրից ցած գլտոր գա)»:

Ենիչերին կը հասկնա, խըլըճը կքաշէ, գլօխը կկտորէ կմեռցունէ:

Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանասիրություն,  
ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 174:

## 2

### Մարտը հայերէնը

Գում Գարունէն Ղալաթիա թուրք մակոյկավարներ ճամբորդ կը փոխադրեն: Կը պատահի որ, ցուրտ ձմեռ օր մը, Հայ կին մը թերևս Պոլսեցի, իր փոքրիկը գիրկը կը նստի, կը պայրզի մակոյկի կրակարանին քով և կը ճամբորդէ:

Ինչպէս կը պատահի, մակոյկը յանկարծ կը ցնցուի, կրակարանը կը շրջի և կրակը կը թափի փոքրիկին ոտքի վրան:

— Քս, Հասան աղա, — կպոռա կինը, — մանդալը տէվրիվմիշ եղաւ, չոճուխիս այախները եանմիշ եղան:

— Գատըն, նէ օլտու, — կը հարցնէ նաւավարը:

— Քս, գայրքճի, սէնտէ մի Հայճա պիլիրսին:

— Գատըն, պունըն նէրէսի Հայճա:

— Հս, իրան, — խելքի կուգայ կինը, — գմանդալն պիտի ըսէի:

Հայկական գրոյցներ. առակներ, առածներ, մանրավէպեր,  
գուարճալի ասացուածքներ և իմաստուն խօսքեր,  
պատրաստեց Կարապետ քահանայ Գայֆատեան,  
Լոս Անջելես, Պօզանեան տպագրութիւն, 1944, էջ 9:

## 3

Այնթապցի, Քիլիսցի և Մարաշցի հոգևոր կիներ հաւաքոյթի մը կ'երթան՝ ամէն մէկը Ս. Գիրք մը թնին տակ: Աղօթածողովէն ետք խրախճանքը կը սկսի դասական եղանակով: Ս. Գիրքը թնի տակ՝ կ'ելլեն պարելու, կ'ըսեն.

— Աման Ալլահըմ, կինասահ եագմա: (Ով իմ Աստուածս, մեղք մի՛ գրեր:)

Յանկարծ երաժշտութիւնը կը փոխուի, կը դառնայ տաք ու եռանդուն: Պարը կը դառնայ նոյնքան տաք: Կիները Ս. Գիրքերը մէկիկ-մէկիկ կը նետեն մէկդի ու կ'ըսեն.

— Իստէր եագ, իստէր եագմա: (Կ'ուզես՝ գրէ, կ'ուզես՝ մի՛ գրեր)

Միջգաւառական անեքթոններ,  
Յակոբ Չոլաքեան, Բ տպագրութիւն, 2005, Հալէպ, էջ 92:

#### 4

Բոլորան գիւղից մի հողագործ գնում է գիւղի հիւսիսային կողմում գտնուող և Փունստան կոչող անտառիկից փայտ կտրելու:

Այդ միջոցին գալիս է մօտից անցնելու դրացի Ազնաուլ գիւղից մի թուրք գիւղացի և նրան մօտենալով հարցնում է.

— Օլան սան քիշի (այ մարդ դու ով ես), գիւղացին թուրքերէն չհասկանալով ասում է.

— Բաբիս դրկէլ ամ իշի:

Թուրքն ասում է.

— Օլան մագեար սան դալ օ դիւանա (այ մարդ, միթէ դու իսենթ ես):

Հայը պատասխանում է.

— Հաստերից ամ կդրում դիմանայ:

Թուրքը կրկին ասում է.

— Օլան սան փոխ եիրան (այ մարդ, դու ք... ես ուտում):

Գիւղացին զարմացած ասում է.

— Փղարսաղը (հերը շուն դարձածը) ինչ գիդի, որ ես էսօր փոխինդ ամ կիրէլ:

Մինասեան Լ., Գիւղական բառ ու բան (Փերիա գաւառ),  
Նոր Ջուղա, Սք. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 364:

#### 5

### Կնիկ մը կ'ուզեմ

Կիլիկիոյ կոտորածէն յետոյ շատ մը հայեր օրինաւոր կամ ապօրէն ճամբաներով Թուրքիա կոչուած դժոխքէն խոյս տուին և գացին Միացեալ Նահանգներ: Ընդհանրապէս երիտասարդներ էին գացողները և շատ քիչեր տեղեակ էին անգլերէն լեզուի: Այդ

տզիտութիւնը ի՛նչ զուարթաբանութիւններ առաջ բերած է Էլիս Այլենտի մուտքի քննութիւններուն առիթով...:

Նման պարագայ մը ունեցած է աշակերտներէս մէկը Պր. Նազար Սթամպուլեան, որ 1911-ին Ամերիկա մեկնած էր Յակոբ եղբորը մօտ:

Պր. Յակոբ օր մը դանակի պէտք կ'ունենայ և տոլար մը տալով եղբորը՝ կը դրկէ զայն որ մօտակայ խանութէ մը հատ մը գնէ ու բերէ, չմոռանալով սորվեցնել ըսելիքը. *I want a knife* (դանակ մը կ'ուզեմ):

Նազար՝ եղբորը ըսած անգլերէն բառերը մտովի կրկնելով՝ կ'ելլէ ճամբա: Ծանոթի մը կը հանդիպի, քանի մը վայրկեան խօսքի կը բռնուին և երբ խանութ կը հասնի մէկ գիրի տեղափոխութեամբ նայֆ բառը *վայֆ* եղած՝ կ'ըսէ վաճառորդ օրիորդին.

— *I want a wife* (կնիկ մը կ'ուզեմ):

Օրիորդը կը կարմրի և շփոթահար ձայն կու տայ ընկերուիին: Նազար կարծելով որ ան է դանակ վաճառողը, միամտօրէն կը կրկնէ խնդրանքը. *Այ ուոնթ է վայֆ* (կնիկ մը կ'ուզեմ):

Աղջիկներուն միասնաբար արձակած խնդուքը միայն կը զգացնէ Նազարը թէ սխալանքի մէջ է և ցուցադարակէն դանակը ցոյց տալով.

— *I want this* (սաիկա կ'ուզեմ) կ'ըսէ ու դանակը գնած տուն կը դառնայ, պատմելով եղբորը ինչ որ պատահած էր:

Երբ եղբորը լուսաբանութիւնը կը լսէ, Նազար ինքն ալ կը խնդայ անպատշաճ կաֆին վրա, զոր ըրած էր տզիտաբար:

Պատմութիւն Անթէպի հայոց , Գ հատոր,  
Խմբագիր՝ Երուանդ Պապայեան, Լոս Անջելես, 1994, էջ 380:

## 6

Լոռու մարզպետը Ամերիկայի դեսպանին մարզի տեսարժան վայրերը ցոյց տալուց հետո տանում է Օձուն: Օձունի գյուղապետն էլ ոչ թէ էրկու կողմանի, այլ շրջանաձև էր ուտում, նախօրոք տեղեկացվել էր Ամերիկայի դեսպանի գալու մասին և խոզի չալաղաջներով մի լավ խորոված էր պատրաստել ու սպասում էր հյուրերի գալուն: Որ նստում են հացի, դեսպանը նկատում է գյուղապետի աննկարագրելի ախորժակով ուտելը և թարգմանչի միջոցով զգուշացնում է խոլեստերինի վտանգավորության մասին.

— Խորովածի մսում խոլեստերինի քանակը շատ է բարձր, — դեռսպանի խոսքը թարգմանաբար փոխանցում է թարգմանչուհին:

— Ամերիկայի դեսպանին դու ասա, — դիմում է գյուղապետը թարգմանչին, — որ Օձունի գյուղապետը խոլեստիրին շատ ա սիրում: (ԱՄՇՀ)

## 7

Գինուսի տղան ֆրոնտից նամակ է գրում մորը. «Մամա ջան, պատերազմը վերջացել է, մայիսի վերջերին գալու եմ, հետս էլ մի նեմկա եմ բերելու»:

Մայրը «նեմկա» բառը «կեպկա» է հասկանում և պատասխան նամակում գրում է. «Որդի՛ ջան, թե կարող ես, մեկն էլ հայրիկիդ համար բեր»:

Մարգարյան Ա., Եկեք մի քիչ գվարճանանք,  
Զրույցներ և անեկդոտներ, Եր., «Չար» ֆիրմա, 1992, էջ 5:

## 8

Պատերազմի տարիներն էին, տղամարդիկ ճակատում էին, թիկունքի ամբողջ ծանրությունը կանանց ու տարեց տղամարդկանց ուսերին էր: Շամուտեցի կանայք հանդը խոտհավաքի են գնում, բրիգադը հանդը տանողը վիրավորված ու բանակից զորացրված կուսակցության քարտուղար լորուտեցի Մելիք Ստեփանյանն էր: Շինականց Ալեքսոյի կնիկ Սիրանուշը, փոցխը ուսին, մտքի հետևից ընկած, հետ էր ընկել խմբից: Մելիքը հետ ա դառնում ու դիմելով Սիրանուշին, ասում է.

— Բեգոմ, բեգոմ, Սիրանուշ մոքիր, ուշանում ես:

— Բեգոմը կենա լավօսալիդ ըոխրմը, ըսքան տարեն մարթուկնիկ ենք, իմ մարթն ինձ մի հետի բեգոմ չի ասել, հըմի դու էկել ինձ բեգոմ ես ասըմ, — սրտնեղած պատասխանում է Սիրանուշ մոքիրը: (ԱՄՇՀ)

## 9

Երանուհին Նոր տարուն գնաց ախշըկա տուն, էկավ: Նառան հարցնում ա՝

— Ա՛յ մամ, ո՞նց էր նըհանց սեղանը, դիրըդ էկամ, ի՞նչ կար:

— Հս՛, ախշիկ ջան, շատ ընտիր էր, մանդարին էր, էս կար, էս

կար, — վերջըմ էլ թե, — թագա կարբաստ ա դուս էկել, է՛, որ հըմի երշիկ են ասըմ, նրանից էլ կար: (Խոսքը ապխտած երշիկի մասին է)  
(ԱՄՇՀ)

## 10

Ռուսը մի հրացան տուեց ուստայ Համբարձումին, որ մաքրի: Նա պատուէրը չ'հասկանալով՝ հրացանը մէջ տեղից կտրեց, երկու ատրճանակ շինեց:

Ստանալու ժամանակ ռուսը տեսաւ ու չարացած ձայն տուեց.

— ЭТО ЧТО?<sup>290</sup>

— Մաչէն<sup>291</sup> կտրած էրկու «փշտով»<sup>292</sup>, — պատասխանեց Համբարձումը:

— Зачьём?<sup>293</sup>, — աղաղակեց ռուսը՝ բոլորովին կրակ կտրած:

— Քեզ հով ան ասալ, թա ես *գատ* չըմ<sup>294</sup>. պա քուռացալըն, տեսնամ չըն, վէր եքքեա<sup>295</sup> ուստայ ըմ ըստեղ նստանձ:

Ծիծաղի տոպրակ, Անեկդօտներ հայ և օտարների կեանքից,

Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահագիզեան,

Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 36:

## 11

Բժիշկը ուշադրությամբ քննում է հիվանդին ու կանգնելով՝ սեւյակում մտամոլոր ետ ու առաջ գնալով ասում է.

— Տաասկ...

— Տաք ո՞րն ա, բժիշկ ջան, պեծի<sup>296</sup> պես էրվըմ ա, — մանրամասնում է հիվանդատերը:

(ԱՄՇՀ)

---

290 ЭТО ЧТО? – Սա ինչ է:

291 Մաչէն – միջից:

292 Փշտով – հին ձևի մեկհարվածանի ատրճանակ:

293 Зачьём? – ինչո՞ւ:

294 Զատ չըմ – ոչինչ եմ:

295 Եքքեա – մեծ, ահռելի, ահագին:

296 Պեծ – կայծ:

## 12

Ծալկեցի հայը փոքրիկ սայլակով մի անդամալոյծ պտըտեց-նում էր Թիֆլիզու փողոցներում և ողորմութիւն էր հաւաքում: Մի հարուստ տնից ողորմութիւն խնդրելիս տանտիկինը խղճալով հարցրեց.

— Դրա ինչն է ցաւում, «կո՞ւտ» է (վրացերէն անդամալոյծ):

— Հրամերիս, աղջիկ-պարոն, — պատասխանեց Ծալկեցին՝ կածելով, թէ հաց ուտելու մասին է հարցնում, — կուտէ, ինչպէս չի ուտի:

Ծիծաղի տոպրակ, աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահագիզեան,  
Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 100:

## 13

Երկու ընկեր Փարիզ են գնում ու որ հաց ուտել են ուզում, նրանցից մեկը թե՛

— Լսի՛, Երևանում էդ դու չէի՞ր գլուխ գովում, թե լավ ֆրանսերեն գիտես: Դե հիմա կմտենք ռեստորան, շտրիքդ ցույց կտաս:

Մրանք մտնում են մի ռեստորան, մատուցողը մոտենում, ֆրանսերեն ինչ-որ բան ա ասում, էս պարծենկոտ ընկերը մատուցողին «ֆրանսերեն» պատվերներ ա տալիս՝ «լա խորոված», «լա հաց», «լա արաղ», «լա հանքային ջուր»... Իսկ նա մոտը գրում ա ու գնում: Քիչ հետո գալիս ա ու սրա պատվիրածները բերում շարում ա սեղանին:

Էս գլուխգոլման ընկերը, ինքն իրենից գոհ, խնդմախայով ընկերոջն ասում ա.

— Հը՛, հիմի համոզվեցի՞ր՝ ինչ լավ ֆրանսերեն գիտեմ:

Մատուցողուհին էլ չի համբերում, հետ ա դառնում էս գլուխգոլմանի կողմն ու ասում ա.

— Լսի, թե որ ես հայ չէի լինի, նոր կտեսնեիք ձեր վիճակը. էտ քու պատվիրած «լա խորովածի», «լա հացի», «լա արաղի» ու մնացած բաների փոխարեն հորըս ք...քն էիք ուտելու...:

(ԱՄՇՀ)

## 14

Լոռիում մի ռուս կին, տեսնելով մոր ձեռքը բռնած Էրեխին, քնքշանքով ասում է.

— Какая умница.

— Իմ մարթիցն ա, ճմնից ա, — չոր ու վիրավորված տոնով պատասխանում է էրեխի մերը:

(ԱՄՇՀ)

## 15

Մարդը տուն ա գալի տենըմ՝ իրանց տեղաշորընը կնիկը՝ սիրեկանի հետ: Կըտաղած վրա յա պրծնըմ, սիրեկանին բռնըմ, ու սկսըմ են քաշքշիլը: Թե ոնց ա ըլըմ, սիրեկանը մարդուն տակն ա քցըմ ու վզիցը բռնած՝ սեխմըմ ա: Կնգա մեխկը գալիս ա, կըռանըմ ա ու մարդին թե՛

— Ա՛յ մարդ, զա՛ցեպ արա, զա՛ցեպ արա:

Մարդը գլուխը մի կերպ դըբա կնիկն ա անըմ ու ասմա.

— Տիրոնչըտ մերը..., սա ինչ գոռձ ուներ ծոցիդ, որ հըմի էլ տա-կիցը դուս գալու հըմար պրիումներ ես սըվորացնըմ:

(ԱՄՇՀ)

## 16

Մեկը խոպան գնալիս ընկերներին ասում ա.

— Տղերք, էտա ես խոպան եմ գնըմ, կնգանս վրա կասկածում եմ: Աչկներդ վրեն ըլի, հենց որ մի բան կտենաք, վռագ հեռագիր կտաք: Բայց որ բրիգադի տղերքը չիմանան, հեռագիրը էսպես կտաք. «Բարուշկա ումերլա», ու ես գլխի կընգնեմ, վեր կկենամ կգամ...

Գնում ա խոպան, դեռ գործը չըսկսած՝ հեռագիր ա ստանում. «Բարուշկա ումերլա»:

Բրիգադի անդամներն ասում են՝

— Տատդ մեռել ա, բա չես գնու՛մ:

Ասմա.

— Էլ դժվար թե հասցնեմ, ուշ ա, յոթին կամ քառսունքին կգնամ:

Հաջորդ օրը մի հեռագիր էլ ա ստանում. «Մներտ պրողոլժա-ետայա»...

(ԱՄՇՀ)

## 17

Տարեց օղեսուհին վագում է կայարան:

— Она уже ушла, — ինքնիրեն հուսահատ ասում է նա:

- Ո՛վ է այդ она-ն, — հարցնում են:
- Դե գնացքն, էլի:
- Բայց գնացքը он է, ոչ թե она:
- Օ՛ֆ, ինչ է, գնացքի ակների արանքները նայել ե՞մ, որ ճիշտը ասեմ:

«Анекдоты от одесситов» (сост. и предисловие Василий Котюшенко),  
Одесса: Изд-во «Optimum», 2007г, стр. 326.

## 18

Քյավառցին խոսյան ա գնում, մի 5-6 ամիս հետո որոշում ա կնգան գանգի, գանգում է, ասում է.

— Վարդուշ, իմա՛լ ես:

Կնիկն ասում է.

— Արևո թաղեմ, հանկարծ հիշեցիր, հա՛մ, բոզերի ու դախալեքի հետ ըտեղ սաղ օրը նստած քե՛ֆ կքաշես, հա՛մ:

Սա շրջվում է, կողքի ոսին կասե.

— Ա տերե գավարիտ...

(ԱՍՇՀ)

## 19

Ամերիկա՝ տղային տեսության գնացած մի հայ տարեց կին, բարձրահարկում ծվարելուց ձանձրանալով, իջնում է փողոց՝ մի քիչ ման գալու և տեսնելու, թե էդ Ամերիկան ինչ է, որ հետ գնալուց հետո մոտիկներին պատմի:

Առավոտ ծեգին նա իջնում է ու փողոցը հատում ոչ անցումով: Ոստիկանը սուլում է, բայց սա, բանի տեղ չի դնելով, շարունակում է մեքենաների երթևեկը խառնելով անցնել: Ոստիկանը մոտենում և սկսում է անզլերեն ինչ-որ բան ասել: Էս կինը բան չի հասկանում, ոստիկանը ձեռքերով է փորձում բացատրել, սակայն՝ ապարդյուն:

Տարեց կինը գոռալով ոստիկանին անընդհատ ասում է՝ «Հա, լավ, հասկացա, քաք եմ կերել, անցել եմ»: Ոստիկանը, բան չհասկանալով, շուրջն է նայում և անցորդներից մեկին օգնության է կանչում: Պարզվում է՝ էդ անցորդը հայ է լինում ու թարգմանում է ասածը: Ոստիկանի գանգից հետո քիչ անց շտապ օգնությունն է գալիս, ու էդ կնոջը տանում են...:



Ոստիկանը բառացի էր ընկալել դարձվածքը և օգնության էր կանչել համապատասխան ծառայություններին...

(ԱՄՇՀ)

## 20

«Փանոս» անունով մի մարդ բժիշկ հրաւիրեց իր հիւանդ եղբոր համար:

— Что у вас?<sup>297</sup>, — հարցրեց բժիշկը:

— В живот все гр-гр делает<sup>298</sup>, — պատասխանեց Փանոսը:

— Значит понос!<sup>299</sup>, — ասաց բժիշկը:

— Нет, я Панос, а он Арутин<sup>300</sup>, — պատասխանեց Փանոսը:

— Хорошо, но у него понос<sup>301</sup>, — կրկնեց բժիշկը:

— Нет!, — պատասխանեց հիւանդի եղբայրը, — он Арутин, Панос я!<sup>302</sup>

Անեկրօսներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ. Վարդանեանցի և ընկ. տպարան, 1883, էջ 36:

## 21

### Յրդրճե պալատին վեզիրը

Ֆրանսիայի ամբաստորը՝ դեսպանը, կուգա Պոլիսի Յրդրճե պալատը, որտեղ սուլթան Համիդը կապրեր, որպեսզի իր լեթօրը դր քրուայանսը, այսինքն՝ իր իսկությունը հաստատող փաստաթուղթը ներկայացնե սուլթանին, որ ան ալ վավերացնե այն: Ամբաստորը սալոնը նստած կսպասե, որ սուլթանը իրեն ընդունե: Սուլթանին վեզիրը կուգա՝ ներս հրավիրելու. իբր թե ֆրանսերեն գիտե, կըսե.— Անթրն մոն դերյեր, — որը, եթե թարգմանվի, կըլլա՝ մտեք իմ հետույքս:

Սվազլյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 103:

---

297 Ինչ է եղել

298 Փոքս գրոգրում է:

299 Ուրեմն փորլուծ ես:

300 Ոչ, ես Փանոսն եմ, իսկ նա՝ Հարությունը:

301 Լավ, բայց նա փորլուծ է:

302 Ոչ, նա Հարությունն է, ես՝ Փանոսը:

## ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

### 8.1

#### ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾՔԸ ԵՎ ԱՐՏԱՅԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՁԱՎԵԾՏԻ ՅԵՆՔ

**1.** Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտի հենք են դառնում բառերի վերախմբաձևերով կայուն կապակցությունները, այդ թվում նաև՝ առած-ասացվածքները: Բավական մեծ քանակ կազմող նման ստեղծագործություններում փոխաբերաբար ասված խոսքը՝ կոռ ու անտարանջատելի դարձվածքները, զանազան հնարանքներով են ներկայանում, շատ հաճախ բացվում՝ արտահայտած ուղիղ իմաստներով խորացնելով զավեշտը: Բերենք ասվածը հավաստող օրինակներ.

**1.1.** Մի բան պատմելիս երբ բառ է մոռացվում, ժողովուրդը օգտագործում է **լեզվի ծերին** դարձվածքը՝ ակնարկելով, թե ուր որ է, կհիշի: Հենց այս պատկերավոր արտահայտությունն էլ հիմք է հանդիսացել վանեցիների «Տաճկերեն կիտցող գեղական» զվարճապատումի ստեղծման:

Մի քանի ամիս Ստամբուլում եղած վանեցի վերադառնալուց հետո ընկերների մոտ պարծենում է տաճկերենի իր իմացությամբ ու թվարկում սովորած բառերը, ապա կարկամած մի պահ կանգ է առնում ու դարձվածքով արտահայտելով իրավիճակը՝ ասում.

*...Պամ էլ կա՝ վեր **լեզվիս ծերին**, չեմ կանա խանե: Խա, քյաքին կասեն փոխ:*<sup>303</sup>

Տե՛ս Հավելված 8.1, թիվ 1:

Ինչ խոսք, դարձվածքին հաջորդած բառն է ունկնդրին պարտադրում, որ ուղիղ իմաստով ընկալվի բառակապակցությունը և զավեշտալի իրավիճակի մեջ զգի արտաբերողին:

<sup>303</sup> Ծիծաղում են վանեցիները, Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 157:

**1.2.** Զվարճախոսություններից մեկում զավեշտի ստեղծման միջոց է դառնում **շան տեղ չդնել** (հաշվի չառնել, բանի տեղ չդնել) դարձվածքը, որի կիրառության ժամանակ ժխտական խոնարհմամբ արտահայտված նախադասությանը հակադարձվում է խտասկցի՝ դրական խոնարհմամբ անսպասելի ծիծաղ հարուցող պատասխանը.

*Ամուսինը՝ կնոջը.*

— Ա՛յ կնիկ, երևում ա՝ ինձ հեջ շան տեղ չես դնում, այ:

— Ո՞վ ասեց, շատ էլ լավ դնում եմ<sup>304</sup>:

**1.3.** Մեկի հանդեպ անսահման զայրույթը երբեմն ժողովուրդն արտահայտվում է **շներին կապեցին, ինձ բաց թողին** դարձվածքով: Այս ժողովրդական կայուն բառակապակցությունը հիմք է հանդիսացել առօրյա կյանքին և քաղաքական խնդիրներին առնչվող մի քանի երգիծական մանրապատումի ստեղծման:

Դրանցից մեկի կիրառությանը հանդիպում ենք 19-րդ դարի երկրորդ կեսի ժողովածուներից մեկում: Ստեղծված իրավիճակից բխող զայրույթն այստեղ ուղղվում է Աստծո ու նրա «անարդար դատաստանի» դեմ, ինչն էլ դառնում է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը.

*Ձմեռը ճանապարհորդը մտաւ մի գիւղ, շները վրայ թափվեցան, և նա քարի ձեռը տուալ, որովհետև սառած էին, չ'կարողացաւ պոկել գետնիցը, ասաց.*

— Աստուած, է՛ս է քո արդար դատաստանը. քարերին կապում ես, շներին բաց թողնում<sup>305</sup>:

Ղարաբաղյան տարբերակում բարկությունը թափվում է գյուղերից մեկի բնակիչների վրա.

---

304 **Բալայան Գ.**, Միամիտ մտքեր: Լոռվա ժպիտներ, «Վան Արյան» հրատ., Եր., 2002, էջ 3:

305 Անեկդոտներ, զուարճալի զրոյցներ, համառոտ դեպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 157:

— Ա՛ շան տղեք, քարերը կըպոտալ ըք, շըներին պեց թողա՛լ<sup>306</sup>:

Տեն Հավելված 8.1, թիվ 2:

Ուշ շրջանում այդ տրտունջն ու բողոքն արդեն կոնկրետանում է. նույն դարձվածքի հենքի վրա ստեղծված գվարճապատումում հայրենադարձված հայի կուտակված անսահման զայրույթն արդեն ուղղված է խորհրդային երկրի ու կարգերի դեմ.

*Շունը հարձակվեց մի հայրենադարձի վրա: Հայրենադարձը խառնվելով իրար՝ ուզում էր գետնի վրայից քար վերցնել, որը սառած էր և տեղից չպոկվեց:*

*Հայրենադարձը զայրացած բղավեց.*

— Այս ի՛նչ երկիր է, տո՛, շներին բաց կթողնին, քարերը կկապեն<sup>307</sup>:

**1.4.** Զվարճախոսություններից մեկում հարադիր բայով կազմված «**էփող-թափող**» (իմա՛ ամեն ինչ անող, աշխատասեր) դարձվածքը մասնատվում է և ուղիղ իմաստով ընկալելի դարձնելով՝ զավեշտ է առաջացնում՝ դրական բնութագրումը հանգեցնելով բացասականի.

*Գնրմ են Ռուբենի ախշըկան ուզելու: Տղի հերը հարցընրմ ա.*

— Ռուբեն դայի, ախշիկըդ էփել-թափել գիղի՛:

— Ա՛յտա, ո՛նց չգիղի. էփել էլ գիղի, թափել էլ:

(ԱՄՇՀ)

**1.5.** Ավանդական հարսանեկան ծիսակարգի կարևոր տարրերից մեկը նորահարսի կուսությունը հավաստող «**կարմիր խնձորի**» հետ կապված արարողակարգն է եղել: «Կարմիր խնձոր» դարձվածքը, որպես աղջկա կուսությունը «վավերացնող փաստաթուղթ», այսօր էլ երգիծապատում-զվարճախոսություններում ոչ միայն շա-

306 Բաքվի հայոց բանահյուսությունը, Կազմեցին Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 233:

307 Պատում և կատակում էր Գալուստ Գալստյանը, հավաքել և կազմել է Լեւնա Անթառանյանը, Եր., «Վերնատուն» հրատ., 1994, էջ 11:

րունակում է գոյատևել, այլև նորովի մեկնաբանություններով անսպասելի ծիծաղ հարուցել ու զվարճացնել երիտասարդներին:

Կուսությունը չպահպանածին անցյալում, գրեթե առանց բացառության, հետ էին ուղարկում հորանց տուն: Ստորև բերվող զվարճապատումում դարձվածքը բացվել է՝ պատկերավոր երկիմաստ ներկայացնելով ստեղծված իրավիճակի պատճառահետևանքային կապը.

*Հըրասնքի էքսը<sup>308</sup> ախշիկ չըլելու հըմար հարսին դուս են անըմ: Սա բոխչեն<sup>309</sup> կապած որ մտնըմ ա իրանց գեղը, գեղամիչըմը հըվաքված ջահելինին ձեռառնելու հըմար հարցընըմ են.*

— *Ախշի, էդ ուրիշ մարդ չկամր, որ «կարմիր խնձորըդ» դուն ես բերըմ:*

*Սա էլ թե՛*

— *Ձեններդ կտրեք, անամոթներ, թողիք որ կարմըրի. խակ-խակ պոճոկեցիք:*

(ԱՄՇՀ)

**1.6.** Քանի որ որոշ ավանդական տարրեր դեռևս շարունակում են կաշկանդել նոր կազմավորվող ընտանիքներին, ստեղծվող անեկդոտներում այդ կապանքները քանդվում են ծիծաղի լեզվով՝ մոլորության մեջ թողնելով ավանդապահ հարևան-բարեկամների: Հարսի մաքրությունը հավաստող «ապացույցների» մեջ նոր ժամանակների գրառումներում «*կարմիր խնձորի*» հետ նաև տանձ է դրվում: Խնամիների զարմացած հարցին, թե՛ «*կարմիր խնձորը*» որ կա, բա տանձն ինչի համար էք բերել», պատասխանում են.

— *Էս կարմիր խնձորը հարևանների մոտ պարզերես լինելու համար է. ձեր աղջիկը աղջիկ չէր: Տանձն էլ դրել ենք, քանի որ մեր տղի հեչ տանձին չի:*

(ԱՄՇՀ)

Ջավեշտ առաջացնող պատասխանում միանգամից չորս ժողովրդական դարձվածք է կիրառվել, մեկը մյուսի հետ շաղկապ-

308 **Էքսը** – հաջորդ օրը:

309 **Բոխչա** (թրք.) – շորերի կապոց:

ված, մեկը մյուսից բխող: Չորրորդ՝ ժարգոնային **տանձին չի** դարձվածքով ոչ միայն զավեշտն է ուժեղանում, այլև ավելի սուր է ընդգծվում տարբեր ժամանակների մարդկանց մտածողությունների հակասությունը:

**1.7.** Անհաշտություն և անհանդուրժողականություն արտահայտող **իրար միս ուտել** դարձվածքը դառնում է երկխոսական զվարճախոսություններից մեկի հենքը: Զուտ հայկական ճաշատեսակները նշելու՝ առաջին հայացքից անմեղ թվացող հարցին հետևում է իր իսկ հարց առաջադրողի անսպասելի ծիծաղ առաջացնող պատասխանը՝ արտահայտված ժողովրդական պատկերավոր խոսացումով: Անտարանջատելի դարձվածքի տարանջատմամբ շեշտվում և սպանիչ ծաղրով քննադատվում է իրար նախանձելու, իրար չգնահատելու, իրար տակը փորելու ազգային խոտելի բնավորությունը.

- *Զուտ հայկական ինչ ճաշատեսակ գիտեք:*
- *... Տոլմա, խորոված...*
- *Ոչ, իրար միս ուտել...*

(ԱՄՇՀ)

Ի դեպ, այս զվարճախոսության տարբերակներից մեկին հանդիպում ենք նաև հայագետ Հ. Չոլաքյանի անեկդոտների ժողովածուում՝ սակայն խոսացված, կարճառոտ ու տեղայնացված որոշակի միջավայրում.

*Ուրֆացիները միս շատ կ'ուտեն, իսկ երբ միս չըլլայ, իրարու միս կ'ուտեն...*<sup>310</sup>

**1.8.** **Ճերմակերես (պարզերես) լինել** դարձվածքի հետաքրքիր կիրառությանների ենք հանդիպում թե՛ Հովհ. Նազարյանցի անեկդոտների ժողովածուում<sup>311</sup> ու Ս.Բաղդասարյան-Թափալցյանի բարբառագիտական ուսումնասիրության նմուշների

310 Միջ-գաղաղական անեքթոտներ: Հաաքեց և ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալեպ, 1988, էջ 79:

311 Անեկդոտներ, հատոր 1, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, 1876, Ղասապեանցի տպարան, էջ 56:

բաժնում<sup>312</sup>, թե՛ Գ. Գևորգյանի «Չնքուշապատում»-ում<sup>313</sup>, որոնցում ուղիղ իմաստով կիրառությունն արտահայտվում է ոչ թե խոսքի, այլ գործողության միջոցով: Մածունը դեմքին շարտելու գործողությամբ դրսևորված գայրոյթին հաջորդած հովվի խոսքը՝ արտահայտված *ճերմակերես (պարզերես) լինել* դարձվածքով, նրան «փրկում է» չպատճառաբանված արդարացումներից՝ էլ ավելի խորացնելով ու արտահայտիչ դարձնելով զավեշտալի իրավիճակը:

Տե՛ս Հավելված 8.1, թիվ 3, թիվ 4, թիվ 5:

**1.9.** Որևէ մեկի բանիմացությունը, չափազանց խելացիությունը շեշտելու համար ժողովուրդն օգտագործում է **խելքի պուտուկ, խելքի տոպրակ** դարձվածքները («Երեվա խոմ չի, խելքի տոպրակ ա»: Իմա՝ շատ խելացի է:), իսկ դրանց հեզնախառն կիրառությամբ բնութագրվում է խոսակցի մտածողության թերի լինելը (տո խելքի պուտուկ, կամ էլ՝ տոպրակ): Ժողովրդախոսակցական լեզվում հենց նման կիրառությունների հենքի վրա է զավեշտ առաջանում, ինչպես տեղայնացված հետևյալ գվարճախոսությունում.

— *Աղջի՛, նրա բո՛յն ինչ էր, որ բերին դրին դպրոցի ուսմասվար:*

— *Ուսմասվարությունը բոյով չի, խելքով ա:*

— *Որ խելքով ըլներ, էն ա՛ Կծու Վաղոն հիմի դիրեկտոր կլներ: Ամեն անգամ մարդու հետ կոհիվ անելիս Եղտնն ասում ա՛ խելքի պուտուկ*<sup>314</sup>:

**1.10.** Երգիծական մանրապատումներից մեկում սկեսրայրի համար վերնաշապիկ կարող չխոսկան հարսի կողմից առօրյա խոսքում առկա «միչին ք...լ» (իմա՝ փչացրել եմ) գռեհիկ դարձվածքի ակամա արտաբերումը, թե՛ «Ապնին ասա. «Ամեն ինչ լավ ա էլել,

312 **Բաղդասարյան-Թափալցյան Ս.**, Մշո բարբառը, Եր. ԳԱ հրատ., 1958, էջ 208-209:

313 **Գեորգեան Գ.**, Չնքուշապատում, 1-ին հատոր, Երուսաղեմ, տպարան Ս. Հակոբեանց, 1970, էջ 308:

314 **Գյուլնագարյան Խ.**, Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991, էջ 59-60:

մենակ յախիդ<sup>315</sup> միչին ք...լ եմ» (իմա՝ օձիքդ փչացրել եմ), ոչ միայն խախտում է ավանդապահության չափանիշները, այլև ծիծաղելի իրավիճակ է ստեղծում:

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 8.1, թիվ 6:

**2.** Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում քիչ չեն նաև բանարվեստի այնպիսի նմուշները, որոնցում անսպասելի ծիծաղի առաջացման հենքը կայուն բառակապակցության մեկ այլ տեսակ՝ **առածներն ու ասացվածքներն** են:

**2.1.** Կան անեկդոտներ, որոնց զավեշտի հենքը ոչ միայն առած-ասացվածքներն են, այլև դրանք առաջացել են հենց ժողովրդական իմաստախոսություններից: Ամուսնությունից հիասթափվածները ստեղծել են ընտանիք կազմելու հետ կապված իրենց պատկերավոր «փիլիսոփայությունը»․ «Ամուսնությունը մի բոչկա ք...ք ա, էրեսը՝ մեղր»:

Ժողովրդական կենսափիլիսոփայության նմանատիպ խտացումը այն դասում է երգիծական առածների շարքին: Սակայն դրա զարգացումը և անսպասելի ավարտը ասույթը դարձնում են զվարճախոսություն.

*Մեղրամիսին էրեսի մեղրն ուտըմ ենք, մերմ ա տակի ք...ք ը,  
— Էդ ո՞նց ա, որ ես ուտըմ եմ, ուտըմ, մեղր չկա, մենակ ք...ք  
ա, — հարցնում է հավաքվածներից մեկը:  
— Չհուսահատվես, դուն էլ մեղրին կհասնես, պարզապես  
բոչկեն<sup>316</sup> թարս ես բացել:*

(ԱՄՇՀ)

**2.2.** Մարդու մեջ դրական և բացասական գծերի ժառանգական փոխանցման երևույթը ժողովուրդը խտացրել է **Պտուղը ծանիցը հեռու չի ընկնի** իմաստախոսության մեջ: Այս առածի հենքի վրա ստեղծված զվարճախոսությունում ժողովրդական ասույթի ու-

315 **Յախս** (թրք.) – օձիք:

316 **Բոչկա** (ռուս.) – տակառ



դիղ իմաստով ընկալումն է անսպասելի ծիծաղի առաջացման միջոց դառնում.

Աբարանցին էշին նստած գնալիս ա ըլում, էշը տոտինգ ա տալի, արարանցուն քցում ցած: Աբարանցին գլուխը վերն ա բարձրացնում, նայում էշին ու ինքնիրեն խոսում.

— Ժողովուրդն ինչ էլ ճիշտ ա ասում, որ **պտուղը ծառիցը հեռու չի ընգնի:**

(ԱՄՇՀ)

**2.4.** Զավեշտ է ստեղծվում նաև առածի բուն իմաստին հակադրվելու միջոցով: Զվարճախոսություններից մեկում էոնեկ-ի պատկերացման յուրօրինակ դրսևորմունը ներկայացվում է սեփական ընկալման չափանիշի տեսանկյունից.

— Ժողովուրդը իզուր չի ասել. «**Էրկու էոնեկ մի տեղ չի լինում**», — փիլիսոփայում է հավաքվածներից մեկը:

— Ո՞նց չի լինում, լինում ա, — միջամտում է արարանցին:

— Ո՞նց, գոնե մի օրինակ կարանս բերես, — հարցնում են:

— Հա, ո՞նց չէ. օրինակ՝ կնգանքս ծըծերը, — հիմնավորում է սպարանցին:

(ԱՄՇՀ)

**2.5.** Մեկ այլ պատումում այդ նույն իմաստախոսությամբ հակադարձելով մարմնական թերությունը ծաղրողներին՝ մի նոր առածով հաստատվում, հիմնավորվում է զավեշտալի թվացող այդ ստածողության սնանկությունը.

— Էրկու էոնակը մի տեղ չի ըլում, ախպեր ջան: Ավելի լավ ա մարդ ոտիցը սախատ<sup>317</sup> ըլի, քան թե գլխիցը<sup>318</sup>:

Տես Հավելված 8.1, թիվ 7:

**2.6.** Զվարճախոսություններից մեկում էլ զավեշտն առաջանում է հին ու նոր ժամանակների ապրելակերպի ժողովրդական խտացված իմաստախոսության ու նրա անդամների տեղերի փոփոխությամբ.

317 **Սախատ** – կաղ:

318 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումն»ր և իրապատումներ, Եր., «Ատողիկ» հրատ., 2008, էջ 32:

— Անցածի և ներկայի միջև տարբերությունը տեսնում են, Սարգիս:

— Իհա՛րկե տեսնում են:

— Օրինակ:

— Առաջներում **եզը վեր էին կացնում, տակից հորթ ուզում**, հիմա հորթը վեր են կացնում, տակից եզ ուզում<sup>319</sup>:

**2.7.** Մեկ այլ զվարճախոսությունում էլ զավեշտը երկխոսությանը և բառախաղով է դրսևորվում. սկզբում խոսակիցը առածի միջոցով փորձ է անում հեզնել խոսակցին, սակայն խոսակցի՝ նույն առածից բխող հիմնավոր պատասխանը՝ բառախաղ սարքած, ջախջախում է հեզնողին.

Մի օր աները փեսի հոգու հետ խաղալու համար ասում ա.

— Փեսա ջան, լսել ե՞ս ժողովրդի էն խոսքը, որ ասում ա՝ **փեսեն անոր դռան էջն ա**:

— Դե որ դա ճիշտ համարենք, ուրեմն դուն էլ քու անոր դռան էջն ես:

— Բայց ես որ ամուսնացել եմ, աներ չեմ ունեցել:

— Ուրեմն անդեր էջ ես էլել, — ասում է փեսեն:

(ԱՄԸԸ)

**3.** Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում քիչ չեն նաև բանարվեստի այնպիսի նմուշները, որոնցում զավեշտի հենքը տարատեսակ ժողովրդական արտահայտություններն են:

**3.1. Աստված էլ բերթարեն ազատի** ասույթը վատի և դրանից վատթարի ժողովրդական փիլիսոփայության դրսևորումն է: Զվարճապատումներից մեկում ահա թե ինչպես է այն դրսևորվում.

Մեկը հարևանին պատմում ա.

— Բա իմացա՞ր՝ ինչ էլավ:

— Ի՛նչ:

---

319 **Ծատուրյան Ա.**, Ծիծաղում է Խնձորեսկը, «Գյուղական հումորի շտեմարան» շարքից, «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 304:

— Էրեկ մեր հարևան Վաղոն կամանդիրովկից<sup>320</sup> շուտ ա տուն գալի, տենըմ հարևանը՝ կնգա ծոցին:

— Հետո՞:

— Բնչ հետո, տալիս ա համ կնգանն ա սըպանըմ, համ հարևանին:

Ընտանեկան կյանքին վերաբերող մի տխուր երևույթ, որի տարատեսակ սցենարներով դրսևորումներին շատերս ենք տեղյակ: Բայց որ նման լուրն իմանալուց հետո զրուցակիցը կարճագանքի Աստված էլ բեթարեն<sup>321</sup> ազատի ժողովրդական իմաստախոսությամբ, իսկապես զավեշտալի է, սակայն զավեշտը սրանով չի ավարտվում, ավելի է սրվում՝ վերածվելով անզուսպ քրքիջի հենց այդ **էլ բեթարը** պարզելուց հետո.

— Տո աննորմալ, էլ դրա բեթարը ճրն ա. համ կնգանն ա սըպանել, համ հարևանին:

— Ասեմ. որ էրեզ չէ առաջի օրը բոնացներ, ինձ էր սըպանելու...

(ԱՄՇՀ)

**3.2. Երեխաներին արագիլն է բերում** ժողովրդական խոսքով են մեր պապիկ-տատիկները բավարարել փոքրիկների հետաքրքրասիրությունը: Սրա հենքի վրա ստեղծված երկու զվարճախոսություն ունենք մեր գրառումներում, որոնցից մեկը վարդանիկյան անեկդոտաշարից է: Ժամանակակից երեխայի մտածողությանը ժողովրդական մեկնաբանությունն այլևս չի գոհացնում.

— Տատի՛, մենք ո՞նց ենք ծնվել, — հարցնում է Վարդանիկը:

— Դե...Վարդանիկ ջան, քեզ արագիլն ա բերել, Աշոտիկին էլ՝ գետը:

— Վարդանիկ, տատին չասե՛նք՝ ոնց ենք ծնվել, — հարցնում է Աշոտիկը:

— Չէէ՛հ, տատը թող էդպես միամիտ էլ մեռնի, — ասում է Վարդանիկը:

(ԱՄՇՀ)

320 Կամանդիրովա (ռուս.) – գործողում:

321 Բեթար – վատթար:

**3.3.** Անսպասելի ծիծաղի դրսևորման ինչպիսի՞ հնարանքների է տիրապետում մեր ժողովուրդը, որ մանկական զվարճախոսության ստեղծման հենքը դարձած այդ նույն արտահայտությունը նոր ժամանակներում հնչեցվում է նորովի՝ կապելով քաղաքական թեմայի հետ. անգուսպ ծիծաղ առաջացնելուն զուգահեռ՝ քննադատվում է Հայաստանում տիրող մենաշնորհային քաղաքականությունը՝ ներկրումը, մեկի կամ մի քանիսի մենաշնորհը դարձնելու ամենաթողությունը.

*Սամվել Ալեքսանյանը գնում ա Սերժ Սարգսյանի մոտ, ասում ա՝*

*— Ճիշտ ա՛, որ էրեխանց արագիլն ա բերում:*

*Ասում ա՝*

*— Հա՛, ճիշտ ա:*

*— Իսկ չի ըլի՞՛ էտ էլ ես բերեմ:*

(ԱՄՇՀ)

**3.4.** Հայաստանի սոցիալ-տնտեսական ծանր վիճակի վերաբերյալ տարբեր ժամանակներում բազմաթիվ երգիծապատում-զվարճախոսություններ են ստեղծվել, որոնց մեջ առանձնանում են միմյանց հուսադրող **վերջը լավ է լինելու, լավ կըլնի** ժողովրդական արտահայտությունը: Մանրապատումներից մեկը՝ բառախաղային դրսևորմամբ, առնչվում է հայրենադարձներին այդ արտահայտությամբ հուսադրող խոստումներին:

Ուստիկանին հարվածելու համար բաժանմունք տարված հայրենադարձը այսպես է արդարացնում իր արարքը.

*— Երբ հայրենիք կուգայինք, բոլորը մեզի կըսեին՝ վերջը լավ կըլա: Ան իրենից ինչ կներկայացնե, որ կըսե՛ վերջը վատ կըլա: Ինչ է, լավը ավարտվեց...*

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 8.1, թիվ 8:

**3.5.** Մյուս պատումը վերաբերում է նյութական ծանր վիճակում ապրող ընտանիքին ու «հեռատես» ու «խելքի ծով» ամուսնու՝ կնոջն ուղղած՝ «Լավ կըլի, լավ կըլի, այ կնիկ, մի՛ անհանգստացի» հուսադրող խոսքերին.

Մարդը մեռնում է, կինն ամուսնանում նյութապես ապահով մեկի հետ ու անընդհատ հիշում իր անցկացրած դառը օրերն ու մա-

հացած ամուսնու հուսադրող խոսքերն ու ինքնիրեն խոսում. «Խելքի ծով էր իմ մարդը, է, երփվանից էր ասում՝ լավ կըլի, լավ կըլի: Իսկապես լավ էլավ: Էռնակ սաղ ըլեր, ինքն էլ տենար էս լավը<sup>322</sup>»:

Տեն Հավելված 8.1, թիվ 9:

**3.6. «Վերջը լավ է լինելու»** արտահայտության միջոցով ապրած ողջ կյանքի խտացված նկարագիրը ներկայացված է հայաստանաբնակի՝ «Վերջը լավ է լինելու, դու ասա ընթացքը լավ լինի» մեկնաբանության և հայրենադարձի՝ «Լավ կըլլա ըսելով՝ հոս հասանք» շիրմաքարային գրությունում:

(ԱՄՇՀ)

Տարբերակ՝ Թոխմախ գոլի գերեզմանոցում մի «ախպարի» շիրմաքար կա, որի վրա գրված է. «Վերջը լավ կըլլա» ասելով հոս հասանք...<sup>323</sup>

**3.7.** Սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքից ունեցած բազմաթիվ դժգոհությունները ժողովրդն արտահայտել է **երգի-րը երգիր չի** դարձվածքով: Սրա հենքի վրա ստեղծված երգիծապատումները ևս մեծ քանակ են կազմում: Սակայն տեղի-անտեղի տրոսնջացողների համար ստեղծվել է սարկազմի հասնող մի զվարճապատում, որի զավեշտի մեխը երկու ասույթների փոխկապակցվածությունն է.

Հարսանիքի հաջորդ օրը հարսին հետ կողարկեն: Աղջկա հերը կուգա խնամու մոտ, կըսէ.

— Ա՛յ խնամի, ախչկաս ընչի՞ ես հետ դարգե:

Կըսէ՝

— Որովհետև ախչիկըդ աղչիկ չէր:

— Պանհ, պանհ, պանհ, մըթոմ թե երգիրըդ երգիր է՞, օր ախչիկըս էլ ախչիկ էղներ:

(ԱՄՇՀ)

322 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, «Ասողիկ» հրատ., Եր., 2008, էջ 34:

323 **Մելիք-Սարգսյան Գ.**, Զվարճալիք, Եր., «Պարուր Սևակ» հրատ., 2001, էջ 54:

## ՅԱՎԵԼՎԱԾ 8.1

### 1

#### Տաճկերեն կիսոցող գեղական

Գեղայնու մեյ կերթա ըստամբոյո, քանիմ՝ ամիս կը մնա, կը տառնա:

Որ ինգըրներաց շանց տալու խամար, թե իյի տաճկերեն կիտի, կասի.

— Իշու անուն ադուր կասեն,

Քուռկե անուն՝ ասպատուր,

Կոռ էրկըթին չալիզ կասեն,

Իսավու ճիտուն փիլիջ կասեն...

...Պամ էլ կա՝ վեր լեզվիս ծերին, չեմ կանա խանե: Իսա, քյաքին կասեն փոխ:

Ծիծաղում են վանեցիները,  
կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն.,  
Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 157:

### 2

Գրիգոր դային մին օրիշ շենավ անց ա լնլ կընաս, շըները զիրավ ըն տեռալ: Կըռացալ ա, թա էս քարը յոր օնե, պուք չի եկալ, կըռացալ ա, թա էն մինը յոր օնե, պուք չի եկալ: Տավը սատաժ ա իլնլ, քարերը տո՛ւրուր չըն լնլ կյամ: Շինացեք վեր հըվաքվում ըն, Գրիգոր դային ասում ա.

— Ա շան տղեք, քարերը կըպոտալ ըք, շըներին պեց թողա՛լ:

Բաքվի հայոց բանահյուսությունը,  
կազմեցին Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը,  
Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 233:

### 3

Մեկ էֆենդի յուր ոչխարները պահ տվեց մի հովվի: Անցավ մի տարի, և հովիվը վեր առնելով մի թաշկինակով մածուն, գնաց յուր տիրոջը հաշիվ տալու:

Էֆենդին — Ծո՛, տեսնեմ՝ ինչ ըբեր ես:

Հովիվը — Էֆենդըն, Եթմիշ<sup>324</sup> հինգ հոգի ջուրը տարավ, սեք-սեն<sup>325</sup> իննը սարեն իվար թափան ճվորերը, դողսեն<sup>326</sup> երեքը գալե-րը կերան...

Տերը բարկանալով հովվի վրա, առավ մածունը և խփեց նորա երեսին: Իսկ հովիվը, սրբելով երեսը, ասաց.

— Փան քիեզ, Ասուած, վեր տերվընջս<sup>327</sup> մոտ ճերմակ երես ելա:

Անեկդօսներ, հատոր 1,  
Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց,  
Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 56:

#### 4

### Գ'էղացին ու քախքըցին

Մէզ քախքըցի, մէզ գ'էղացի կեղնին: Գէլնա գ'էղացին<sup>328</sup> հա-րիր օխչար կատնի, կիդա գ'էղացուն պա, կըսէ. — պայա, ընձիգ քըզիգ կիսովի: Մընաց գ'արուն, գ'էղացին շիքէց քուլաք մէ մաձուն բ'երէց: Բ'երէց, Էգավ քաղաք: Քաղքըցին տէսավ ըզմաձուն, շաղ ուրախցավ. հանդէ, կիշկէ, սէր վըր երեսին:

Ըսէց.

— Գյալօ, մըր օխչար իմանլ ին:

Գ'էղացին դ'արձավ, ըսէց.

— Մըր օխչար, էլ մը հարցու. անքամ մէ էրզինք օրօղաց ինը-սուն հադ, — ըսէց, — սադգան, — ըսէց, մացին տաս հադ. վեց հադ տըրվի խասքին, օր էս ինըսուն հադ օխչար մօրթէց. իրէք հադ լէ հա-շիվ մէնի, մը հաշիվէ, — ըսէց, — մանցէր է մէզ հադ, գէդ լէ հանդէ, իմ տըղէն հըլուն շարէր է վըր ճագդին, հեդ կըլխադա:

Քաղքըցու սիրդ յէլավ, վերցուց ըզ քուլագ մաձուն, գարգ վըր բ'իձու գ'ըլխուն, կօրձէց վըր գ'ըլխուն:

324 Եթմիշ (թրք.) – յոթանասուն:

325 Սեքս (թրք.) – ութանասուն:

326 Դողս (թրք.) – իննսուն:

327 Տերվընջ – տիրոջ:

328 Տպագրական սխալ է, պետք է լիներ քախքըցին:

Գ'եղացին ըզգ'ըլօխ շախփեց, ըզմուրքէն մաճուն էգալ թափալ, ըսեց.

— Փառք քրզի, աստված, մըր էրես էլման սիվդակ էղալ:

Ս.Հ.Բաղդասարյան-Թափալցյան, Մշո բարբառը,  
Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 208-209:

## 5

### Ճերմակ երեսով տեսնուած հաշիւը

Չնքուշի մսագործները գարնան ուլեր կը գնէին և մինչև աշուն արածելու ու մեծցնելու համար Քիւրտերուն կու տային կէտուկէս, այսինքն մորթելու պատրաստ այծ դառնալէ յետոյ, կէսը իրենց կէսը արածեցնող Քիւրտին:

Մսագործ մը, որ տասը ուլ էր տուած գիւղացի Քիւրտի մը, երբ աշնան կ'երթայ իր բաժին այծերը բերելու, Քիւրտը գայն կ'ընդունի սիրով և հիւրասիրելու համար անոր առջև կը դնէ **քիւլիկով**<sup>329</sup> մաճուն ու, մինչ Հայը կը սկսի ուտել, Քիւրտը հետևեալ հաշիւը կը ներկայացնէ.

Թրքերէնը

— Տաշտան ուչտի պաչ կէչտի,  
Արտի սըրա՝ պէշ կէչի, Պիրիսի գուրտ կէօթիւրտի  
Պիրիսի վերտիմ գասապա,  
Պիրիսի տէ սօխմա հըսապա,  
Օ պիրիսինէ տէ պիզիմ օղլան ճընկըավու թաղմիշ, նէ սէնէ վէրիբ, նէ պէնտ:

Հայերէն վերածուած մեր կողմէ

— Ոչխարներուն առաջնորդը թռաւ ժայռէն,  
Հինգ ոչխար ալ անոր ետնէն,  
Մէկն յափշտակուեցաւ գայլէն,  
Մէկը տուի գասապին,  
Մէկն ալ մի խառներ հաշիւին,  
Միւսն ալ մեր տղան (վզին) գանգ է անցուցած, ո՛չ քրզի կու տայ, ո՛չ ալ ինծի:

329 Քիւլ – փայտէ խոշոր աման:



Ապշահար Հայր առջևի մածունը քիլիկով կը նետէ երեսին Քիւրտին, որ մածունտտ երեսն ու մօրուքը երկու ձեռքերով բռնելով՝ կը յարէ.

— Էլ համտուլա եուզ աղլըդ իլէ պիր հիսապ կէօրտիւք:

(—Փառք Աստուծոյ, ճերմակ երեսով հաշիվ մը տեսանք):

Գէորգեան Գ., Չնքուշապատում, հատոր 1,  
Երուսաղեմ, տպարան Ս. Հակոբեանց, 1970, էջ 308:

## 6

Հարսը չխոսկան ա ըլրմ: Մի անգամ կեսրարի հըմա բըլուզ ա կարըմ: Որ պրծնըմ ա, հաքցընըմ ա, լավ ու վատը նայըմ ա, տենըմ՝ յախենին փչացրել ա. լավ չի նստըմ: Ըրեխին ասըմ ա.

— Ապնին ասսմ. «Ամեն ինչ լավ ա էլել, մենակ յախիդ միչին ք...լ եմ...» (իմա՝ օձիքըդ փչացրել եմ):

(ԱՄՇՀ)

## 7

Վոլոդյայի հարսանիքի երաժիշտները Թոխար Սարգիսն ու Դըշանց Հայկազն էին, հակառակի պես՝ երկուսն էլ՝ կաղ:

Հարսին պետք է բերեին Լոռու Գառգառ գյուղից: Սովորության համաձայն՝ Գառգառում խնամիները հարսի տանը մոտենում են նվագելով: Թոխարի հետևից քայլող մարդը դառնում է ընկերոջը.

— Արա՛, որ ասեին էլ, չէի հավատա. երկու ուստա են, երկուսն էլ չղալս<sup>330</sup>:

Թոխարն անմիջապես զուռնան հանում է բերանից ու պատախանում.

— Երկու էռնակը մի տեղ չի ըլում, ախպեր ջան: Ավելի լավ ա մարդ ոտիցը սախատ ըլի, քան թե գլխիցը:

Քոչարյան Ս., Զվարճապատումն»ր և իրապատումն»ր,  
Եր., «Ասողիկ» հրատ., 2008, էջ 32:

## 8

Սլիցեն մի ախպարի ասըմ ա.

— Վերջըտ վատ ա ըլելու:

---

330 Չոլախ, սախաթ – կաղ:

— Ինչու՞ նման բան կրեսես:

— Հա, քեզ ասըմ եմ՝ վերջըտ վատ ա ըլելու:

Էս ախպարը էլ չի համփերըմ ու մի հատ մըլիցի ըռխամիչըմը հասցընըմ ա: Մըլիցեն սըրան տանըմ ա քաղմաս: Պետը հարցընըմ ա.

— Դու գիտե՞ս՝ ինչ հանցանք ես կատարել. դու ի՞նչ իրավունքով ես հարվածել մըլիցիայի աշխատակցին:

— Երբ հայրենիք կուգայինք, բոլորը մեզի կըսեին՝ վերջը լավ կըլլա: Ան իրենից ի՞նչ կներկայացնես, որ կըսես՝ վերջըդ վատ կըլլա: Ինչ է, լավը ավարտվեց...

(ԱՍՇՀ)

## 9

Օձունեցի կինն ամեն օր քթի տակ փնթփնթում էր. «Ձմեռը դուռը կտրել ա, ոչ փետ ունենք, ոչ խոտ, բա ո՞նց կըլի»:

— Լավ կըլի, լավ կըլի, այ՛ կնիկ, մի անհանգստացի, — հուսադրում էր ամուսինը:

Ձմեռը դուրս չեկած՝ ամուսինը մահանում է: Կինն ամուսնանում է համեմատաբար ունևոր տղամարդու հետ: Ապրուստը տունը լիքը, գնացող-էկողը՝ շատ, այլևս առաջվա հոգսերը չունի ու նստած մտածում է.

«Խելքի ծով էր իմ մարդը, է՛, երփվանից էր ասում՝ լավ կըլի, լավ կըլի: Իսկապես լավ էլավ: Էո՞նակ սաղ ըլեր, ինքն էլ տենար էս լավը»:

Քոչարյան Ս., Զվարճապատումներ և իրապատումներ,  
Եր., «Ատողիկ» հրատ., 2008, էջ 34

## 8.2

### ՀԱՄԱՆՈՒՆԱՅԻՆ ԵՎ ՀԱՐԱՆՈՒՆԱՅԻՆ ԴՐԱՏՎՈՐՈՒՄՆԵՐԸ՝ ՉԱՎԵՃՏԻ ՅԵՆՔ

Հայ ժողովրդական երգիծական ստեղծագործությունների համատեքստում մեծ քանակ են կազմում համանունների և հարանունների հենքի վրա ստեղծված երգիծական մանրապատումներն ու զվարճախոսությունները: Իսկ վերջիններիս մեջ գերակշռողը համանունային (բուն և քերականական) կիրառություններն են:

**1.** Ջվարճախոսություններից մեկում անսպասելի ծիծաղը դրսևորվում է արգելական հրամայականի «**մի**» մասնիկի և «**մի**» ձայնանիշի համանունության հենքի վրա.

Երաժշտական դպրոցից տուն վերադարձած երեխան ծնողին պատմում է իր անտրամադիր լինելու պատճառը. «Դասատուն ըսավ՝ «ոո» զարգե, զարգեցի, ըսավ՝ «ոե» զարգե, զարգեցի, ըսավ՝ «մի» զարգե, չզարգեցի, գլխուս զարգեց»:

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 8.2, թիվ 1:

**1.2.** Մեր գրանցած մեկ այլ զվարճախոսությունում անսպասելի ծիծաղը դրսևորվում է «**մեզ**» գոյականի և «մենք» դերանվան տրական-հայցականի «մեզ» հոլովածնի համանունային կիրառությամբ: Բուժքրոջ՝ «Մի րոպե, հայրիկ, այսքանը մե՞զ եք բերել» հարցին հետևում է անավիզ բերող ծերունու՝ «Հա՛, ախչիկ ջան, դիփի<sup>331</sup> ձեզ եմ բերել» պատասխանը:

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 8.2, թիվ 2:

Այս անեկդոտի տարբերակում բուժքրոջ հարցին հետևում է «Չէ, էս պրոֆեսորի համար եմ բերել, բայց եթե ուզում եք, վաղն էլ ձեզ համար կբերեմ» պատասխանը:

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 8.2, թիվ 3:

---

331 Դիփ – լրիվ, բոլորը:

**1.3.** Զվարճախոսություններից մեկում էլ **հեռատես** բառն է դառնում զավեշտի հենք: Ակնարբուժական հետազոտության ժամանակ բժշկի՝ «Հայրիկ, դուք ի ծնե հեռատես եք» խոսքին հետևում է հայրենիքում հիասթափություն ապրած տարեց հայրենադարձի «Է, աղջիկըս, թե որ հեռատես ըլայի նե, հոս չէի ըլլա» պատասխանը:

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 8.2, թիվ 4:

**1.4.** Հայրենադարձության թեմային առնչվող մեկ այլ զվարճախոսության մեջ անսպասելի ծիծաղը դրսևորվում է **նոքի կանգնել** հարադիր բայի երկիմաստ՝ համանունային կիրառության միջոցով: Եվ բառախաղով ու ծիծաղով շաղախված այդ հնարանքը այնքան խտացված է և ասելիքով հարուստ, որ ականայից խոնարհվում ես ժողովրդական հանճարի առաջ.

*Մի հայրենադարձի հարցրին.*

— Է՛, աղբւ՛ր, ո՞նց կապրիք:

— Կամաց-կամաց **նոքի կանգնեցինք**:

— Էդ ո՞նց հաջողվեց:

— Է՛հ, վերջին երեք աթոռն էր մնացեր, ան ալ վաճառեցինք ու **նոքի կանգնեցինք**<sup>332</sup>:

**1.5.** Արևմտահայերի մեկ այլ զվարճապատումում էլ անսպասելի ծիծաղ է առաջացնում շարադրության վերնագիրը համանունությամբ այլ նպատակի ծառայեցնելիս: «Շատ մի՛ խոսիր» վերնագրով շարադրությունն ընթերցելիս ուսուցչի հարցին, թե «նիթը ինչ է», աշակերտը հրամայական տոնով ասում է. «Շատ մի՛ խոսիր» ու շարունակում է կարդալ<sup>333</sup>:

Տես Հավելված 8.2, թիվ 5:

**1.6.** Համանունության կիրառությամբ զավեշտ է ստեղծվում նաև **բան** բառի երկիմաստ՝ խոսքամասային տարբեր կիրառու-

332 «Եղինջ» երգիծական թերթ, Վանաձոր, 1995, թիվ 4, էջ 8:

333 Պատմություն Աթլեյի հայոց, Գ հատոր, խմբագիր՝ Երուանդ Պապանյան: Լոս Անջելես, 1994, էջ 384:

թյուններով՝ հետադասի ժամանակ՝ բանել, զբաղվել իմաստով (երկրաբան, բուսաբան, մարդաբան, լեզվաբան և այլն), նախադասի դեպքում՝ բան-խոսք իմաստով (բանասեր, բանագետ, բանարվեստ և այլն): Բառախաղով ստեղծված երգիծապատումում ծանոթանալիս կենսաբան և իրավաբան մասնագիտություն ունեցողներին իր զբաղմունքն է ներկայացնում նաև զրուցակիցը.

— *Ճիշտն ասած, ես էլ եմ բան, բայց իմ բանն առաջից ա (իմա՝ բանասեր):*

(ԱՄՇՀ) Տե՛ս Հավելված 8.2, թիվ 6:

**1.7.** Զվարճախոսություններ և զվարճապատումներ կան, որտեղ անսպասելի զավեշտն ստեղծվել է գրական հայերենի **կանգնել** բայի և բամբռակ իմաստ արտահայտող նույնանուն բառի համանունության հենքի վրա.

**ա.** *Գիշերվա կեսին մարդը կնգանը զարթնացնում, ասմա.*

— *Ա՛յ կնիկ, հըլա մի վե՛ կաց, պատի ժամացույցը կանգնել ա:*

— *Էս քամբախ տանը մի բան պըտի կանգնե՛ր, թե՛ չէ, — արտնեղած ասըմ ա կնիկը:*

(ԱՄՇՀ)

**բ.** Նույն բառի համանունությամբ զավեշտի դրսևորմանը հանդիպում ենք նաև Սալմաստի բարբառով գրանցած «Աման առնող խարսը» զվարճապատումում: Աման-չաման ծախող սայլապանի և գնորդ կանանցից մեկի անմեղ խոսակցությունը այլոց համար կարող է վերածվել բամբռակ արտահայտության<sup>334</sup>:

Տե՛ս Հավելված 8.2, թիվ 7:

**1.8.** Արևմտահայոց երգիծապատումներից մեկում «**Յաճախապատում**»-ը **Հաճի Խաթուն**-ի հետ հարանունություն ստեղծելով է զավեշտ առաջանում:

Հարուստի՝ ծառային տված «*Գնա Մարկոս էֆենդիէնց տունը (Օրմանեանի*<sup>335</sup>) «**Յաճախապատում**»ը բեր, որ ժամանակ անցը-

334 ՀԱԻ-ի արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, FFi:1573:

335 Բնագրում Ազնավուրյանը սխալ է թույլ տվել, քանզի հայ կրոնական, հասա-

նեւ» հանձնարարութիւնը Մարկոս Էֆէնդիին այնպէս է փոխանց-վում, որ անսպասելի ծիծաղի տեղիք է տալիս. «Մէր Էֆէնտին Հա-ճի Խաթունը ուզեց, որ ժամանակ անցընէ»<sup>336</sup>:

Տե՛ս Հավելված 8.2, թիվ 8:

**1.9.** Հայկական անեկդոտներում զավեշտը դրսևորվում է նաև գրական հայերենի **ապրել** բայի և տարվա ամասնուններից մեկի՝ **ապրիլի** հարանունության միջոցով: Երբ տերտերը ցրտից ու անձ-րևից խեղճացած հովվին ասում է, թե ապրիլ ամիսն է, հետևում է կատաղած հովվի բառախաղով արտահայտված պատասխանը.

— *Շան տղա հայ, որ էս ապրիլ ամեսն ա, պա մոնիլեն ամեսն վըրն ա*<sup>337</sup>:

Տե՛ս Հավելված 8.2, թիվ 9:

**2.** Հայկական երգիծապատում-զվարճախոսություններ կան, որոնք ձևավորվել են գրական հայերենի և բարբառների կամ ժո-ղովրդախոսակցական լեզվի և բարբառների բառ-բառակապակ-ցությունների ու արտահայտությունների համանուն-հարանունա-յին դրսևորումների հիմքի վրա:

**2.1.** Անսպասելի ծիծաղն առաջանում է տնային կենդանու (**Էշ**) և գուրանի մասերից մեկի՝ համձողի (ժողովրդախոսակցականում՝ **Էշ**<sup>338</sup>) անունների համանունության շնորհիվ:

---

րակական-քաղաքական գործիչ, հրապարակախոս, պատմաբան, բանա-սեր Մաղաքիա (Պողոս) Օրմանյանի (1841-1918) ծանրակշիռ աշխատությունը երեք մասից բաղկացած «Ազգապատում»-ն է, իսկ «Յանախապատում»ը («Հանախապատում») խրատական ճառերի, քարոզների ժողովածու է, որի հեղինակային պատկանելության հարցը 5-րդ դարից մինչև հիմա մնում է վիճելի:

336 **Ազնավորեան Ս.**, Հէքիաթներ, զուարճալիքներ, ԱՄՆ, Միչիկըն, Տիպոյրն Հայթս, 1971, էջ 138:

337 **Հովսեփյան Հ.**, Ղարաղաղի հայերը. հ. 2, բանահյուսություն, Եր., «Գիտու-թյուն» հրատ., 2009, էջ 456:

338 **Սրվանձոյանց Գ.**, Հայաստանի երկրագործության գործիքներ. գուրան, գուրանի էշ-ծուռ փայտ, ինչ երկար և հաստ իբրև գզերան: Գուրանի ոտն և ոտ-նագրեր. փայտն՝ որ զէշն և զառատամն միավորե: Երկեր, հատոր 1, էջ 363.

Քանի որ վաղուց պատմություն է դարձել գութանն իր համապատասխան մասերով, զվարճապատումն ընկալելի է դառնում գրառողի կողմից կանխավ դաշտային աշխատանքային գործիքներից գութանի փայտերից մեկին՝ համձողին՝ **էշին**, և նրա պահպանման որոշ մանրամասներին ծանոթացնելու շտրիիվ: Դրանից հետո միայն ներկայացվում է բուն երգիծական մանրապատումը:

Քաղաքից գյուղ հարս գնացածին անծանոթ է լինում գութանի համձողի ժողովրդախոսակցական անվանումը, ինչն էլ հանգեցնում է զավեշտի և դառնում սկեսրայրի գայրոյթի պատճառը.

— Աստուանձ, իմ դուշման գեղացուն քաղաքի հարս չտա, որ լիզուն չիմանան<sup>339</sup>:

Տես Հավելված 8.2, թիվ 10:

**2.2.** Բավականին մեծ քանակ են կազմում հայերենի տարատեսակ բարբառների բառապաշարի հենքի վրա ստեղծված երգիծապատում-զվարճախոսությունները: Այսպես, զվարճախոսություններից մեկում զավեշտ ստեղծելուն նպաստել է ժողովրդախոսակցական լեզվում օգտագործվող **լիքը** (շատ) և **լիքը** (լցված) համանունային կիրառությունը.

Մի լոռեցի մտնըմ ա տնտեսական խանութ, ասամա՝

— Ախչիկ ջան, գարշոկ<sup>340</sup> ունե՞ք:

Բա թե՛

— Լիքը:

— Բալա՛ ջան, դե մինը դըրդակի<sup>341</sup>, տու...

(ԱՄՇՀ)

**2.3.** Դետեյան զվարճախոսություններից մեկում ևս զավեշտն առաջանում է Դարչին մականվան և դարչին համեմունքի համաՆունության հենքի վրա.

339 Անեկոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, Մ.Վարդանյանի և ընկ. տպարան, 1883, էջ 83-84:

340 **Գարշոկ** (ռուս.) – գիշերանոթ:

341 **Դըրդակի** – դատարկիլի:

Դսեղի բնակիչ Մումրուզանց Աշոտի ավել անունը Դարչին է: Նրանց նոր հարևան եկած կինը մի օր հարցնում է Աշոտի կնոջը.

— Քիրա՛, դարչին չունեն:

— Աշոտի կինը ձայն չի հանում; Հարևանը նորից է կրկնում:

— Ախչի՛, քե հետ եմ, դարչինիցդ մի քիչ տուր, կակալի<sup>342</sup> մուրաբա եմ դրել:

(ԱՄՇՀ)

**2.4.** Լոկալ՝ տեղային երգիծապատումներից մեկում էլ զավեշտն ստեղծվում է անձնանվան (**Լալա**) և մականվան (**լալ**-համբ) ու օժանդակ բայի է(**ա**) բառախաղային համանունությամբ.

...Թե՛ բա անըմն ի՛նչ դրիր: Թե՛ Լալա: Ասմա՛

— Լալը՝ գիդեմ որ լալ կըլի, դու անըմն ասա, անըմը: (Մարտոյի տոհմին լալ են ասում)

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 8.2, թիվ 11:

**2.5.** Անեկդոտներից մեկում էլ զավեշտը դրսևորվում է **Կյանք** (իմ կյանքն ես, սիրելի՛ն-ԱՍ) ժարգոնային դիմելաձևով և գանք բառի Գորիսի բարբառի արտասանության (կյանք) հարանունությամբ, ինչի շնորհիվ փողոցային ժարգոնն ընկալվում է որպես խնամախոսության առաջարկ.

Երևանցի տղաներից մեկը փողոցով անցնող մի աղջկա ռեպլիկ է զգում, ասելով՝

— Կյանք:

— Դե որ շատ եք ուզում, էկեք, — խունջիկ-մունջիկ գալով՝ պատասխանում է գորիսեցի աղջիկը:

(ԱՄՇՀ)

**3.** Երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների մի մեծ խումբ էլ առնչվում է գրական հայերենի, բարբառների, բառ-բառակապակցությունների ու արտահայտությունների և **օտար լեզուների** համանուն-հարանունային զավեշտալի դրսևո-

---

342 Կակալ – ընկոյզ:



րումներին: Ի դեպ, նման անեկդոտներում գերազանցում են հա-  
րանունային կառույցները: Այսպես.

**3.1.** Արևմտահայոց մի զվարճապատումում զավեշտն ստեղծ-  
վում է բարբառային «Յան, «ՍույփՓյգիչ՝ Սուրբ Փրկիչ» բառակա-  
պակցության և թուրքերեն «սյուփյուրգե՝ ավել» բառի համադրու-  
թյամբ.

*Ջեթթունցիները շատ քաջ մարդեր էին: Անտք երբ միշտ կռի-  
վի կերթային թուրքերուն դեմը, կաղոթեին, օգնության կկանչե-  
ին իրենց Սուրբ Փրկիչին, կըսեին.*

— Յան, Սույփ Փյգիչ, — ու կհաղթեին:

*Թուրքերն ալ կգարմանային, կըսեին.*

— Ադ գյավուրները<sup>343</sup> «Սյնուփյուրգե» կըսեն, կսկսին կովիլ  
ու կհաղթեն:

«Սյուփյուրգե» թուրքերեն կնշանակե՝ ավել: Ավելը ինչպես  
անոնց կօգնե<sup>344</sup>:

Եթե «Կարոս խաչ» վիպերգում թշնամու դեմ կովելիս հայերին  
օգնում էր նեխուրի (քարաուզի) դաշտում հայտնված խաչը, «Սաս-  
նա ծոեր» էպոսում՝ Խաչպատարագին, ապա այս զվարճապատու-  
մում զեյթունցիներին օգնության է հասնում Սուրբ Փրկիչը: Պատու-  
մի առաջին մասը վիպերգային կառուցվածք ունի: Հենց երկրորդ  
մասից էլ սկսվում է զվարճապատում տանող ուղին՝ հայերենի  
բարբառային արտահայտության և թուրքերենի բառային հարա-  
նունության կիրառությամբ, ինչն էլ դառնում է այս երգիծապատու-  
մի զավեշտի մեխը: Ի դեպ, զեյթունցիների այս ինքնատիպ նմուշի  
մեկ այլ տարբերակ Հալեպում գրի է առել նաև Հ. Չոլաքյանը<sup>345</sup>:

Տե՛ս Հավելված 8.2, թիվ 12:

343 **Գյավուր** – անհավատ

344 **Սվազլյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր.,  
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 107:

345 Միջ-գաւառական աներթոտներ: Հաւաքեց և ներկայացուց Յակոբ Չոլաքե-  
ան, Հալէպ, Տպարան Արևելք, 1988, էջ 55:

**3.2.** Հարանունության կիրառությամբ մեկ այլ զվարճապատումում անսպասելի ծիծաղ է առաջանում, երբ բաղադրյալ ստորոգյալի հարակատար ներկայով կազմված դիմավոր բայի եզակի երրորդ դեմքը՝ բարբառային հնչողությամբ, ներկայանում է իբրև օտար (տվյալ դեպքում՝ վրացական) ազգանվան մաս.

*Քեֆները լավ էրկու գյումրեցի Թիֆլիսում, մի արձանի մոտ կանգնած, իրար հետ վիճում են.*

— Ծո՛, աշե՛ ինչքիս լավ ռանդած է (տարբերակ՝ տաշած է)

— Ոչ թե ռանդած է, այլ քանդրկած է:

Կողքներով անցնող մի վրացի միջամտում է նրանց.

— He (ոչ) Ռանդածե, И he (և ոչ էլ) Կանդրկածե (տարբերակ՝ Տաշածե), это Զավճավածե (սա Զավճավածեն է):

(ԱՄՇՀ)

**3.3.** Զվարճախոսություններից մեկում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ է դառնում հարցադրում-առաջադրանքով այնպիսի երկխոսական կառույցը, որտեղ հարանունությունը ստեղծվում է *բառամասնատում-բառաբարդումով*.

Դրա համար անգլերեն **բըրփըրէյշն**<sup>346</sup> բառը մասնատելով՝ նրա առանձին մասերը համընկեցվում է Հայաստանի որոշակի տարածքների (Հրազդան-Ախտա և Ապարան) բնակչությանը տրվող մականուններին.

— *Էրկու ախտեցի ու մի արբարանցի որոշում են միասին գործ դնեն, աշխատեն: Կարանք ասեք՝ էդ ձեռնարկության անունն ինչ են դնում:*

— .....

— *Քոռքոռէշըն:*

(ԱՄՇՀ)

**3.4.** Նմուշներից մեկում էլ զավեշտի միջոց է դառնում չինական անուն-ազգանվան (Մաու Յզե Դուս) և Բայազետի բարբառի Գավառի խոսվածքով կազմված նախադասության հարանունային կառույցը (**Մացե տուն** – մնացել է տանը):

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 8.2, թիվ 13:

---

346 **Բըրփըրէյշն** (անգլ.) – ձեռնարկություն

**3.5.** Ռուսերենի այբուբենում Փ հնչյունի բացակայության պատճառով Փանոս անձնանունը գրվում է *Панос*, ինչը արտասանական համանունություն է ստեղծում *посос-փորրուծ* հիվանդության հետ: Օտար միջավայրում Փանոս անձնանվանն առնչվողին, ինչ խոսք, այն կարող էր զավեշտալի ու անհեթեթ թվալ:

1972թ. Ռուսաստանի Պենզայի մարզի քաղաքներից մեկում հայկական «Զախորդ Փանոսը» ֆիլմը ցուցադրելիս ականատես եմ եղել զավեշտի դրսևորման մի հետաքրքիր փաստի. կինոնկարի ռուսերեն ազդագիրը տարակուսանքի տեղիք էր տվել ու դահլիճը լցրել հետաքրքրասերներով: Պատճառը ոչ թե հայկական ֆիլմերի հանդեպ հետաքրքրասիրությունն էր, այլ կինոնկարի ազդագիրը. հայկական անձնանունը՝ ռուսերենով, շատերի ծիծաղն ու զարմանքն էր հարուցել. ինչպես է հնարավոր փորլուծը դարձնել կինոնկարի վերնագիր:

**3.6.** Եթե վերը ներկայացված համանուն-հարանունային դրսևորումներով զավեշտ առաջացնող երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները ծիծաղ առաջացնելու համար մեծերի կողմից մեծ մասամբ նպատակադրված են ստեղծվել ու շրջանառվել, ապա նման կառույցներով *մանկական զվարճախոսությունները*, կապված երեխայի մտածողության որոշակի աստիճանի հետ, իրենց ստեղծման ժամանակ երևույթների և առարկաների անմիջական և ուղղակի ընկալման արդյունք-վերարտադրություններ են և հարազատ-մտերիմների շրջանում վերապատմվելով՝ հետագայում են զվարճախոսության իմաստ ձեռք բերել: Մանկական զվարճախոսություններում դրանք ևս բազմազան են:

**ա.** Նմուշներից մեկում ծիծաղն առաջանում է երկու հասարակ գոյականների համանունությամբ.

*Նկատելով ոչխարի հոտը՝ հայրը ասում է.*

— Արան, նայի՛ր, տես ոչխարների հոտը:

— Ոչխարներին տեսնում եմ, բայց հոտը չեմ տեսնում, — պատասխանում է որդին<sup>347</sup>:

---

347 **Հարությունյան Հ.**, Հայոց լեզուն հազարագանձ, «Արևիկ» հրատ., 1989, էջ 132:

բ. Իսկ այս զվարճախոսությունում զավեշտն ի հայտ է գալիս հատուկ և հասարակ գոյականների համադրությամբ.

*Մինը իր կնոջը նոր լուրեր էր ասում, ի վերջոյ ավելացրեց.*

— *Միրմանենց Շաքարը մեռաւ:*

*9 տարեկան որդին որ լսեց, ասաց.*

— *Հայրիկ, եթէ շաքարը մեռնի, այսուհետև թէյն ինչով պէտք է խմենք*<sup>348</sup>:

**գ.** Մեր ձեռքի տակ է համանունության հենքի վրա անսպասելի ծիծաղ առաջացնող «Հայր մեր» տերունական աղոթքի հետ կապված երկու նմուշ, մեկը հրատարակվել է 1876 թվականին<sup>349</sup>, մյուսը անցյալ տարի կատարած մեր գրառումներից է՝ հրատարակված մանկական զվարճախոսություններին նվիրված մեր գրքում<sup>350</sup>:

**գ-1.** 140 տարիներն ասես ոչինչ չեն փոխել երեխաների, մասնավորապես լեռնաբնակ, մտածողության մեջ: Թե՛ Հովի. Նազարյանցի զվարճախոսության, թե՛ մեր գրանցած զվարճապատումի հենքը խոսքի իմաստի ուղիղ ընկալումն է: Առաջինի ժամանակ քահանայի տված հարցին, թե «Որտե՞ղ է քո հայրը» (իմա՝ Աստված-ԱՍ), աշակերտի պատասխանն է անսպասելի ծիծաղ հարուցում.

*Քահանան աշակերտին «Հայր մերը» կարդացրեց և այդ աղոթքի մասին հարցրեց.*

— *Որտե՞ղ է քո հայրը:*

— *Մարաքումն է, — պատասխանեց աշակերտը*<sup>351</sup>:

**գ-2.** Երկրորդ պատումում արքեպիսկոպոսի հարցին, թե ո՞վ

348 Ծիծաղի տուպրակ, Անեկոտներ հայ և օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեսանի, 1892, էջ 164:

349 Անեկոտներ, 1-ին հատոր, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 52:

350 **Մարգարյան Ա. Շ.**, Մանկական զվարճախոսություններ, «Գիտություն» հրատ., Եր., 2016, էջ 137:

351 Անեկոտներ, 1-ին հատոր, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 52:

կարող է «Հայր մեր»-ը ասել, հետևում է առաջին դասարանցի լո-  
նեցի երեխայի՝ «Հերըս Գարե՛գինն ա, մերըս՝ Վարթի՛շանը» պա-  
տախանը:

(ԱՄՇՀ) Տես Հավելված 8.2, թիվ 14:

**3.7.** Ծիծաղ առաջացնող մի խումբ երկխոսական զվարճախո-  
սություններ էլ օտար անձանությունների և հայերեն բառերի հարա-  
նունությամբ «ստուգաբանական» խնդիրներ են լուծում: Ինչ խոսք,  
ստորև բերվող օրինակները տափակ անեկդոտների շարքին են  
դասվում, զուտ տրամադրություն ստեղծելու նպատակ ունեն և  
բնավ կապ չունեն գիտական կամ ժողովրդական ստուգաբանու-  
թյունների հետ.

**ա.** — Գիտե՛ս, որ *Լերմոնտովը* հայ ա:

— Ո՞նց:

— Անցել ա մեր լեռների մոտով, անունը մնացել ա *Լերմոն-  
տով*:

(ԱՄՇՀ)

**բ.** — Իսկ գիտե՛ս, որ *Լյուդվիգ Վան Բեթհովենն* էլ ա հայ.

— Ո՞նց:

— Վանեցի *Լութոյի* տղեն ա:

(ԱՄՇՀ)

**գ.** — Շեքսպիրն էլ ա հայ:

— Ո՞նց կարող ա *Շեքսպիրը* հայ ըլի:

— Հա՛, հայ ա. մեր շեգ *Իսպիրն* ա:

(ԱՄՇՀ)

## ՅԱՎԵԼՎԱԾ 8.2

### 1

Երաժշտական դպրոցից էրեխեն քիթը կախ տուն է գալիս:

— Ինչ է էղե, ընչի՞ է քիթդ կախ, — հարցնում են տանը:

Դասատուն գլխուս զարգեց:

— Ինչը՞իս թե, ի՞նչ էիր էրե օր:

— Դասատուն ըսավ՝ «դո» զարգե, զարգեցի, ըսավ՝ «ոե» զարգե, զարգեցի, ըսավ՝ «մի» զարգե, չզարգեցի, գլխուս զարգեց...

(ԱՍՇՀ)

### 2

Մի տարեց մարդ մտնում է սպիտակ խալաթավորներով հավաքված մի սենյակ ու հարցնում է.

— Կներեք, էրեխեք ջան, էստե՞ղ են անալիզները հանձնում:

— Այո, այստեղ, — պատասխանում են:

Էս մարդը ներս է մտնում ու 3 լիտրանց բանկան զգուշությամբ դնում սեղանին:

— Մի բռպե, հայրիկ, — ասում է բուժքույրերից մեկը, — այսբանը մե՞զ եք բերել:

— Հա, ավաչիկ ջան, դիփի ձեզ եմ բերել...

(ԱՍՇՀ)

### 3

Մի մարդ գնում է բժշկի: Բժիշկը էս մարդուն ասում է.

— Վաղը մեզի անալիզ կբերես:

Հաջորդ օրը էս մարդը, մեզի անալիզը ձեռքին, գալիս է հիվանդանոց: Քույրերից մեկը դուրս է գալիս ու ասում.

— Մե՞զ եք բերել:

— Չէ, — ասում է էս մարդը, — էս պրոֆեսորի համար եմ բերել, բայց եթե ուզում եք, վաղն էլ ձեզ համար կբերեմ:

(ԱՍՇՀ)

## 4

Բժշկական ստուգում-հետազոտությունների էին ուղարկել հիմնարկները: Ես ակնաբուժական հետազոտություն էի անցկացնում: Մարդիկ լինում են՝ կարճատես, հեռատես և նորմալ տեսողության: Հերթական ստուգումներից մեկի ժամանակ հայրենադարձված մի մարդու ասի.

— Հայրիկ, դուք ի ծնե հեռատես եք:

— Է՛, աղջիկըս, թե որ հեռատես ըլայի նե, հոս չէի ըլլա...:

(ԱՄՇՀ)

## 5

Օրին մեկը, հանած-վարած տղայ մը շարադրութիւն կը գրէ «Շատ մի՛ խոսիր» վերնագրով, բայց երբ կարդալու կը սկսի նիւթը, չի հայտարարեր:

Ալեքսան Խոջան, ըստ սովորութեան կ'ընդմիջէ ընթերցաւորը և կը հարցնէ թէ նիւթը ինչ է:

Տղան անտարբեր հրամայական շեշտը պահելով և Խոճայի երեսը նայելով՝

— *Շատ մի՛ խոսիր*, — կ'ըսէ, ու կշարունակէ ընթերցումը:

Փրոֆեսէօրը, ի տես տղուն դերասանական ձևերուն կը յարէ ժպտագին.

— Լա՛ն ուրեմն, նիւթիդ հաւատարիմ եղիր և կարճ կապէ՞...:

Պատմութիւն Անթէյի հայոց, Գ հատոր, խմբագիր՝ Երուանդ Պապայեան:

Լոս Անջելէս, 1994, Ալեքսան Խոճայի շարադրութեան դասի մէջ, էջ 384:

## 6

Տաքսիով էրկու ընկեր գնալիս են լինում, մեկն էլ ա կանգնեցնում տաքսին ու նստում վարորդի կողքին: Որ մի քիչ գնում են, էս մարդը շրջվում ա ու հետևի նստածներից մեկին հարցնում ա.

— Ներեցեք, դուք ինչ մասնագետ եք:

Սա թե՛

— Կենսաբան եմ:

— Իսկ դո՞ք, — հարցնում ա երկրորդին:

— Իրավաբան եմ, — պատասխանում ա երկրորդը:

Էս հարցնողը շրջվում ա ու սկսում թերթ կարդալ:

— Չհասկացա, ախպեր, մեր մասնագիտությունները հարց-  
րիր, էտ քոնն ինչի չես ասում, դոնն ինչ մասնագետ ես, — հարց-  
նում են հետևից:

Ասում ա՛

— Ճիշտն ասած, ես էլ եմ բան, բայց իմ բանն առաջից ա (իմա՛  
բանասեր):

(ԱՄՀՀ)

## 7

### Աման առնող խարսը

Մեկը արարայով աման-չաման եր ծախելի, կեղի քուչնյեն ըն-  
ցուցեսեր արարան<sup>352</sup>՝ աման առնող, աման առնող կանչելով:

Մե խարս լսավ ծենը, ամա ընչնի ըլիը, տսավ արարան խե-  
լանյ ընցե կընացե նոնչ, քամկանց կանչեց.

— Եյ աման ծախող, հեյ, կայնեցու մե, կայնեցու յես ել իկամ:

— Յնրի, յնրի, — ասաց աման ծախողը, — կայնեցուցերիմ,  
յնրի խասի. հենց քեզի խմար ել կայնեցուցեր իմ, յնրի շոտ...

ՀԱԻ-ի արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, FFi:1573:

## 8

### Յաճախապատումը

Հարուստ մեկը ծառան կանչելով.

— Գնա Մարկոս էֆէնտիյէնց տունը Օրմանեանի<sup>353</sup> «Յաճախա-  
պատում»ը բեր, որ ժամանակ անցընես:

Ծառային մինչև տեղ հասնիլը «Յաճախապատում»ը Հաճի  
Խաթունի փոխուցաւ բերնին մէջ:

Փաստաբանը դուռը բանալով երբ ինչ ուզելը հարցուց՝

— Մէր էֆէնտին Հաճի Խաթունը ուզեց, որ ժամանակ անցը-  
նէ, — ըսաւ ծառան:

---

352 Արաբա – սայլ:

353 Ժողովածուն կազմողի սխալի վերաբերյալ մեկնաբանությունը տե՛ս թիվ  
331 տողատակում (էջ 186):



— Ծո՛ւ, ի՛նչ կը ճարտօտես<sup>354</sup>: Անպայման «Յանախապատում»ը ուզած է, բարկացաւ Էֆէնտին:

Ս. Ազնավուրեան, Հէքիաթներ, գուարճալիքներ, ԱՄՆ, Միչիկըն, Տիպորն Հայթս, 1971, էջ 138:

## 9

### Ապրիլ

Մի ցորտ, թոռութիւն օր, մի չորան վըջխըրնեն արած լալ հանդը, ինքն ալ մհակըր դեմ լալ տված չնեն, հոցին<sup>355</sup> կողքեն կոչ եկած, ցուրտից դողդողալիս:

Չորանը մին ալ էն ա տանալիս, հողոքը մի թըջիված, ցըլամ կլորված դեր<sup>356</sup> ա գլոլիս:

Չորանը չանան դողդողցրիլավ հրցրիլիս ա. — Ա դեր, էս ո՞ր ամեսն ա:

Դերը ըսիս ա. — Օրհնյալ, ապրիլ ամեսն ա:

— Չորանը կզնվիս<sup>357</sup> ա, մհակըր քաշմ, դերեն թկիլավ<sup>358</sup> ըսիլիս. — Շան տղա հայ, որ էս ապրիլ ամեսն ա, պա մոնիլեն ամեսն վըրն ա:

Հովսեփյան Հ., Ղարադաղի հայերը. հ. 2, բանահյուսություն, Եր., «Գիտություն», 2009, էջ 456:

## 10

Գութանի փայտերից մեկը կոչվում է «էշ», որ եթե մի քիչ թաց է լինում, կառավ ծեփում են ու դնում արևի տակը, որ չորանայ ու չճեղքուի:

Սկետրայրը հրամայեց իւր քաղաքացի հարսին, որ էշը բոլորովին կառավ ծեփէ: Նա էլ մտաւ գոմը, էշը ոտքից մինչև գլուխ կառավ ծեփեց և «չու՛, չու» անելով՝ դուրս տարավ:

Սկետրայրը տեսնելով՝ բացագանչեց.

354 **Չարտօտել** – ավել-պակաս խոսել:

355 **Հոլե** – ճանապարհ, հոցի – ճանապարհի:

356 **Դեր** – տերտեր:

357 **Կզնվիլ** – ջղայնանալ:

358 **Թկիլավ** – թակելով, ծեծելով: – թակելով, ծեծելով:

— Աստուած, իմ դուշման գեղացուն քաղաքի հարս չտա, որ լի-  
զուն չիմանան:

Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց,  
Թիֆլիս, Մ.Վարդանյանի և ընկ. տպարան, 1883, էջ 83-84:

## 11

Աթուկանց Տադոյի տղա Մարտոյի կնիկը հղի ա ըլլմ, տա-  
նըմ են հիվանդանոց: Որ ազատվլմ, բերլմ են, էքսը Աղաջանանց  
Սարգիսը Մարտոյին ռաստ ա գալի, ասմա՝

— Մարտո՛ ջան, կընգանըտ տարս՛ր հիվանդանոց:

Ասմա՛ հա: Ասմա՛ ազատվե՛ց: Թե՛ հա: Սարդարն ասմա՛

— Բա ի՛նչ ունեցար:

Թե՛ ախչիկ: Թե՛

— Բա անըմն ի՛նչ դրիր:

Թե՛ Լալա: Ասմա՛

— Լալը՛ գիղեմ որ լալ կըլի, դու անըմն ասա: (Աթուկեցոնց լալ  
են ասըմ):

(ԱՄՇՀ)

## 12

Զեյթունցիները իրենց բարբառով «Եա Սույբ Փրլկիչ» կանչելով  
կը պատերազմին թուրքերու դէմ:

Փաշան կը հարցնէ, թէ ի՛նչ կը կանչեն հայերը:

Զինուոր մը կ'ըսէ.

— Փաշա՛, Եա սուփուրկէ տիեօրլար, պիզի թութ քիմի տէօքե-  
օրլար (Փաշա, «ով աւել» կ'ըսեն, մեզ թութի պէս կը թափեն: Անեք-  
թոտը շինուած է բարբառի Սույբ Փրլկիչ (Սուրբ Փրկիչ) և թրք. սու-  
փուրկէ (ավել) նմանաձայն բառերու իմաստային հակադրութեան  
հիման վրայ):

Միջ-գաւառական անեքթոտներ:  
Հաւաքեց և ներկայացուց Յակոբ Չոլաքեան,  
Հալէպ, Տպարան Արևելք, 1988, էջ 55:

### 13

Քյավառցի էրեխին դասատուն ինչ հարց տալիս ա, չի պատասխանում: — Լավ, մի բան էլ հարցնում եմ, պատասխանեցի՞ր՝ մի երեք կնշանակեմ, չէ՞ երկուս եմ նշանակելու: Ո՞վ է Չինաստանի ղեկավարը:

Էրեխեն ձեն չի հանում:

— Հը՞, չգիտեմ:

— Չէ:

— Դե որ չէ՝ օրագիրդ տուր, երկուս եմ նշանակում:

— Մացե տուն<sup>359</sup>:

— Ապրեն, բա ասում ես՝ չգիտեմ, երեք եմ նշանակում:

(Ուսուցչին թվացել էր, թե Մաու Յզե Դուն ա ասել — ԱՍ)

(ԱՄՇՀ)

### 14

Հրանտ Մաթևոսյանի 80-ամյա հորեյսանի կապակցությամբ Ահնիձոր գնացող խմբում է լինում նաև Գուգարաց թեմի առաջնորդ տեր Սեպուհ արքեպիսկոպոս Չուլջյանը: Մտավորականների խումբը լինում է Ահնիձորի դպրոցում:

— Սա ո՞ր դասարանն է, — տնօրենին հարցնում է արքեպիսկոպոսը:

— Էս առաջին նստարանի երկու աշակերտը առաջին դասարանն է, հետևի երկուսը՝ երկրորդ, նրա հետևինը՝ երրորդ, վերջինն էլ՝ չորրորդ:

— Երեխաներ, ձեզանից ո՞վ կարող է «Հայր մերը» ասել, — հարցնում է արքեպիսկոպոսը:

— Ես ասեմ, — անմիջապես ձեռք է բարձրացնում առաջին դասարանցիներից մեկը:

— Ասա՛, տղա՛ ջան:

Թե՛

— Հերըս Գարեգինն ա, մերըս՝ Վարթիշաղը...

(ԱՄՇՀ)

---

359 Մացե տուն – մնացել է տանը:

### 8.3.

## ՈՒՂԻՂ ԵՎ ՓՈՒՍԱԲԵՐԱԿԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ՝ ՉԱՎԵՇՏԻ ՅԵՆՔ

**1.** Հայկական անեկղոտների մեջ քիչ չեն ուղիղ և փոխաբերական իմաստներով անսպասելի ծիծաղի դրսևորման օրինակները:

**1.1.** Երկխոսական անեկղոտներից մեկում առաջադրված հարցը լոռեցու հոգու հետ խաղալու, նրա ճաշակն ու կարողությունները, այսպես ասած, «ստուգելու» նպատակ է հետապնդում: Իսկ պատասխանում լեռնաշխարհի մարդն է՝ իր պարզամտությամբ ու բառի ուղղակի իմաստի ընկալմամբ:

*Մի տարեց լոռեցու հարցնում են.*

— *Կքնե՞իր Ջուլիա Ռոբերթսի<sup>360</sup> հետ:*

— *Այտա՛մ, որ քունս տաներ, խի՞ չէի քնի,- պատասխանում է լոռեցին:*

**1.2.** Հարսանեկան ծիսակարգին առնչվող անեկղոտներից մեկում էլ մայրաքաղաքից Քյավատ խնամախոսության գնացածների պատկերավոր խոսքի ուղիղ ընկալումն է դառնում ասպասելի ծիծաղի պատճառը.

*Երևանից գնում են Քյավատ՝ աղջիկ ուզելու: Ներս մտնելուց հետո խնամախոսներն ուզում են իրենց գրագիտությունը ցույց տան, նպատակները պատկերավոր են ներկայացնում, ասում են.*

— *Մենք եկել ենք ձեր այգուց վարդ քաղելու:*

— *Մեր բոստան հրմմեն<sup>361</sup> կորտոլ ա, — պատասխանում է աղջկա հայրը:*

**1.3.** Ի տարբերություն մեծահասակների անեկղոտների՝ մանուկների զավեշտալի, անսպասելի ծիծաղ հարուցող խոսքը մանկական զվարճախոսություններում կանխամտածված ու նպատակադրված չէ: Այն երեխայի անմիջականության, աշխարհընկալման

<sup>360</sup> Աշխարհահռչակ հնայիչ դերասանուհի:

<sup>361</sup> Ամբողջությամբ, բոլորը:

առաջին քայլերի դրսևորման, տեսածը իր հնարավորությունների սահմաններում վերլուծելու և լսածը ուղիղ իմաստով ընկալելու հետևանք է և սերտորեն կապված է երեխայի տարիքային առանձնահատկությունների ու մտածողության որոշակի աստիճանի հետ:

**2.** Մանկական զվարճախոսություններում անսպասելի ծիծաղը դրսևորվում է բառ-բառակապակցություններն ու ժողովրդական դարձվածքները ուղիղ իմաստով ընկալելու միջոցով: Դրանք մանկան համար անմեղ ու անկեղծ մեկնաբանություններ են, իսկ շրջապատի համար՝ ինքնաբուխ ծիծաղ առաջացնող զվարճախոսություններ: Այսպես՝

**2.1.** Զավեշտի պատճառ է դառնում բազմիմաստ բառի՝ միայն երեխայի իմացած իմաստով մեկնաբանությունը.

*Հեռուստացույցով հաղորդում են. «Ելույթ է ունենում փողային նվագախումբը»: Փոքր տղան հարցնում է.*

— Հայրիկ, ինչ է նշանակում փողային նվագախումբ:

*Քույրը թե՛*

— Չգիտեմ՝ ինչ է. էն, որ հարսանիքներում նվագելու համար փող են տալիս:

(ԱՄՇՀ)

**2.2.** Երեխաներին դեռ հասու չեն համանունային կառույցները, և այդ չիմացությունն էլ շատ դեպքերում նրանց զավեշտալի իրավիճակների մեջ է գցում: Պապին թիկունք կանգնած թոռը չի հանդուրժում, երբ ինչ-որ մեկը, թեկուզև մեծահասակը, փորձում է հարցնել. «Բալիկ ջան, պապդ **կենդանի է՞**», և հետևում է վիրավորված թոռան՝ «Էդ դու ես կենդանին, իմ պապը կենդանի չէ»<sup>362</sup> պատասխանը:

Տե՛ս Հավելված 8.3, թիվ 1:

**2.3.** Մեկ այլ դեպքում առածների այլաբանական իմաստի փոխարեն ուղիղ իմաստն ընկալելն է անսպասելի ծիծաղի տեղիք տալիս՝ անպայման համեմատության եզրեր տեսնելով կենդանու և գիտակից մարդու միջև:

362 Գյուրջիսյան Հ., Մի բոտ ժպիտ, Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012, էջ 171:

Այսպես, **Էջն ինչ իմանա, թե նուշն ինչ է** առաժի իմաստը այսպես է «մեկնաբանում» առաջին դասարանցի Դավիթը.

— Ա՛յ մամ, ըսկի ես չգիտեմ, թե նուշն ինչ ա, էդ էշը որտեղի՞ց իմանա<sup>363</sup>:

**2.4.** Զավեշտի ստեղծման պատճառ է դառնում նաև հարադիր կառույցի անդամներից մեկի ուղիղ իմաստով ընկալելը.

Հինգ տարեկան Նարեն առաջին անգամ գնում է Երևան, հետո երբ գալիս է Կիրովական, հարցնում են.

— Նարե՛ ջան, Երևանում լիՖտ **նստել** էս:

— Հա, բայց նստելու աթոռ չկար:

(ԱՍՇՀ)

**2.5.** Կամ էլ՝

— Նարե՛, բա ամոթ չի՞, **կանգնում** ասում ես՝ դաս չեմ սովորել, դիտողություն է անում ուսուցիչը 1-ին դասարանցի աշակերտուհուն:

— Ես կանգնած չեմ ասում, նստած եմ ասում, ուսուցչին «ուղղում է» երեխան:

(ԱՍՇՀ)

---

363 Նույն տեղում, էջ 209:

## ՀԱՎԵԼՎԱԾ 8.3

### 1

Հրանտիկը ծնողների հետ ավտորուսով գյուղ էր գնում: Ուղևորներից մի ծերունի հարցնում է նրան.

— Բալինկ ջան, պապդ կենդանի է:

— Էդ դու ես կենդանին, իմ պապը կենդանի չէ, — վիրավորված պատասխանում է նա:

Գյուրջինյան Հ., Մի բոտ ժպիտ,  
Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012, էջ 209:

### 2

Առաջին դասարանցի Դավիթը կարդում էր.

— Էշն ինչ իմանա, թե նուշն ինչ է:

Կարդալուց հետո մի պահ դադար տվեց, ապա զարմացած դիմեց մորը.

— Ա՛յ մամ, ըսկի ես չգիտեմ, թե նուշն ինչ ա, էդ էշը որտեղից իմանա:

Գյուրջինյան Հ., Մի բոտ ժպիտ,  
Վանաձոր, Միմ տպագրատուն, 2012, էջ 209:

**ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ  
ԵՎ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԸ՝  
ՉԱՎԵՇՏԻ ՅԵՆՔ**

**1.** Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի ստեղծման հենք է դառնում **բառաբարդում-հնչյունահավելումը՝** տարբեր բառերի կամ բառ հնչյունների միացմամբ նոր բառերի ստեղծումը:

**1.1.** Մի դեպքում դրան նպաստում է գրաբարի հոլովման օրինաչափությունը.

— *Ջարմանալի լեզու ա էս գրաբարը. ուղղականում տղա եմ Աբել, հայցականում՝ աղջիկ՝ **Ջարել...***

(ԱՄՀՀ)

**1.2.** Մեկ այլ դեպքում հայերենի այբուբենի գրանշանով ներկայացված ժամանակաշրջանը, բառին միացվելով, ժողովրդախոսակցականում կիրառվող օտարահունչ բառի իմաստ է արտահայտում.

*Ոսուցիչ. — Երեխաներ, ինչ է նշանակում «Երկունք Թ դարու»:*

*Աշակերտ. — **Թ-ըդարեք**<sup>364</sup> տենալ:*

(ԱՄՀՀ)

**1.3.** Անեկդոտներում բառաբարդմամբ ծիծաղ ստեղծելու տեսակներից մեկն էլ խոսակցին հարցադրում-առաջադրանքով է արտահայտված.

— *Ո՞վ կասի՝ արարանցին մեղրեցու հետ ամուսնանալիս ինչ կստացվի:*

— *Իշամեղու:*

(ԱՄՀՀ)

---

<sup>364</sup> **Թ-ըդարեք** (թրք.) – պատրաստություն:



**1.4.** Մանկական զվարճախոսություններից մեկում էլ ուսուցչի՝ «Իսկ եթե 3 խնձորին գումարես 2 տանձ, ինչքան կլինի» խաբուսիկ հարցին հետևում է երեխայի՝ թվաբանական ճիշտ հաշվարկով արված «Հինգ հատ **խնձորատանձ**» ճկուն պատասխանը: Բառաբարդմամբ ստեղծված նոր բառը դառնում է զվարճախոսության անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը:

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 9, թիվ 1:

**2.** Հայ ժողովրդական երգիծապատում-զվարճախոսությունների համար զավեշտի հենք է դառնում նաև **բառամասնատում-բառաբաժանումը**: Մեր գրառումներում բառամասնատմամբ զավեշտի դրսևորումների լավագույն օրինակներից երկուսն առնչվում են քաղաքական թեմաներին, մեկը՝ խորհրդային տարիներին ստեղծված, մյուսը՝ Ղարաբաղյան շարժմանը հաջորդած մութ ու ցուրտ տարիներին:

**2.1.** Զվարճապատումներից առաջինում զավեշտն ստեղծվում է գրական հայերենի **շահագրգռվածություն** բառի մասնատմամբ՝ ընդգծելով հայրենադարձի դժգոհությունը խորհրդային համակարգից, քանզի շահը պետությանն էր գնում, գրգռվածությունը՝ ժողովրդին:

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 9, թիվ 2:

**2.2.** Ժողովուրդը նոր ժամանակների քաղաքական թեմային վերաբերող զվարճախոսություններից մեկում էլ զավեշտի հենք է դարձնում Արցախ բառի մասնատմամբ ստեղծված հարանունությունը.

Ցուրտ ու մութ տարիների համար ժողովուրդը հեզնելով՝ «ար-դարացնում» էր իշխանավորներին.

— Բայց Լևոն Տեր-Պետրոսյանն ի՞նչ մեղավոր ա, որ ժողովուրդը վառելիք չունի. ցուրտ ա, մրսում ա: Նա դեռ 1988-ից էր ժողովրդին զգուշացնում, որ չմոռանան՝ ցախ առնեն, ու չմոռանալու համար վանկարկելով կրկնել էր տալիս նրան. «**Ա՛ն-ցախ, ա՛ն-ցախ, ա՛ն-ցախ...**»:

(ԱՄՇՀ)

**2.3.** Մեկ այլ զվարճախոսության մեջ զավեշտ է ստեղծվում օտարաբալեզու «ունիվերմազ»<sup>365</sup> վանկային հապավումը միտումնավոր մասնատելով: Հանրախանութ բառի փոխարեն ժողովրդախոսակցական լեզվում կիրառվող ռուսերեն հապավումը անեկդոտում մասնատմամբ վեր է ածվել երկու հայերեն իմաստակիր բառերի.

Գեվոն մտնում է **ունիվերմազ** ու վաճառողին թե.

— Մի հատ վերմակ տուր:

— Չըկա:

— Վեր չըկա, հոր եք շենքի ճըկատին կիրալ ՈՒՆԻ ՎԵՐՄԱԿ...<sup>366</sup>

**2.4.** Բառամասնատմամբ զավեշտի ստեղծման յուրատեսակ նմուշի ենք հանդիպում Հովհ. Նազարյանցի անեկդոտների հատորներից մեկում: Այստեղ արդեն, ի հակադրություն *մեռնել* բառի, Թիֆլիսի բարբառի *ծնվել*, *մեծանալ*, *ապրել*, *հարստանալ* բառերի անցյալ կատարյալի եզակի թվի 3-րդ դեմքի վերջավորության միջոցով առանձնացվում և ընդգծվում է **ցավ** բառը.

*Տիխիսեցի վաճառական Պատավ Եովանեն ասում էր.*

— Աշխարհքումս մարդու ծնուիլն էլ, ապրիլն էլ, հարստանալն էլ ցավ է, մենակ մեռնիլն է հանգիստ: Ասում ինք՝ «Փլան մարդը ծնուեցավ, մինձացավ, ապրեցավ, հարստացավ». մենակ մեռնիլն է անցավ. ասում ինք՝ «մեռավ»: Միր Միրզոյեվն էլ ծնուեցավ-ցավ, մինձացավ-ցավ, հարստացավ-ցավ, ապրեցավ-ցավ, մեռավ — հանգավ<sup>367</sup>:

**2.5.** Լենինականցիները Ղարաբաղյան շարժման օրերին յուրովի էին մեկնաբանում իրենց քաղաքի անունը՝ բառամասնատմամբ ստուգաբանելով այն..

365 **Ունիվերմազ** (ունիվերսալիյ մագազին) (ռուս.) – հանրախանութ:

366 **Սահակյան Լ.**, Սրախոսություններ և անեկդոտներ, Գորիս, «Մուշ» հրատ., 1994, էջ 50:

367 Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, 1883, Մ.Վարդանանի և ընկ. տպարան, էջ 53:

Լենինականը կապ չունի Լենինի հետ: Դա հենց նույն **լեն նա-  
գանից** է առաջացել:

(ԱՄՇՀ)

**2.6.** Հարս-սկեսուր հարաբերությունները ևս անեկդոտում բա-  
ռաբաժանման միջոցով է հնարավոր լինում բացահայտել «մեղա-  
վորին».

*Նորահարսին հարցրին.*

— Աղջի՛, կեսուրդ լավն ա՛:

— Ի՛, մի բառի կեսը որ «սուր» լինի, էլ դրա լավը ճրն ա<sup>368</sup>:

Իսկ փեսա-գոքանչ փոխհարաբերության հաղթողը «կապ» ու-  
նի գողական-բանտային աշխարհի հետ, քանզի դա է հուշում բառի  
«ստուգաբանությունը».

*Զոքանչ – գոնի<sup>369</sup> քաջ:*

**2.7.** Բառամասնատմամբ ծիծաղ առաջացնելու դրսևորումնե-  
րը շատ-շատ են մանկական զվարճախոսություններում: Մակայն,  
ի տարբերություն վերը թվարկած դրսևորումների, այս խմբի սնուշ-  
ներում բառաբաժանումը երեխաները նպատակադրված չեն կա-  
տարում: Ահա դրանցից մի քանի սնուշ.

**ա.** Զրոսաշրջային ազդագրի օտար բառի հապավումն է մաս-  
նատմամբ, համանունությամբ և չգիտակցված բառախաղով «հա-  
յացվում»՝ տեղիք տալով զավեշտ առաջացնող մանկան զարման-  
քին.

*Մայր ու աղջիկ փողոցով անցնում են, իսկ այրուքենը նոր  
ավարտած 6.6-ամյա Նանեն հայերենի տառերի իմացությունը  
ամրապնդում է տարատեսակ ազդագրերն ու ցուցանակները  
կարդալով: Քիչ անց տեսնելով զրոսաշրջության ազդագիրը՝  
տարակուսած դիմում է մորը, թե՛*

— Ման, գրել են Նանե տուր, բայց ի՛նչը տամ:

(ԱՄՇՀ)

368 Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լե-  
նա Ակթառանյանը, Եր., «Վերնատուն» հրատ., 1994, էջ 8:

369 **Զոնսա** (ռուս.) – բանտային տարածք:

բ. 3-ամյա Տարունի հոր՝ Արթուրի ընկերներից մեկը հյուր էր եկել: Տարունն անկաշկանդ նստում է անձանոթի ծնկին ու հարցնում է.

- Անունդ ինչ ա:
- Ասատուր:
- Տուր, անունդ ինչ ա:
- Ասատուր:
- Տուր, անունդ ինչ ա:
- Ասատուր...

(ԱՄՇՀ)

**3.** Զվարճապատումի հենք է դառնում **կրկնավոր բարդություն** այնպիսի տեսակը, երբ բարդության մի մասը հնչյունավորման կամ հնչյունահավելման միջոցով անորոշություն, անիմաստություն է արտահայտում.

Մարդ ու կնիկ բաժանվում են, դատարանում դատավորն ասում ա՝

— Ինչ ունեք-չունեք, հավասար պիտի բաժանվի, հիմա ասեք, թե ձեր տանն ինչ ունեք:

Կնիկն սկսում ա ունեցվածքը թվարկել.

— Տուն-մուն, էշ-մեշ, տեղաշոր-մեղաշոր, աման-չաման....

Դատավորն էլ թե՝

— Դե ուրեմն՝ մարդիդ կտանք տունը, քեզ կտանք մունը, մարդիդ կտանք էշը, իսկ քեզ՝ մեշը, մարդիդ կտանք ամանը, քեզ էլ կտանք չամանը...

(ԱՄՇՀ)

**4.** Հայկական անեկդոտների համատեքստում հանդիպում ենք նաև տարբեր տեսակի հապավումների հենքի վրա ստեղծված անեկդոտների:

**ԽԾԲ** տառային հապավումը (խնամի, ծանոթ, բարեկամ) բոլորին է հայտնի՝, և ամենադժվար թվացող հարցն անգամ, ըստ ժողովրդի, ի գորու են լուծել այդ ամենագոր երեք տառերը: Աղջկա՝ հապավումով խոսելուն հակադարձելով՝, թե՝ «Գնացել էի

ՎԼԿՄՍ<sup>370</sup>»-ի ժողով, լոռեցի զվարճախոսը տառային հապավմամբ է որոշում հաղորդակցվել կնոջ հետ.

— *Կնիկ, չբըխը:*

*Ուզում ա ասի՝ չայ բեր խմեմ<sup>371</sup> :*

Երբեմն ռուսերենի տառային հապավումներին համադրվում է հայերենի նույնատառ ինքնաստեղծ «հապավումը»՝ երկինաստ կիրառությամբ զավեշտ առաջացնելով և շփոթեցնելով դիմացինին:

Խորհրդային տարիներին բարձրագույն կուսակցական դպրոցի օտարարակեզու **ՎեՊեՇե**<sup>372</sup> տառային հապավումը մեզ մոտ կիրառվել է նաև ժողովրդախոսակցական լեզվում, և սրա համանունությամբ էլ կիրովականցի զվարճախոս Ֆանտոն բոլորին զվարճացնում էր իր հնարանքով.

— *Գիտե՞ք, որ ես ՎՊԵ-ն եմ ավարտել, — հաճախորդներին հաճախ էր մոլորեցնում Ֆանտոն:*

— *Ո՞նց, ՎեՊեՇե-ն ես ավարտել ու էս գործին էս:*

— *Ես իմ ստացած մասնագիտությամբ էլ աշխատում եմ, բա հրտեղ աշխատեմ, եթե ես Վիսշայա պակրիշենկայա շկոլա<sup>373</sup>-ն եմ ավարտել:*

(ԱՄՇՀ)

Զվարճախոսություններից մեկն էլ ինքնատիպ ձևով է մեկնաբանում **Երիսցան** (Իմա՝ Երևանի հացի առևտուր) *վանկաբառային հապավումը*: 1940-ականների վերջին հայրենադարձների կողմից այդ հապավման յուրովի «վերծանությունը» անսպասելի ծիծաղ

370 1950-60-ականներին Խորհրդային Հայաստանում կիրառվող ռուսերեն տառային հապավումներից է, որը հետագայում թարգմանվեց և շրջանառվեց դրա հայերեն վանկատառային հապավումը՝ Համամիությունական լեհիկյան կոմունիստական երիտասարդական միություն:

371 Հայ ազգագրություն և բանասիրություն, հ. 20, Թամար Գևորգյան, Լոռի (Տաշիրք-Ձորագետ), Եր., «Գիտություն» հրատ., 1999, էջ 166:

372 ՎեՊեՇե (ռուս.) – Վիսշայա պարտիյայա շկոլա՝ բարձրագույն կուսակցական դպրոց:

373 Վիսշայա պակրիշենկայա շկոլա (ռուս.) – բարձրագույն անվաղողերի դպրոց:

է առաջացնում՝ «պայծառ տխրությամբ» արտացոլելով ներգաղթը կազմակերպողների փքուն խոստումները և ետպատերազմյան տարիների սոցիալական ծանր վիճակը՝ **Երիացառ – Երանի հաց առնողներին**<sup>374</sup>:

**5.** Հայկական զվարճապատում-զվարճախոսություններ են ստեղծվել, որոնց զավեշտի հենքը **լեզվաբանական եզրույթներն** են (կապ, հապավում, քերականական կարգ՝ եզակի-հոգնակի, շնչավոր-անշունչ առարկա, դերբայական դարձված և այլն): Դրանք հանդես են գալիս կամ սուկ եզրույթների անվանումների մատնանշմամբ, կամ էլ դրանց լեզվաբանական տարատեսակ դրսևորումներով: Ի դեպ, թե՛ առաջին, թե՛ երկրորդ խմբերի նմուշները շրջանառվում են առավելապես այնպիսի շրջանակներում, որոնց հասանելի են լեզվաբանական եզրույթներն ու դրանց բնորոշ կողմերը:

**5.1.** Կան լեզվաբանական եզրույթներ և դրանց դրսևորումներ, որոնք հասանելի են միայն նեղ մասնագետներին՝ բանասերներին:

**ա.** Այսպես, գրաբարի հոլովական միջոցներին և հայցականի դրսևորմանը ծանոթ մարդը միայն կարող է ընկալել ու ծիծաղել հետևյալ զվարճախոսությունը լսելուց հետո.

Արել անունով մեկը, զարմացած մեր հնագույն լեզվի հնարավորություններով, այսպես է արտահայտվում.

— Բայց ինչ հետաքրքիր լեզու ա մեր գրաբարը. ուղղակիա՛նում տղա եմ՝ **Արել**, հայցականում՝ աղջիկ՝ **Ջարել**...:

(ԱՄՇՀ)

**բ.** Իսկ **գրաբար** եզրույթին անծանոթ մեկը հարանունության պատճառով կարող է ասելիքը վերածել զավեշտի.

Վանաձորի հեռուստատեսությամբ հարցազրույցներից մեկի ժամանակ թղթակիցները հարցնում են պրոֆեսիոնալ բոնցքամարտի աշխարհի բազմակի չեմպիոն Վախթանգ (Վիկ) Դարչինյանին.

— Հավատո՞ւմ եք Աստծուն, որնզից առաջ խաչակնքո՞ւմ եք:

---

<sup>374</sup> Հայ ժողովրդական մշակույթ-12, ՀԱԻ-ի հանրապետական գիտաժողովի նյութեր, «Մուղնի» հրատ., 2004, էջ 149:

— Այո, հավատում և խաչակնքում եմ, էս խաչն էլ **գրաքարն** աս  
տվել, — պատասխանում է Դարչինյանը:  
(Ուզեցել է ասի՝ Վեհափառն է տվել - ԱՍ)

(ԱՄՇՀ)

**5.2.** Կան զվարճախոսություններ, ասենք քերականական կար-  
գին՝ **եզակի-հոգնակիին** առնչվող, որոնք ընկալելի և տարածված  
են թե՛ դպրոցականների շրջանում, թե՛ մեծահասակների:

**ա.** Եզակի-հոգնակիի կիրառությանը վերաբերող ստորև բեր-  
վող զվարճապատումը պատմվում է մեծահասակների միջավայ-  
րում: Իրականության հենքի վրա ստեղծված այս նմուշը շուրջ ութ  
տասնամյակ է շրջանառվում է ժողովրդի մեջ.

Հայաստանի երկրորդ դեմքը դառնալուց հետո մասնագետ-  
ներ են կցում կրթություն չունեցող Մացակ Պապյանին<sup>375</sup> ու նրա  
կնոջը, որ գրագետ ու քաղաքակիրթ դարձնեն, վարվելակերպ  
սովորեցնեն, որ դիմացինի հետ խոսելիս քաղաքավարության  
համար հոգնակի թվով խոսեն...:

Մի օր երբ հեռախոսի զանգն է հնչում, Մացակ Պապյանի  
կինը վերցնում է լափողը և ասում.

— Այո, Մացակ Պապյանի կանայք են ձեզ հանգստաց-  
նում... (տարբերակ՝ Մացակ Պապյանի կնանիքն են խոսում)...:

(ԱՄՇՀ)

**բ.** Հիմնականում դպրոցականների շրջանում է պատմվում հե-  
տևյալ նմուշը.

Լոռու գյուղերից մեկում ուսուցիչը հարցնում է.

— Երեխաներ, ո՞վ կարող է ասել՝ շավարը եզակի՞ է, թե՛ հոգ-  
նակի:

Աշակերտներից մեկը ձեռք է բարձրացնում ու ասում.

— Ներքի կուռը<sup>376</sup> հոգնակի աս, վերի կուռը՝ եզակի:

(ԱՄՇՀ)

---

375 Մացակ Պապյան, կոլխոզի (իմա՝ կոլեկտիվ՝ հանրային տնտեսության-ԱՍ)  
նախագահ, որը Ստալինի միջամտությամբ միանգամից նշանակվում է  
Խորհրդային Հայաստանի Գերագույն խորհրդի նախագահության գնդա-  
կահարված նախագահի թափուր պաշտոնում:

376 Կուռ – կողմ:

**5.3.** Դպրոցականներն են շրջանառում նաև **գոյական** խոսքի մասի **շնչավոր և անշունչ առարկաներին** վերաբերող վարդանիկյան պատումնաշարի հետևյալ անեկդոտը.

*Մի անգամ ուսուցիչը դիմեց Վարդանիկին:*

— *Շնչավոր առարկայի անունն ասա:*

— *Էծ:*

— *Ապրեն, իսկ հիմա անշունչ առարկայի անունն ասա:*

— *Սատկած էծ, — պատասխանեց Վարդանիկը<sup>377</sup>:*

**5.4.** Իսկ **գոյականի** և **բայի** խոսքամասայինի տարբերակիչ կողմը գվարճախոսությունում այսպիսի գավեշտալի մեկնաբանություն է ստացել.

— *Ինչ բան է «էշ», գոյականն թե բայ, — հարցրեց վարժապետը:*

— *Բայ, — պատասխանեց աշակերտը, — որովհետև կարելի է ասել. «Ես էշ եմ, դու էշ ես, նա էշ է»<sup>378</sup>:*

**5.5.** Պարբերաբար տրվող գովազդները երբեմն նպաստում են գվարճախոսությունների առաջացման: Վերջին տասնամյակներում հեռուստատեսությամբ կանանց հիգիենայի համար օգտագործվող արտադրանքի՝ միջադիրի անընդհատ գովազդելու ներգործությունը դրսևորվել է դերբայական դարձվածքին առնչվող գվարճախոսությունում.

*Ուսուցիչը հարցնում է.*

— *Երեխաներ, ինչ դերբայական դարձվածք գիտեք:*

*Աշակերտներից մեկը պատասխանում է.*

— *Միջադիր դերբայական դարձվածք:*

(ԱՄՇԸ)

---

377 Ծիծաղենք միասին, Կազմեց Սարինէ Ամիրխանեանը (Ղևոնդեան), Բ տպագրություն, Թեհրան, «Նայիրի» հրատ., 2007, էջ 103:

378 Անեկդոտներ, հատոր 1, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 111:



**5.6. Կապ խոսքի** մասին առնչվող այս զվարճախոսությունը կարող է ընկալելի լինել միայն գյուղաշխարհի երեխային, քանզի հարանունությամբ մեջբերված «կապերի» տեսակները հասու են մեկ լեզվաբան-բարբառագետներին կամ ազգագրագետ-բանագետներին, մեկ էլ սովյալ բարբառը կրող երեխաներին.

Լոռու գյուղերից մեկի դպրոցում հայոց լեզվի դասին ուսուցիչը հարցնում է.

- Երեխաներ, կապերի ինչ տեսակներ գիտեք:
- Ես ասեմ, ձեռք է բարձրացնում աշակերտներից մեկը:
- Ասմ, տղա՛ ջան:
- Ֆորթակապ, քարկապ, գրկապ, **գելկապ**<sup>379</sup>...

(ԱՄՇՀ)

---

379 **Գելկապ** – գայլին կապել: **Գելկապի աղոթք** – գիշերը դրսում մնացած ընտանի կենդանիներին գայլից պաշտպանելու համար ասվող ժողովուրդական աղոթք, որն իբր օգնում էր գայլի բերանը կապելուն:

## ՀԱՎԵԼՎԱԾ 9

### 1

Յոթ տարեկան Վահագնին դպրոց ընդունելու համար տնօրենը հարցեր է տալիս.

— Բալլիկ ջան, երեքին եթե գումարես երկուս, ինչքան կանի:

— Հինգ, — պատասխանում է Վահագնը:

— Ապրեն, իսկ եթե 3 խնձորին գումարես 2 տանձ, ինչքան կլինի, — երեխայի հոգու հետ խաղալու համար հարցնում է տնօրենը:

— Հինգ հատ խնձորատանձ, — անմիջապես պատասխանում է Վահագնը:

(ԱՍՇՀ)

### 2

Մի ախպար, կշտացած ամեն ինչից, որոշում ա գնա Ամերիկա: Սրան կանչում են կենտկոմ՝ համոզելու, որ չգնա.

— Ա՛յ հայրիկ, երկհարկանի տունն ունես, ընտիր ավտոն ունես, բանկըմ էլ էսքան փող ունես (դե ԿԳԲ-ին ամեն ինչ հայտնի էր), Ամերիկա ի՞նչ կա, որ գնում ես:

Ասմա՝

— Հոն շահագրգռվածություն կա:

Էս կենտկոմի աշխատողը վիրավորված ասում ա.

— Ինչի՞, հայրիկ, մեզ մոտ շահագրգռվածություն չկա՞:

Ախպարն ասմա.

— Տղան, հոս ալ կա, բայց հոս շահը կմնա ձեզի, գրգռվածությունը՝ մեզի:

(ԱՍՇՀ)

## ՊԱՏԿԵՐԱՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝ ԶԱՎԵՇՏԻ ՅԵՆՔ

Զվարճապատում-զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում նաև պատկերավորման և արտահայտչության տարատեսակ միջոցները՝ մակդիր, համեմատություն, փոխաբերությ-փոխաբերություն, զեղչում, բառախաղ, հանգախաղ, հնչերանգ և այլն: Անդրադառնանք դրանցից մի քանիսին.

**1.** Եթե թաղման սգերգերում ու սգո խոսքերում առկա է վշտին, դժբախտությանն ուղեկցող հուզական խոսքը, բաժանման ցավը, ասիտասանքը, որը հուզում է նաև ներկա գտնվողներին, ապա երգիծական մանրապատումների լալիքի խոսքերում ու երգերում առկա է գավեշտը, ինքնաբուխ անսպասելի ծիծաղը:

Թաղման ծիսակարգի լայաց երգի դարաբաղյան երգիծապատումներից մեկն էլ ամուսնու մահը անկեղծորեն սգացող կնոջ խոսքերը Պըլը Պուդու բերանով է ներկայացվում, այն էլ այնպիսի պատկերավորությամբ «ծաղկեցնելով» ու փառաբանելով հանգուցյալին, որ կամա թե ականա զվարճանք է պատճառում լսողին: Զավեշտ առաջացնողը հատկապես **մակդիրների** ու **համեմատությունների** առատությունն է.

— «Աղջի, քը մատաղ, ըներանկ ար էն օրին, որ ծմական գեալիս ար՝ սեզնը, զկեռը, մըհասուրը ջուբորը լիկը. լրհայ որ բերում ար, խըխոնցս ըռաջին որ ածում, հենց ար ինում, **լրհայ Թաւրուզու խոշկեապէար ինի:**

«Աղջի, քը մատաղ, լրհայ որ իրկէօսանց գեալիս ար կացինը քամակը կոխած, ցակատը առաջը կոխած, կեօտակ էշը ըռաջկին, շիշայ շիշայ ընշուդաւ բեռնած, յագին պուլտի ընեյաւ. լրհայ որ բերում ար ընծղաբեռնը որօտում, **հենց ար ինում լրհայ պեազրկանի թէանպէալէթ ինի:**

ա քու **ոսկի փըշակիդ** մատաղ,

ա քու **ոսկի քրիստոնիդ** մատաղ,  
ա քու **ոսկի տրգկեահիդ** մատաղ,  
անծուղ կ'աներ, **լրհայ ձրձոնակի թներ ինի**:  
Աղջի, բւ՛, ինձ նմանին տէրը տագ կանի<sup>380</sup>»:

Պատումն ամբողջությամբ և լրացուցիչ մանրամասներով ու Ղարաբաղի բարբառը գրական արևելահայերենի վերածած՝ տե՛ս Հավելված 10, թիվ 1-ում:

**2.** Ընդգծված հումորի զգացումը՝ շաղախված այլաբանություններով, փոխաբերություններով, մակդիրներով ու զավեշտ առաջացնող լեզվական տարատեսակ միջոցներով, մանկահասակ երեխաների մտածողությանը բնորոշ չէ: Այն հատուկ է ձևավորված անհատին, սակավ քանակությամբ նաև՝ դպրոցական միջին տարիքի երեխաներին: Եթե երեխան օգտագործում էլ է, ապա շրջապատում լսած պատկերավոր բառերը գործածում է մեքենայաբար:

**ա.** Այսպես, մանկական զվարճախոսություններից մեկում տատի ծննդյան օրը շնորհավորող մանկան՝ «գեղարվեստական պատկերի» մեջ օգտագործած **մակդիրով** համեմված անկեղծ բարեմաղթանքի խոսքն ակամայից անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ է դառնում. «Տատիկ ջան, շնորհավորում եմ քո ծննդյան տոնը, ցանկանում եմ քեզ առողջություն, երջանկություն և կանաչ ճանապարհ դեպի կապույտ երկինք»<sup>381</sup>:

Տե՛ս Հավելված 10, թիվ 2:

**բ.** Մանկական մեկ այլ զվարճախոսության մեջ երեխայի կողմից Աշոտ Երկաթի Երկաթ մակդիրի մեկնաբանությունն է դառնում զավեշտի հենքը.

- 4.8 տարեկան Աշոտիկը մորը՝ Աշխենին, հարցնում է.
- Կտրած խնձորն ինչի՞ է մզանում:
- Երկաթ կա մեջը, դրանից է:

380 Պըլը-Պուդի, գրեց Մակար վարդապետ Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանեսանի և ընկ. տպարան, 1883, էջ 131-132:

381 **Սարգսյան Ա. Շ.**, Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, էջ 134:

— Մամսի, երևի Աշոտ Երկաթը շատ խնձոր է կերել, որ **Երկաթ** են ասում, մեկնաբանում է Աշոտիկը<sup>382</sup>:

**3.** Քիչ չեն նաև հայկական այնպիսի գվարճապատում-գվարճախոսությունները, որոնցում **համեմատությունն** է դառնում անսպասելի ծիծաղի պատճառը:

**ա.** «**Աղէն հէլէր ա բօստան**» գվարճապատումում աղան, իր մարմնի հիվանդ մասերը բանջարեղենի տարբեր տեսակների հետ պատկերավոր ներկայացնելով, ծառային խնդրում է այդ նույնը փոխանցել հեքիմին.

— **Տէնում էս, էլի, հէք'իմին ասա՝ աղի մանները ոտէր ա խիյարի պէս, թելվէրը ոտէր ա յէմիշի<sup>383</sup> պէս, գ'ըլօխը ոտէր ա դ'թումի պէս...**

Մտամոլոր ծառան, անկարող լինելով բոլոր թվարկած ցավող տեղերը համեմատություններով հիշել, այդ ամենը «միատեղում» և «տեղավորում է» բոստանում, ինչն էլ պատճառ է դառնում զավեշտի առաջացման.

— **Աղսի, էտդար բ'անը իմ մըտին չի մնա, կ'էրթամ հէք'իմին կասէմ՝ աղէն հէլէր ա բօստան: Բօստնի մէշը հըմմէն ինչ էլ կա՝ խիյար էլ, յէմիշ էլ, ձ'մէրուկ էլ, դ'թում էլ...**<sup>384</sup>

Տես Հավելված 10, թիվ 3:

Այս պատումի Ախալցխայի տարբերակը՝ «Խալֆիս բանը բոստան է» վերնագրով:

տես Հավելված 10, թիվ 4:

**բ.** Ժողովրդական խոսքում զավեշտալի համեմատությամբ ամենատխտոր իրավիճակի նկարագրությունն ասես փորձում է մեղմել հոգու ցավը.

Բաքվի փախստականին երբ զանգահարում, հարցնում են, ո՞նց ես, պատասխանում է.

---

382 **Սարգսյան Ա. Շ.**, Մանկական գվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, էջ 97:

383 **Յէմիշ** – սելխ:

384 **Մարկոսյան Ռ.**, Արարատյան բարբառը, Եր., «Լույս» հրատ., 1989, էջ 292:

— Մատանդ ինիմ, **տկլոր էշու նման**, — ապա ավելի ընկալելի դարձնելու համար մանրամասնում, — Մատադ ինիմ, հինջ սսիմ, վեչ տեդ օնիմ, վեչ տոն օնիմ, առանց փալան էշը հոնց կինի<sup>385</sup>:

Տես Հավելված 10, թիվ 5:

**4.** Ժողովրդական ծիսակարգի հետ կապված երգիծապատումներից մեկում էլ զավեշտի մեխը **փոխարերությունը** ասված խոսքն է ու դրանից բխած հակադարձվող պատասխանը:

**ա.** Աղջիկ ուզելու նպատակով մայրաքաղաքից Քյավառ գնացածների՝ **Մենք եկել ենք ձեր այգուց վարդ քաղելու** պատկերավոր խոսքին հետևում է աղջկա հոր՝ **Մեր բոստան հրմմեն կորտոլ ա** անսպասելի ծիծաղ հարուցող պատասխանը:

(ԱՄՇՀ)

**բ.** Երբեմն էլ ժողովրդախոսակցական լեզվում իրավիճակներն այնքան են սրվում, որ համեմատության առարկաներն էլ են դառնում անբնական ու շատ հաճախ՝ գոեհիկ: Հատկապես գյուղաշխարհում հանդիպող նմանատիպ արտահայտություններն էլ դառնում են զվարճապատում-զվարճախոսությունների ստեղծման ու տարածման հիմնական պատճառը.

*Գյառգյառի կոլխոզի նախագահ Մացակ Պապյանը գնում է Երևան՝ գյուղատնտեսության նախարարություն: Նախարարությունում եղած ժամանակ կինը զանգահարում է.*

— Ա՛յ Մացակ, էս անդեր փլավը սատել ք...ք (տրբբկ.՝ լափ) ա դառել, ե՛փ ես գալի ուտես:

(ԱՄՇՀ)

**5.** Ի տարբերություն պատկերավորության այլ միջոցների՝ **այլաբանությունը** վերաբերում է ամբողջական ստեղծագործությանը: Այս առումով, որոշ երգիծապատում-զվարճախոսություններ ևս, պահպանելով անեկդոտի ժանրին հատուկ ամենաէական

---

385 Բաբվի հայոց բանահյուսությունը, գրառեցին և կազմեցին Ալվարդ Ղազի-յանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 225:

հատկանիշները՝ լակոնիկ՝ կարճառոտ կառուցվածք, անսպասելի ծիծաղ առաջացնող վերջաբան, այլաբանորեն են ներկայացնում ասելիքը:

Ասելիքն այլաբանորեն վերարտադրող անեկդոտներն իրենց գործող անձանցով՝ առակներին բնորոշ իրական կամ անիրական հերոսներով ու աշխարհներով (առարկաներ, կենդանիներ, մարդիկ, դժոխք, դրախտ) ու երկխոսությամբ, ինչ-որ տեղ մոտենում են առակի տեսակին, սակայն նման պատումներում գրեթե բացակայում է առակից բխող դաստիարակչական-ճանաչողական-խրատաբարոյական ուղղվածությունը: Այլաբանական անեկդոտներում բարոյախոսական վերջաբանին փոխարինում է անկանխատեսելի և անսպասելի պատասխաններով ծիծաղ հարուցող, միաժամանակ քննադատություն պարունակող վերջաբանը, որը նույնպես խորքային է, սուր և նպատակային:

Եթե ժողովրդական ավանդական առակները մեծ մասամբ վերաբերում են բոլոր ժամանակներին և շոշափում ընդհանուր մարդկային-հասարակական հարաբերություններին առնչվող հարցեր, ապա առակատիպ այլաբանական գվարճապատումները առնչվում են մեծ մասամբ որոշակի ժամանակաշրջանի և վերաբերում կոնկրետ քաղաքական վարչակարգին ու գործող անհեթեթ պլանային, հարկային կամ այլ կարգի քաղաքականությանը:

**ա.** Ստալինյան ժամանակների բռնի և անհեթեթ պլանային քաղաքականությունը այլաբանորեն տեղայնացվել է դարաբաղյան «Հավն ու վիչիլը» երգիծապատումում<sup>386</sup>:

Տես Հավելված 10, թիվ 6:

**բ.** Խորհրդային և անկախացած Հայաստանի վարչակարգերի հարկային վարչարարությունը այլաբանորեն խտացվել է հետևյալ մեկ այլ երգիծապատումում: Աղվեսը փախչում է հարկայինի ստուգումներից, որի հետևից փախչում են նաև առյուծն ու արջը: Կապիկին ուղղած հարցին, թե ինքն ինչու չի փախչում, պատասխանում է.

---

386 Բաքվի հայոց բանասիրությունը, գրառեցին և կազմեցին Ավարդ Ղազի-յանը և Սվետլանա Վարդանյանը Եր., «Զանգակ-97», 2004թ., էջ 208:

— Ես ինչու՞ փախչեմ: Իմ հետևս՝ բաց, կնոջս հետևը՝ բաց, երեխիս հետևը՝ բաց...<sup>387</sup>:

Տե՛ս Հավելված 10, թիվ 7:

**գ.** Մեր օրերի անազնիվ ընտրապայքարին՝ կեղծիքներով անցկացված ընտրություններին նվիրված մանրապատումը դասական առակի հենքի վրա կառուցված այլաբանական մանրապատումի փայլուն օրինակ է:

(ԱՄՇՀ) Տե՛ս Հավելված 10, թիվ 8:

**դ.** Բարձր պաշտոններում անարժաններին տեղավորելու քաղաքականությանը ժողովուրդն այլաբանորեն խտացրել է մի շարք գվարճապատում-գվարճախոսություններում, որոնցից մեկում կովը, խոզն ու էշը որոշում են իրենց երկրից հեռանան ու մարդավարի ապրեն: Կովը Հնդկաստան է ուզում գնա, քանի որ այնտեղ պաշտում են կովերին, խոզը՝ Թուրքիա, քանի որ այնտեղ խոզի միս չեն ուտում, ուրեմն առոք-փառոք կապրի, կվայելի կյանքը, իսկ էշը որոշում է չգնալ, պատճառաբանելով.

— Դուք ուր որ սիրտներըտ ուզում ա՝ գնացեք, ես որ մնում եմ. էստեղ ինչքան էշեր կան, պաշտոն են տվել, աղայի պես ապրում են, կարող ա էգուց-էլօր էլ իմ հերթը գա...:

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 10, թիվ 9: Տարբերակը տե՛ս Հավելված 10, թիվ 10:

**ե.** Այլաբանական գվարճապատում-գվարճախոսությունները չեն շրջանցում նաև վերջին տասնամյակներին կատարված ողբերգական իրադարձությունները: Երկրաշարժի արհավիրքները ծնող պատճառների մասին է բանագետ Վ.Սվազյանի գրառած «Հայաստանի երկրաշարժին դատաւարութիւնը» գվարճախոսությունը: Ցեմենտն արդարանում է, թե ինքը ոչ մի կապ չունի քանդված շենքերի հետ, քանի որ շինանյութերի հետ չի եղել:

Դիպուկ և գրոտեսկի հասնող ծաղր ու ծիծաղով արտահայտած վերջաբանով այլաբանորեն ներկայացվում է 1988-ի դեկտեմ-

---

387 Գրիգոր Մելիք-Սարգսյան, Զվարճալիք, «Պարույր Սևակ» հրատ., Եր., 2001, էջ 51:



բերյան արհավիրքի հիմնական մեղավորներին՝ մաղկային ընչաքաղցությանն ու անպատասխանատվությանը<sup>388</sup>:

Տես Հավելված 10, թիվ 11:

**6.** Եթե մեծերի երգիծապատումներում և զվարճախոսություններում **անձնավորումը** մեծամասամբ նպատակադրված հնարանք է և նպատակ ունի զավեշտն էլ ավելի ազդեցիկ դարձնել, ապա մանկականում այն աշխարհընկալման առաջին քայլերի, շատ ու շատ անընկալելի երևույթներ բացահայտելու նպատակ է հետապնդում.

*Ձյուն է գալիս: 2.7 տարեկան Ռազմիկը մայրիկի հետ զրոսնում է: Մայրը երգում է. «Ձյունը գալիս է դանդաղ, ձյունը իր երգն է երգում...»:*

— Մամմ, ձյունը բերան ունի, — հարցնում է Ռազմիկը:

— Չէ, բալիկ ջան:

— Մամմ, բա ո՞նց ա իրա երգը երգում...<sup>389</sup>

(ԱՄՇՀ)

Իբրև փոքր տարիքի երեխայի մտածողության արգասիք՝ զվարճախոսություններից մեկում էլ մանկան խոսքում կիրառվում է թե՛ անձնավորումը, թե՛ բառամասնատումը՝

*Ծովափում նայելով մայրամուտին՝ 2 տարեկան Նարեն բացատրեց.*

— Արևը պყգում ա, գնում ա Մարիամի մոտ (իմա՝ մայրամուտ):

(ԱՄՇՀ)

**7.** Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում զավեշտի հենք դարձած պատկերավորման միջոցներից հաճախակի հանդիպողներից է նաև **չափազանցությունը**:

388 **Սվազլյան Վ.**, Պոլսահայ բանահիստիոսինը, Երևան, ՀՀ ԳԱԱ, «Գիտություն» հրատ., 2000, էջ 224 :

389 **Սարգսյան Ա. Շ.**, Մանկական զվարճախոսություններ, Եր., «Գիտություն» հրատ., 2016, էջ 83:

**ա.** Զանգեզուրյան անեկդոտաշարի նմուշներից մեկում «Քո աչքերում երևում է ամբողջ քաղաքը» չափազանցված գեղարվեստական պատկերի նկարագրությունը պատճառ է դարձել անսպասելի զավեշտի առաջացման<sup>390</sup>:

Տե՛ս Հավելված 10, թիվ 12:

**բ.** Իսկ «Դա մեր գործը չէ» զվարճախոսությունում էլ հիվանդի ծանր վիճակի չափազանցված նկարագրագրությունն է զավեշտի պատճառը.

*Գինոսի կինը զանգում է «շտապ օգնություն».*

— *Շուտ հասե՛ք: Ամուսինս տաքության մեջ վառվում է, ջերմությունը հասել է հիսուն աստիճանի:*

*«Շտապ օգնության» հերթապահը թե՛*

— *Տիկին, դա արդեն մեր գործը չէ, զանգե՛ք հրշեջ ծառայություն<sup>391</sup>:*

**գ.** Որևէ ուրախ առիթի ճոխ նկարագրության «ազդեցությամբ» զվարճախոսություններից մեկում թաղման արարողության տարրերից մեկի չափազանցմամբ ներկայացնելն է դառնում անսպասելի ծիծաղի հենքը.

*Թաղումից վերադարձած մի կին հարևանուհուն պատմում էր.*

— *Վայ, Մարգո՛ ջան, ընքան մարդ կար, ընքան մարդ, որ մենելն էրկու տեղ ին դրել...<sup>392</sup>:*

**դ.** Անեկդոտներում հանդիպում են նաև չափազանցված այլ պատկերի՝ կապված ցանկությունների հետ: Մի դեպքում այն առնչվում է 2-րդ աշխարհամարտի ծանր տարիներին.

---

390 **Մարգարյան Ա.**, Եկեք մի քիչ զվարճանանք: Զրույցներ և անեկդոտներ, Եր., «Չար» ֆիրմա, 1992, էջ 8:

391 **Մարգարյան Ա.**, Եկեք մի քիչ զվարճանանք: Զրույցներ և անեկդոտներ, Եր., «Չար» ֆիրմա, 1992, էջ 11:

392 Լոռվա զվարճապատումներ, հավաքեց և մշակեց Ս. Ճշմարիտյանը, Գյումրի, «Կուսայրի» հրատ., 1992, էջ 11:

Պատերազմի սովատանջ տարիներին մեր գյուղացիներից մեկը ասել է.

— Հիմա Սևանա ծով մածնաթան եղներ, Մաղմաղան սար՝ սուվի հաց, «Միկոյան» նավ լե՛ գդալ, բրթեի, հուշիկ-հուշիկ ուտեի...<sup>393</sup>

Մեկ այլ դեպքում էլ խմելու անհագ ցանկությունն է զավեշտի հենքը: Ոսկեձկնիկյան հեքիաթի հայտնի սյուժեի զարգացումը քյավառյան միջավայրում, բնականաբար, պետք է կապվեր խմիչքի, խմելու հետ: Մեր գրառած զվարճապատումներից մեկում երեք ցանկություն-պայմանի կատարումն ու կերպարի բնութագիրը ևս ուղեկցվում է նմանատիպ կերպարային գծերով և գործոններով. Ոսկե ձկնիկը կատարում է քյավառցու առաջին, ապա երկրորդ ցանկությունները՝ մեկ շիշ և մեկ արկղ օղի հրամցնելով նրան: Զավեշտալին, անսպասելի ծիծաղ հարուցողը քյավառցու երրորդ ցանկությունը՝ «Սևանա լիճը օրադ դարձրա»-ն է:

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 10, թիվ 13:

**8.** Գ.Թարվերոյանի գրառած զվարճախոսություններից մեկում էլ պատկերավորության մեկ այլ տեսակի՝ *փոխաբերույթ-փոխաբերության* միջոցով հոգևոր առաջնորդի և ժողովրդի դասային տարբերությունն է ընդգծում՝ դառնալով անսպասելի ծիծաղ առաջացնելու միջոց.

*Մոկացիները իրենց պաշտպանության համար դիմում են Աղթամարի Խաչատուր կաթողիկոսին՝ հետևյալ խոսքերով.*

— *Վեհափառ տէր. տու վոր կաս, մեր պոզ էշն իս. մենք էլ վոր կանք, քո պոչի տրկու ճանճերն ինք. հեփ տու քո պոչ թափ տաս, մենք տը պլավիինք. մեր տեր չխո տո՞ յիս...<sup>394</sup>:*

**9.** Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում նաև *փոխանունություն*ն է անսպասելի ծիծաղի պատճառ դատնում: Հարսանեկան ծիսակարգի մաս կազ-

393 **Գևորգյան Գ.**, Ծովասար, (Մարտունի, գ.Թագազյուղ-Ալաշկերտից), Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2007, էջ 289:

394 ՀԱԻ-ի արխիվ, Գ. Թարվերոյանի ֆոնդ, FF,1, 4469:

մող խնամամխտության բազում դրվագներ դարձել են անեկդոտների առաջացման պատճառ: Դարերի ընթացքում աղջիկ ուզելիս ժողովուրդը պատկերավոր խոսքով նպատակը ներկայացնելու տարատեսակ ձևեր է «մշակել», որոնցից մեկն էլ **ձեռքը խնդրել** դարձվածքով է արտահայտվել:

Անսպասելի ծիծաղ հարուցելու համար այս կայուն կապակցությունը անեկդոտում բացվում է: Պատասխանը մերժողական չէ. խնամին մաս-մաս տանելուն դեմ լինելով՝ շուկայական մեծածախ առևտրի ժամանակ կիրառվող գործարքային բառապաշարի միջոցով առաջարկում է **բիրիք**<sup>395</sup> տանելու տարբերակը.

*Երևանից գնում են Աբարան՝ աղջիկ ուզելու: Խնամոնց տուն մտնելով՝ պատկերավոր ներկայացնում են գալու նպատակը.*

— Մենք եկել ենք ձեր աղջկա ձեռքը խնդրելու:

Աղջկա հերն ասում ա.

— Մեր աղջկան մենք մաս-մաս չենք տալիս, թե տանում եք, բիրիք տարեք...

(ԱՄՇՀ)

**10.** Ըստ քրիստոնեական եկեղեցու ամուսնական կանոնակարգի՝ հայոց մեջ արգելված է բազմակնությունը, և դրա խախտման դեպքում եկեղեցին համապատասխան պատիժներ է սահմանել: Նորնախիջևանյան «Էրգու գեսը մեզ գանե» անեկդոտում զավեշտալին քրիստոնեական այդ օրենքը խախտողի արդարացնող խոսքն է՝ հիմնված կողակցին ուղղված **«իմ կես, իմ թանկագին կես»** պատկերավոր արտահայտության վրա.

*Ես իմ արածըս, բարո՞ն դադավոր, ամեննին հանցանք չիմ հեսարի... զընիգ ասածդ գես մաշտ է. գասին՝ իմիս գեսս, յա չենե, իմիս թանգակին գեսս: Ես ալ գուզեյի սաղ զընիգ ունենալ, ադոր համար ալ էրգու գես առի, որ մեզ հադ սաղ լա՞<sup>396</sup>:*

Տես Հավելված 10, թիվ 14:

---

395 **Բիրիք** – ամբողջությամբ:

396 Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 2, Խ.Ա. Փոքրչեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, ՀՄՍՀ ԳԱ հրատ., Եր., 1971, էջ 86:

**11.** Որոշ զվարճախոսություններում էլ արտահայտչության միջոցներից **բառախառն** է նպաստում զավեշտի ստեղծմանը: Մեծերի բառախառնով արտահայտված խոսքը մեծ մասամբ նպատակադրված է: Ահա բառախառնով արտահայտված մի քանի նմուշ.

**ա.** Անդոն ասում է.

- Կնի, էն օրը հոնց մընացիր սկուպոյ<sup>397</sup> Արշակի տանը:
- Ստիպված:
- Վերչը, հոնց ընթունեց...
- Ստիպված<sup>398</sup>:

**բ.** Ստորև ներկայացվող բառախառնով զվարճախոսությունը էլ ավելի է բացահայտում մարդկային բնավորությունը.

Երկու ընկեր գրուցում են.

- Հրանտ, որոշել եմ բեղ պահել:
- Որ հորդ էլ պահեիր, վատ չէր լինի, — ասում է ընկերը<sup>399</sup>:

**գ.** Բառախառնով զավեշտ է ստեղծվում նաև անձնանվան և ամիս-ամսաթվի համանունության հենքի վրա՝ կապված թաղման յոթերորդ օրը կատարվող ծիսակարգի և յոթ թվային միավորի հետ.

...Մայիսի յոթին Մայիսի յոթն ա:

(ԱՄՇՀ)

**դ.** Ժողովրդի կամ անհատի ծայրահեղ ծանր վիճակը ցույց տվող **Հայ-հայր գնացել ա, վայ-վայն ա մնացել** առածատիպ արտահայտությունը ժամանակից գիտատեխնիկական առաջընթացի ոգուն համահունչ բառախառնային զվարճախոսության տեսքով է հանդես եկել.

Հայ ժողովրդի հայ-հայր գնացել ա, վայֆայն ա մնացել:

(ԱՄՇՀ)

---

397 **Սկուպոյ** (ռուս.) – ժլատ, գծուծ:

398 Կատակում է Գորիսը (Գորիս քաղաքի և շրջանի ժողովրդական սրախոսություններ և անեկդոտներ), Հավաքեց, մշակեց ու կազմեց Լևոն Սահակյանը, «Մուշ» հրատ., Գորիս, 1994թ., էջ 7:

399 Կատակում են մովսեսցիները, Գրառողներ՝ Ա. Պապյան, Հ. Պապյան, Եր., «Նոյյան տապան» հրատ., 2012, էջ 79:

**ե.** Անսպասելի զավեշտի դրսևորմանը նպաստում է նաև **բա-  
նախադ-հանգախադը.**

— Լսիր, ծխելը ճնց թողիր:

— Շատ սովի-առա, տեսա՝ անձիս վսաս ա, գանձիս վսաս ա,  
տանձիս վսաս ա, անմիջապես թողեցի:

(ԱՍՇՀ)

**գ.** Բանագետ Վ. Սվազյանի գրառած «Հօփն ու Թօփը» եր-  
գիծապատումում բառախաղն ինքնատիպ ու հետաքրքիր դրսևո-  
րում է ստացել. թե՛ անձնանունների ընտրությունը, թե՛ գործողու-  
թյուններն ու հանգուցալուծման ժամանակ հերոսի բառախաղային  
մտորումը, անսպասելի ծիծաղի հենքն են դառնում.

— Հօփը գիդէ, քի Թօփան քօփս իմ, Թօփն ա գիդէ՝ Հօփան  
քօփս իմ. չին գիդիր, քի քօքան<sup>400</sup> մէջն իմ<sup>401</sup>:

Տես Հավելված 10, թիվ 15:

**է.** Մանկական զվարճախոսություններում բառախաղը նպա-  
տակադրված չէ.

5 տարեկան Աշոտիկին հարցնում են.

— Աշոտիկ, կարասն ասես, էս կատուն ինչ գույնի ա:

— Մկան գույնի<sup>402</sup>, — լուրջ-լուրջ պատասխանում է երեխան:

(ԱՍՇՀ)

Դավիթը դիտում է «Կենդանիների աշխարհում» հեռու-  
տահադորդումը, որտեղ օձեր են ցուցադրում:

— Սա օձ է, օձը սողուն է, որովհետև ոտքեր չունի, — բա-  
ցատրում է մայրը:

Դավիթը հյուրասենյակից դուրս է վազում ու վերադառնում  
օդու շիշը ձեռքին, թե՛

— Ման, էս էլ ա՛ սողուն...

— Չէ, դրանից շատ խմողն ա դառնում սողուն...

(ԱՍՇՀ)

---

400 **Քօքան** – ք...քի:

401 **Սվազյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր.,  
ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 64:

402 Միխրազույնի ժողովուրդը մկան գույն է ասում:

**12.** Ժողովրդախոսակցական լեզվում վատ իրավիճակ ներկայացնող «**էլ մի հարցնի**» բառակապակցությունը զվարճախոսության մեջ այսպես է ներկայանում.

Արշոն հանդիպում է ընկերոջը:

— Խաչատուր, **հլա մի հարցրո՛ւ** ինձ, թե ո՞նց ես ապրում, ո՞նց չես ապրում:

— Ո՞նց ես ապրում, Ա՛րշո՛:

— Է՛, **էլ մի հարցնի**<sup>403</sup> (այսինքն՝ վատ):

**13.** Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի առաջացման միջոց է դառնում նաև բառային **կրկնությունը**.

Լոռեցի Ռուբենը հարևանին հարըցնում աս.

— Ըսօր ի՞նչ կինո կա:

— Խելակորոյս, խելակորոյս, խելակորոյս ...

— Այտա, դե մին ասիր, հըսկացա, էլի, — ասում է Ռուբենը<sup>404</sup>:

(ԱՄՇՀ)

**14.** Հայերենի բարբառներին, ժողովրդախոսակցական լեզվին հատուկ է կարճատոտ ու պատկերավոր խոսքը, իսկ դրան նպաստում է միմյանց հետ հաղորդակցվելիս հաճախակի կիրառվող արտահայտչամիջոցներից մեկը՝ **զեղչումը**:

Բանավոր խոսակցության ժամանակ բառ-բառակապակցությունների զեղչումը նպաստում է խոսքը անկեղծ, անկաշկանդ ու անմիջական դարձնելուն: Սակայն երբեմն մեծերի կամ փոքրիկների կողմից զեղչման կիրառությունների ժամանակ զավեշտալի միջադեպեր են ստեղծվում, ինչն էլ հանգեցնում է բազում անեկդոտների առաջացման: Ստորև ներկայացվող օրինակներով տեսնենք՝ կամա թե ակամա զեղչման ի՞նչ հնարանքներով է հնարավոր լինում անսպասելի ծիծաղ առաջացնել:

403 Ծիծաղի պարտեզ (5 հեղինակ), գիրք-3, Եր., 2006, էջ 37:

404 1960-ականների վերջին Կիրովականում (այժմ՝ Վանաձոր) ամերիկյան «Խելակորոյս, խելակորոյս, խելակորոյս աշխարհ» կինոնկարն էր ցուցադրվում:

**ա.** Ժողովրդական խոսքային կառույցում **հոգս** բառի գեղչունը խոսակցի մոտ անմեղ կիրառությունը «վերափոխում է» ասելիքի այլ՝ բամբառակ իմաստով արտահայտության: Լոռեցի երկու կանանց երկխոսություններից մեկում այն ակամայից անսպասելի ծիծաղի առաջացման տեղիք է տալիս՝ դառնալով իրականության հենքի վրա ստեղծված ինքնատիպ մի զվարճախոսություն.

*Շնողնեցու հարսը բողբոքում է ամուսնու ազգականին.*

— *Կեսուրս երկու կովը վի կալավ (վերցրեց) ու սարը գնաց:*

— *Ախչի՛, բա ըեխանցը տարել չի՛:*

— *Տարել ա, համա բախչեն՝ վրես, թուխսը՝ վրես, քեռին՝ վրես, էշը՝ վրես:*<sup>405</sup>

(իմա՝ այգուն, թուխսին նայելու, հեսնելու հոգսը, քեռուն պահելու, խնամելու հոգսը, էշին նայել-պահելու հոգսը-ԱՍ)

**բ.** Ջեղչմամբ ասված անմեղ ու անկեղծ ժողովրդական կարճառոտ խոսքը երկխոսական կառույցում հանգեցնում է այնպիսի գավեշտի, որ արտաբերողներն անգամ հանկարծակիի են գալիս.

*Մեկը կողովով խաղող է տանում շուկա՝ ծախելու: Երեսը ծածկած կողովը սա դնում է ծախող տղամարդկանցից մեկի խաղողի մոտ, կանգնում ու ձեռքերը ծալած սպասում է:*

— *Քո՛ւր ջան, ինչի՛ չես բացում, չես տեսնու՞մ՝ իմը (իմա՝ իմ խաղողի բերանը) բացել եմ, — ասում է տղամարդը:*

— *Ես որ իմը (իմա՝ իմ խաղողի բերանը) բացեմ, քունը (իմա՝ քո առնտուրը) կկանգնի, — համեստաբար պատասխանում է կինը:*

(ԱՄՇՀ)

**գ.** Ժողովրդախոսակցական լեզվում բայական անդամի գեղչունը կարող է այլոց կողմից վիրավորական իմաստով ընկալվել: Գորիսյան զվարճախոսություններից մեկում նախագահի խոսքն ավարտվում է այսպես.

405 **Բարայան Ա.**, Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007, էջ 65:



— Վըջխարի տղերք մնան (նկատի ունենալով ոչխարներ պահող տղաներին), մնացածնին անգաղ են<sup>406</sup>:

Տեն Հավելված 10, թիվ 16:

**դ.** Երբեմն էլ ժողովրդական խոսքում բայական անդամի զեղջումը ասելիքի երկիմաստ ընկալելու պատճառ է դառնում՝ կենդանու գործողությունը ականայից վերագրվելով մարդուն.

*Որովհետև ամուսինը գիշերով շատ ուշ էր տուն գնում, ուստի մեկ անգամ կինն ասաց.*

— Քսի, յո՛րի էսա խտուր ուշացար. աչքերս ճողթավ քու ճամբախ երիշկելով, քյանի շուն խաչեց, ես գիցա՝ Կարոս ի... քանի շուն խաչեց, ես գիցա՝ Կարոս ի...<sup>407</sup> (բացակայում է եկավը–ԱՍ)

**ե.** Ժողովրդական խոսքում քիչ չեն այնպիսի դեպքերը, երբ զեղչվում է ոչ թե բառը, այլ մի ամբողջ բառակապակցություն, ինչը կարող է նպաստել արտաքուստ անմեղ ու միամիտ խոսքը վերածելու բամբասակ՝ գոեհիկ խոսքի: Ժողովրդական երգիծապատումներում հենց նմանատիպ կատույցներն էլ դառնում են անսպասելի ծիծաղի առաջացման հենքը.

*Գյուղացիներից մեկի հոգեհացին տերտերը միանգամից դադարեցնում է ուտելը: Այս ու այն կողմից անհանգստանում են.*

— Տե՛ր հայր կեր, ինչի՞ էդքան շուտ հետ քաշվեցիր...

— Չէ, ես ինչքան պետք էր, կերա վերջացրի, հերիք է:

— Բայց ինչքան կերար որ, տե՛ր հայր:

— Չորի տիրոջնու ծակը կերել եմ, բոլ ա:

(Իմա՝ մինչև տերտերակնոջ ցույց տված գոտու ծակը՝ անցքը–ԱՍ)

(ԱՄՇՀ)

406 **Սահակյան Լ.**, Սրախոսություններ և անեկդոտներ, Գորիս, «Մուշ» հրատ., 1994, էջ 18:

407 Անեկդոտներ, հատոր 1, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876, էջ 46:

**զ.** Փերիահայոց զվարճապատումներից մեկում ևս զեղչման արդյունքում ասելիքը վերածվում է բամբառակ խոսքի: Զեղչմամբ անսպասելի ծիծաղ առաջացնող պատումն առնչվում է նաև հոգևորականի տգիտությանն ու մոռացկոտությանը: Անցորդի՝ «Օրինայ տէր» խոսքին հաջորդող «Աստուած քեզ օրինի» պատասխանը անընդհատ մոռացող քահանան այդ գրությունը շորի տակից անբացնում է ու անհրաժեշտության դեպքում նայում: Մի օր էլ, չգտնելով գրությունը, ասում է.

— Փեշիս տակինը քեզ օրինի<sup>408</sup>:

Տեն Հավելված 10, թիվ 17:

Այս երգիծապատումի սալմաստյան տարբերակն ավելի զավեշտալի է, քանզի այն առնչվում է թաղման ծիսակարգին, և հանգուցյալի վրա Մաշտոցը կորցրած տերտերի՝ շփոթմունքից արտաբերած «շվարիս մեչին ծէր մեռլի կլխին ըլի» բամբառակ խոսքը պատուհաս է դառնում նրա համար<sup>409</sup>:

Տեն Հավելված 10, թիվ 18:

**է.** Թաղման ծիսակարգին առնչվող հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում հանդիպում ենք հանգուցյալի հետ դրվող տարատեսակ սիրած իրերի, որոնք կապված են եղել նրա հետ կամ էլ նրա մասնագիտական նախասիրության հետ: Սակայն համապատասխան անելոգոտում լացի ժամանակ ողբասացը շեշտում է ոչ թե տվյալ իրը, այլ նրա դրվելու դիրքը. ննջեցիալի կնոջ կողմից *զեղչմամբ* արտաբերված լալիքի անկեղծ խոսքերը, թե՛ «Վայ ես քեզ էլ մեռնեմ, ոտներիդ արանքինին էլ մեռնեմ (իմա՝ ոտներիդ արանքին դրված դուդուկին-ԱՍ): Առանց ձեզ ինչ եմ անելու, ռնց եմ ապրելու...», ներկա գտնվողների կողմից ընկալվում են այլ տեսանկյունից և դառնում անզուսպ ծիծաղի պատճառ:

(ԱՍՇՀ)

Տեն Հավելված 10, թիվ 19:

408 Մինասեան Լ., Գիղական բառ ու բան, (Փերիա գաւառ), Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 388:

409 ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Գ. Թարվերդյանի ֆոնդ, Սալմաստ, ՖՖ,1, 1539:

**ը.** Իսկ պետական տոնի և հուղարկավորության ժողովրդական արարողակարգի հենքի վրա բառախաղով կառուցված երկխոսական գվարճախոսությունում նախասդասության անդամներից մեկի բացակայությունն է հանգեցնում զավեշտի.

*Ուսանողուհին՝ դասախոսին.*

— *Ձեր յոթը շնորհավոր:* (այսինքն՝Ապրիլի 7-ը՝ Կանանց և մայրության օրը)

*Դասախոս.*

— *Շնորհակալ եմ, քո էլ՝ քառասունքը...* (նկատի ունի ուսանողուհու երեխայի 40 օրը լրանալը):

(ԱՄՇՀ)

**թ.** *Անգ(ք)ամ բառի համանիշությամբ և գեղջման հնարանքով ստեղծված երգիծական մանրապատումը՝ նոր ժամանակների՝ 1990-ականների սոցիալական վիճակի կտրուկ վատացման և գործազրկության անմիջական արձագանքն է: Հանուն նյութականի, հանուն փալաս-փուլուսի թե՛ Հայաստանում, թե՛ մասնավորապես Արևելքի երկրներում մարմնավաճառությամբ զբաղվող կանանց քանակը կտրուկ աճեց, ինչը ժողովրդի մեջ զգվանք ու զայրույթ առաջացրեց, տեղիք տալով նաև անեկդոտների ստեղծման:*

Արտասահմանից վերադարձած կնոջ հագին աչքի ընկնող նոր բան տեսնելիս մարդիկ հարց էին տալիս. «Տեսնես ինչքան է տվել»՝ նկատի ունենալով թե՛ շորի արժեքը, թե՛ մարմինը վաճառելը (այսինքն՝ քանի՞ անգամ)՝ *անգամը* ևս դասելով դրամական միավորների շարքում:

(ԱՄՇՀ) Տես Հավելված 10, թիվ 20:

**ժ.** Հայերեն բանավոր խոսքում առկա բառագեղչումը օտար միջավայրում ևս կարող է հանգեցնել տվյալ լեզվի բառային համանունության՝ դառնալով անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ.

*Արտասահմանում ընտանիքով ԽՍՀՄ-ի դեսպանատան աշխատողների շենքում տեղավորված հայ ընտանիքի ամուսինը ամեն անգամ գործի գնալիս դուռը ծածկում էր ու կնոջն ասում.*

— *Ռուզան, դու՛ որ:* (Իմա՝ դուռը փակվիր, փակվիր-ը գեղջված է)

Մի օր էլ ռուս հարևանուհին հարցնում է Ռուզանին.

Ես չեմ հասկանում, երբ մեր ներկայությամբ է, ամուսինդ քեզ հետ շատ կիրթ ու քաղաքավարի է, բայց ինչու է ամեն աշխատանքի գնալիս քեզ վիրավորում:

Ո՞վ ասավ, նա ինձ երբեք մի թթու խոսք չի ասած:

— Բա ինչի՞ն ամեն անգամ գործի գնալիս քեզ ասում. «Ռուզան, դուռը»<sup>410</sup>:

(ԱՄՇՀ)

**ժա.** Եթե մեծերի երգիծապատում-զվարճախոսություններում գեղջմամբ կառույցներով բառ-բառակապակցությունների և դարձվածքների ուղիղ իմաստով ընկալումը մեծ մասամբ կանխակալ վերաբերմունքի արդյունք է, անսպասելի ծիծաղ առաջացնելուն միտված ժողովրդական նպատակադրված հնարանք, ապա մանկական զվարճախոսություններում այն որոշակի տարիքային խմբի երեխաների մտածողության և ըմբռնման հետևանք է: Քերականական գեղջմամբ ստեղծված **աչքիս չիշ ա արեղ** դարձվածային կառույցը մանկան խոսքում ուղիղ իմաստով է ընկալվում.

— *Աչքիս չիշ ա արեղ. ձեն չի հանրւ:* (գեղջված է ինչպես երևում է միջանկյալ բառակապակցությունը—ԱՍ)

— *Տատիկ, աչքիդ չեմ արեղ, տակըս եմ արեղ...*

(ԱՄՇՀ)

Տես Հավելված 10, թիվ 21:

**ժբ.** Մանկական զվարճախոսություններից մեկում էլ երեխան խոսակցի խոսքում գեղջումը չի ընկալում. հոր արտաբերած պատկերավոր խոսքը նրան զարմանք է պատճառում.

— *Էրիկ, քանի անգամ եմ ասել, որ գնաս քնելու: Քո տարիքում ես հավերի հետ էի քնում (իմա՝ հավերի թառ լինելու ժամանակ-ԱՍ), — ասաց հայրը:*

— *Իսկ ինչպե՞ն էիր տեղադրում թառի վրա<sup>411</sup>:*

410 **Дурак**, ժողովրդախոսակցականում՝ **дуро՝ դուռը** (ռուս.)-հիմար:

411 Ծիծաղենք միասին, Կազմեց Սարինե Ամիրխանեանը (Ղևոնդեան), Բ տպագրութիւն, «Նայիրի» հրատ., Թեհրան, 2007, էջ 110:

## ՀԱՎԵԼՎԱԾ 10

### 1

— Ա տայ Պուղի, էն մեռած անծուղ ընողին կնկանը սուգը մին սաի, անկուջ օնիմ, սերտս մին պատատ բեցուի:

— «Աղջի՛, քը՛ մատաղ, ըներանկ ար էն օրին, որ ծմական գեալիս ար՝ սեզնը, գկեռը, մըհասուրը ջուբորը լիկը. լըհայ որ բերում ար, խըխոցս ըռաջին որ ածում, հենց ար ինում, լըհայ Թաւրուզու խոշկեապէար ինի:

— «Աղջի՛, քը՛ մատաղ, ըներանկ ար էն օրին, որ ծմական գեալիս ար՝ սեզնը, գկեռը, մըհասուրը ջուբորը լիկը. լըհայ որ բերում ար, խըխոցս ըռաջին որ ածում, հենց ար ինում, լըհայ Թաւրուզու խոշկեապէար ինի:

«Աղջի՛, քը՛ մատաղ, լըհայ որ իրկէ՛օնանց գեալիս ար կացինը քամակը կոխած, ցակատը առաջը կոխած, կեօտակ էշը ըռաջկին, շիւշայ շիւշայ ընշուղաւ բեռնած, յագին պուլտի ընելաւ. լըհայ որ բերում ար ընծղաբեռնը որօսում, հենց ար ինում լըհայ պեագրկանի թէանպէալէթ ինի:

ա քու ոսկի փըշակիդ մատաղ,

ա քու ոսկի քրխընիդ մատաղ,

ա քու ոսկի տըգկեահիդ մատաղ,

անծուղ կ'անէր, լըհայ ճըճոնակի թներ ինի:

Աղջի, բան, ինձ նմանին տէրը տագ կանի՛»:

*(«Հարկ կը համարիմ այս սուգի միտքը պարզել, որպէս զի մեր հեռատր և սիրելի ընթերցողը կարդալու ժամանակ ձանձրութիւն չգգան, այլ իմաստը ըմբռնելով զգածուին»):*

Իսաչենու գաւառի Կարկաժան գիւղում մի ածխագործ կմեռնի, որի թշուառ կինը այս սուգը կ'եղերգէ իր շուրջն հաւաքուած լալկան կանանց մէջ դագաղի մօտ նստած: «Երանի՛ այն օրին, յորում նա (ննջեցեալն) կը գար անտառից ջերերը մըգեղէններով լի, երբ այն պտուղները երախայոցս առաջ կը թափէր, կարծէս թէ Թաւրիզից բերուած մըգեղէններ լինէին: Երբ երեկոյան անտառից կը գար կացինը կոնակի կողմից գօտին անցուցած, ցակատը առա-

ջի կողմից, երկար երկար ածուխով բեռնուած պոչատ էշն յագին շարժելով իր առաջին. երբ ածխաբեռը կ'իջեցնէր, կարծես թէ վաճառականի թանկագին հակէր լինէին: Ոսկի արուեստիդ մատաղ (լինիմ ես), ոսկի հանքիդ (ածխահորն) մատաղ, ոսկի գործարանիդ մատաղ. այնպէս ածուխ կ'անէր, որ ծիծեռնակի թևերի նման գոյնզգոյն կը փայլէին: Ապա ուրեմն քանի որ այսպիսի տէրս, այրս մեռած է, ինչպէս կարող եմ լռել և չ'լալ:»

«Ահա Ղարաբաղի գաւառացու մի ազնիւ պատկերն: Քանի գոհ է իւր վիճակից, ինչպէսի՛ն ընտիր նըմանութիւններով կը գովաբանէ իւր հանգուցեալ այրը: Իւր ածխագործ այրը ընտիր արուեստատր կանուանէ, ածխահորը՝ ոսկեհանք, ածխաբեռը՝ մետաքսեայ կերպասահակեր և անտառի պարզ պտուղները իբրև թանկագին մրգեղէն և մարդոյ մահը կըզգայ ինչպէս թագաւորի մահ:»

Պըլը-Պոտի, գրեց Մակար վարդապետ Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանեանի և ընկ. տպարան, 1883, էջ 132-133:

## 2

Հինգ տարեկան Արմենակ թոռնիկը Օֆելյա տատիկի ծննդյան օրվա համար բացիկ և ուզում տա, մորն ասում ա՛ն տա ասեմ, դու գրի բացիկի վրա: Գրի՛. «Տատիկ ջան, շնորհավորում եմ քու ծննդյան տոնը, ցանկանում եմ քեզ առողջութիւն, երջանկութիւն և կանաչ ճանապարհ դեպի կապույտ երկինք: Քու թոռնիկ Արմենակ:»

(ԱՄՇՀ)

## 3

### Աղէն հէլէր ա բ'օստան

Մէ աղա մառթ շանդըր հիվանդանում ա: Ինչ ճար-իլլաջ անում էն, չէն կըրում լավըցընէն: Վէռչը սալըխ<sup>412</sup> էն տալում, վոր էսինչ տեղը մէ լավ հէք'իմ կա, մէնակ էնի կըրա լավըցընի: Աղէն կանչում ա հիրա ծառային, դըրկում հէք'իմի հէղէվիցը:

— Դէ՛ ասա, ինչ հիվանդ էս, վոր հէք'իմին ասէմ:

— Տէնում էս, էլի, հէք'իմին ասա՝ աղի մանները ուտեր ա խիյարի պէս, թեվէրը ուտեր ա յեմիշի պէս, գ'ըլօխը ուտեր ա դ'թումի պէս...

412 Սալըխ (թրք.) – լուր:

— Աղա՛, էտդար բ՛անը իմ մըտին չի մնա, կ'էրթամ հէք'իմին կասէմ՝ աղէն հէլէր ա բօստան: Բօստնի մէջը հըմմէն ինչ էլ կա՛ խի-յար էլ, յէմիշ էլ, ձ'մէրուկ էլ, դ'թում էլ...

Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառը, Եր., «Լոյս» հրատ., 1989, էջ 292:

#### 4

### Խալֆիս բանը բոստան է

Բանվորին մէգը հիվընդնա՛ տունը կը պառկի, բանէլու չի գա: Ուստան աշկերտին դըրկէ կը թէ «Գընա՛ աշէ՛, խննֆննդ ինչպէս է, ո՛րտեղը կըցավի»: Աշկերտը կէրթա, թէ. «Խննֆնն, ուստաս հարցուց. ինչպէս ես»: — «Ինչպէս պիտի ըլլիմ, կըսէ հիվանդը. չեն տեսնի. գըլօխըս կըռոտեր է դըդում, փորըս դարցեր է լախանա, ձեռվըներըս դառցեր են փուրչուլուդ, օտվըներըս դառցեր են բազուկ»:

— Խննֆնն, — կըսէ աշկերտը, — ես այդքան բան չեմ կըրնա միտքըս պահէ. կէրթամ ուստիս կըսեմ, թէ խնն խննֆիս բանը պօստան է:

Առակներ, ավանդություններ, անեկդոտներ՝ Ալխայցխայի բարբառով: Գրի առավ՝ Ստ. Մալխասյանց, ՀՄՍՌ ԳԱ հրատ., Եր., 1958, էջ 127-128:

#### 5

Առանց փալան էշը հոնց կիսի

Ջանգ ըմ տվալ Բաքվից փախստական մի ծանոթ կնգա, թա.

— Մաթենիկ, հոնց ըա:

Ասալ ա.

— Մատաղ ինիմ, տկլոր էշու նման:

— Էդ հինչ ասել ա, կլի՞ չըմ ընգնում:

Ասալ ա.

— Մատաղ ինիմ, հինչ ասիմ, վեչ տեղ օսիմ, վեչ տոն օսիմ, առանց փալան էշը հոնց կիսի:

Բաքվի հայոց բանահյուսությունը, գրառեցին և կազմեցին Ավարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Ջանգակ-97» հրատ., 2004, էջ 225:

## 6

### Հավն ու վիշիլը

Մին հավ քյինամ ա զագրանիցա. ճանապարհին վիշիլ ա պը-տահում. ասում ա.

— Հավ ախպեր, շտեղ ըս քյինամ:

Ասում ա.

— Քյինամ ըմ զագրանիցա:

Ասում ա.

— Պա խե՛ յըս քյինամ:

Ասում ա.

— Տարեն 360 օր օնե, ինձանա 380-ըն օգում, վեր Սովետին պլանը տամ: Վիշիլ ախպեր, պա տու շտեղ ըս քյինամ:

Ասում ա.

— Ես էլ կյամ ըմ Սովետին երկիրը:

Ասում ա.

— Պա խե՛:

Ասում ա.

— Ասում ըն ըստեղ մին քյասիբ ա ապրում, մինչև քյինամ տը-րան ճարիմ, տրանավ սնվիմ, սոված կըմեռնիմ: Համա ասում ըն՝ ծեզ մոտ ուրու կըլխե թափած ըն, քյինամ կըլոխս պահիմ:

Բաքվի հայոց բանահյուսությունը, գրառեցին և կազմեցին  
Ալվարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը,  
Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 208:

## 7

Աղվեսը վագում է անտառով և գոռում.

— Գազաններ, փախե՛ք, հարկայինից ստուգման են եկել:

— Ես ի՛նչ եմ արել, որ փախչեմ, — ասում է առյուծը:

— Ո՛ւց թե: Դու՛ դուրբլոնկով<sup>413</sup>, կինդ՝ դուրբլոնկով, երեխադ՝ դուրբլոնկով: Էդ ո՛րտեղից:

— Հա, էլի, — ասում է առյուծը և փախչում:

— Ես ինչու փախչեմ, — զարմանում է արջը:

413 Դուրբլոնկա (ռուս.) – աղաղած կաշուց պատրաստած վերարկու:



— Ո՛նց թե: Դու՛ շուրով<sup>414</sup>, կինդ՛ շուրով, երեխերդ՛ շուրով: Էդ  
ո՞րտեղից:

— Ճիշտ է, — ասում է արջը, և ինքն էլ է փախչում:

— Կապիկ, բա դու ինչու՞ չես փախչում:

— Ես ինչու՞ փախչեմ: Իմ հետևս՝ բաց, կնոջս հետևը՝ բաց, երե-  
խիս հետևը՝ բաց...

Գրիգոր Մելիք-Սարգսյան, Զվարճալիք,  
«Պարոյր Սևակ» հրատ., Եր., 2001, էջ 51:

## 8

Ծառի ճյուղին մի ագռավ ա նստած ըլնում՝ պանիրը բերանին:  
Նախագահը անցնելիս ագռավին տեսնում, հարցնում ա.

— Էս ընտրություններում հանրապետականն ա հաղթելու, չէ՞:

— Հա՛, — ասում ա ագռավն, ու պանիրը բերանից ընգնում ա  
ցած:

Կողքի ճյուղին կանգնած ագռավն ասում ա.

— Ինչի՞ հա ասիր, չէ կասեիր, էլի:

— Մեկ ա, չէ էլ ասեի, պանիրը բերանիցըս ընգնելու էր, —  
խեղճացած ասում ա պանիրը կորցրած ագռավը:

(ԱՄՇՀ)

## 9

Կովը, խոզն ու էշը հավաքվում, ուզում են մի բան ձեռնարկեն,  
մարդավարի ապրեն: Կովն ու խոզը որոշում են իրենց երգրիցը հե-  
ռանան:

Խոզն ու էշը կովին ասում են՝

— Ո՞ր ես որոշել գնաս:

Ասում ա՝

— Հնդկաստան. Հնդկաստանում մարդավարի կապրեմ. կովե-  
րին սրբացրել, պաշտում են:

Խոզին են հարցնում, թե՛

— Բա դու՞ ուր ես ուզում գնաս:

Ասում ա՝

---

414 **Շուրա** (ռուս.) – մուշտակ, քուրք:

— Թուրքիա. Թուրքիայում խոզի միս չեն ուտում. ինձ համար առոք-փառոք կապրեմ:

Նայում են էշին, սա թե՛

— Դուք ուր որ սիրտները լուրջում ա՛ գնացեք, ես որ մնում եմ. էստեղ ինչքան էշեր կան, պաշտոն են տվել, աղայի պես ապրում են, կարող ա էգուց-էլօր էլ իմ հերթը գա...:

(ԱՄՇՀ)

## 10

Կովը, խոզն ու էշը ուզում են հեռանան էս երգրից: Սահմանի մոտ կովին ասում են՝ ո՛ր ես ուզում գնաս:

Ասում ա՛ Հնդկաստան. Հնդկաստանում պաշտում, սրբացնում են կովերին:

Խոզին են հարցնում, թե՛ Դու՞ ուր ես գնում:

Ասմա՛ Թուրքիա: Թուրքիայում խոզի միսը չեն ուտում, կգնամ առոք-փառոք կապրեմ:

Էշին են հարցնում, սա լռում ա:

— Դու՞ ուր ես ուզում գնալ:

— Եսիմ, իմ էշ խելքն ասա, որ սրանց խելքին ընգա, հասա էստեղ:

(ԱՄՇՀ)

## 11

### Հայաստանի երկրաշարժին դատաւարութիւնը

1988-ի Դեկտեմբերի 7-ին, երբ երկրաշարժ եղաւ, Հայաստանի տուներ-մունէր փլան, շատ մարդիկ մեռան:

Հայաստանի կառավարական մարդիկ կը խորհին դատարան կանչել մեղաւորները:

Առաջ կը կանչեն Աւազը, իրեն կը հարցնեն.

— Ատ խեղճերուն տուները ինչո՞ւ փլեցիր:

Աւազը կ'ըսէ.

— Ինչ գիտնամ, ես մե՛ղք չունիմ. ատ Պրիքէթը<sup>415</sup> կուտրեցաւ ինկաւ, ես ալ ետնէն գացի:

Դատաւարը կ'ըսէ.

---

415 Պրիքէթ (ֆր.) – աղյուս:

— Քեզի հինգ տարուան ճէգա . բանտ պիտի նստիս:

Ետքը Պրիքէթին կը հարցնեն.

— Դուն ինչո՞ն ինկար:

Պրիքէթը կ'ըսէ.

— Ես մե՛ դը չունիմ. Երկիրը շարժեցաւ, ես ալ իմ տեղէս շարժեցայ ինկայ:

Դատաւորը կ'ըսէ.

— Քեզի ալ տասը տարուան ճէգա<sup>416</sup>. բանտ պիտի նստիս:

Կարգը կուգայ Չիմէնթոյին<sup>417</sup>.

— Դուն ինչո՞ն ձգեցիր, որ փլին:

Չիմէնթոն կ'ըսէ.

— Կը ներէք, ես հո՞ն չէի, հոն ըլլայի նէ՛ չէի ձգեր, որ փլին:

Սվազլյան Վ., Պոլսահայ բանասիրութիւնը,  
Երևան, ՀՀ ԳԱԱ, «Գիտութիւն» հրատ., 2000, էջ 224 :

## 12

### Հարսանիքի օրը

Գինոսը մեծ տղային ամուսնացնում է: Հարսանիքի օրը էշը կորչում է: Փոքր տղային ուղարկում են, որ կորածին գտնի, բայց սա չի գտնում: Իսկ ամուսնացած եղբայրն այդ պահին սիրազեղում էր կնոջը.

— Բո աչքերում երևում է ամբողջ քաղաքը:

Ձեռնունայն վերադարձած փոքր եղբայրն ուրախացած ձայն է տալիս.

— Տես մեր էշն էլ է՛ երևում<sup>418</sup>:

## 13

Քյավաոցին ձուկ որսալիս Ոսկե ձկնիկ ա բռնում: Ոսկե ձկնիկն ասում ա.

— Իրեք ցանկություն ասա, կատարեմ, մենակ թե ինձ նորից ջուրը գցի:

416 **Ճէգա** (արաբ.) – պատիժ:

417 **Չիմէնթո** – ցեմենտ:

418 **Սարգսբայան Ա.**, Եկեք մի քիչ զվարճանանք, Ջրույցներ և անեկոյտներ, Եր., «Չար» ֆիրմա, 1992, էջ 8:

Քյավառցին ասում ա՝

— Մի շիշ «բոյիդ մեռնեն» տուր. առավոտից մի կում չեմ խմել:

Քիչ հետո մի «բոյիդ մեռնեն» ա հայտնվում:

— Յասամ, — ուրախանում ա քյավառցին:

— Երկրորդ ցանկությունդ ասա:

— Մի օրկըդ/յաշիկ/ օրադ տուր:

Մի արկղ օղի ա քյավառցու կողքին հայտնվում:

— Երրորդ ցանկությունն էլ ասա, կատարեմ ու ինձ բաց թող:

Քյավառցին թե՛

— Էս Սևանա լիճը օրադ դարձրա...

(ԱՄՇՀ)

## 14

### Էրգու գետը մեզ գանե

Մաշդուն մեզին էրգու գնիզ բահելուն համար օրենքի գանչիլ էին: Տաղավորը հարցուց.

Քեզի ինչ ստիբից ադբես հանցանք կործելու:

— Ես իմ արածըս, բարոն դադավոր, ամենևին հանցանք չիմ հեսարի<sup>419</sup>, — ասաց մաշդը, — և իմ ունեցածս ալ հիչ էրգու գնիզ չե, հապա մեզ հատ: Անոր համար, որ ինչ պան է իսկաբես գնիզը: Ադ ես ալ կիդիմ, տուք ալ կիդիք, ամենքն ալ կիդին, որ գընիզ ասածդ գես մաշտ է. գասին՝ իմիս գեսս, յա չենե, իմիս թանգակին գեսս: Ես ալ գուզեյի սադ գընիզ ունենալ, ադոր համար ալ էրգու գես առի, որ մեզ հադ սադ լա:

Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 2,  
Խ.Ա. Փորքեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական  
բանահյուսությունը, Եր., 1971, էջ 86:

## 15

### Հօփն ու Թօփը

Մօրթ մը իրգօ (երկու) սիրօձ գունցնօ (սիրած է ունենում): Մե-  
գան ադունը (անունը) Հօփ է, միգյալէն ադունը՝ Թօփ: Օր մը Հօ-  
փան գըրթօ, օր մը Թօփան գըրթօ:

---

419 Զիմ հեսարի – չեմ համարում:

Օր մը սիրօճան էրթըլօ աղին քանաֆը (գուգարան) գօրննօ (ընկնում), սիրօճանն քօվը էրթըլօ գօուշանօ, ինքինքիր (ինքնիրեն) գօսէ. — Հօփը գիղէ, քի Թօփան քօփն իմ, Թօփն ա գիղէ՝ Հօփան քօփն իմ. չին գիղիր, քի քօքան մէչն իմ:

Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 64:

## 16

Գյուղի նախագահի ընդարձակ աշխատասենյակում ժողով էր՝ տարբեր բնագավառների աշխատողների մասնակցությամբ: Վերջում նախագահը թե՛

— Վըչխարի տղեքը մնան (սկատի ունենալով ոչխարներ պահող տղաներին), մնացածսին անգաղ են:

Սահակյան Լ. Սրախտություններ և անեկդոտներ, Գորիս, «Մուշ» հրատ., 1994, էջ 18:

## 17

### Փէշիս տկինը քեզ օրհնի

Մի գիւղում մի նոր ընծայ քահանայ է լինում, որը միշտ մոռանում է, որ երբ իրեն բարևում են և ասում.

— Օրհնայ տէր — ինքն ասի.

— Աստուած քեզ օրհնի:

Ուստի իր պատասխանը գրում է մի տախտակի վրայ և շորի տակից կախում, որպէսզի մոռացած ժամանակ անմիջապէս դրան նայի և պատասխանը տայ:

Այնպէս է պատահում, որ երբ մէկը բարևում է, և ինքը մոռացած է լինում, թե ինչ պիտի անի և շտապ շորն է ուզում բարձրացնել և տախտակի վրայի գրածը կարդայ ու ասել, և դա էլ, իր սև բախտից շորի տակ խառնուած և չի կարողանում շտապ գտնել, ուստի ստիպուած ասում է.

— Փէշիս տկինը քեզ օրհնի:

Մինասեան Լ., Գիւղական բառ ու բան, (Փերիա գաւառ), Նոր Զուղա, Սր. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998, էջ 388:

## 18

### Իմ շրվարի մեջինը ծէր մեռլի կլխին

Մէ տերտեր շատ քոռաֆիւսիսի ըլելի, ըսկի մե աղոթթլ բան պե-  
րանացի խամար չինանլի: Առանց Մաշտոցի վոտ-վոտի տեղ չի փո-  
խելի, ենց վոր պետկ ըլելի Մաշտոցը խանելի...

Մէկ որ տարը հրավիրեսեն, վոր մե ազիզ մեռլի վրա խոքոց  
ասի: Տերտերն եթանլի կայնելի մեռլի կլխին, խազալի, բողազը խոր-  
թելի, ծեռը թանլելի, վոր մեշկըպի մեչեն Մաշտոցը խանի, տընալի  
ինչ, Մաշտոցը սողաքցե ինզե շրվարի մեչը, կընացե սակի պերա-  
նը բանդիելե: Ինչ անի խեղճ տերտերը, խոքոցը խամար ասել չի  
նանլի, ետ խալխի մոտն էլ խոնջանն առցըկել, յա սակը պացել Մաշ-  
տոցը շրվարեն խանելը ամոթ ի. ինչ անի...

Վեռչապես յեփ տետ-դեն ասեսեն՝

— Դէ, տերտեր, ասա յե, մե խոքոց խան գուցելոց ասա:

Նաչարութ վերցելի, թե՛

— Ա՛յ վորթի, էլ ինչ ասեմ. հենց ետ շրվարիս մեչին ծէր մեռլի  
կլխին ըլի...

Տերտերի խոսկը հալա պերանը, տասեն.

— Տո քոփայ-ողլի, յանի իշթանը թե շրվարիս մեչին ծէր մեռլի  
կլխին ըլի...

Ընչու տերտերը խասկըցուցելի, թե պանն իշթանը ի, դանը մե  
ոքու վար տասեն, սեվը պերեսեն...

ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Գ. Թարվերոյանի ֆոնդ, Սպմաստ, ՖՖ,1, 1539:

## 19

Մի կնգա մարդը դուդուկ (տարբերակ՝ ջութակ) նվագող ա  
ըլըմ, մեռնըմ ա: Կնիկը բերըմ ա տեղը-տեղին մարդին հագցընըմ  
ա, դուդուկն էլ (տարբ.՝ ջութակը) դնըմ ա մարդի ոտների վրա, ու  
որ ժողովուրդը հավաքվըմ ա, կնիկն սկսըմ ա բարձր ձենով լաց  
ըլիլն ու իրա վիճակը նկարագրիլը.

— Առանց քեզ բա ես ինչ եմ անելու, ոնց եմ ապրելու, իմ տան  
ուրախություն, առանց էդ սիրուն պատկերիդ ու դուդուկիդ նվագի  
ես ինչ եմ անելու: Վայ ես քեզ էլ մեռնեմ, ոտներիդ արանքինին էլ  
մեռնեմ (իմա՝ ոտներիդ արանքին դրված դուդուկին): Առանց ձեզ  
ինչ եմ անելու, ոնց եմ ապրելու, իմ կյանք, իմ արև...

(ԱՄԵԸ)

## 20

Ընկեր Մարգոն հարցնում է.

— Երեխաներ, ինչ դրամական միավոր գիտեք:

Մեկը ձեռք ա բարձրացնում, ասում՝ ուրբի, մեկը՝ դրամ, մյուսը՝ դոլար, Վարդանիկն ա ձեռ բարձրացնում, Մարգոն մտքում ասում ա. «Հիմա սա էլի մի խայտառակ բան կասի», բայց ինչ աներ...

— Ասա, Վարդանիկ:

— Անքամ:

— Վարդանիկ, բա անքամը դրամական միավոր է:

— Հըբը ինչ է, ընկեր Մարգո, մեր հարևան Վարդուշը էմի-րաթներից էրեզ է էկե: Մերս տեսավ, ըսավ. «Ի՛նչ ես տվե էդ հագիդ ջինսին»: Ըսավ. «Հինգ անգամ»: Ըսավ. «Սապոկներուդ ինչքան ես տվե»: Ըսավ. «Տասն անգամ»: Ըսավ. «Հըբը դուբլյոնկի՞դ ինչքան ես տվե»: Ըսավ. «Տասնհինգ անգամ...»

(ԱՄՇՀ)

## 21

Թաթույրը նոր էր սկսել խոսել: Մի օր տնեցիք տեսնում են, որ շարժուն երեխան ձայն-ձուն չի հանում, մայրը ասում է .

Աշկիս չի՞իկ ա արել. խելոքացել ա:

Ման, աշկիդ չեմ արել, տակիս եմ արել, ասում երկու տարեկան Թաթույրը:

(ԱՄՇՀ)

## ԼԵԶՎԱԿԱՆ ՈՒՃԱՑՈՒՄԸ՝ ՉԱՎԵՃՏԻ ՅԵՆՔ

19-րդ դարի երկրորդ կեսից թե՛ հայ ժողովրդական բանահյուսական ստեղծագործություններում, թե՛ հայ գրականության մեջ սկսում է հաճախակի արտացոլվել լեզվական ուժացման թեման: Այն առավել ընդգծված դրսևորվեց Մեծ եղեռնից մազապուրծ արևմտահայության բեկորների՝ աշխարհով մեկ սփռվելու պատճառով, իսկ արևելահայության շրջանում լեզվական ուժացման խնդիրը էլ ավելի անհանգստացնող դարձավ առավելապես խորհրդային համակարգի վարած ապագային և ռուսականացման քաղաքականության հետևանքով:

Թե՛ արևելահայության, թե՛ արևմտահայության ժողովրդական բանավեստում բազմաթիվ երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ են ստեղծվել, որոնցում զավեշտի հենքը մինչև այսօր էլ մեզ համար չափազանց ցավոտ լեզվական ուժացման խնդիրներն են:

Եթե հայաստանաբնակների մի մասի օտարամոլության պատճառը քաղքենիություն էր և խորհրդային համակարգի վարած ապագային քաղաքականությունը, ապա արցախահայության օտարամոլության պատճառը նաև Հայաստանի հետ կապի խոչընդոտներն էին, մինչև անգամ՝ արգելքները և հայկական կրթական ու մշակութային օջախների և հաղորդակցության տարատեսակ միջոցների սակավությունը կամ էլ բացակայությունը:

Մի քանի հարյուր հազարի հասնող Բաքվի, Մուսգայիթի հայերի, ինչ-որ չափով նաև արցախահայերի (Ղարաբաղ, Գանձակ-Կիրովաբադ), ինչպես նաև Հյուսիսային Կովկասի հայության շփումը ռուսական կամ ռուսախոս միջավայրի հետ, Ադրբեջանի ու Ռուսաստանի, մասամբ նաև՝ Վրաստանի վարած հակահայ քաղաքականությունը կամա թե ակամա հանգեցնում էին լեզվական ուժացման: Ինչ խոսք, դրան նպաստում էին նաև հայերի որոշ մասի ստրկամտության հասնող օտարասիրությունն ու օտարամոլու-



թյունը, որոնք պարարտ հող էին նախապատրաստում վերածվելու ստրկախտի:

Թերևս հենց այս հանգամանքից ելնելով էլ ժողովուրդն իր ինքնապաշտպանական բնագոյով այդ ցավոտ խնդրին առնչվող բազում երգիծական մանրապատումներ և զվարճախոսություններ է ստեղծել:

Արցախյան շարժումը նաև ժողովրդին լեզվական օտարամոլության թմբիրից ուշքի բերելու, դատարկ ու լողզված ինտերնացիոնալիստական ներարկված գաղափարները դեն շարտելու և ազգային արմատներին վերադառնալու շարժում էր: Անդրադառնանք դրանցից մի քանիսի դրսևորման առանձնահատկություններին և առաջադրած ներքին հարցադրումներին:

Իր լեզվական օտարամոլությունը հենց ինքը՝ արցախցին է ծիծաղի լեզվով խտացրել անեկդոտներում, որոնցից ամենացայտունը «Ըստեփանակերտուց ժողովը»<sup>420</sup> սնուն է, ուր հայոց լեզուն պահելու, մաքուր հայերենով խոսելու մտահոգությամբ հրավիրված ժողովի նախագահի ամփոփիչ խոսքը դառնում է զվարճախոսության գավեշտի մեխը:

Ըստեփանակերտ ժողով ըն անում, վեր հայերէն լիւզուն պահին, պաշտին, խօխէնքը վէշ թա ռուսերէն, հայերէն խօսին: Վերչումը խօսկը տամ ըն ժողովէն նախագէն, էս էլ յեր ա կէտում, թա:

— **Տավարիչի**, մեր լիւզուն **սըլաթկի** լիւզու յա, **դըրագացէննի** լիւզու յա: Մունք մեր լիւզվամն ընք **պարէղիտ** ընելու, ըտըրա հէտի բիղի լօխըս էլ **պրապագանդա** անինք՝ վեր մեր ժիղօվուրթը մեր լիւզուն **գաբըվատ** չանէ: **Կարօչի գավարյա**, մեր լիւզուն մեր **փըլագըն** ա, մեր **գօրդըստըն** ա, **դավայծէ սախրանիտ** անինք՝ մեր լիւզուն<sup>421</sup>:

Տես Հավելված 11, թիվ 1:

Զվարճախոսություններից մեկում, որի հինգ բառից կազմված նախադասության միայն օժանդակ բայն է հայերեն.

420 **Սարգսյան Ա. Յ.**, Արցախի բանահյուսությունը, Եր., «Էդիթ Պրինտ», 2015, էջ 416:

421 Նույն տեղում:

**Ուզլի մագազինումը ստրաշնի օչերեդ ա** (իմա՝ անկյունի խա-  
նութում ահավոր հերթ է – ԱՍ):

(ԱՄՇԸ)

Իսկ հինգ բառից բաղկացած **Ջոնտիկիս պոչը սլանովի կոս-  
տից ա** (իմա՝ անձրևանոց-հովանոցիս պոչը փղոսկրից է) նախա-  
դասության երկու բառն է հայերեն:

Թերևս այս հանգամանքն էլ պատճառ է դարձել հետևյալ գա-  
վեշտալի երկխոսության ստեղծման.

*Երևանցին դարաբաղցուն ասում ա.*

— Ծեր լիզուն հինչ լիզու յա, վեչ հայերեն ա, վեչ ռուսերեն:

*Ղարաբաղցին պատասխանում ա.*

**Նաբառոտ, մունք չիստո հայերեն ընք խոսում**<sup>422</sup>:

Տարբերակը տե՛ս Հավելված 11, թիվ 2:

Կամավոր կամ բռնի ուժացումը և ցեղասպանությունը պատ-  
ճառահետևանքային կապով են կապված, և դա ևս իր հստակ ար-  
տացողումն է գտել ժողովրդական երգիծապատումներում:

Դեռևս 19-րդ դարի երկրորդ կեսի և 20-րդ դարի անեկդոտնե-  
րի ժողովածուներում ուժացման թեմայով բազմաթիվ գվարճախո-  
սություններ են հրատարակվել: Դրանց մի մասն առնչվում է թե՛  
բռնի, թե՛ կամավոր ուժացմանը: Նախիջևանի մի շարք գյուղերի  
հայության կրոնափոխությունն ու լեզվական ուժացումը թերևս  
պատճառ են դարձել մի շարք անեկդոտների առաջացման:

Այսպես, երգիծական մանրապատումներից մեկում անսպասե-  
լի ծիծաղը դրսևորվել է քրիստոնյա հայի՝ թուրքանալու մտադրու-  
թյունը հավաստող երդումով, որը դրժելը նա մեղք է համարում,  
քանզի դրժողը հաստատ կպատժվի աստծո կողմից: Իսկ թուրքա-  
նալ պատրասվողը այդ երդումը տվել էր... **Ստեփանոս Նախա-  
վկայի աջի վրա...**<sup>423</sup>

Տե՛ս Հավելված 11, թիվ 3:

422 Բաբվի հայոց բանահյուսությունը, Կազմեցին Ավարդ Ղազիյանը և Սվետ-  
լանա Վարդանյանը, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004, էջ 236:

423 Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր և առակներ, մեծ  
մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց,  
Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 7:

Մինչև մեծ եղեռնը օսմանյան կայսրության վարած ուժացման քաղաքականության հետևանքով շատ ու շատ հայկական գյուղեր բռնի կամ կամովին կրոնափոխ էին դառնում, իսկ հայերենը կամա թե ակամա զիջում էր իր դիրքերը թուրքերենի և քրդերենի առաջ՝ սկզբում բազում օտար բառերի ինքնական կիրառության՝ օտարամոլության հետևանքով, այնուհետև հայերենը օտար լեզուների հառաջ ստորադասելու, մոռացության մատնելու արդյունքում:

Լեզվի և հավատի կորստով, իրար դեմ լարված մեր բազմակուսակցականությամբ ու կրոնական հայացքների տարակարծություններով մենք թուլացրինք մեր միասնականությունն ու զգոնությունը՝ ավելի հեշտացնելով ցեղասպանության իրագործումը:

Զվարճապատումներից մեկում Ամերիկա հասած պանդուխտները խնդրում են հայ տանտիրուհուն կարդալ նամակը, ապա, որ ամենազավեշտալին է, դուրս են հրավիրում նրան՝ ասելով.

— Հաճի՛ս, սենյակեն էլի՛ր, սաի դաշնակցական գաղտնի ժողով է...<sup>424</sup>

Տե՛ս Հավելված 11, թիվ 4:

Երգիծապատումների մի մասում էլ թրքախոսությունը ներկայացվում է իբր «փրկության» ելք, որին կուրորեն հավատացել են նաև հայ մեծամեծները.

*1915-ին տեղահանութեան հրաման կու գայ Այնթապ: Վալին կը կանչէ Այնթապի մեծամեծները ու կը հաղորդէ, թէ բոլոր հայերը պէտք է այսինչ թուականին պարպեն քաղաքը ու երթան:*

*Այնթապի մեծամեծները կը պատասխանեն.*

— *Էֆենտի՛, մեզի համար բան մը չկայ, պիզիմ հափըմըզըն անա լիսանը թուրքա (Մեր բոլորին մայրենի լեզուն թրքերէն է)*<sup>425</sup>:

Ազգային լեզուն կորցրած մեծամեծների նման մտածելակերպը ծիծաղի հետ տխրությամբ է համակում հոգիդ:

424 **Սվազլյան Վ.**, Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

425 Միջ-գաւառական աներթոտներ: Հաւաքեց և ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալէպ, 1988, էջ 86:

Հ. Չոլաքյանի զվարճապատումներից մեկում էլ այնթապցին մարաշցուն թուրքերենով ասած «Այս պանդուխտները կը տեսնեն... Տարագրութեան աչքը կուրնայ... Այս պանդուխտները եկան, մեր մայրենի լեզուն քանդեցին, այդ պատճառով մեր քահանան հայերէն քարոզ կու տայ»<sup>426</sup> անհեթեթ մեկնաբանությունն է դառնում անսպասելի ծիծաղի պատճառը:

Տես Հավելված 11, թիվ 5:

Եղեռնից փրկված և Սիրիայում ապաստանած արևմտահայության բեկորների մի մասը շարունակում է ոճրագործի լեզվով հաղորդակցվել և իբրև ապացույց հայ լինելու՝ մոտն ունենալով Ս. Գիրքը: Հ. Չոլաքյանի գրառած պատումում<sup>427</sup> գավելշտի հենքը թրքախոսության և աղոթաժողով հանախելու ծիծաղ առաջացնող հակասությունն է, որի լուծումը սարկազմի հասնող իրողությունն է.

Աղոթաժողովից հետո կազմակերպված խնջույքի ժամանակ պարող այնթապցի, քիլիսցի և մարաշցի կանայք սկզբում Ս. Գիրքը թևերի տակ ելնում են պարելու՝ թուրքերեն ասելով՝ «Աման Ալլահըմ, կիւնահ եագմա»<sup>428</sup>, ապա պարը թեժանալուց հետո «Կիւները Ս. Գիրքերը մէկիկ-մէկիկ կը նետեն մէկդի ու կ'ըսեն. – Իստէր եագ, իստէր եագմա»<sup>429</sup>:

Տես Հավելված 11, թիվ 6:

Գաղթականության համար պատարագ մատուցող քահանայի հայերեն աղոթքներին անհաղորդ թրքախոս հայերի՝ անսպասելի ծիծաղ հարուցող, բայց միաժամանակ ցավ պատճառող արձագանքը խտացվել է կիլիկիահայոց ժողովրդական երգիծապատումներից մեկում: Բանագետ Վ. Սվազյանի գրառած «Թրքախոս աղանացիները» զվարճապատումում սուր քննադատությանը զուգահեռ՝ ներկայացվում է պատարագին ներկա գտնվող գինով-

---

426 Միջ-գաւառական անեքթոններ: Հաւաքեց և ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալէպ, 1988, էջ 86:

427 Միջգաւառական անեքթոններ, Յակոբ Չոլաքեան, Բ տպագրութիւն, 2005, Հալէպ, էջ 92:

428 Աման Ալլահըմ, կիւնահ եագմա – Ով իմ Աստուածս, մեղք մի՛ գրեր:

429 Իստէր եագ, իստէր եագմա – Կուզես՝ գրե, կուզես՝ մի՛ գրեր:

ցած թրքախոս ադանացիներին «քիչ մը կհասկնամ» ասող հայրենակցի հայերեն զավեշտալի թարգմանությունը: Նա քահանայի՝ «Սիրելի ժողովուրդ: Դուք որչափ ատեն է, որ եկեղեցի չեք գար: Դուք որչափ ձեր հավատքը կորցուցեր եք: Հակառակ պարագային Աստված ձեզի պիտի պատժե» խոսքերը հարանունության և բառամասնատման «աջակցությամբ» այսպես է թարգմանում. «Արխաղա՛շ, բեհիմ բիղիիմ էրմէնչէ իլէն „վօր,, գօ...թ (բարեկանս, իմ գիտցած հայերենով «ոռ»՝ հետույք կնշանակե, «չափն» ալ՝ չափել կնշանակե): Բարանկային ետևը մեկուն ոռը կչափեին կոր, ամմա վերջը չհասկցա թե որո՞ն ոռը չափեցին...<sup>430</sup>»:

Տե՛ս Հավելված 11, թիվ 7:

Վ. Սվազյանի գրառած մեկ այլ երգիծական մանրապատումում էլ արտացոլվել են թե՛ նուծացման, թե՛ ցեղասպանության թեմաները՝ իբրև մեկը մյուսի հետ կապված պատճառահետևանքային դրսևորումներ.

*Կիլիկիո պարպումեն ետքը, երբ Կիլիկիո ժողովուրդը Բեյրութ էկավ, ադանացիները արաբաջիներ<sup>431</sup> էին. մեկ բառ հայերեն չգիտեին, բայց ամեն մեկը, մեջքը դանակ մը խրած, դաշնակցական կոմիտեի ժողովի կերթային:*

*Ժողովի ժամանակ շրջաբերականը կկարդացվի հայերեն: Անշուշտ, աս ադանացիները բան չեն հասկնար: Մեկը մյուսին կըսե.*

— Նէ՛ դէդի, դո...յու...շ վա՛ր: (Բնչ է ասում՝ կոիվ կա՛ն ):

— Յօք (ո՛չ):

— Հաղէ՛, հէ՛ վալա (դե՛, փանք Աստծո): Քանի որ կոիվ չիկա, մենք հոս տեղը ի՛նչ գործ ունինք: Մենք գացինք, դուք հայերենը կարդացեք<sup>432</sup>:

---

430 Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

431 **Արաբաջի** – կառապան:

432 **Սվազյան Վ.**, Կիլիկիա, արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

Մենք շատ շուտ մոռացանք, որ անպետականության պայմաններում մեր դարավոր պաշտպանն ու հենարանը մեր հողը, մեր լեզուն ու հավատն են եղել, բայց առավել շատ լեզուն, քանզի, Պարոյր Սևակի խոսքերով ասած, «Ժողովուրդները գոյատևում են ոչ միայն իրենց հողով, այլև իրենց լեզվով. ուրեմն՝ ավելի իրենց լեզվով, քան նույնիսկ հողով»<sup>433</sup>:

Լեզուն հիշողություն է, այն կապ է պահպանում մեր արմատների հետ, եթե կորցնենք մեր լեզուն, կկորցնենք նաև մեր հիշողությունը և կնմանվենք մաթևոսյանական «բաց դաշտում արածող հորթին», որի ապագան սպանդանոց տանող ճանապարհն է ու մորթը՝ սպիտակ ջարդ-ձուլման տեսքով...:

Իբրև լեզվաբան՝ Աճառյանի ուշադրության կենտրոնում են եղել հայերենն անաղարտ պահելու, հայոց լեզվով հաղորդակցվելու հարցերը, և ամենևին պատահականություն չէ, որ 19-րդ դարավերջին պոլսահայերից գրառած մի քանի անեկդոտներ առնչվում են հենց ուծացման խնդիրներին<sup>434</sup>: Դրանցում ծիծաղի, երբեմն էլ սպանիչ ծաղրի միջոցով ներկայացվում են լեզվական ուծացման հետևանքներն ու ուղղորդվում այդ երևույթի դեմ պայքարելու ժողովրդական արձագանքները:

Օտարության մեջ հայտնված և իր լեզվի հարգը չիմացող, օտար լեզվին գերի դարձած հայ պանդուխտ-գաղթականը այլագգիների հետ շփվելիս բազում զավեշտալի իրավիճակների մեջ է հայտնվում՝ դառնալով երգիծական մանրապատում-զվարճախոսությունների ստեղծման հենք, երբեմն էլ կյանքով հատուցելով դրա համար:

Այսպես, թուրքախառն հայերենով (հիմնականում թուրքերեն բառերով և հատ ու կենտ հայերեն բառերով ու մասնիկներով) մի ենիչերիի հասցեին ասված խոսքը հայի համար ճակատագրական է լինում՝ դառնալով նրա մահվան պատճառը.

*Օր մը էրկու հոքի (հայ) կերթան կոր, ենիչերի մը քովերնեն կասնի: Ան հայը մէկալին կըսէ քի «Սա ենրչերիին խալփա-*

433 Սևակ Պ., հ. 5, Թրի դեմ գրիչ, Եր., «Հայաստան» հրատ., 1974, էջ 175:

434 Աճառյանական այդ գրառումները, բանասիրական այլ նյութերի հետ ինչ-ինչ պատճառներով հրատարակվեցին 110 տարի անց միայն:

խին թէքմէ մը եռլեշտիրմիշ ընեն քի խօսխօճաման խալփախը յօխուշ աշաղի թէքէր մէքէր գա»։ (Սա ենիչէրիին աղակին այնպիսի մի քացի տամ, որ ահագին կղակը գառիվայրից ցած գլտոր գա)»։

Ենիչէրին կը հասկնա, խըլըճը կքաշէ, գլօխը կկտրէ կմեռցունէ<sup>435</sup>։

Այս պատումի տողատակում Աճառյանն ավելացնում է. «Այս առակը պատմում են ցույց տալու համար, թե պոլսահայ ռամիկ լեզուն այնքան խառն է թուրքերեն բառերով, որ թուրքն էլ կարող է հասկանալ»<sup>436</sup>։

Լեզվական ուժացմանն առնչվող ևս մի պատում է պոլսահայերից գրառել Աճառյանը՝ այս անգամ կապված առևտրի հետ։ Այստեղ ևս թուրքին լրիվ հասկանալի «հայերենը» խափանում է պոլսահայի խարդախ գործարքը<sup>437</sup>։

Տեն Հավելված 11, թիվ 8։

Վերջերս մեր գրառած նմանատիպ այուժեով նյութերից մեկը ևս վերաբերում է լեզվական խնդիրներին, այս դեպքում՝ ռուսախոսությանը՝ ռուսերենախառն «հայերենի» ժարգոնային դրսևորմանը. Մոսկվայում ընկերոջը՝ տաքսու վարորդի հասցեին արված «հայերեն» «Էս ոտոռդ տաքսիստի դերիլ ոռժին նայի» խոսքը, ինչպես աճառյանական տարբերակում, այս դեպքում ևս այն կիրառողի համար պատուհաս է դառնում։

(ԱՄՀՀ)

Տեն Հավելված 11, թիվ 9։

Հր. Աճառյանի գրառած բազմաթիվ գվարճապատում-գվարճախոսություններից չորսը առնչվում են այլադավանությանը<sup>438</sup>, որոնցից երեքում ծաղրվում են ոչ միայն իրենց լեզուն մոռացած թուր-

---

435 Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 174։

436 Նույն տեղում։

437 Նույն տեղում, էջ 175։

438 Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 165-166, թիվ 14, 15, 16, 17։

քախոս կաթոլիկ վարդապետները, այլև նրանց բարոյագրկված զավակները.

*Կաթոլիկ մարթ մը չանթան ձառքը՝ ախճըկանը հետ մեկտեղ՝ տեղ կերթան կոր էղէր: Ախճիկը հորը կը դառնա կըսէ քի՛ — Պանպա, պանպա, կըսէ, աչքամտան կէլ քի սէնի ուշաըմ զանն էթսինկէր (Հայր, հայր, ետնիցս արի, որ քեզ ծառաս կարծեն), — կըսէ<sup>439</sup>:*

Նախախորհրդային տարիներին, այնուհետև խորհրդային տարիներին նպատակադրված ուժացման քաղաքականություն է իրագործվել նաև մեր հարևան քրիստոնյա երկրում՝ Վրաստանում:

Կախեթիի հայերի մեծ մասը ուժացված հայեր են: Դա է վկայում նաև 19-րդ դարավերջի անեկդոտների ժողովածուներից մեկի հետևյալ նմուշը, որը, իրողության հենքի վրա ստեղծված երգիծապատում լինելով, ծիծաղի լեզվով ոչ միայն քննադատում է կիսականովին, կիսաբռնի այդ ուժացումը, այլև սթափության է կոչում մյուսներին.

*Մակար Ա. կաթողիկոսը առաջնորդ եղած ժամանակ ճանապարհորդում էր: Երբ որ մտաւ Քութայիս, տեսաւ, որ բոլորն էլ վիրախօսներ են. նա զարմացաւ. —*

*— Մի՞թէ այսչափ հայերից ոչ ոք հայերէն չի խօսում:*

*— Վունց չէ, խարջեցին իրենց փայ հայերէնը մօտ կանգնողները և առաջ կանչեցին Դաւիթ Քալանթարեանցին:*

*— Հայ են, որդեանկ, — դարձաւ նրան սրբազանը:*

*— Հրամելիս, հայր սուրբ, հաւ իմ, պատասխանեց նա<sup>440</sup>:*

Ամերիկահայ հայտնի կինոռեժիսոր Ռուբեն Մամուլյանի 100-ամյակի կապակցությամբ ռադիոհաղորդում պատրաստելու նպատակով լրագրող Պապիկյանը լինում է Թբիլիսիի մոտ

439 Նույն տեղում, էջ 166:

440 Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ և օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեսանի, 1892, էջ 39-40:



գտնվող Մուխրավան բնակավայրում՝ փորձելով գտնել Մամուլյանների գերդաստանից որևէ մեկին ու հարցազրույց վարել: Սակայն պարզվում է՝ գյուղում ոչ թե Մամուլյաններ են ապրում, այլ՝ Մամուլաշվիլիներ: 2012թ. օգոստոսին մենք հասցրինք այդ ռադիո-հաղորդումից սղագրել գվարճախոսության վերածված մի տխուր փաստ.

*Թղթակիցը հարցնում է.*

— Մամուլաշվիլիները հայ են, թե՛ վրացի:

Մուխրավանիի բնակիչը քմծիծաղով պատասխանում է.

*Մուխրավանցուն հարցնում են.*

— *Վրացի են, թե հայ ես:*

*Ասում ա.*

— *Վրացի եմ:*

*Ասում են.*

— *Դա դեռ մեռնելուց հետո կերևա՝ հայ ես, թե՛ վրացի: Երբ որ կմեռնես, թե որ վրացական գերեզմանը կտանեն, ուրեմն վրացի ես, թե որ հայկական գերեզմանը կտանեն, ուրեմն հայ ես:*

(ԱՄՇՀ)

# ՀԱՎԵԼՎԱԾ 11

## 1

### Ըստեփանակերտուց ժողովը

Ըստեփանակերտ ժողով ըն անում, վեր հայերեն լուզուն պահին, պաշտին, խօխենքը վէչ թա ռուսերեն, հայերեն խօսին: Վերչումը խօսկը տամ ըն ժողովէն նախագէն, էս էլ յէր ա կէնում, թա.

— Տավարիչի, մէր լու գուն սըլաթկի լուզու յա, դըրագացէննի լուզու յա: Մունք մէր լուզովա՛ն ընք պարէդիտ ընէլու, ըտըրա հէտի բիդի լօխըս էլ պրապագանդա անինք, վէր մէր ժիղօվորթը մէր լուզուն գարըվատ չանէ: Կարօչի գավարյա<sup>441</sup>, մէր լուզուն մէր փըլագըն ա, մէր գօրդըստըն ա, դավայծէ սախրանիտ անինք մէր լուզու

Սարգսյան Ա.Յ., Արցախի բանահյուսությունը,  
Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2015, էջ 416:

## 2

Ղարաբաղցուն ասում են.

— Դուք մի բառ հայերեն եք ասում, էրկուսը՝ ռուսերեն:

— Նաաբառոտ, մունք չիստը հայերեն ընք խոսում, — արդարանում ա դարաբաղցին:

(ԱՄՇՀ)

## 3

Շամբեցի մէկ երիտասարդ խոովեց, փախաւ գնաց Թավրիզ թուրքանալու, էստեղի Հայերը երբ գանագան խրատներով աշխատում էին յետ դարձնել նորան իւր դիտատրութիւնից, երիտասարդը նրանց ասաց, իզուր էք ինձ քարոզում, երդումն են կերել Ստեփանոս Նախավկայի աջի վերա ու պէտք է թուրքանամ:

Անեկդօտներ, գուարճալի գրոյցներ, համառոտ դէպքեր  
և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած:  
Ժողովեց Գալուստ Շիրմագանեանց, Թիֆլիս,  
տպարան Յովհաննու Սարտիրոսեանց, 1878, էջ 7:

---

441 Կարօչի գավարյա (ռուս.) – կարճ ասած:

## 4

Յոթ-ութ աղանացի հայ պանդուխտներ 1900-ական թիվերուն հյորտյոյ կհասնին, հայ տանտիրուհիի մը տունին մեջը սենյակ մը կվարձեն, իբր փարա պիտի վաստակին ու պիտի վերադառնան:

Ատոնք անգրագետ կըլլան, բայց՝ դաշնակցական: Օր մը կարմիր կնիքով նամակ մը կուգա (դաշնակցության նամակները կարմիր կնիքով կըլլային): Ատոնք կտեսնան նամակը հայերեն է՝ տանտիրուհուն կխնդրեն.

— Հաճի՛ն, աս նամակը կարդալ:

Կինը նամակը կկարդա: Ատոնք կհասկանան՝ նամակը Կենտրոնն է, տանտիրուհուն կըսեն.

— Հաճի՛ն, սենյակէն էլի՛ր, ասի դաշնակցական գաղտնի ժողով է...

Սվազլյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

## 5

Տարագրութենէն վերջ Հալէպ հաւաքուած գաղթականները Պատարագի և ժամերգութեան համար Այնթապցիներու Ս.Աստուածածին եկեղեցին կ'երթային: Քահանան այլևս հայերէն քարոզ կը կարդար:

Այնթապցին Մարաշցիին կ'ըսէ.

— Պու դարիպլար վար եա... Սաֆարպիրլըկըն կէօզը քէօր օււրն: Պու դարիպլար կէտիլար պիզիմ անա լիսանըմըզը հարապ էթտիլար: Օնըն կարընտա էրմանճա քարոզ վէրէօր պիզիմ քահանայ (Այս պանդուխտները կը տեսնեն... Տարագրութեան աչքը կուրնայ... Այս պանդուխտները եկան, մեր մայրենի լեզուն քանդեցին, այդ պատճառով մեր քահանան հայերէն քարոզ կու տայ):

Միջ-գաւառական անեքթոտներ: Հաւաքեց և ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալէպ, 1988, էջ 86:

## 6

Այնթապցի, Քիլիսցի և Մարաշցի հոգևոր կիներ հաւաքոյթի մը կ'երթան՝ ամէն մէկը Ս. Գիրք մը թևին տակ: Աղօթածողովէն ետք խրախճանքը կը սկսի դասական եղանակով: Ս. Գիրքը թևի տակ՝ կ'ելլեն պարելու, կ'ըսեն.

— Աման Ալլահըմ, կինասի եագմա (Ով իմ Աստուածս, մեղք մի՛ գրեր):

Յանկարծ երաժշտութիւնը կը փոխուի, կը դառնայ տաք ու եռանդուն: Պարը կը դառնայ նոյնքան տաք: Կիները Ս. Գիրքերը մէկիկ-մէկիկ կը նետեն մէկդի ու կ'ըսեն.

— Իստէր եագ, իստէր եագմա (Կ'ուզես՝ գրէ, կ'ուզես՝ մի՛ գրեր):

Միջգաւառական աներթոտներ, Յակոբ Չոլաքեան,  
Բ տպագրութիւն, 2005, Հալէպ, էջ 92:

## 7

### Թրքախոս աղանացիները

Աղանացիները հայախոս չեն, թուրքախոս են: Երկու աղանացի գիշերով կերթան, կլիմեն, առտվան դեմ գինով տուն կուզան: Մեյ մըն ալ կնային քի ժողովուրդը հավաքվել է եկեղեցու շուրջը: Կհարցնեն. — Ինչ կա:

— Չենք գիտեր՝ խթումի գիշեր է, վաղը՝ Զատիկ է, ներսը գյճրիլ-գյճրիլ պատարագ կըլլա կոր:

Գինովներեն մեկը կըսէ.

— Հայդա՛, մենք ալ ներս մտնանք:

Մյուս գինովը կըսէ.

— Ես հայերեն չեմ հասկնար, ինչու՞ մտնանք:

— Ես քիչ մը կհասկնամ, մտնանք, — կըսէ:

Կմտնան ներս: Տեր հայրը քարոզ կսկսի.

— Միրելի՛ ժողովուրդ: Դուք որչափ աստն է, որ եկեղեցի չե՛ք գար: Դուք որչափ ձեր հավատքը կորցուցեր եք: Հակառակ պարագային Աստված ձեզի պիտի պատժէ...

Գինովներեն մեկը կհարցնէ մյուսին.

— Օլան, բու հէրիֆ ն՞է դիյօր (Ծո՛ն, այս մարդն ի՞նչ է ասում):

Մեկալը կըսէ.

— Արխադանշ, բէսիմ բիլդիմ էրմէնշէ իլէն „վօր,, գօ...թ (բարեկանս, իմ գիտցած հայերենով «ոո»)՝ հետույք կնշանակէ, «չափն» ալ՝ չափել կնշանակէ): Բարանկային ետևը մեկուն ոռը կչափեին կոր, ամմա վերջը չհասկցա թե որո՞ն ոռը չափեցին...

Սվազլյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը,  
Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 110:

## 8

Օր մը մեկը քիշեր ստեն հելվաճիին գացեր հելվա ստեր է. հինկնց մը տուվեր՝ մանրուքը առեր է: Ատ ստենը ճանչվոր մը կասնի, ինչ կընես կոր կըսէ նէ, «Հելվաճիին խալպ պէշլիսը յութտուրմիշ ըրի» կըսէ: Հելվաճին կը հասկնա, հիկնոցը կը հանէ ետ կուտա:

Աճառյան Հր., Դոլսահայ անգիր բանասիրություն,  
ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 175:

## 9

Հայր Մոսկվայում ընկերոջ հետ տաքսի ա նստում, ընկերն  
ասում ա.

— Էս ուռոդ տաքսիստի դերիլ ոռժին նայի:

Տաքսիստը իջնում, սրան ծեծում ա, սա չի էլ իմանում ինչի,  
թողնում են փախչում...

(ԱՄՇՀ)

**ԱՆՍՊԱՍԵԼԻ ԾԻՃԱՂԻ  
ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՅԼ ՄԻՋՈՑՆԵՐԸ՝  
ՉԱՎԵՇՏԻ ՅԵՆՔ ԵՐԳԻՃԱՊԱՏՈՒՄ-  
ՉՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում մեծ քանակ են կազմում նաև այնպիսի նմուշները, որոնցում անսպասելի ծիծաղի դրսևորմանը նպաստում են են ոչ թե լեզվական-քերականական, այլ ուրիշ միջոցներ ու հնարանքներ: Այդպիսիք կարող են դառնալ ֆիզիկական տարատեսակ արատները՝ թիկությունը, ատամնաթափությունը, կակազելը, խլությունը, տարատեսակ հաշիվ-հաշվարկները, ծածկախոսությունը, բանաձևերը, սինկրետիզմ-համադրողականությունը և այլն:

Ինչ խոսք, ֆիզիկական զանազան արատների հենքի վրա ստեղծված անեկդոտներ են առկա նաև ուրիշ ժողովուրդների բանարվեստում, բայց հայկական նյութերն առանձննում են ոչ միայն իրենց լեզվով, այլև հայկականությունը հավաստող տեղանուններով, անձնանուններով, պատմա-ազգագրական, սոցիալ-տնտեսական և այլ կարգի իրողություններով:

**1.** Թիկության հենքի վրա ստեղծված նյութերի մեջ ազգային հատկանիշներով առանձնանում է *3 թվատ քույրերի մասին* պատումը՝ կապված հայոց հարսանեկան ծիսակարգի արարողակարգերից մեկին՝ խնամախոսությանը: Ի դեպ, մի շարք տարածաշրջաններից այդ զվարճապատումի բազմաթիվ տարբերակներ կան թե՛ անտիպ<sup>442</sup>, թե՛ տպագիր աղբյուրներում, և բոլորի մեջ խնամախոսների ներկայությամբ թիկությունը չբացահայտելու համար չխոսելու հանձնարարականն է տրվում, սակայն երեքն էլ չեն կարողանում ծնողի խնդրանքը կատարել:

442 ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Իրեք աղջիկը, Լոռի, Համգաչիման (Մարգահովիտ), Վ Ղազարյանի ֆոնդ, թղթապանակ 87, էջ 73:

Մեր ձեռքի տակ եղած Վանի տարբերակում քույրերի թվատությունը բացահայտվում է ջահրայի՝ ճախարակի լարը կտրվելու պատճառով<sup>443</sup>, իսկ պոլսահայոց<sup>444</sup> և նորնախիջևանյան<sup>445</sup> տարբերակներում՝ մկան հանկարծակի հայտնվելու հետևանքով:

Տես Հավելված 12, թիվ 1, թիվ 2, թիվ 3:

**1.2.** Թլիկությանն առնչվող գվարճախոսություններում արտաբերողի խոսքում համապատասխան բաղաձայններով այնպիսի բառ-բառակապակցություններ են գործածվում, որ դրանք արտաբերելիս ասելիքը վերածվի գավեշտի.

*Թլիկ վարսավիրը դիմում է հաճախորդին.*

— *Տլեմ թսեմ էլեսիդ (իմա՝ կրեմ քսեմ երեսիդ):*

(ԱՄՇՀ)

**1.3.** Լեզվական արատի՝ շնչեղ խուլերի՝ «չ»-ն «ց» և «ո», «ր» հնչյունների «լ» արտաբերման ընդգծմամբ ներկայացվող գվարճախոսության գավեշտի հենքը թլիկ աղջկա համբերատարությունն ընդգծող՝ «*համփելում եմ, ձեն ցեմ հանում*» արտահայտության մի քանի անգամ կրկնությունն է, իսկ գավեշտի գագաթնակետը՝ «*ըմբոստությունն*» արտահայտող խոսքը.

*Մի թլիկ աղջիկ պատմում ա գլխով անցածը.*

— *Մի օլ կանգալում կանգնած էի, մի ավտո կանգնեց կողքիս, մի տղա իցավ, ձեղիցըս բըլնեց, տալավ կողքը նստացլեց: Համփելում եմ, ձեն ցեմ հանըմ: Տալավ իլանց տուն, տալավ իլա սենյակը: Համփելում եմ, ձեն ցեմ հանըմ: Տալավ կողքը պակացլեց: Համփելում եմ, ձեն ցեմ հանում: Բայց ոլ ալավոտը վեկ կացա, էլ ցըհամփելեցի, ասի. «Գիտե՞ս ինց կա, ես քու իմացած ախցիկնելից ցեմ, հասա՛...»:*

(ԱՄՇՀ)

443 Ծիծաղում են վանեցիները, Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, Կլվատ աղչկըներ, էջ 129:

444 **Աճառյան Հր.**, Պոլսահայ անգիր բանահյուսություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009, էջ 163:

445 Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 2, Խ.Ա.Փոքրշեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Եր., ՀՄՍՀ ԳԱ հրատ., 1971, Թրվվադները, էջ 85:

**1.4.** Երբեմն էլ հայկական անեկդոտներում լեզվական արատի՝ **թլիկության պատրանքի** ստեղծմամբ է գավեշտ առաջանում.

*Երևանում մի կնիկ տաքսի ա կանգնացնում, թե՛*

— *Վարպետ ջան, կարսն ինձ վռագ տանես Զանգվի ձորն ու հետ բերես:*

— *Նստի՛, քնոր ջան, — ասում ա վարորդը, — թունելով կտանես, թունելով կբերես*<sup>446</sup>:

*Էս կնիկն ասում ա.*

— *Վայ ես քեզ էլ մեռնես, քու թլիկ լեզվին էլ, գնացիք...*

(ԱՄՇՀ)

**1.5.** Խոսել սկսելու առաջին իսկ օրերից երեխաները բառերը վերարտադրելիս դժվարությունների են հանդիպում, մանավանդ՝ բաղաձայնները: Հենց այդ ժամանակ էլ գրեթե բոլոր թոթովախոս մանուկների «բառապաշարում» օգտագործվող նորահայտ բառերը սկզբնական շրջանում ծնողների ու հարազատ-մտերիմների համար և՛ հաճելի են, և՛ դժվարընկալելի: Ինքնատիպ վերարտադրվող այդ արտաբերումներին առաջին անգամ անդրադարձել է Հրաչյա Աճառյանն իր «Մանկական բարբառ»-ում<sup>447</sup>: Մակայն կան նաև մանկական խոսքի գավեշտայի այնպիսի դրսևորումներ, որոնցում անսպասելի ծիծաղն առաջանում է մանկական խոսքի թոթովախոսության հետևանքով:

**ա.** Եթե մեծերի թվատությանն առնչվող երգիծապատումներում թվատությունը լեզվական արատ է, և գավեշտի հենքը այդ արատի վրա կառուցված պատումներն են, ինչպես վերը նշված թվատ քույրերինը, ապա մանկականում անսպասելի ծիծաղի առաջացման պատճառը երեխայի թոթովախոսությունն է՝ թլոշ լեզվով ասված անմեղ խոսքը.

---

446 Երևանի կենտրոնից Զանգվի ձորը գնացող թունելով կարճ ճանապարհ կա:

447 **Աճառյան Հր.**, Մանկական բարբառ, «Բանասեր» հանդես, հատ. 3, պրակ Ա, Պարիս, 1901, էջ 3-28:



Հարույթը քո ինչն է, հարցնում են 4-ամյա Սարգիսին:  
Հայութ չի, Հայութ է, «ուղղում է» Սարգիսը:

(ԱՄՇՀ)

**բ.** Մանկական թոթովախոս-թոռը լեզվով խոսքի հենքի վրա բազմաթիվ զվարճախոսություններ են ստեղծվել, որոնցից ամենաբնորոշը և ազգային դիմագիծ ունեցողը հայոց այբուբենի ուսուցման հենքի վրա ստեղծված Գ. Գևորգյանի «Չնքուշապատում»<sup>448</sup> գրքում ընդգրկված պատումն է:

Տես Հավելված 1, թիվ 4:

**2.** Ֆիզիկական մեկ այլ արատի՝ **կակազելու** պատճառով կտրտված հնչյուն-հնչյունախմբերով արտաբերված խոսքը ևս պատճառ է դարձել մի շարք զվարճախոսությունների ստեղծման:

Այս թեմայով անեկդոտները անցողիկ չեն: Թեման առկա է և՛ 19-րդ դարի երկրորդ կեսի, և՛ 20-րդ դարի հայկական անեկդոտների ժողովածուներում:

**2.1.** 1988-ի երկրաշարժի օրերին կակազողները, մանավանդ երեխաների շրջանում, շատացան, ինչի հետևանքով վերակենդանացան նաև այդ թեմայով անեկդոտները, ստեղծվեցին նաև նորերը՝ արտացոլելով զուտ երկրաշարժյան տնակային ապրելակերպը.

*Լենինականցին հարցրնում ա լոռեցուն.*

— Ախպեր ջան, ուրդեղ կմնաս:

— Դո-դո-դո- մի-մի-կու-կում:

— Ես էլ դոմիկում կմնամ, բայց իմը էդքան էրգար չէ:

(ԱՄՇՀ)

Կակազելուն առնչվող անեկդոտներում զավեշտը դրսևորվում է երկխոսությունների միջոցով՝

**2.2.** Երբ խոսակիցներից մեկը կակազող է, մյուսը՝ ոչ.

*Մինը հարցրեց միսին.*

— Անունդ ինչ է,

---

448 **Գեորգևան Գ.**, Չնքուշապատում, հատոր 1, Երուսաղեմ, տպարան Ս. Հակոբեանց, 1970, էջ 309:

Եվ նա կակազ լինելով, ասաց.

— Մո... մօ... մօ... սէս:

— Եղբայր, իմ անունս էլ Մօսէս է, բայց էղքան երկար չէ<sup>449</sup>:

**2.3.** Երբ երկուսն էլ կակազող են.

— Ժը-ժա, ժա- մը-մը -քա-քա-նի-նի-նի-նիս-նա::

— Հի, հի..նը-նը-նըն- գըն-գըն-ա:

— Չը-չը-հաս-հաս-կա-կա-ցա, էս-էս-ձե-ձե-ոե-ոեն ա-ա-առ-նու-նու-նում..

(ԱՍՇՀ)

**2.4.** Երբ մեկը կակազող է, մյուսը՝ ոչ, և կակազողի ոչ թե կակազելն է գավեշտի հենքը, այլ նրա արտաբերած ինչ-որ խոսքը.

— Կը-կը-կը-նե-նե-րեք, կա-կա-կա-զո-զո-ո-ո-ո-նե-նե-րի դըպ-դըպ-րո-րո-ցը-ցը ո՛-ո-ո-ր- ո՛ր-տե-տե-դա:

— Լավ էլ դայդին կակազում ես, էլ դպրոցն ինչ ես անում...:

(ԱՍՇՀ)

**3.** Ֆիզիկական մեկ այլ թերության՝ **ատամնաթափության** պատճառով առաջացած սխալ հնչարտաբերումը ևս կարող է անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ դառնալ.

Կիրովականցի Ռուբենին հարցնում են.

— Քանի էրեխա ունես:

Ասմա՝

— Շանաշարը, Շաշիկը, Շարո, Շրբուհի...

— Տնաշեն, որ ատամներըս ուզորս<sup>450</sup> էրեխանցրդ անուններ դնեիր, չէր ըլլ՞...

(ԱՍՇՀ)

---

449 Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դեպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կեանքից առած: Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878, էջ 156-157:

Ծիծաղի տկճոր: Միլա Նասրեդինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտներ և սրբախոսությունների ժողովածու: Կազմեց՝ Արտեմ (Յարութիւն) Եսաեան, Թիֆլիս, տպարան Էպոխա, 1913, Եսայան, «Ծիծաղի տկճոր», էջ 77, 1913:

450 Ուզորս – համեմատ:

**4.** Անենդոտներում զավեշտի հենք է դառնում նաև **խլությունը**: Այս թեմայով նյութերում ֆիզիկական արատը կրողները հիմնականում տարեցներն են, և անսպասելի ծիծաղը դրսևորվում է երկխոսության միջոցով: Այն տեղի է ունենում կամ խուլի և ոչ խուլի միջև, կամ էլ՝ երկու խուլերի միջև:

**4.1.** 19-րդ դարավերջին խուլի և հիվանդ բարեկամի միջև տեղի ունեցած զավեշտալի երկխոսության մի հետաքրքիր երգիծական մանրապատում է հրատարակել Ս.Շահազիզյանը<sup>451</sup>: Մինչև բարեկամի հետ հանդիպումը խուլը իրենց հանդիպման մոտավոր հարց ու պատասխաններն է «մշակում», որ հեշտ ընթանա զրույցը, սակայն հիվանդի վիճակը ծանր է լինում, և կատաղած հիվանդը ծրագրից դուրս պատասխաններ է տալիս՝ինչի հետևանքով խուլի արձագանքները ծիծաղ են հարուցում, իսկ վերջում ասված օրհնանքը վերածվում է անեծքի.

- *Բարով, — ոտը տուն դնելով՝ սկսեց խուլը:*
- *Չոռ ու ցան, էլի եկար, — միս կողմը շոռ գալով՝ փնթփնթաց հիւանդը:*
- *Ինչպէ՛ս ես, — շարունակեց խուլը:*
- *Էլ ի՞նչպէս պէտք է լինիմ, տնաքանդ, սատկում եմ:*
- *Փառք Աստու: Իշտահդ ո՛նց է, ի՞նչ ես ուտում:*
- *Ջահոմար, — վրայ բերեց հիւանդը:*
- *Այ անուշ ըլի՛: Ո՛վ է բժշկում:*
- *Հոգեհանը:*
- *Աստուած մաջին դուաթ տայ*<sup>452</sup>:

Տե՛ս Հավելված 12, թիվ 5:

**4.2.** Խլությանն առնչվող մի պատում էլ՝ կրկին նախապես պատրաստած հարցուպատասխաններով ու կրկին Լոռուց գրաված, հրատարակվել է 2008թ.: Այստեղ էլ նախապատրաստությունը չի արդարացնում, և պղնձին վերաբերող հարցի փոխարեն

451 Ծիծաղի տոպրակ, Անենդոտներ հայ և օտարների կեանքից, Աշխատասիրեց դպիր Ս.Տ.Ս. Շահազիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեսահի, 1892, էջ 116-117:

452 **Աստուած մաջին դուաթ տայ** – Աստված դատակին ուժ տա:

կնոջից է հարցը լինում, և խուլի ծրագրած պատասխանը նորից անսպասելի ծիծաղ է առաջացնում.

— *Գնորո, խելք ըլի, իմ քիր Ելենին առավոտ շուտ էս ո՛ր ես տանում:*

— *Քամակը ծակվել ա, տանում եմ ուստեն սարքի*<sup>453</sup>:

Տես Հավելված 12, թիվ 6:

**4.3.** Խուլի հետ հարցուպատասխանի մի հետաքրքիր նմուշ «Խուսավում եմ» բանաստեղծության մեջ օգտագործել է նաև Պ. Սևակը: Երկու խուլերի խոսակցությունը, երբ մեկը մյուսին չի լսում ու չի հասկանում, երբ ամեն մեկն իր իմացածն ու ուզածն է ասում, ինքնին զավեշտ է: Խոսքը, ըստ բանաստեղծի, պետք է լինի հակիրճ ու անկեղծ, առանց խուսանավումների ու շրջանցումների, և խուսավելու մի շարք դրդապատճառների մեջ շեշտվում է նաև այն դրությունը, «որ լոկ գալիս է մեր խլությունից».

*Խուլին ասում են.*

— *«Ցուրտ է, չե՛ս մրսում»:*

*Խուլն էլ ասվածը խլաբար լսում*

*Եվ ի պատասխան՝ իրենն է ասում.*

— *«Հա՛, ճիշտ եք լսել. մեր անտեր ցուլը*

*Կա-չկա կարծեց, թե փորոտիք է՝*

*Ջարկեց ու պատռեց մեր գինու տիկը...»*<sup>454</sup>

Օգտագործելով ժողովրդական զվարճախոսության այս նմուշը՝ վերջում բանաստեղծը, իր խոսքը ահագանգի պես հնչեցնելով, զգոնության է կոչում.

*Ես խույս եմ տալիս ո՛չ թե խուլերից,*

*Այլ կարաս ջարդող*

*Ու տկճոր պատռող*

*Բոլոր անմակդիր նման ցուլերից...»*<sup>455</sup>

453 **Քոչարյան Ս.**, Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ», 2008, էջ 8-9:

454 **Սևակ Պ.**, Երկերի ժողովածու՝ 6 հատորով, Հատոր 1, Երևան, «Հայաստան» հրատ., 1972, էջ 432:

455 Նույն տեղում:

**5.** Հայկական երգիծական մանրապատումներում առանձնաանում են այնպիսի ստեղծագործությունները, որոնցում անսպասելի ծիծաղը դրսևորում է տարատեսակ **հաշիվ-հաշվարկների** միջոցով: Այսպես.

**5.1.** Վասպուրականցիների պատումներից մեկում երկու կանճետցու՝ քաղաքում կատարած առևտրի սովորական հաշվարկն է դառնում զավեշտի հենքը.

*Տաս փարա տվինք, գացինք տկոզտուն (պաղնիս):*

— *Տաս փարա տվինք, առանք՝ էն, ինչ որ ես վար քի լացի, տյու վար զի լացիր (տաճիյ բյուբա):*

— *Տաս փարա տվինք, առանք էն, ինչ չանց հիմ աստված, չանց քու աստված քաղցր էր (չամիչ)<sup>456</sup>:*

Տե՛ս Հավելված 12, թիվ 7:

**5.2.** Երգիծապատումներում զավեշտի հենք հարող է դառնալ նաև *կեղծ հաշվարկը*: Մի դեպքում այն բարի նպատակով է կատարվում, ինչպես Կ. ք. Գալֆայանի հրատարակած «Բալասան տայուն հաշիվը» զվարճապատումում, որտեղ կուսությունը ժամանակից շուտ խախտած և ամուսնությունից երեք ամիս անց երեխա ունեցած «տղուն արը-նամուսը չավրելու» համար գտնվում է «հաշվագետ» Բալասան տային, որը հանդարտեցնում է բոլորի մտքերը, վերջ տալիս բամբասանքներին, և «հարս ու փեսա մնում են արով-նամուսով»: Ահա այդ զվարճապատումի առանցք հանդիսացող զավեշտալի հաշվարկը.

— *Մտի՛կ ըրեք, հաշիվը աս է. փեսին ամուսնությունը հարսին հետ կընն 3 ամիս, 3 ամիս ալ հարսին ամուսնությունը փեսին հետ. եղավ 6: Աննող ամիս, այս ամիս և գալող ամիս՝ 3 ալ աս, կընն ճիշդ ու ճիշդ 9 ամիս...: Պրծավ գնաց<sup>457</sup>:*

Տե՛ս Հավելված 12, թիվ 8:

---

456 Ծիծաղում են վանեցիները, Կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Զանգակ-97» հրատ., 2006, էջ 175:

457 Գիրք առակաց, պատրաստեց Կարապետ քահանայ Գալֆանան, Լիբանան, Բեյրութ, 1957, էջ 141-142:

**5.3.** Մեկ այլ գվարճապատումում կաշառքի շնորհիվ կեղծ հաշվարկ է կատարվում, և նոր այրիացածի՝ քենու հետ ամուսնանալու չհասությունը անմիջապես եպիսկոպոսը փոխում է հասության: Եվ գավեշտալին դա հավաստող «ազգաբանությունն» է՝ մատների վրա կատարված հետևյալ հաշվարկով.

*Սպիտակ – ջորի,*

*Հարյուր – ոսկի,*

*Մեռնի – կնիկը.*

*Առնի – քենին:*

— Էէ. էս 8 էլավ, որդի օխտը պորտից անցա, կհասնի, կհասնի...<sup>458</sup>

Տես Հավելված 12, թիվ 9:

**5.4.** Հաշվարկների միջոցով անսպասելի ծիծաղի առաջացման ինքնատիպ դրսևորումների ենք հանդիպում թե՛ արևմտահայոց<sup>459</sup>, թե՛ արևելահայոց<sup>460</sup> ժողովրդական բանավեպտում: Դրանցից մեկում գավեշտը հիմնավորվում է երկու գործողությամբ, մեկը պահ տված ոչխարների կորուստը «հիմնավորող» անհեթեթ հաշվարկի միջոցով.

*Ոչխարներուն առաջնորդը թռա ժայռէն,*

*Հինգ ոչխար ալ անոր ետևէն,*

*Մէկն յափշտակուեցաւ գայլէն,*

*Մէկը տուի գասապին,*

*Մէկն ալ մի խառներ հաշիւին,*

*Միսն ալ մեր տղան (վզին) զանգ է անցուցած, ո՛չ քեզի կու տայ, ո՛չ ալ ինձի:*

---

458 Անեկոսներ, հատոր 2, Աշխատափրեց Յովհաննէս Նազարեանց, Տիփլիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, էջ 37-38:

459 **Բաղդասարյան-Թափալցյան Ս.**, Մշո բարբառը, Եր. ԳԱ հրատ., 1958, «Գեղացին ու քախքըցին», էջ 208-209:

**Գեորգեան Գ.**, Չնքուշապատում, 1-ին հատոր, Երուսաղեմ, տպարան Ս. Հակոբեանց, 1970, էջ 308:

460 Անեկոսներ, հատոր 1, Աշխատափրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, 1876, Ղասապեանցի տպարան, էջ 56:

Իսկ մյուսը՝ մածունը երեսին շփելուց հետո արտաբերված Ճերմակերես (պարզերես) լինել դարձվածքի շնորհիվ. «Փառք Աստուծոյ, ճերմակ երեսով հաշիվ մը տեսանք»:

Տես Հավելված 8.1, թիվ 5:

**6.** Թե՛ն արևելահայոց, թե՛ն արևմտահայոց բանավոր խոսքում **բան**(իք)-**իքք** բառի հաճախակի կիրառությունը պատճառ է դարձել մի շարք անեկոդոնների ստեղծման՝ դրանք դրվելով որոշակի բառի-մաստային կադապարի մեջ: Ասելիքն ակամա վերածվում է գաղտնախոսության, իսկ խոսակցի կողմից դրա շատ հանգիստ «վերծառում-ընկալումը» անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ:

**6.1.** 19-րդ դարի 80-ականների վերջին «Նոր Դար»-ում տպագրված թումանյանական գրառումներից մեկը բազմաստիճան երկխոսական կառույցով է գավեշտն արտահայտում: Այստեղ չնայած արտաբերողի խոսքի մեջ իմաստը ներկայացվում է իբրև ընկալելի միավոր, այնուամենայնիվ երիտասարդ գրառողը բացում է փակագծերը, այսպես ասած, «թարգմանում է», այլապես ընթերցողը չէր կարող հասկանալ ասելիքը.

*Լոռքցի հովիվը ձայն է տալիս մի սարից դեպի մյուսը, իրեն ընկերին.*

— «Հե՛յ Համբո, Համբո, ադա, քե մատադ, էն ըքանց ըքին ասա ձեր իքն ըքել ա, իքա ըքել, եկեք ըքեցեք, թե չէ էն իքը կը գա կ'ըքի, կասեք՝ դուք եք ըքել», այսինքն, էն Մարկոսանց Դուկասին ասա ձեր էժը ծնել ու է բերել, եկեք տարեք, թե չէ գայրը կըգա կուտի, կասեք՝ դուք եք կերել<sup>461</sup>:

**6.2.** Ահա **բան**-ի յուրատեսակ մեկնաբանությամբ լոռեցու մի գվարճախոսություն ևս՝ տպագրված Հովի. Թումանյանի գրառումից շուրջ մեկ դար անց.

*Համբարձումը խոտի դեզի վրայից ձայնում է կնոջը.*

— Ախչի՛, Վարդու՛շ, օրը ճաշ դառավ, էդ բանը բանովը տուր, բան արա, որ գամ բան անես:

461 Թումանյան Հովի., Երկերի լիակատար ժողովածու՝ 10 հատորով, հատոր 5, Եր., «Գիտություն» հրատ., 1994, էջ 581:

Կինը փնթփնթաց.

— Այ սիրող սևանա, հան, ոնց էլ հիշում ա, որ չորս ձու ա մնացել տանը<sup>462</sup>:

**6.3.** Երբեմն էլ զվարճախոսությունում **բան**-ը այնպիսի անմեղ բառ-բառակապակցությունների հետ է ներկայացվում, որ ունկնդրի կողմից այն ընկալվում է ոչ թե իբրև մոռացված առարկա կամ երևույթ, այլ նրա տակ «թաքնված» բամբառակ խոսք: «Հարսանիքի քավորի բաժակաճառը» նմուշը ասվածի հավաստումն է.

Իմ սիրելի բաներ՝ նորասպասկներ, երջանիկ էղեք: Փեսա՛ ջան, կնգանդ միշտ բան կանես՝ կսիրես: Հանրա ջան, մարդիդ բան անող կլինես՝ կլսես: Դուք ոչ մի բանից չվախենաք, որովհետև ձեր քավորը էքբան մենձ բան ունի՝ շրջասպատ, ու երբ պետք ա՛ էդ բանը ձեր մեջքին կանգնած ա:

Ամբողջ հարսանիքի ժամանակ էքբան անհարմար բանի եմ նստել՝ աթոռի, ու էս սեղանի բանն էլ՝ ոտը, ոտներիս արանքում ա էղել: Բայց ձեր բանի՝ երջանկության համար պատրաստ եմ ամբողջ կյանքում բան անեմ՝ տանջվեմ:

(ԱՄՇՀ)

**6.4.** Արևմտահայոց շրջանում **բան** – **իրք**յան կառույցով նմանատիպ բամբառակ խոսքի դրսևորում է արձանագրել նաև Ս.Ազնավուրյանը «Իրքը» զվարճախոսությունում.

Չիյտեմ ինչեանը դրացիին հանդիպելով.

— Կնիկդ կինս իրք ըրեր է (անարգեր է), — ըսաւ:

— Բնչ իրատունք ունէր կնիկդ կնկանս իրք (ջլթիկ<sup>463</sup>)՝ ըսելու:

— Փողոցին մէջտեղը ես քու կնկանդ բերանը իրք կընէի (կը պատռէի), տուա ըրէ (աղօթել) իմ կնկանս իրքին (աղաչանքին), — պատասխանեց առաջինը<sup>464</sup>:

---

462 Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լեւոն Անթառակյանը, «Վերնատուն», Եր., 1994, էջ 32:

463 **Ջլթիկ** – անբարոյական, լիրք:

464 **Ազնավուրեան Ս.**, Հեքիաթներ, գուարճալիքներ, ԱՄՆ, Միչիկըն, Տիպորն Հայթս, 1971, էջ 144:



**6.5.** Արևմտահայոց մեջ զավեշտ առաջացնող **իրքյան** այդ հաղորդակցությունը խտացվել է ոչ թե այս կամ այն անհատի, այլ մի ամբողջ տարածաշրջանի մարդկանց՝ ուրֆահայերի խոսքում.

*Ուրֆացիին հայերէնը լսած կ'ա՛ր:*

— *Էլլանք գացինք իրքոնց տունը, իրքուն տղան դէմիս էլլաւ. ինծի էնենց իրք մը էրաւ, գիտես ես իրեն իրքուն իրքն էի (Ելանք գացինք իրքենց տունը, իրքին տղան դէմս էլաւ. ինծի այնպէս իրք մը ըրաւ, կարծես ես իր իրքին իրքն էի: «Իրք»ը՝ անորոշ գոյական է)<sup>465</sup>:*

**7.** Զավեշտ կարող է առաջացնել **ծածկախոսությունն** իր տառատեսակ դրսևորումներով:

**7.1.** Երգիծապատումներից մեկում զավեշտի հենք է դառնում «Գնանք գրադարան՝ գիրք կարդանք» ծածկախոսությունը: Քյավառյան անեկդոտաշարում օտարների ներկայությամբ կիրառվող այդ ծածկախոսությունը, բնականաբար, պետք է առնչվեր խմելու գործողությանը: Խանութը փոխարինելով գրադարանով, օրին՝ գրքով՝ «Գնանք գրադարան՝ գիրք կարդանք» գաղտնախոսությունը նպատակ ունի փրկել քյավառցու վարկաբեկված հեղինակությունը:

Տե՛ս Հավելված 12, թիվ 10:

**7.2.** Անսպասելի զավեշտի դրսևորման միջոց է դառնում նաև *հեռագիր-ծածկախոսությունը*՝ արտահայտված օտարալեզու գաղտնագրով՝ ինչպես վերը մեջբերված «Բարուշկա ումերլա» պատումը:

Տե՛ս Հավելված 7, թիվ 16:

**7.3.** Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի միջոց է դառնում նաև *նամակ-ծածկախոսությունը*: Այս բնույթի նմուշներն առնչվում են հիմնականում քաղաքական թեմային՝ կապված հայրենադարձվածների հիասթափվածության և տաղտկալի իրականությունը արտասահմանում գտնվող իր հարազատին

---

465 Միջ-գաւառական անեքթոտներ, Հաւաքեց և ներկայացուց Յ. Չոլաքեան, Վ. Քատունի, Բ տպագրութիւն, Հալեպ, 2005, էջ 91-92:

ծածկախոսությամբ ներկայացնելու հանգամանքով: Նամակներից մեկում հայրենադարձն այդ իրականությունը արտահայտում է գովասանքի խոսքերով՝ սակայն վերջում ավելացնում է. «Ես ասանկ կսեմ, դուն անանկ հասկացիր»: Անվտանգության աշխատակիցները այդ նախադասության իմաստի հետ կապված բացատրություն են պահանջում:

— Այս ինչ բան է, — տարակուսում է հայրենադարձը, — վեց էջ ձեր անունից գրած եմ, երկու բառ ալ իմ կողմից չեմ կրնա ավելացնել<sup>466</sup>:

Տե՛ս Հավելված 12, թիվ 11:

**7.4.** Վ. Սվազլյանի հրատարակած «Նոր էկոդի նամակը» գվարճախոսությունում այդ ծածկախոսությունը այսպես է դրսևորվել.

*Նոր էկոդ մարդուն մեկը նամակ կգրե արտասահմանի իր բարեկամներուն. «Հոս մեր կյանքը շստ ուրախ կանցնի. ամեն օր ուրախանալու առիթ մը ունինք. օր մը հերթ կկայնինք՝ կես կիլո շաքար կտոնենք՝ կուրախանանք, մյուս օրը հերթ կկայնինք՝ կես կիլո կարսճ կտոնենք՝ կուրախանանք... Ճիշտը ըսելով՝ հոնտեղը ան տեսակ ուրախություններ դուք չունիք»<sup>467</sup>:*

**8.** Զվարճապատում-գվարճախոսություններում զավեշտի առաջացման միջոց են դառնում նաև տարատեսակ **բանաձևերը**:

**8.1.** Քիմիական բանաձևերից մեկի՝ ջրի H<sub>2</sub>O-ի հենքի վրա ստեղծված երկու նմուշ է մեր ձեռքի տակ, որոնցից մեկը՝ բանագետ Վ. Սվազլյանի «Կիլիկիա» ժողովածուում ընդգրկված գվարճապատումն է՝ կապված Թուրքիայի հայահալած քաղաքականության հետ: Այստեղ զավեշտի առանցքը ոստիկանության և սուլթանի անգրագիտությունն է՝ դրսևորված Թուրքիայում հայերի հանդեպ տիրող հայահալած քաղաքականությամբ: Քիմիական

466 «Եղինջ» երգիծական հանդեսի հավելված, Եր., 1995, էջ 73:

467 Սվազլյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 113:

բանաձևը անեկդոտում ներկայացվում է իբրև սուլթանի դեմ ուղղված գաղտնագիր, ինչն էլ դառնում է հայկական դպրոցները փակելու պատրվակ:

Սուլթան Համիդին ականջը կիյնա, որ հայերը դպրոցին աշակերտներուն կտրվեցնեն՝ Համիդ Երկրորդը հավասար է գերոյի:

— Վայ, շուն շանորդի հայեր, — կրսե սուլթանը, — ադանկ է նե, քիմիական գիտության դասերը ասկե վերջ թող արգելվին դպրոցներեն ներս<sup>468</sup>:

Տե՛ս Հավելված 12, թիվ 12:

**8.2.** Ջրի բանաձևի հենքի վրա ստեղծված մյուսը նմուշը քյավառյան խմելու անեկդոտաշարին առնչվող գվարճախոսությունն է:

Քյավառյան խոսվածքում ջրի բանաձևի H<sub>2</sub>O-ի արտասանությունը հանգեցնում է խաշի ֆորմուլային (h-ն խ արտասանության հետևանքով **հաշ**-ը փոխվում է **խաշ**-ի, իսկ **ա**-ն կոշտ **օ** արտասանությամբ արաղ-**օրաղ**-ի)

— Ո՛վ կանա խաշի ֆորմուլան ասա, — հարցնում է քյավառցի տանտերը խաշի սեղանի մասնակիցներին:

.....

— H<sub>2</sub>O<sub>7</sub> (2 բոաժին խոաշ և 7 բոաժակ օրաղ):

**8.3.** Ֆիզիկայի բանաձևի (**Պի, էո, քյու**) անդամներից մեկի և Ղարաբաղի բարբառով **քնեղ** բայի արագախոսությամբ արտաբերումը ևս հարանունության միջոցով հանգեցնում է բամբառակ գավեշտի:

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 12, թիվ 13:

**9.** Զավեշտի աղբյուր կարող է դառնալ նաև *պատահական գուգաղիպությունը*:

Մի-մի բաժակ խմել արտահայտության փոխարեն երբեմն ժողովուրդն ասում է՝ «Չգնանք 50-50 անենք»՝ նկատի ունենալով 50-ական գրամ խմելը:

---

468 Նույն տեղում, էջ 103:

Խորհրդային Միությունում հանրապետությունների ավտոմեքենաների համարանիշները ռուսերեն երեք տառերով էին նշվում՝ Ռուսաստանիը՝ ՌՌՌՍ, Վրաստանիը՝ ԳՐՌԻ, Հայաստանիը՝ ԱՐՄ և այլն:

Հենց սրա հենքի վրա էլ ստեղծվել է մի անեկդոտ, որի հերոսը *քյավաոցին* է՝ Լիտվայից բերած 50-50 ԼԻՑ համարանիշ ունեցող ավտոմեքենայով: Հալից ընկած «Զապորոժեց» ավտոմեքենային տված բավականին թանկ գինն այսպես է «արդարացվում».

— *Գյա՛, դուք սրա գնին ու տեսքին մի նայեք, դուք սրա խամարին նայեք,— ինքնագոհ ասում է քյավաոցին՝ ցույց տալով մեքենայի համարանիշը՝ 50-50 ԼԻՑ...:*

(ԱՄՇՀ)

Տեն Հավելված 12, թիվ 14:

**10.** Մի շարք երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի դրսևորմանը նպաստում է ոչ միայն խոսքն իր բազմաբնույթ միջոցներով ու հնարանքներով, այլև **սիկրետիզմը**՝ արվեստի տարբեր տեսակների (թատերարվեստ, երաժշտարվեստ, պարարվեստ և այլն) համադրությունը: Վարպետ անեկդոտասացը միայն դրանց կիրառությամբ կարող է ասելիքն իր ողջ հմայնքով փոխանցել ունկնդրին:

Ինչպես երաժշտական նոտաներն ի գորու չեն մեր ժողովրդական երաժշտության ողջ հմայքն ու հարստությունը, ելևէջների ամբողջ համակարգը վերարտադրել, այնպես էլ հայերենի նման հարուստ և ճկուն լեզուն՝ իր կետադրության և առոգանության նշանների միջոցով չի կարող արձանագրել անեկդոտասացի բանավոր խոսքի արտասանական նրբերանգներն ու դրանց աջակցող արվեստի տեսակների համադրողականությունը:

Իսկապես, հայ ժողովրդական երգիծապատումներ և զվարճախոսություններ կան, որոնք առանց արվեստի մի քանի տեսակների համադրության, մանավանդ թատերարվեստի արտահայտչաձևերի՝ մարմնի տարբեր մասերի (գլխի, իրանի, ձեռքերի, ոտքերի) շարժումների, դեմքի (միմիկայի, աչքերի «խաղի»), ձայնի ելևէջների (մասնավորապես բարբառային համապատասխան հնչերանգը ներկայացնելիս), բարձր ու ցածր արտաբերելու, հնչյունների տա-

տանումները ընդգծելու (մանավանդ կակագությունը) և այլ միջոցների գուգակցման ասելիքը կկորցնի իր համա ու հոտը:

18-րդ դարի գերմանացի դասական գրականության հիմնադիր, արվեստի տեսաբան Գոտհոլդ Լեսսինգն իր «Էմիլիա Գալոտտի» դրամայում Կոնտիի բերանով այսպես է ներկայացրել աչքերով տեսածի և վրձնով այդ տեսածը վերարտադրածի ընդգծված տարբերությունը. «Եթե մենք կարողանայինք անմիջապես աչքերով նկարել: Գիտե՞ք՝ որքան շատ բան է կորչում աչքերից դեպի ձեռք, դեպի վրձին տանող երկար ճանապարհին»<sup>469</sup>:

Իսկ ինչքան շատ բան է կորչում ժողովրդական բանարվեստի նմուշները, մասնավորապես անեկդոտները, թղթին հանձնելիս՝ բերանից մինչև թուղթ ու գրիչ տարածությունն անցնելիս...

Ահա այս տարածությունը հաղթահարելու համար անեկդոտասացի խոսքը տեղ հասցնելուն օգնության են գալիս արվեստի մյուս տեսակները:

Ասածը հաստատելու համար բերենք սինկրետիզմի միջոցով գավեշտ առաջացնելու մի քանի օրինակ:

**10.1.** Սաստիկ ցրտի պատճառով ստորև բերվող զվարճախությունում, իբրև ցուցիչ, կարտոֆել վաճառող քյավառցու խոսքին նպաստում են որ թե ձեռքերը, այլ մարմնի առաջնամասը՝ դառնալով գավեշտի առաջացման պատճառ.

*Ձմեռ է, սաստիկ ցուրտ: Քյավառցին շուկայում մի տասր տակ շոր հագած, սպիտակ խալաթն էլ՝ վրայից, առաջը տարբեր չափսի 3 պարկ կարտոֆիլ դրած, ձեռքերը խալաթի գրպաններում, կանգնած է: Մեկը մոտենում, հարցնում է.*

— Ի՞նչ արժի կարտոֆիլը:

— Իսարի (ձախ կողմի պարկը ցույց տալիս առաջնամասը առաջ պարզելով), խարիրիցուն (առաջնամասը առաջ պարզելով), էրկուխարի (առաջնամասը դեպի աջ պարզելով), — առանց ձեռքերը գրպանից հանելու՝ ասում է քյավառցին:

(ԱՄՇՀ)

---

469 Գ. Լեսսինգ, Դրամաներ, թարգմ. գերմ. Շ. Հակոբյանի, «Հայաստան», հրատ., Եր., 1970, 172 էջ:

**10.2.** Իսկ այս մյուս նմուշը սինկրետիզմի դրսևորման ինքնատիպ տեսակ է. այստեղ գործողություն կատարողը ոչխարն է, նմանակողը՝ մարդը, հենց այդ նկարագրությամբ վարպետ անեկդոտասացը պետք է կարողանա գրավել լսարանին ու շարժումներով ընկալելի դարձնել ասելիքը:

*Եզդուն հարցնում են.*

— Ի՞նչ արժի ոչխարդ.

*Էս եզդին, գնորդի հագուկապը տեսնելով՝ ասում է.*

— Հինգ հարուր դոլլար:

*Ոչխարը գլուխը կողքի թեքելով ու ձեռքով դեմքը կողքահան փակելով, որ գնորդը չտեսնի իր արձագանքը, փրոթկացնում է: (Այսինքն՝ ախորժակ-ախորժակ, էդքան է՛լ ախորժակ):*

(ԱՄՇՀ)

**10.3.** Կան նաև այնպիսի բանարվեստի նմուշներ, որոնցում խոսքը և համադրողականությունը հավասարապես են նպաստում գավեշտի ստեղծմանը: Ստորև բերվող գվարճախոսությունում սովորական խոսքը ձեռքի և դիմախաղի տեղը չի կարող զբաղեցնել: Այստեղ գավեշտը վաղ ժամանակների կանանց համեստության ու գաղտնապահության և նոր սերնդի բերանբացության դրսևորման յուրատեսակ նկարագրությունն է՝ համապատասխան փաստ-վկայության հիշատակությամբ: Հին ու նոր ժամանակների հակադրությունը ներկայացվում է իրական մի դրվագի բացահայտման միջոցով, ինչն էլ դառնում է գավեշտի հենքը. Այստեղ գաղտնապահությունը հիմնավորվում է ժողովրդի մեջ տարածված շարժումով՝ ձեռքի ափով բերանը փակելով և ըհր ասելով.

*Հարևաններով հավաքված խոսում են դեսից-դենից, իրենց ապրած ու հիմիկվա ժամանակներից, մեկը ջղայնացած դժգոհում է նոր ժամանակներից ու ջահելներից.*

— *Էս ի՞նչ ժամանակներ են, էս ի՞նչ ջահելներ են, էս ի՞նչ բերանբացություն աս: Մի բան չելած՝ սաղ աշխարհն իմանըմ աս: Ափսոս չէ՞ր մեր վախտը. իրեք ամսեն ամուսնացած ի, տեքրըս էկավ գոռով մտավ ծոցըս: Առ ըսօր՝ ըհր, — ասում է ու իբրև գաղտնապահության նշան՝ մի ձեռքի ափով ամուր փակում բերանը:*

(ԱՄՇՀ)

**10.4.** Հայ ժողովրդական երգիծապատումների և զվարճախոսությունների մի խումբ էլ առնչվում է հարսանեկան ծիսակարգային տարրերից մեկին՝ չխոսկանությանը: Ըստ ավանդույթի՝ չխոսկան հարսը պետք է ասելիքը սկետրայրին կամ քավորին փոխանցեր կամ այդ պահին ներկա գտնվող որևէ անձի միջոցով, կամ էլ, եթե այդ հնարավորությունը չկար, ձեռքերի շարժումների ու դիմախաղի օգնությամբ: Նման «խոսակցությունների» հենքի վրա էլ բազում անեկդոտներ են ստեղծվել: Դրանցից մեկում սկետրոջը չխոսկան հարսի՝ ձեռքերի շարժումներով նախազգուշացումները («*մի ձեռի ցուցամատն ու բութ մատը օղ անելով՝ հրք սելի ակ, էն մի ձեռի ցուցամատը տանըմ բերըմ ա էդ օղի միշովը՝ ուզմա ասի՝ ճիլիքը*<sup>470</sup> դուս ա գալի») արդյունք չեն տալիս, և սայլի ակը ձորն է գլորվում՝ առաջացնելով հարսի ձեռքերի շարժումները բամբառակ գործողություն ընկալած սկետրայրի զայրույթը:

Անսպասելի զավեշտ առաջացնողը ոչ միայն չխոսկան հարսի՝ ձեռքերի շարժումներով նախազգուշացումներն են, այլև չխոսկանությունը ճարահատ խախտած հարսի արդարացումը.

— *Բա էն որ մի էրկու հետի ձեռներով հրսկացնըմ ի, դուն էլ հա ասելի՛ր՝ դիրը բըրցանանք, նոր... հըմի ես ինչ մեղավոր եմ...:*

(ԱՄՇՀ)

Տե՛ս Հավելված 12, թիվ 15:

**10.5.** Մեկ այլ նմուշում խոսքին նպաստում են ոտքի շարժումները. Առաջադրանք՝ հանելուկատիպ՝ կառուցվածքով.

— *Գյումբու յոթ վերքի մոտ խոպանչիները հավաքված են և շրջան կազմած՝ խոսում են: Կոշիկներին նայելով՝ կրնանք ասեք՝ դրանցից որն է բրիգադիրը:*

.....

*Ում աջ կոշիկի ծայրը՝ առաջնամասը մաշած է, ուրեմն նա էլ բրիգադիրն է: (Ու սկսվում է շարժումներով նկարագրել պատասխանը. ով ոտքի ծայրով գետնի վրա գծելով շենքի հատակագիծը՝*

---

470 Ծիլիք – սայլի ակը ամրացնող փայտե ձող:

խոսքի մեկնել պատրաստվող բրիգադի անդամներին բացատրում, ցույց է տալիս՝ քանի քառակուսի մետր տարածք է, ճակատային մասն ինչ պիտի արվի և այլն, ինչի հետևանքով կոշիկի ծայրը մաշվում է):

(ԱՄՇՀ)

**10.6.** Մեկ այլ զվարճախոսությունում «Գիտե՞ք՝ լենինական-ցու առավոտյան մարզանքը որն ա» հակիրճ հարցում-խոսքին հետևում է բերանը «մեծացնելու» համար ձեռքերի մատներով այդ «մարզանքի» ցուցադրումը՝ սկզբում՝ երկու ձեռքի ցուցամատներով բերանի երկու անկյուններից ձգելով, այնուհետև՝ շուրթերի մեջտեղից վեր ու վար ձգելը ցույց տալով:

(ԱՄՇՀ)

**10.7.** Մեր գրառած զվարճախոսություններից մեկում էլ շուրթերը նեղացնել-թաքցնելով և այդպես խոսելով է հնարավոր դառնում քիչ թե շատ ասելիքը տեղ հասցնել: Այսպես.

Երբ մեկը բաժակները բերնեբերան է լցնում, կատակով դիտողություն է արվում. «Տեսա՞ն, գոնե պոռոչի տեղ թող»: Ահա այս արտահայտությունն էլ պատճառ է դարձել հետևյալ զվարճախոսության ստեղծման.

*Ուտել-խամելիս մեկը բաժակները անընդհատ բերնեբերան էր լցնում, որ մեկ էլ լցնում է, կողքինը դիտողություն է անում.*

*— Ա դե պոռոչի տեղ թող, էլի:*

*Ում բաժակը որ լցվել էր, անմիջապես շրթունքները սեղմած վրա է բերում, այնպես, որ շրթունքները չերևան.*

*— Եշ պրոշ չունեն...:*

(ԱՄՇՀ)

Եթե այստեղ **պոռոչը** գրականացվի փոխվելով **շրթունքի**, խոսքը կդառնա անհամ և ծիծաղ չի առաջացնի:

Առանց շրթունքները սեղմելու եթե ասվի «Ես պոռոչ չունեն»-ը, էլի համ ու հոտից կնզնի: Ահա սա է սինկրետիզմ-համադրողակա-նությունը:

**10.8.** Հիշողության կորստի պատճառով տրված հանձնարա-  
276



րութունը չկատարելու վախը հաղթահարվում է ձեռքերի շարժումների օգնությամբ, ինչն էլ մարդկանց մոտ տարօրինակության և գավեշտի տեղիք է տալիս.

*Մի պատավ կնիկ փողոցով գնում ա ու անընդհատ ձեռը մեկ տանում ա աչքին, մեկ՝ առաջնամասին, հետո էլ՝ քամակին՝ ասելով. «Լույս , ջուր, գազ, լույս , ջուր, գազ, լույս , ջուր, գազ...»*

— Ա՛յ տատի, էդ ի՞նչ ես ասում, հետն էլ՝ ձեռով էրեսըդ, առաջդ ու հետևըդ ցույց տալի, —հարցնում են անցորդներից:

*Ասում ա՝*

— Բա ի՞նչ անեմ, էրեխե՛ք ջան, մերոնք գործի գնալիս ասել են. «Կգնաս տան լույսը, ջուրն ու գազը կմուծես»: Դե ես էլ մենձ կնիկ եմ, վախենըմ եմ մոռանամ. ասելեն գնում եմ...

(ԱՄՇՀ)

# ՀԱՎԵԼՎԱԾ 12

## 1

### Կլվատ աղչկրներ

Իրեք քեր (քույր) կելնեն, իրեքն էլ կլվատ (թլվատ): Էն մեկ օր մեր կերթա տյուս, աղչրկրներաց կապսարի<sup>471</sup>.

— Իսկի չգրուցենն մեկ մեկելու խետ, չելնի թե ուզողներ գան, տոան վերեն ականջ անեն, իման, որ տուք լալ եք:

Մեր կերթա, աղչրկրներ նստե չախրայ<sup>472</sup> կը մանեն, ուզողները իկեր են տոան վերեն ականջ կանեն:

Մեկեն ճոչ աղչկա չախրկի լար կը կտրի:

— Վայ, լար տտրամվ, — կասի ճոչ աղչիկ:

— Չթոթի, փաթութի, չթոթի, փաթութի, — կասի միճնեյն:

— Քյա, սևավորներ, մերս ծե ինչ ապլտրեց, — պյարկոտ, պյարկոտ կասի պստի քեր:

Ուզողները կը տիսնան, որ իրենն էլ կլվատ են, թողնեն կերթան:

Ծիծաղում են Վանեցիները (հավաքել, կազմել են Վարազդատ հարությունյանը և Նորա Մելիքյանը), Եր., «Զանգակ -97» հրատ., 2006, էջ 129:

## 2

Կնիկ մը կա էղեր, իրեք հատ ախճիկ ունի էղեր: Իրեքն ա փելթեք<sup>473</sup> էն էղեր: Օր մը ասոնց ախճիկտես պիտի գան էղեր, մարը կապսարե քի հիչ չխոսին՝ փելթեք ըլլալին չհասկցվի տիյի:

Ախչիկտեսի էկողները մերերնուն հետ կը նստին կը խորաթվին. ախչիկներն ա իրեքը մէկ կը մանեն կոր: Մեյ մըն ա ծակէն մուկ մը կելլա, մէկ ալ ծակը կը մտնա: Մենձ ախճիկը կըսէ քի՝

— Թան, մուտը նայէ մուտը ծատէն էլալ ծատը մտալ:

471 Ապսարել – հանձնարարել

472 Չախրա – ճախարակ:

473 Փելթեք (թրք.)– թլվատ:

Օռթանճան<sup>474</sup> ա կըսէ քի՛

— Թա, մայրիտս չկսամ թի չիպիտի խօսիթ տիյի:

Պատիկն ա կըսէ քի՛

— Նայէ էս տը խօսիմ տոր, տըլտըր տը մանեն տոր:

Հր. Աճառյան, Պոլսահայ անգիր բանահյուսություն,  
ԵՊՀ հրատ., Եր., 2009, էջ 163:

### 3

#### Թըլվաղները

Մեքադ գինմաշո<sup>475</sup> գունենա ժեք<sup>476</sup> էգած հասած ախչիգ, ժեքն ալ թըլվաղ, լիգուներուն ծարով: Մեգ օրըմ մարը գասե.

— Ախչիգներս, ասօր մեր դունը խնամիներ քիտ կան, ձեզի նայելու: Նայեցեք, սախտ<sup>477</sup> գեցիք ու գալաճի<sup>478</sup> չանիք, որ թըլվաղ էղածներդ չիմանան:

Ախչիգները խայիլ գլան:

Իրիգվան, խոշո որ, խնամիները կուկան, գնային, ժեքն ալ էրեսանց հով չին: Կուզենան փորձել, իմանալ գալաճի կիդին չենե չե<sup>479</sup>: Խոսք կխառնին, համա ախչիգները մորը խրաղը դահա միդքերը գըլա ու ձան չին հանիլ:

Մենալ նայիս, իդա ժամանագը մեքադ մուգ գըլսի ծագեն գելլե ու գըլվագե դունին մեչը:

Մեճ ախչիգը գըդեսնու ու գըզանչե.

— Հաթա, հաթա (հաքա), մուդը, մուդը:

Օշթանճա ախչիգն ալ գասե.

— Հաթա, մուդը ծաղը մըղալ:

Փոքրն ալ գոյա չուզե խառնվել ու գալաճի անել, գասե.

— Ես ինչ դասիմ (գասիմ), ինչ դըլսիմ, դըզըլ-դըզըլ դըմանիմ (գըմանիմ):

---

474 Օռթանճա – միջնեկ:

475 Գինմաշո – կին:

476 Ժեք – երեք:

477 Սախտ – լուռ:

478 Գալաճի – գրույց:

479 Չենե չե – թե չե:

Խնամհիները գրհասկնան, որ ժեքն ալ թվադ ին, մնաս պարով  
գասին ու գէշթան:

Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 2,  
Խ.Ա.Փոքրէյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական  
բանահյուսությունը, Եր., ԳԱ հրատ., 1971, էջ 85:

#### 4

### Աբար, անբ ըսէ (Հայրիկ, անբ ըսէ)

1860-ականներուն Շիրոյի գրրտական գիւղ մը տեղա-  
փոխուած<sup>480</sup> չնքուշցի ընտանիքի մը որդին, որ Քիւրտերու մէջ մեծ-  
նալով պատեհութիւն ունեցած չէր դպրոց երթալու և հայերէն գրել-  
կարդալ սորվելու, որպէսզի գաւակներն ալ հայերէն գրել-կարդալ  
սորվին, որոշեց ընտանեօք վերահաստատուիլ Չնքուշ և ինք, ըստ  
նախնոյն, շարունակեց գործել Շիրո՝ տարուան եօթ-ուօթ ամիսնե-  
րուն:

Անոր անդրանիկ որդին արդէն դպրոցական տարեշրջան մը  
բոլորած էր, երբ իր հայրը աշնան տուն վերադարձաւ ու, հիանա-  
լով տղուն մաքուր հայերէն խոսակցութեան վրայ, զայն կուշտ մը  
համբուրելէ յետոյ, ուզեց հասկնալ, թէ տղան ինչքան բան սորված  
էր: Տղան, առնելով այբբենարանը, նստաւ հօրը ծունկերուն վրայ,  
և այբբենարանի առաջին գրին վրայ դնելով մատը,

Տղան. — Աբար, անբ ըսէ:

Հայրը. — Ալբ:

Տ. — Ատի չեղաւ, արար, անբ ըսէ:

Հ. — Տղան, իշտէ կ'ըսեմ, ալբ, ալբ:

Տ. — Չէ, արար, ինծի պէս մի՛ ըսէր, վարժապետին պէս ըսէ:

Հ. — Տղան, վարժապետը ինչի՞ն կ'ըսէ:

Տ. — Վարժապետը ալբ կ'ըսէ, ալբ:

---

480 ԺԹ դարուն, թրքական ծայրայեղօրէն հայահալած քաղաքականութեան  
օրերուն, Չնքուշէն հարիւրաւոր ընտանիքներ տեղափոխուեցան Շիրոյի,  
Կարկարի և այլ քրտական շրջաններու գիւղերը, ուր անոնց տղամարդիկ  
տարին եօթ-ուօթ ամիս կը գործէին նախապէս և աշնան կը վերադառնային  
Չնքուշ, իրենց ընտանիքին ծոցը:

Հ. — Տղան, իշտէ ես ալ վարժապետիդ քիմի<sup>481</sup> կ'ըսեն ալր, ալր...

Հայր ու տղայ քրտինքներու մէջ մտան, ժամերով ալր, ալր ըսելէն:

Գանսիկ Գեորգեան, Չըքուշապատում, 1-ին հատոր, Երուսաղէմ, տպարան Ս. Հակոբեանց, 1970թ., էջ 309:

## 5

Խուլը հիւանդ բարեկամին այցելութեան գնալիս ճանապարհին մտածում էր. «Ասենք թէ գնացի՛, էտեղ մի դժար բան չկայ. բայց ինչ խօսեմ, ոնց հասկանամ», — քիչ մտածելուց յետոյ, — հա՛, ինչ կայ որ... կ'գնամ տուն կ'մտնեմ, առաջ կասեմ՝ Բարով. կասի՛ «Աստու բարին». յետոյ կասեմ՝ Ինչպէս ես. նա էլ կասի՛ «լաւ եմ». ես էլ կասեմ՝ փառք Աստու. յետոյ կասեմ՝ Իշտահդ ո՞նց է, ինչ ես ուտում. կասի՛ «Լաւ է, փլաւ եմ ուտում», ես էլ կասեմ՝ Անուշ ըլի. յետոյ կասեմ՝ ո՞վ է բժշկում, կասի. «Փլան փլանը», ես էլ կասեմ՝ Աստուած մաջին դուայթ տայ:

Այսպէս, հարց ու պատասխանի ծրագիրը կազմելով հասաւ հիւանդի տուն. բայց հիւանդը այդ օրը շատ դժուար էր, գազազել էր:

— Բարով, — ոտը տուն դնելով՝ սկսեց խուլը:

— Չոռ ու ցան, էլի եկա՛ր, — միւս կողմը շոռ գալով՝ փնթփնթաց հիւանդը:

— Ինչպէ՛ս ես, — շարունակեց խուլը:

— Էլ ինչպէս պէտք է լինիմ, տնաքանդ, սասկում եմ:

— Փառք Աստու: Իշտահդ ո՞նց է, ինչ ես ուտում:

— Զահոումանր, — վրայ բերեց հիւանդը:

— Այ անուշ ըլի: Ո՞վ է բժշկում:

— Հոգեհանը:

— Աստուած մաջին դուայթ տայ:

Ծիծաղի տոպրակ, Անեկդոտներ հայ և օտարների կեանքից,  
Աշխատասիրեց դպիր Ս.Ս.Ս. Շահազիզեան,  
Թիֆլիզ, տպարան Մովսէս Վարդանեանի, 1892, էջ 116-117:

## 6

Առավոտ շուտ Ղուլընանց Գոքորը, մի ծակ պղինձ ձեռքին, կնոջ՝ Ելենի հետ գործով գնում էր բարեկամներից մեկի տուն: Գործն ավարտելուց հետո պետք է պղինձը տաներ արհեստավորի մոտ՝ կլայեկելու:

Գոքորը հեռվից նկատում է դեպի իրենց եկող Հուդընանց Շաքարին: Երկուսն էլ տարիքն առած մարդիկ էին. արդեն վատ էին լսում: Գոքորն ավելի վատ էր լսում, ուստի մտքում պատրաստվում է զրույցի. «Կասի՛ բարի լուս: Կպատասխանեմ: Կասի՛ պղինձն ո՞ր ես տանում: Կասեմ՝ ուստի կուշտը»: Այդպես ծանրությեթն անելով հնարավոր հարցերն ու պատասխանները՝ նրանք մոտենում են իրար:

— Բարի՛ լուս, Գոքոր:»

— Ա՛յ Աստծու բարին, Շաքար ջան, բարին արևիդ, — պատասխանում է նա և նայում կնոջը:

Կինը գլխով դրական նշան է անում, այսինքն հարց ու պատասխանը ճիշտ է ընթանում:

Հաջորդ հարցը պետք է վերաբերեր պղնձին, բայց...

— Գոքոր, խեղճ ըլի, իմ քիր Ելենին առավոտ շուտ էս ո՞ր ես տանում:

— Քամակը ծակվել ա, տանում եմ ուստեն սարքի:

Քոչարյան Ս., Ջվարճապատումներ և իրապատումներ,  
Եր., «Ասողիկ», 2008, էջ 8-9:

## 7

### Կաճեցոց հաշիվ

Օրըն կաճեցոցիի կուկյան քաղաք, կերթան պաղնիս, պաղնիսից կելենն, կերթան շուկեն, քիչըն տաճի բյուբար (կծու բիբար) կառնեն, կուտեն, կը բաշլայեն աոցուի թափել աչկներաց: Վերճ կերթան քիչ ըմ չամիչ կառնեն կուտեն, պենիհուներ (բերանները) կը քաղցրացուցեն:

Ճամբախ որ կերթան, կը նստին տեղըմ, հաշիվ կանեն.

— Տաս փարա տվինք, գացինք տկլոգտուն (պաղնիս):

— Տաս փարա տվինք, առանք՝ էն, ինչ որ ես վար քի լացի, տյու վար զի լացիր (տաճիյ բյուրար):

— Տաս փարա տվինք, առանք էն, ինչ չանց հիմ աստված, չանց քու աստված քաղցր էր (չամիչ):

Ծիծաղում են վանեցիները, կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն.,  
Եր., «Ջանգակ-97» հրատ., 2006, էջ 175:

## 8

Գոզանի լեռներէն մէկուն մէջ երիտասարդ մը կար, որ ամուսնացաւ, իրեն պես փախուկի մը հետ և երեք ամիսէն ունեցավ մանչ գաւակ մը:

Է՛, ի՛նչ ընեն: Բան մըն էր եղաւ, պէտք էր միտք հանդարտեցնող հաշիւ մը գտնել, որ տղուն արը-նամուսը չաւրուի:

Կը չափեն, կը ձևեն, չեն կրնար տակէն ելլել:

Խելօք Դաւիթին մէկը այդ պահուն իրենց օգնութեան կը հասնի և կ'ըսէ, թէ Սոյ մէջ մարդ մը կայ, որ ատանկ կնճռոտ հաշիւները կրնայ լուծել, եթէ իրեն կարևոր նուէր մը տրուի: Այդ հաշուագետը կը կոչուի Բալասան Տայի:

— Նուէրին խօսքը կ'ըլլայ պէ, — կ'ըսեն լսող ծնողները, — միայն թէ թող բամբասող լեզուները կարկին, ջան դուրպան իրեն:

Կուգայ սպասուած Բալասան Տային, առօք-փառօք կը բազմի հարս ու փեսին մօտ: Կը լսէ պատմութիւնը, կ'ընդունի նուէրը և համրիչը հանելով՝ կը հաշուէ.

— Բարեկամներ, ճիշդ հաշիւ է աս, և նորածինը ճիշդ ինը ամսու կուգայ. իրար անցնելու պէտք չկայ.

— Թէ ինչպէ՛ս:

— Մտի՛կ ըրեք, հաշիվը աս է. Փեսին ամուսնութիւնը հարսին հետ կ'ընէ երեք ամիս, երեք ամիս ալ հարսին ամուսնութիւնը փեսին հետ, եղավ վեց: Անցնող ամիս, այս ամիս և գալող ամիս՝ երեք ալ աս, կ'ընէ ճիշդ ու ճիշդ ինը ամիս...: Պրծավ գնաց:

Բալասան Տայուն հաշիւը կը հանդարտեցնէ միտքերը, և մինչև վերջ հարս ու փեսայ կ'իյնան կ'ելլեն արով-նամուսով:

Գիրք առակաց, պատրաստեց Կարապետ քահանայ Գայֆաեան,  
Լիբանան, Բեյրութ, 1957, էջ 141-142:

## 9

Նոր այրիացածը կամենում էր ամուսնանալ յուր քենու (կնոջ քույր) հետ: Բայց չհասությունից ազատվելու համար առավ մի սպիտակ ջորի և 100 ոսկի ու գնաց, ներկայացավ եպիսկոպոսին: Սրբազանը սկզբումը թույլ չէր տալիս, ասելով, թե մեծ չհասություն կա: Բայց հետո տեսնելով բերած կաշառքը, ասաց.

— Կանց, որդի՛, ազգաբանությանը նայեմ:

Եվ սկսեց նայել հետևյալ ազգաբանությունը՝ համարելով մատների վերա.

— Սպիտակ – ջորի,

Հարյուր – ոսկի,

Մեռնի – կնիկը.

Առնի – քենին:

— Է՛հ. էս 8 էլավ, որդի օխտը պորտից անցա, կհասնի, կհասնի...

Անեկդոտներ, հատոր 2, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց,  
Տիփսիս, տպարան Յովհաննիսի Մարտիրոսեանց, 1877, էջ 37-38:

## 10

### Քյավառցիներն ասում են.

— Ամբողջ Հայաստանով մեկ խայտառակ ենք էղել, սրանից հետո էկեք էլ չասենք. «Գնանք խմելու», և որպեսզի ուրիշները չիմանան՝ ուր ենք գնում, կասենք՝ «Գնանք գրադարան՝ գիրք կարդանք»:

Քյավառի հրապարակում հավաքված ընկերներից մեկն ասում է.

— Չգնանք գրադարան գիրք կարդալու:

Նրանցից մեկը թե՛

— Նոր եմ գրադարանից էկել, կարգին գրականություն չկա, էղածն էլ լեհական ու վիետնամական գրականություն ա:

— Գրադարանի աշխատողն իմ ծանոթն ա, գնանք, մեզ համար մի նորմալ գիրք կգտնի:

Վեր կացանք գնացինք, գրադարանի վարիչը, իրոք, հանեց մի հանրագիտարան տվեց (իմա՝ լիտրանոց շշով օղի), հավետով կար-



դացինք, բայց կարդալու ծարավը մեծ էր, էլի աչքով-ունքով արինք: Գրադարանավարը բերեց մի հատ էլ մանկական գրականություն տվեց (իմա՝ 0.25լ շշով օղի), էդ էլ կարդացինք, բայց էրեխանց համար գրած գիրքը մեզ ինչ կտար: Էլի կարդալու ծարավ կար: Լավ էր՝ մեր ընկերներից մեկն ասավ՝ . «Տղերք, տանը ձեռագիր գրականություն կա, էկեք գնանք դա էլ կարդանք»:

Վեր կացանք գնացինք: Ճիշտ ա, ձեռագիրը լավ չէր կարդացվում, (երևի արաղ քաշելիս տակը վառած են էղել), բայց տառերը իրար մի կերպ կապելով (իմա՝ կում-կում) կարողացանք մի կերպ կարդալ, որ բան հասկանանք...

(ԱՄՇՀ)

## 11

Կարապետը արտասահմանում բնակվող եղբորը նամակ է գրում. «Սիրելի եղբայր, չկա և ոչ մի ուրիշ երկիր, որտեղ մարդն ապրի ավելի ազատ ու լիաշոք շնչե, քան մերն է: Չկա ավելի հարազատ ու երջանիկ երկիր, որքան սա է: Այստեղի խանութներն ու կրպակները լիութենեն կպայթեն: Լիիրավ ազատություն է, հրապարակայնություն, դեմոկրատիա»: Վեց էջանոց նամակն ավարտվում էր հետևյալ խոսքերով. «Ես ասանկ կսեմ, դուն անանկ հասկացիր»:

Նամակն ընկնում է իրավապահ մարմինների ձեռքը: Նամակագրին պատասխանատվության են կանչում և ստիպում պարզել վերջին տողերի իմաստը:

— Այս ինչ բան է, — տարակուսում է հայրենադարձը, — վեց էջ ձեր անունից գրած են, երկու բառ ալ իմ կողմից չեմ կրնա ավելացնել:

«Եղինջ» երգիծական հանդեսի հավելված, Եր., 1995, էջ 73:

## 12

### Համիդ երկրորդը

Պոլսում հայ դպրոցներուն մեջ գիտության դասեր կանցնելին: Ուսուցիչը շիմիկի, այսինքն՝ քիմիայի դասին ժամանակ պիտի բացատրեր, թե ջուրը կբաղադրվի երկու ջրածնե և մեկ թթվածնե: Թուրք գաղտնի ոստիկանները դպրոցին եղերքները կալքտան եղեր, որ իմանան՝ հայ ուսուցիչները տղոցը ինչ կտորվեցնեն:

Կտեսնան, որ գրատախտակին վրա ուսուցիչը գրեց H<sub>2</sub>O: Ոստիկանը պատուհանեն կնայի կտեսնա: Շիտակ կերթա ուսուցիչը՝ գեկուցագիր մը, կգրե կառավարությանը ու կբացատրե, որ հայկական դպրոցներուն մեջ տղոցը կտրվեցնեն, որ Համիդ Երկրորդը հավասար է գերոյի:

Սուլթան Համիդին ականջը կիյնա, որ հայերը դպրոցին աշակերտներուն կտրվեցնեն՝ Համիդ Երկրորդը հավասար է գերոյի:

— Վա՛յ, շուն շանորդի հայե՛ր, — կըսե սուլթանը, — ադանկ է նե, քիմիական գիտության դասերը ասկե վերջ թող արգելվին դպրոցներեն ներս:

Սվազյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994, էջ 103:

### 13

Ֆիզիկայի քննության ժամանակ դասախոսն ասում ա.

— Այսչիկ ջան, «պի»-ն քթել է՞ս:

Ասում ա՛ հա:

— «էո»-ը քթել է՞ս:

Ասում ա՛ հա:

— Դե ուրեմն՝ քեզ «քյուն» էլ ա պետկը:

(ԱՄՇՀ)

### 14

Մի քյավառցի Լիտվա գործուղման ա գնըմ ու ետ գալիս հետը մի հին «Զապորոժեց» ա առնում, բերում Քյավառ: Ընկեր-բարեկամ հավաքվում են ավտոյին նայում ու զարմացած հարցնում են.

— Մեքենան կտրել է՞ր, այ տնաշեն, սա՛ ես առե բերե: Իսկ ի՞նչ ես տվե:

— Խինգ խազար ուրլի:

— Գյա՛, բա «Զապորոժեց»-ին, էն էլ՝ հին ու հալից ընկած, խելքը գլխին մարդը խինգ խազար կտա՛:

— Գյա՛, դուք սրա գնին ու տեքին մի նայեք, դուք սրա խամարին նայեք,— ինքնագոհ ասում է քյավառցին՝ ցույց տալով մեքենայի համարանիշը՝ 50-50 ԼԻՑ...:

(ԱՄՇՀ)

### Ճիլիբը սելի ակը ամրացնող մասն ա՝ փայտե ձողը:

Հարսը չխոսկան ա ըլըմ, սելին նստած տեքոր հետ գնալիս ա ըլըմ, դիբը բըցրանալիս էս հարսը մին էլ տենըմ ա՝ էս ճիլիպը համարյա դուս ա գալի: Հըսկացնըմ ա ձեռներով (մի ձեռի ցուցամատն ու բույթ մատը օղ անելով՝ իբր սելի ակ, էս մի ձեռի ցուցամատը տանըմ բերըմ ա էդ օղի միչովը՝ ուզմա ասի՝ ճիլիբը դուս ա գալի)...

Էս տեքրն ասըմ ա.

— Համբերի, դիբը դուս կգանք, նոր...

Էս հարսը մին էլ ա նույն բանը ձեռներով հըսկացնըմ, Տեքրը մին էլ ա ասըմ.

— Դե ասի՝ դիբը բըցրանանք, նոր...

Մի քիչ հետո ակը դուս ա գալի ու գլորվելով ձորն ա ընգնըմ, ջարդովսուրդ ըլըմ: Տեքրը ուշունցը կապըմ ա, թե՛

— Տենեիր ո՛չ, որ գոնյա շուտ ասեիր...:

Էս խեղճ հարսն ասըմ ա.

— Բա էս որ մի էրկու հետի ձեռներով հըսկացնըմ ի, դուն էլ հա ասեիր՝ դիբը բըցրանանք, նոր... հըմի ես ի՞նչ մեղավոր եմ...:

(ԱՄՇՀ)

# ԱՄՓՈՓՈՒՄ

Սույն ուսումնասիրության մեջ օգտագործված հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի արտահայտման միջոցների ու հնարանքների կիրառությունները ցույց են տալիս, որ՝

1. Հայերենի արտասանական-հնչյունական-հնչերանգային տարատեսակ միջոցներով (ձայնեղների խլացում ու խուլերի ձայնեղացում, բարձր և ցածր հնչերանգ, երգեցիկ տոն և երկարացման երանգ և այլն) հարուստ հայ ժողովրդական երգիծական մանրապատումները և զվարճախոսությունները հիմնականում առնչվում են կան գրական արևելահայերենի, արևմտահայերենի ու տարատեսակ բարբառների հնչարտաբերման կերպին, կան արտաբերողի կողմից խոսքի վերարտադրման զավեշտալի դրսևորումներին, սակավ դեպքերում նաև՝ բառերի անհարկի հնչյունահավելման կիրառություններին:
2. Գրական արևելահայերենի և արևմտահայերենի, ինչպես նաև տարատեսակ բարբառների բառագանձի հենքի վրա ստեղծված երգիծական մանրապատումներում ու զվարճախոսություններում զավեշտի առաջացման պատճառ են դարձել հայերենի գրական և բարբառային բառերի, դարձվածքների ու արտահայտությունների ոչ տեղին կիրառությունները, դրանց իմաստը չիմանալ-չընկալելը, որոշ դեպքերում նաև՝ օտարալեզու կրթությունը:
3. Հայկական անեկդոտներում բավականին մեծ քանակ են կազմում անձնանունների, ավել անուն-մականունների և տեղանունների միջոցով զավեշտ առաջացնող ժողովրդական ստեղծագործությունները, որտեղ անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում՝
  - ա. տարատեսակ հապավումներով և այս կամ այն իրողությունների հենքի վրա ստեղծված անհեթեթ անձնանունները.

բ. ժողովրդական խոսքում առկա բանաձևը կամ դարձվածքը.

գ. անունների ստուգաբանությունը.

դ. անունների նպատակադրված մասնատում-միացումը.

ե. արտաբերման կերպը.

զ. հանելուկային հարցմամբ կառույցները.

է. անունների և դրանց հենքի վրա ստեղծված տարատեսակ բառերի, նաև օտար անունների հետ համանուն-հարանունային, բառախաղային դրսևորումները և այլն:

ը. թե՛ անձնանուններին, թե՛ տեղանուններին առնչվող երգիծական ստեղծագործությունների մեջ գերազանցում են անսյուժե՝ հիմնականում երկխոսական բնույթի կառույցները՝ զվարճախոսությունները:

4. Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում ու զվարճախոսություններում անսպասելի ծիծաղ առաջացնելու միջոցներով և ասելիքի նպատակաուղղվածությամբ, նաև քննադատությամբ առանձնանում են գրաբարի, գրական ու ժողովրդական բառերի և արտահայտությունների ոչ տեղին կիրառություններին և վերամբարձ ոճին ու ժարգոնային արտահայտություններին նվիրված նմուշները:

5. Բառ-բառակապակցությունների թարսուշիտակ գործածություններով զավեշտ ստեղծելու օրինակների մեջ ժողովրդական խոսքի ինքնատիպ դրսևորումներով աչքի են ընկնում հատկապես օրինանք-անեծքային կառույցները, երբ որևէ անձին ուղղված օրինանքը ականա վերածվում է անեծքի:

6. Հայ ժողովրդական երգիծական մանրապատում-զվարճախոսություններում հայերենի և օտար լեզուների փոխհարաբերությունների ու թարգմանությունների ժամանակ անսպասելի ծիծաղի առաջացման պատճառ են դառնում՝

ա. օտար լեզվին չտիրապետելը.

բ. հայերենի և այլ լեզուների համանուն-հարանունային դրսևորումները.

գ. օտարալեզու նոր բառերի սխալ արտաբերումները.

դ. գիտատեխնիկական առաջընթացով պայմանավորված՝ օտար բառ-բառակապակցությունների հայերեն համարժեքների բացակայությունը.

զ. ժողովրդական դարձվածքների ու տարատեսակ բառ-բառակապակցությունների անհեթեթ թարգմանությունները և այլն:

7. Երգիծական մանրապատումների և զվարճախոսությունների համատեքստում զավեշտի դրսևորման ինքնատիպությամբ առանձնանում են իմաստաբանական կառույցներով՝ ժողովրդական դարձվածքներով, առած-ասացվածքներով ու արտահայտություններով, համանուն-հարանունային դրսևորումներով, ուղիղ և փոխաբերական իմաստներով ստեղծագործությունները: Նման կառույցներով հայկական անեկդոտները, մասնավորապես կայուն բառակապակցություններով նմուշները, թեմատիկ լայն ընդգրկում ունենալով հանդերձ, ինչ-որ տեղ անհասկանելի են օտարներին, քանզի այլ ժողովուրդների լեզուներով դրանց թարգմանությունները երբեմն նմանվում են, պատկերավոր ասած, շոտ տված գորգի:

Իսկ համանունների և հարանունների միջոցով զավեշտ ստեղծելու օրինակները ցույց են տալիս, որ՝

**ա.** Համանունային դրսևորումները գերակշռում են հատկապես գրական հայերենի և բարբառների ու ժողովրդախոսակցական լեզվի բառ-բառակապակցությունների համադրմամբ ստեղծված կառույցներում:

**բ.** Հարանունային դրսևորումները հանդես են գալիս հիննականում օտար լեզուների զուգադրմամբ ստեղծված նմուշներում:

**գ.** Գրական հայերենի և բարբառային բառ-բառակապակցությունների հարանունային կիրառություններով զվար-

ճապատում-զվարճախոսությունները առնչվում են հիմնականում արագախոսությանը և արտասանական դադարի խախտմանը, բաղաձայնների քմայնացմանն ու ձայնեղացմանը, սխալ հնչարտաբերմանը, բառամասատմանը և այլն:

դ. Համանուն-հարանունային տարատեսակ կառույցներով զավեշտ ստեղծելու դրսևորումները մեծ քանակ են կազմում նաև մանկական զվարճախոսություններում:

8. Զուտ հայկական բանարվեստի նմուշներ են նաև հայերենի լեզվաբանական եզրույթներով, բառակազմական տարատեսակ դրսևորումներով ու պատկերավորման ու արտահայտչության բազմաբնույթ միջոցներով անսպասելի ծիծաղ աջաջացնող զվարճապատումներն ու զվարճախոսությունները:

9. Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում մեծ քանակ են կազմում նաև այնպիսի նմուշները, որոնցում անսպասելի ծիծաղի դրսևորմանը նպաստում են են ոչ թե լեզվական-քերականական, այլ ուրիշ միջոցներ ու հնարանքներ:

ա. Այդպիսիք դառնում են ֆիզիկական տարատեսակ արատները՝ թիկությունը, ատամնաթափությունը, կակազելը, խլությունը և այլն: Նման թեմաներն առկա են նաև այլ ժողովուրդների անեկդոտներում, բայց հայկական նյութերն առանձնում են ոչ միայն իրենց լեզվով, այլև հայկականությունը հավաստող տեղանուններով, անձնանուններով, պատմա-ազգագրական, սոցիալ-տնտեսական և այլ կարգի իրողություններով:

բ. Հայկական երգիծական մանրապատումներում առանձին խումբ են կազմում այնպիսի ստեղծագործությունները, որոնցում անսպասելի ծիծաղը դրսևորում է տարատեսակ հաշիվ-հաշվարկների միջոցով: Մի դեպքում այն կարող է արտահայտվել սովորական հաշվարկի միջոցով, մեկ այլ դեպքում՝ կաշառքի ազդեցությամբ ինչ-որ

բան կոծկելու նպատակով կատարված կեղծ ու անհեղեղ հաշվարկով:

- գ. Անսպասելի ծիծաղի դրսևորմանը նպաստում է նաև ծածկախոսությունը՝ հայերեն կամ օտար լեզվով գաղտնախոսությամբ: Այն առավել ցայտուն է արտահայտվում հայրենադարձներին առնչվող քաղաքական անելիդոտներում:
- դ. Զվարճապատում-զվարճախոսություններում զավեշտի առաջացման միջոց են դառնում նաև տարատեսակ բանաձևերը:
- ե. Մի շարք երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի դրսևորմանը նպաստում է սինկրետիզմը՝ արվեստի տարբեր տեսակների համադրությամբ ասելիքը իր ողջ հմայնքով հնարավորինս տեղ հասցնելու միջոցը: Նման պարագաներում զավեշտի հենք են դառնում մարմնի, ձեռքերի շարժումների, դիմախաղի և ձայնի ելևէջների օգնությամբ ասելիքի վերարտադրությունը:
- զ. Հայկական անելիդոտներում անսպասելի զավեշտի դրսևորման միջոց են դառնում նաև պատահական զուգադիպությունները, ստապատումները, ժողովրդական տոմարը, գերեզմանային գրությունները, տարատեսակ գովազդները, ցուցանակները և այլն:

Հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և զվարճախոսություններում անսպասելի ծիծաղի դրսևորման ձևերն ու միջոցները, հիմնականում զուտ հայկական բանարվեստի նմուշներ լինելով, մեր ժողովրդի մտածողության և հետաքրքրությունների շրջանակների պես բազմազան ու բազմաբնույթ են, յուրատեսակ ու ազգային, ուրեմն նաև՝ այլ ժողովուրդների համար գրեթե անհասկանելի ու անթարգմանելի:



## ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբազյան Ս., Նոյեմբերյան կատակներ, անեկդոտներ, սրամտություններ, Վանաձոր, «Արմինֆո» հրատ., 1999:
2. Աբրահամյան Ս.Գ., Հայոց լեզու. Բառ և խոսք, Եր., «Լույս» հրատ., 1978:
3. Ազուլիսի բարբառի մասունքներ, Աշխատասիրությամբ Աբգար Այվազյանի, 2-րդ հրատ., Եր., «Գասպրինտ» հրատ., 2012:
4. Ազնավորեան Ս., Հեքիաթներ, զուարճալիքներ, ԱՄՆ, Միչիկըն, Տիպոն Հայթս, 1971:
5. Ահյան Ս., Ծիծաղի հարյուր ակնթարթ (Զվարճապատումներ), «Մարտիկ» թերթի հավելված, Ստեփանակերտ, 1995:
6. Աճառյան Հր., Պոլսահայ անգիր բանահյուսություն, Եր., ԵՊՀ հրատ., 2009:
7. Անեկդոտներ, զուարճալի գրոյցներ, համառոտ դէպքեր և առակներ, մեծ մասամբ ազգային կենսաբից առած, Ժողովեց Գալուստ Շիրմազանեանց, Թիֆլիս, տպարան Յովհաննու Մարտիրոսեանց, 1878:
8. Անեկդոտներ, հատոր 1, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Բագու, Ղասապեանցի տպարան, 1876:
9. Անեկդոտներ, հատոր 2, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Տիֆլիս, տպարան Մ. Վարդանեանի, 1877:
10. Անեկդոտներ, հատոր 3, Աշխատասիրեց Յովհաննէս Նազարեանց, Թիֆլիս, տպարան Մ. Վարդանեանի, 1883:
11. Անթանեսյան Վ., Լոռվա ժպիտներ, Եր., Հեղ. հրատ., 2012:
12. Ասատրյան Ս., Լոռու խոսվածքը, Եր., «Միտք» հրատ., 1968:
13. Ավետիսյան Յու., Զաքարյան Հ., Աբրահամյան Ա., Հայոց լեզվի և հայ գրականության ձեռնարկ-շտեմարան, Եր., «Զանգակ-97» հրատ., 2009:
14. Բաբայան Ա., Էջեր Լոռվա բանահյուսությունից, Եր., «Հայաստան» հրատ., 2007:
15. Բալայան Գ., Միամիտ մտքեր, Լոռվա ժպիտներ, Եր., «Վան Արյան» հրատ., 2002:
16. Բարդասարյան-Թափալցյան Ս., Մշո բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958:
17. Բաքվի հայոց բանահյուսությունը, կազմեցին Ավարդ Ղազիյանը և Սվետլանա Վարդանյանը, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004:
18. Բեդիրյան Պ. Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Եր., «Լույս» հրատ., 1973:
19. Գեորգեան Գ., Չնքուշապատում, հատոր 1, Երուսաղեմ, տպարան Ս. Յակոբեանց, 1970:
20. Գիրք առակաց, պատրաստեց Կարապետ քահանայ Գայֆաեան, Լիբանան, Պեյրութ, 1957:

21. Գյուլնագարյան Խ., Մեր գյուղի հանաքները, Եր., «Հայաստան» հրատ., 1991:
22. Գյուրջինյան Դ., Հայոց լեզու. Խոսքարվեստի դասագիրք, Սուրբ Էջմիածին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 2015:
23. Գյուրջինյան Հ., Մի բուռ ժպիտ, Վանաձոր, Սիմ տպագրատուն, 2012:
24. Գրիգոր Ս., Զվարճալի պատառաքաղ-1, Քաջարան-Կապան, Եր., «Զանգակ -97» հրատ., 2006:
25. Գուրունյան Հ., Համշենահայ բանահյուսություն, Եր., «Լույս» հրատ., 1991:
26. Գևորգյան Դ., Ծովասար, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2007:
27. Եկեք մի քիչ զվարճանանք: Զրույցներ և անեկդոտներ, Եր., «Չար» ֆիրմա, 1992:
28. Երզիծական մանրապատումներ, Թարգմ. ոռու.՝ Մ.Դավթյան, Եր., «Սովետական գրող» հրատ., 1977:
29. Զաքարյան Հ., Ավետիսյան Յու., Հայոց լեզու. Բառագիտություն, Եր., «Զանգակ-97» հրատ., 2007:
30. Թումանյան Մ., Հայրենի երգ ու բան, Հատոր 2, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:
31. Թումանյան Հովհ., Երկերի լիակատար ժողովածու՝ 10 հատորով, հատոր 5, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994:
32. Լեսպիկ Գ., Դրամաներ, Թարգմ. գերմ.՝ Հ.Հակոբյանի, «Հայաստան» հրատ., Եր., 1970:
33. Լոռվա զվարճապատումներ, հավաքեց և մշակեց Ս.Ճշմարիտյանը, Գյումրի, «Կունայրի» հրատ., 1992:
34. Ծատուրյան Ա., Ծիծաղում է Խնձորեսկը, «Գյուղական հումորի շտեմարան» շարքից, «Զանգակ -97» հրատ., 2006:
35. Ծիծաղենք միասին, Կազմեց Սարինե Ամիրխանեանը (Ղևոնդեան), Բ տպագրություն, Թեհրան, «Նայիրի» հրատ., 2007:
36. Ծիծաղի պարտեզ: Գիրք-3, 2006:
37. Ծիծաղի տկճոր: Մոլլա Նասրեդինի առակներ, ծիծաղաշարժ անեկդոտներ և սրախոսությունների ժողովածու: Կազմեց՝ Արտեմ (Յարութին) Եսսեան, Թիֆլիս, տպարան Էպոլիս, 1913:
38. Ծիծաղի տոնավաճառ, 3-րդ թողարկում, Խուժան անեկդոտներ, Եր., «Զանգեզուր» տպագրական կենտրոն, 2007:
39. Ծիծաղի տոպրակ, աշխատասիրեց դպիր Ս.Ս. Շահագիզեան, Թիֆլիզ, տպարան Մովսես Վարդանեանի, 1892:
40. Ծիծաղում են վանեցիները, կազմողներ՝ Հարությունյան Վ., Մելիքյան Ն., Եր., «Զանգակ-97» հրատ., 2006:
41. Կատակում է Գորիսը (Գորիս քաղաքի և շրջանի ժողովրդական սրա-

- խոսություններ և անեկդոտներ), Հավաքեց, մշակեց ու կազմեց Լևոն Սահակյանը, Գորիս, «Մուշ» հրատ., 1994:
42. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 2, Խ.Ա. Փոքրջեյան, Նոր Նախիջևանի հայ ժողովրդական բանահյուսությունը, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1971:
  43. Հայ ազգագրություն և բանահյուսություն, հատոր 20, Թամար Գևորգյան, Լոռի (Տաշիր-Ձորագետ), Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1999:
  44. Հայերենի բարբառային բառարան, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., Ա հատոր, 2001, Բ հատոր, 2002, Գ հատոր, 2004, Դ հատոր, 2007, Ե հատոր, 2008, Զ հատոր, 2010, Է հատոր, 2012:
  45. Հայ ժողովրդական բանահյուսություն (ժողովածու), «Մոնթեն Մելքոնյան» համալսարան, Եր., «Լուսակն» հրատ., 2003:
  46. Հայ ժողովրդական մշակույթ-12, ՀԱԻ (Հանրապետական գիտաժողովի նյութեր), «Մոսկովի» հրատ., 2004:
  47. Հայկական գրոյցներ. առակներ, առածներ, մանրավէպեր, զուարճալի ասացուածքներ և իմաստուն խօսքեր, պատրաստեց Կարապետ քահանայ Գայֆաեան, Լուս Անջելես, Պոզանեան տպագրութիւն, 1944:
  48. Հարությունյան Հ., Հայոց լեզուն հազարազանն, Եր., «Արևիկ» հրատ., 1989:
  49. Հովսեփյան Ն., Միամիտ և հնարամիտ սևաբարձիները, Եր., «Հայաստան» հրատ., 2003:
  50. Հրեղեն ձին, Բանահյուսական ժողովածու, Մշակեց և վերապատմեց Սերգեյ Վարդանյանը, Եր., «Սովետական գրող» հրատ., 1981:
  51. Դահրամանյան Ա., Արցունքոտ ժպիտներ, հ. 2, Եր., «Դավ» հրատ., 2006:
  52. Դուլյան Բ., Գյուլիստան. Պատառիկներ մոտիկ անցյալից, Եր., «Զանգակ-97» հրատ., 2004:
  53. Մարգարյան Ա., Եկեք մի քիչ զվարճանանք, Զրոյցներ և անեկդոտներ, Եր., «Չար» ֆիրմա, 1992:
  54. Մարկոսյան Ռ., Արարատյան բարբառը, Եր., «Լույս» հրատ., 1989:
  55. Մելիք-Մարգարյան Գ., Զվարճալիք, Եր., «Պարույր Սևակ» հրատ., 2001:
  56. Մինասեան Լ., «Գիղական բառ ու բան», (Փերիա գաւառ), Նոր Զուղա, Սբ. Ամենափրկիչ վանքի տպարան, 1998:
  57. Միջգաւառական անեքթոտներ: Հաւաքեց և ներկայացուց Յակոբ Չոլաքեան, Հալէպ, Տպարան Արևելք, 1988:
  58. Միջգաւառական անեքթոտներ, Յակոբ Չոլաքեան, Հալէպ, Բ տպագրութիւն, 2005:
  59. Մկրտչյան Հ.Մ., Կարևո բարբառը, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1952:
  60. Նիկողոսյան Տ., Իրական դեպքեր բայագետցիների կյանքից, Եր., «Լուսաբաց» հրատ., 2016:

61. Շիրազ Հովհ., Քնար Հայաստանի, հատոր 1, Եր., Հայպետհրատ, 1958:
62. Պատմություն Անթեյի հայոց, Գ հատոր, խմբագիր՝ Երուանդ Պապայեան: Լոս Անջելես, 1994:
63. Պատմում և կատակում էր Գալուստ Գալստյանը, Հավաքել և կազմել է Լենա Անթառնյանը, «Վերնատուն» հրատ., Եր., 1994:
64. Պըլը-Պոտի, գրեց Մակար վարդապետ Բարխուդարեանց, Թիֆլիս, Մով. Վարդանենյանի և ընկ. տպարան, 1883:
65. Ջահուկյան Գ., Խղաթյան Ֆ., Հայոց լեզու, դասագիրք հանրակրթական դպրոցի 10-րդ դասարանի համար, Եր., «Փյունիկ Մակմիլան» հրատ., 1998:
66. Սահակյան Ա., 500 կատակ, Հալեպ, «Կիլիկիա» գրատուն-տպարան, 2000:
67. Սահակյան Լ., Սրախոսություններ և անեկդոտներ, Գորիս, «Մուշ» հրատ., 1994:
68. Սահակյան Ռ., Անկրկնելի Պարույրը, Հուշեր, պոեմներ և այլ նյութեր, «Էդիթ Պրինտ» հրատ., Եր., 2014:
69. Սարգսյան Ա.Յ., Արցախի բանահյուսությունը, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2015:
70. Սարգսյան Ա.Շ., Մանկական գվարճախոսություններ, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2016:
71. Սոսյան Ս., Իսկ թիկունքում հող հայրենին է. Հիշատակի եղնին, Եր., «Էդիթ Պրինտ» հրատ., 2011:
72. Սվազլյան Վ., Կիլիկիա, Արևմտահայոց բանավոր ավանդությունը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1994:
73. Ստեփանյան Ա., 20-րդ դարի հայրենադարձությունը հայոց ինքնության համակարգում, Եր., ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010:
74. Սրվանձտյանց Գ., Երկեր, Հատոր 1, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1978:
75. Սևակ Պ. Երկերի ժողովածու՝ 6 հատորով, Հատոր 1, Երևան, «Հայաստան» հրատ., 1972:
76. Սևակ Պ., Երկերի ժողովածու՝ 6 հատորով, Հատոր 5, Թրի դեմ գրիչ, Երևան, «Հայաստան» հրատ., 1974:
77. Սևակ Պ., Անցյալը ներկայացած, Կազմեցին, խմբագրեցին և ծանոթագրեցին Արմեն Պարույրի Ղազարյանը, Սևակ Արմենի Ղազարյանը, Եր., «Ոսկան Երևանցի» հրատ., 2011:
78. Վարդանյան Ս.Գ., Կրոնափոխ համշենահայերի բարբառը, բանահյուսությունը և երգարվեստը (նյութեր և ուսումնասիրություններ), Եր., ԵՊՀ հրատ., 2009:
79. Քոչարյան Ս., Զվարճապատումներ և իրապատումներ, Եր., «Ասողիկ» հրատ., 2008:

80. «Анекдоты от одесситов» (сост. и предисловие Василий Котюшенко), Одесса: Изд-во «Optimum», 2007 г, 350 стр.

**Պարբերականներ, արխիվներ, ֆոնդեր  
և անձնական հավաքածուներ**

81. «Բանասեր» հանդես, հատ. 3, պրակ Ա, Պարիս, 1901, Աճառեան Հր., Մանկական բարբառ, էջ 3-28:
82. «Գարուն» ամսագիր, Եր., 1972, թիվ 5:
83. «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագիր, Ղազիյան Ա., Ղարաբաղի գվարճախոս Պըլ Պուղին, Եր., 1978, թիվ 9, էջ 60-69:
84. Վարդանյան Ս.Գ., Ո՛վ պետք է հրատարակի, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթ, 1990, 19 հոկտ., թիվ 10:
85. «Էջմիածին» ամսագիր, Էջմիածին, Ժ (հոկտեմբեր), 2015:
86. «Եղինջ» երգիծական թերթ, Վանաձոր, 1995, թիվ 4, էջ 8:
87. Արմեն Շ. Սարգսյանի անձնական հավաքածու:
88. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվ:
89. ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Գ. Թարվերոյանի ֆոնդ, Սպմաստ, ՖՖ,1, 1631:
90. ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Վ. Ղազարյանի ֆոնդ, 87 թղթապանակ:
91. ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Ա. Ղանալանյանի ֆոնդ:
92. ԳԱԱ ՀԱԻ-ի արխիվ, Ն. Հակոբյանի ֆոնդ:

**ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

1. ԱՍ — Արմեն Սարգսյան
2. ԱՍՇՀ — Արմեն Շավարշի Սարգսյանի անձնական հավաքածու
3. ԳԱ — գիտությունների ակադեմիա
4. ԳԱԱ — գիտությունների ազգային ակադեմիա
5. ԳԱԹ — Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան
6. ԴԲԱՆ — դաշտային բանահյուսական նյութեր
7. ԵԺ — երկերի ժողովածու
8. ԵԼԺ — երկերի լիակատար ժողովածու
9. ԵՊՀ — Երևանի պետական համալսարան
10. ՀԱԲ — հայ ազգագրություն և բանահյուսություն
11. ՀԱԻ — հնագիտության և ազգագրության ինստիտուտ
12. ՀՀ — Հայաստանի Հանրապետություն
13. ՀՄՍՀ — Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն
14. Տրբրկ. — տարբերակ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջաբան	5
1. Արտասանական իրողությունները՝ գավեշտի հենք հայ ժողովրդական երգիծական մանրապատումներում և գվարճախոսություններում	10
Հավելված 1	36
2. Արևելահայերենի, արևմտահայերենի և բարբառների բառապաշարը՝ գավեշտի հենք	43
Հավելված 2	63
3. Անձնանունը և տեղանունը՝ գավեշտի հենք	69
Հավելված 3	93
4. Վերամբարձ ոճը, գրաբար, գրական ու ժողովրդական բառերի և արտահայտությունների ոչ տեղին կիրառությունը՝ գավեշտի հենք	102
Հավելված 4	111
5. Բառ-բառակապակցությունների թարսուշիտակ գործածությունը՝ գավեշտի հենք	114
Հավելված 5	122
6. Ժարգունային արտահայտությունը և հայկոյանքը՝ գավեշտի հենք	126
Հավելված 6	130
7. Հայերենի և օտար լեզուների փոխհարաբերությունները՝ գավեշտի հենք	133
Հավելված 7	157
8. Իմաստաբանություն	166
8.1. Ժողովրդական դարձվածքը և արտահայտությունը՝ գավեշտի հենք	166
Հավելված 8.1	178
8.2. Համանունային և հարանունային դրսևորումները՝ չավեշտի հենք	183
Հավելված 8.2	194
8.3. Ուղիղ և փոխաբերական իմաստները՝ գավեշտի հենք	200

Հավելված 8.3	203
9. Բառակազմական դրսևորումները և լեզվաբանական եզրույթները՝ զավեշտի հենք	204
Հավելված 9	214
10. Պատկերավորման միջոցները՝ զավեշտի հենք	215
Հավելված 10	233
11. Լեզվական ուծացումը՝ զավեշտի հենք	244
Հավելված 11	254
12. Անսպասելի ծիծաղի դրսևորման այլ միջոցները՝ զավեշտի հենք երգիծապատում-զվարճախոսություններում	258
Հավելված 12	278
Անփոփում	288
Օգտագործած գրականություն	293
Համառոտագրություններ	297

ԱՐՄԵՆ ԾԱՎԱՐՇԻ ՍԱՐԳՍՅԱՆ  
**ՉԱԿԵՇԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ  
ԵՐԳԻՃԱԿԱՆ ՄԱՆՐԱՊԱՏՈՒՄՆԵՐՈՒՄ  
ԵՎ ՉՎԱՐՃԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

ARMEN SH. SARGSYAN  
**WAYS OF EXPRESSION OF THE HUMOR  
IN THE ARMENIAN JOKES**

АРМЕН ШАВАРШОВИЧ САРКИСЯН  
**СРЕДСТВА ПРОЯВЛЕНИЯ КУРЬЕЗА В АРМЯНСКИХ НАРОДНЫХ  
САТИРИЧЕСКИХ МИНИАТЮРАХ И СМЕШНЫХ ВЫСКАЗЫВАНИЯХ**

Համակարգչային շարվածքը՝  
Արփինև և Աստղիկ Սարգսյանների

Էջադրումը և ձևավորումը՝  
Արթուր Հարությունյանի

---

Տպագրված է «Հայկարլի ՍՊԸ» տպարանում  
Հեռ. 091 206 115

Չափսը՝ 60×84 1/16: Թուղթ՝ օֆսեթ:  
18.75 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 200 օրինակ: